ՍՈՍԼԻ



ԱՅՐՎՈՂ ՀՈՐԻԶՈՆԸ

891.99
Ա-82

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
1940

ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՍՌ
ՊԵՏՀՐԱՏ

891.99
Ա-82
ԱՐ

01 JAN 2009
19 NOV 2010

ԱՐԱԶԻ

ԱՅՐՎՈՂ ՀՈՐԻԶՈՆԸ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1940

21 FEB 2013

21280

92788

АРАЗИ

Пылающий горизонт

Армгиз ССР, Ереван, 1940 г.

5169
47



ՀԵՏ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ Արմ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

I

Լևոնյանը դարթնեց առավոտը ծանր մղձավանջով, քրտինքի մեջ ողողված: Աչքերը բանալով, նա պայծառ լույսի հետ կարծես ընդդիմեց մի մեծ ուրախություն,— հանկարծ նա զգաց, որ այդ բոլորը երազ էր, ու ազատ շունչ քաշեց:

Նա տեսնում էր երազում գիմնազիան.— իբր կանգնած է դրասենյակի միջանցքում, որի երկարությամբ շարված են ուսուցիչները, վերակացուները՝ բոլորն էլ իրենց պաշտոնագնեստները հագած, ու բոլորը խորհրդավոր, մռայլ դեմքերով: Դրասենյակի բաց դռնից երևում էր պատից կախած թաղավորի պատկերը, որը կարծես՝ ամեն ինչ արդելում էր և անհուսություն էր ներշնչում:

Գիմնազիայի դիրեկտորը դուրս եկավ միջանցքը. նրա դեմքը առանձնապես մռայլ էր այդ ժամին ու կարծես նա մի բան էր փնտռում նկատողություն անելու համար: Նա աչք ածեց ուսուցիչներին, վերակացուներին, հատկապես ուշադրություն դարձնելով նրանց դեղին կոճակների վրա, ու հետո՝ նկատելով Լևոնյանին, ասաց նրան իր դաժան, բամբ ձայնով.

— Լևոնով, դուք երկու կարևոր քննություն չեք տվել, իսկ ժամանակն արդեն անցել է, էլ քննություններ չեն լինելու... դուք չեք ավարտել գիմնազիան...

Դիրեկտորի մոտ կանգնած ուսուցիչներն ու վերակացուները դանդաղ շարժում են գլուխները, համաձայնություն տալով նրա ասածին:

«Միթե՞ չեմ ավարտել—տաղնապի մեջ հարցնում է ինքն իրեն Լևոնյանը,— «Ինչպես է պատահել, որ մոռացել եմ երկու կարևոր քննությունները»... Ու մի ահավոր մխոք սողում է նրա մեջ, երբ նայում է շրջապատող դեմքերին,— ոչ էլ երբեք չի ավարտելու դպրոցը, չի աղատվելու այս դաժան մարդկանցից...

... Եվ ահա լույս է, պայծառ օր. դրսի պատշգամբից լսվում է ծիծեռնակի անուշ ծլվլոցը... Իհա՛րկե, այդ բոլորը մղձավանջ էր՝ անցած մռայլ օրերի վերջին հորձանքը,— նա ավարտել է ուրեն դիմնազիան, աղատվել է ընդմիշտ նրա կապանքներից...

— Ո՜վ աղատություն,— գոչեց նա ձայնով ու ձգեց մարմինն անկողնում այնպիսի հաճույքով, ասես կարում էր իրեն կաշկանդող շղթաները:

Այդ ժամին նրան այնքան տարօրինակ էր թվում իր աղատությունը, որ կուզեր արտահայտել մեջը եռացող զգացումները մի արտակարգ, բուռն թափով.— կուզեր պոետ լինել, գրել մի պոեմ աղատության մասին, կամ լինել մի երգիչ ու հզոր ձայնով ավետել ամենքին իր մեծ ուրախությունը:

Նա դուրս նայեց պատուհանից. իր առաջ բացվում էին դիմացի սարերը, որոնց կանաչ լանջերին ժպտում էր թարմ արևը, դրավելով դեպի ազատ բարձունքները:

Լևոնյանը վեր թռավ անկողնից ու սկսեց հագնվել: Այնքան բուռն էր նրա աղատության ուրախությունը, որ թվում էր թե այսօրվանից սկսվում է իր կյանքում մի նոր, չտեսնված շրջան, և որ այդ զգում է ոչ միայն ինքը, այլև ամենքը,— դրսի բոլոր մարդիկ...

Նա լվացվեց միջանցքում, ոգևորությունից առատությամբ թափելով ջրի կաթիլները լվացարանի շուրջը: Տանտիկինը, որից նա վարձում էր սենյակը, նկատեց այդ անկարգությունը» և անցնելիս կշտամբանքի մի հայացք ձգեց Լևոնյանի կողմը:

Բրդոտ երեսարբիչը շտապ-շտապ քսելով դեմքին, նա ներս մտավ իր սենյակն ու դեռ չվերջացրած սրբելը, շպրտեց երեսսրբիչը մահճակալի վրա, ապա սկսեց արագ քայլերով հետ ու առաջ քայլել սենյակում, շվացնելով օպերային մի եղանակ:

Հանկարծ դուռը թխկացրին.

— Մտե՛ք— կանչեց Սուրենը (այդպես էր նրա անունը), սպասելով, թե ինչ որ արտասովոր մարդ է գալու (այսօր՝ ամեն ինչ պիտի արտակարգ լիներ),— բայց մտավ լվացարարուհին՝ պաղթական Սիրանը՝ ձեռքին բռնած սպիտակեղենը:

— Բարի լույս,— ասաց Սիրանը, իր հոգատար-մայրական դեմքը դարձնելով Լևոնյանին.

— Ով աղատությո՛ւն — գոչեց Լևոնյանը ձեռքերը բարձրացնելով ու լայն պարզելով:

— Ի՞նչ կենես, ամոթ չէ՞,— վախեցած բողոքեց Սիրանը, կարծելով, թե Լևոնյանն՝ ուզում է գրկել իրեն:

Լևոնյանն զգաց, որ իր ոգևորությունը սահմանից անցել է ու սթափվեց:

— Լա՛վ, Սիրան, մի վախենալ, էսօր իմ աղատության օրն է:

Սիրանը՝ դեռևս պահելով իր կասկածը, կանգնած էր գրքերի մոտ: Լևոնյանը հանեց իր փոքրիկ պորտմոնեն ու դատարկեց սեղանի վրա իր ամբողջ փողը, որը՝ բաղկացած էր մի արծաթե ռուբլուց ու պղնձե մանրուքից: Սիրանը մոտեցավ սեղանին ու լուռ վերցնելով արծաթե ռուբլին, շտապով դուրս գնաց սենյակից, մտածելով, թե տղան փոքր ինչ ցնորվել է:

Լվացարարուհու դալը հիշեցրեց Լևոնյանին «կյանքի պրոզան». նա այսօր պիտի գնար դպրոց՝ ավարտական վկայական ստանալու: Ու մի անախորժ ամպ՝ անցավ նրա հորիզոնով.— ուրեմն էլի՞ պիտի տեսնեմ այն Սաթայելին»,— մտածեց նա դիրեկտորի մասին.— «ութը տարի տանջել է այդ անիծածը... Ա՜խ, թե մեկը նրանից վրեժ առներ»...

Նա աչքը ձգեց սեղանի վրա դրած սպիտակեղենի վրա, ու նկատելով կապույտ չթե բլուզը, հանկարծ մի չարաճճի մխոք հղացավ. նա վճռեց հագնել այդ բլուզն ու այդպես ներկայանալ դիրեկտորին. նա շատ լավ գիտեր, որ դա ավելի կկատաղեցներ նրան, քան կարմիր լաթը՝ ցուլին: Բա՞նի անգամ էր նա պատժել «ֆորմայի» ամենաչնչին խախտման պատճառով. «ֆորման» նրա համար ասված էր:...

Վճիռը դրավիչ էր և տաղնապալից: Թեյից հետո նա անմիջապես հագավ կապույտ բլուզն ու դնաց դեպի դիմնազիան: Իջնելով քաղաքի կենտրոնը, նա նստեց ձիաքարշի փոքրիկ վա-

դոնը, շարունակ մտածելով, թե ի՞նչ ելք կունենա իր հանդուգն քայլը:

Ահա նորից նրա առաջն էր դպրոցի դուռը, անհրապույր շենքը. ո՛րքան ծանոթ էր նա և ո՛րքան անհաճելի իր ամեն մանրամասնություններով, բայց այժմ նա թվում էր արդեն որպես մի հին, մոռացված հիշողություն:

Նա մտավ բակը երկաթե լայն դռներով, զարմանալով այնտեղ տիրող լռությունից ու ամայությունից: Նա սովոր էր այստեղի վազվզոցին, աղմուկին, իսկ այժմ կարծես մի ավերակ, լքված տան մեջ էր: Բակի խոշոր ակացի ծառերը, որոնք սովորական օրերին չէին նկատվում, այժմ, ընդհակառակը՝ նրա ուշադրությունն էին գրավում՝ մի նոր, թախծոտ տրամադրություն ներշնչելով:

Նա անցավ բակի երկարությամբ, ցանկանալով վերջին անգամ հայացքը ձգել այնքան ծանոթ տեղերին, կանգ առավ անխնամ թողած պարտեզի առաջ, ապա դարձավ ու դնաց դեպի դրասենյակը, որը գտնվում էր բակի մյուս ծայրին՝ առաջին հարկում: Ներս մտնելով, նա կանգնեց մի դատարկ սեղանի առաջ: Դրասենյակի խորքում նստած էր դիրեկտորը ու ակնոցների տակից թեք նայելով իր սովորական, բարկացած դեմքով՝ ստորագրում էր թղթերը: Քարտուղարը կանգնած էր նրա կողքին ու երկյուղով սպասում էր նրա հրամաններին:

Հանկարծ դիրեկտորը գլուխը բարձրացրեց ու նկատելով Լևոնյանին, վեր կացավ տեղից.

— Սա ինչ անկարգություն է,— ասաց նա իր բամբ ձայնով, չեշտակի նայելով Լևոնյանին.— դու գիտես, ո՞րտեղ ես գտնվում...

Նրա աչքերի բիբերը նայում էին ակնոցի տակից այնպես ցասկոտ, ասես դարան մտած գիշատիչներ լինեին:

— Ի՞նչ, որ ավարտել ես, կարծում ես՝ կարող ես ներկայանալ ամեն տեսակի հագուստո՞վ. մոռացել՞ ես դպրոցի պարտադիր համազգեստը,— շարունակում էր նա իր կշտամբանքները:

Այս բոլորի պատճառը Լևոնյանի կապույտ բլուզն էր. դիրեկտորի համար մահացու հանցանք էր դպրոցական «ֆորմայի» խախտումը: Բայց կար մի հանգամանք, որ ջլատում էր նրա զսպությունը. զգացվում էր, որ դիրեկտորի ձայնը սովորականից թույլ է, որ նա դեմ է ընկնում ինչ որ ժայռի... Նա՝ ըստ սովորականի, արդեն պատրաստ էր ասելու, «դու կպատժվես մի շաբաթով՝ օրական երեք ժամ», բայց հանկարծ զգաց, որ Լևոնյանն այլևս աշակերտ չէր, այլ դպրոցն ավարտած,— նրան ձեր կարելի պատժել...

Իսկ այդ հանգամանքն ուժ էր տալիս Լևոնյանին. նա լուռ կանգնել էր, լավ իմանալով, որ դիրեկտորի սլաքներն անզոր են:

Վերջապես սթափվելով իր ցասումից, դիրեկտորն ավելի թմեցրեց ձայնը, նստեց սեղանի մոտ, մի քանի թղթեր շուռ տվեց իրար ետևից, ապա հրամայեց քարտուղարին գտնել Լևոնյանի ատեստատը: Ահաբեկված քարտուղարը մոտեցավ հետևյալ սեղանին, ուտելու ճկունությամբ կռացավ, անաղմուկ դուրս քաշեց ներքևի բաժանմունքից ավարտական վկայականների թղթապանակն ու դրեց դիրեկտորի առաջ: Վերջինս թերթեց վկայականները, ինչ որ փնթփնթաց քարտուղարի հասցեին, ու ասաց Լևոնյանին:

— Ստորագրե՛ցեք:

Լևոնյանը մոտեցավ, ստորագրեց աղգանունը մատյանում ու ատեստատն առնելով, դուրս գնաց բակը, նոր միայն զգալով, թե ինչ՞ լարված դրության մեջ էր քիչ առաջ:

— «Վերջա՛պես,— ասաց նա ինքն իրեն, ազատ շունչ առնելով.— բայց քեզ էլ լավ «ատեստատ» ընկավ— շարունակեց նա դիրեկտորի հասցեին:— Շա՛տ կհիշես իմ կապույտ բլուզը»...

Նա դուրս գնաց բակից, անցավ մինչև երկու փողոցների անկյունն ու նորից կանգ առավ, հետ նայեց. ինչ որ զգացում պահում էր նրան.— թվում էր, թե մի բան պիտի ասի վերջին հրաժեշտին:

— Մնաս բարե՛ իմ բանտ,— ասաց նա մտքում,— կաշխատեմ ջնջել հիշողությունից այն ամենը, ինչ կապված է քեզ հետ...

Ու հեռացավ մտաբաղ, ընկավ փողոցի մարդկային հոսանքի մեջ: Նա գնում էր հուզված, շառագունած դեմքով, վերապրելով նոր անցած միջադեպը՝ դիրեկտորի հետ: Բայց շատ

չանցած՝ նրա մտքերն այլ ընթացք ստացան: Նա մտածում էր, թե ինչու իր կյանքը այսպես հակառակ է ընթանում. ինչո՞ւ նա կարծես միշտ վնասում է ընդհարումներ, ու արդելքներ է ստեղծում իր համար, մինչդեռ իր դասընկերներից շատերը հարթ ու հանդիստ անցնում են կյանքով, խուսափելով ամեն մի հակառակ քայլից:

Հենց այս վերջին ամսում՝ բացի դիրեկտորի դեպքից, նա էլի երկու ընդհարում ունեցավ,— օրինակ՝ ռուսաց լեզվի քննության ժամանակ նա արտասանեց Պուշկինի «Հուշարձանը» ոչ ընդունված՝ դպրոցական, այլ ուրիշ՝ «դրսի» հրատարակության ընդունելով, որի մեջ ասված է՝ «Որ իմ դաժան դարում փառաբանեցի ես ազատությունը...» Ուսուցիչը սիրմնեց այդ «ազատությունից» ու շակեց «սխալը», թշնամական հայացք ձգելով Լևոնյանի վրա: Լավ է, դիրեկտորը ներկա չէր և ընթերականները չնկատեցին, թե չէ դեպքը շատ թանդ կնստեր: Սակայն ուսուցիչը վրեժը հանեց, պակասացնելով թվանշանը:

Ընդհարում եղավ և քահանայի հետ՝ կրոնի քննության ժամանակ: Գրաբար ավետարանից նա դիտմամբ ընտրեց այն դլուխը, որտեղ ասված է՝ «վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցոց»... Քահանան ընդունեց այդ որպես անարդանք իր հասցեին:

Սհա այս և նման հին ու նոր դեպքերը հիշում էր Լևոնյանն ու մտածում. «Ինչո՞ւ եմ անում այս բոլորը. ինչո՞ւ ուրիշները չեն անում այդ»...

Ու այդպես խորհրդածելով, նա եզրակացնում էր, որ իր «հակառակ» ընթացքի պատճառով իր կյանքը լինելու է դառն ու լի տանջանքներով:

Բայց քիչ անց՝ նրա մտքերն ընկան հակառակ ալիքների մեջ.— ինչպե՞ս նա վրեժը չհաներ այդ դաժան դիրեկտորից, այն քսու, եղվիտ քահանայից... Վերջապես՝ ի՞նչ հանցանք է կատարել նա՝ վերականգնելով Պուշկինի իսկական տողերը... չէ՛, նա չի կարող համբերել՝ այս բոլորը տեսնելով... «Դա դեռ քիչ է, եթե մեզ մոտ էլ լինի հեղափոխություն, ինչպես Ֆրանսիայումն է եղել, առաջին հերթին պիտի բանտարկել այդ բրոնակալ և եղվիտ տիպերին»...

Տուն հասնելով, Լևոնյանը փակվեց սենյակում, հանեց սեղանի արկղից մի տետր, որը նա մտադիր էր դարձնելու հիշատակարան՝ ու սկսեց դրել.— «Այսօր ես ստացա ավարտական վկայականս ու հրաժեշտ տվի դպրոցին, վերջին անդամ ընդհարվելով դիրեկտորի հետ: Այդ դաժան «բանտասպետը» նորից ցույց տվեց իր բնույթը և թունավորեց նույնիսկ վերջին հրաժեշտի ժամը, բայց ինքն էլ վառվեց իմ կապույտ բլուզի պատճառով»... Մանրամասն նկարագրելով դեպքը, Լևոնյանը վերջացրեց այսպես.— «Առաջներում թվում էր, որ դպրոցն ավարտելուց հետո կդարձվի իմ ապագայի ուղին, բայց ես տեսնում եմ հակառակը,— ամեն ինչ անորոշ է, մշուշ է իմ առաջ»...

Այդպես նա գրեց մի քանի երես, ապա՝ վերջացնելուց հետո կարդալով՝ չհավանեց.— նրան թվաց, թե այն չէ արտահայտել, ինչ ուզում է ասել, ու գրածը պատռեց մանր կտորներով: Ապա պառկեց մահճակալի վրա ու սկսեց կարդալ «Դոն-Քիխոտը»:

II

Երեկոյան դեմ Լևոնյանը դուրս եկավ տանից ու գնաց իր ընկեր Մարդարյանի մոտ: Երբ նա ներս մտավ, Մարդարյանը պառկած դիրք էր կարդում, իսկ նրա քույրը՝ Լիզան, որը գիմնազիայի աշակերտուհի էր, ձեռագործով էր զբաղված: Լևոնյանին տեսնելով, Լիզան խնդուն վեր թռավ տեղից ու հանկարծակի շառագունելով, թեթև բարևեց ու արագ քայլերով գնաց մյուս սենյակը:

Լևոնյանը ձգեց գլխարկն աթոռի վրա ու մոտալ բարևեց:

— Ի՞նչ ես մռութդ կիտել,— ասաց Մարդարյանը, հեղնող հայացք ձգելով ընկերոջ վրա:

— Բա Սաթայելին տեսնողն ի՞նչ կլինի:

Մարդարյանը հասկացավ, թե ում մասին է խոսքը,—նրանք երբեմն դիրեկտորին Սաթայել էին անվանում:

— Հիմա էլ ե՞ս նրա մասին մտածում,— ասաց նա քմծիծաղով — վերջապես հանիր գլխիցդ էդ խրավիլակին:

Լևոնյանը պատմեց իր այդ օրվա ընդհարման մասին, բայց զարմացավ, նկատելով, որ Մարդարյանը՝ փոխանակ «ազդվելու» խնդում է:

— Է՛, լավ, ինչ՞ կա որ, ցնդված բյուրոկրատ է. ինձ վրա

էլ վնթփնթաց,— բլուղիս մի կոճակը պակաս էր,— խամ ե՞ս այդ ապուշից, փոխանակ ուրախանալու, որ այդպես դժվացրել ես, դեռ էլի տխրում ե՞ս... երևակայում եմ՝ ինչպես կկատաղեր... երևի կարծում էր, թե աշխարհի վերջն է եկել...

Ու Մարգարյանը սկսեց ծիծաղել լիաթոք, ցնցվելով ամբողջ մարմնով:

Ընկերոջ, զավեշտական վերաբերմունքը ազդեց Լևոնյանի վրա. նա ինքն էլ վարակվեց ծիծաղով: Այնուհետև նրանք սկսեցին վերհիշել դպրոցական կյանքի զավեշտական դեպքերը, շարունակելով ծիծաղը:

— Արի գնանք, տոնենք մեր ազատությունը,— ասաց Մարգարյանը, ոգևորված վեր թռչելով տեղից:

— Գնանք,— հենց ես էլ այդ էի ուզում,— ասաց Լևոնյանը, պետք է քշել հիշողությունից սև ամպերին:

Նրանք դուրս եկան սենյակից, հեռները տանելով իրանց խնդիրը: Պատշգամբում նրանց հետևից կանչեց Մարգարյանի մայրը:

— Քա՛, ո՞ւր եք գնում, ձեզ համար չայ եմ պատրաստել մուրաբով:

Մարգարյանը կանգ առավ, նայեց մորն ու ժպտաց:

— Կուզե՞ս թեյ խմել — հարցրեց նա ընկերոջը:

— Չէ՛, ինչ գործ ունենք թեյի հետ:

Մարգարյանը ձեռքով մի անորոշ շարժում արավ, ասելով.

— Լա՛վ, էդ հետո...

— Կգա՞ք,— հարցրեց մայրը, բայց պատասխան չստացավ. նրանք արդեն փողոցումն էին:

Վրացական տարազով մաքուր հագնված մայրն իր բարի դեմքի ժպիտը չթողնելով, կշտամբանքով շարժեց գլուխն ու վնթփնթաց.

— Իսկը գժեր են...

Ու շտապեց դեպի սենյակի պատուհանը, որպեսզի նորից տեսնի իր Ստեփանին, ու հրճվի իր մայրական զգացումներով:

Երկու ընկերները բարձրացան քաղաքը եղերող սարը, որի ետևը գտնվում եր բուսաբանական այգին: Պարզ, ամառային երեկո էր. դիմացի լեռները ցուցադրում էին իրանց շարքերը, կանաչ-կապույտից անցնելով դեպի ձյունապատ գագաթները, որոնք անմատչելի վեհությամբ իշխում էին հեռուներում:

Նրանք մտան մի փոքրիկ ամառային ռեստորան ու նստեցին բաղեղով պատած մի հովանոցում՝ բուսաբանական այգու դիմաց: Այնտեղ՝ դարեջրի բաժակներն առաջները՝ նրանք խոսում—երազում էին իրանց ապագա գործունեության մասին.

— Առաջին բաժակը մեր ազատության կենացը,— ասաց Մարգարյանը, բաժակը բարձրացնելով,— սա այնքան ուրախալի կենաց է, որ ոչ մի ճառի կարիք չունի:

— «Ազատությունը, Սանչո, բնության ամենաթանկագին բարիքներից մեկն է»,— ասաց Լևոնյանը, հիշելով նոր կարդացած «Դոն Քիխոտից», ու բարձրացնելով բաժակը, չխկացրեց Մարգարյանի բաժակին:

Ապա դանդաղ խմելով գարեջուրը, նրանք շարունակում էին իրենց զրույցը: Դա իսկապես ոչ թե զրույց էր, այլ պատանեկան զեղումների մի շարան: Նրանք խոսում էին՝ կարծես արբեցած ինչ որ տեսիլներով. իրար լրացնելով, իրար առաջ կտրելով՝ պատկերում էին ապագան ծիածանի վառ գույներով...

— Է՛հ, ինչեր կարելի է անել... ասաց Մարգարյանը, բռունցքով խփելով սեղանին.— կյանքը մեզ է սպասում, մենք՝ կյանքին...

Ապա փոքր ինչ լռելով, նա շարունակեց:

— Կհավաքենք մեր շուրջը լավ տղաներին, ժողովներ կանենք...

— Ինքնաղարգացման խմբակներ կկազմակերպենք — ավելացրեց Լևոնյանը:

— Դասախոսություններ կտանք զանազան հարցերի շուրջը...

— Ժուրնալ կհրատարակենք... ի՞նչ հոդվածներ կգրենք...

— Հա՛, կգրենք հասարակական հարցերից, պատմությունից, բնագիտությունից...

— Ես կգրեմ բանվորների և գյուղացիների մասին,— ասաց Մարգարյանը,— իսկ դու՝ գիտական հարցերից, օրինակ՝ դարվինիզմից, բայց ես կուզեի, որ դու ուրիշ բան գրեիր:

— Ի՞նչ:

— Մի հիշատակարան..., նկարագրեիր մեր բոլոր ընկերների կյանքը:

— Ձեմ սիրում հիշատակարան,— պատասխանեց Լևոնյանը, հիշելով այսօրվա անհաջող դեպքը,— միշտ կեղծ է դուրս գալիս և պատռում եմ...

— Այդ ոչինչ, դրա դեմն էլ կառնենք. դու կգրես ու կտաս ինձ, իսկ՝ ես կպահեմ, կազատեմ քո պատռելուց...

Այդպես՝ վարդագույն լույսերով հոսում էին դաղափարները նրանց ապագա խմբագրատներից, ժողովներից... Երազի արագությամբ աճում էր նրանց գործունեության շրջանը՝ անծայր ոգեշնչությամբ վառված... Ապագան դալիս էր մի դեղեցիկ անորոշության մեջ՝ նման արշալույսի առաջին ակնարկներին, և հենց այդ անորոշությունն էլ ավելի դրավիչ, ավելի խորհրդավոր էր դարձնում այն...

Երիտասարդ կիսալուսինը հետզհետե բարձրանում էր ու պայծառանում, լեռներից փչում էր բուրավետ հովը. ու ամեն ինչ հորս կողմը,— և այդու կիսամութ սաղարթները, և պարզ երկինքը՝ ներդաշնակում էին նրանց երազների հետ:

— Է՛հ, շատ բան կարելի է անել, շա՛տ,— ասաց Մարդարյանը, նորից ոգեշնչված խոսելով բռունցքով սեղանին. բաժակները դընդացին ու այդ ձայնի վրա եկավ սպասավորը, կարծելով, թե իրեն կանչում են: Նրա դալը ասիթ տվավ սթափվելու պատանի հյուրերին. նրանք նոր միայն դդացին, որ արդեն ուշ է, հիշեցին, որ երազներն էլ պիտի վերջ ունենան: Ու վճարելով սպասավորին, դուրս եկան ռեստորանից և դանդաղ քայլերով սկսեցին իջնել խճուղիով: Նրանք գնում էին դարձյալ խոսելով ու տեղ-տեղ կանգ էին առնում՝ ավելի դարդացնելու համար իրանց մտքերը: Նրանց առաջ ամբողջ քաղաքն էր սիրված իր բազմաթիվ լույսերով, վերևը՝ աստղալից, պայծառ երկինք լուսնով ողողված, ու սրտերում տենչը՝ դործելու, կյանքը տալու ժողովրդի համար... Նրանք քայլում էին դետնի վրա, բայց նրանց մտքերը մի ուրիշ, երազային աշխարհումն էին...

Սակայն արբեցման օրերն անցան, «աղատությունը» դարձավ սովորական և դլխնադիան հիշողություն: Նրանց առաջ սկսեցին բացվել կյանքի «ստվերները». մի նոր, սիրտ ծակող դդացում հետզհետե բուն էր դնում Լևոնյանի մեջ. նա դդում էր իրեն միայնակ կյանքի այս քաոսային շարժման մեջ, որտեղ թվում եր՝ ամեն մեկը թողնված էր իր բախտին.— ամեն մեկը վազում էր միայն ի՛ր համար, վազում եր ուրիշների առաջը կտրելու համար... Մի անմիտ, տարերային մրցություն էր տիրում չորս կողմը, որը խռովահույզ դդացումներ ու մտքեր էր բերում նրա մեջ: Նա սկսում էր իրեն տալ այն հարցերը, որոնք հետագայում պիտի պարբերաբար դային նրա առաջ և համառորեն պատասխան պահանջեին.— ի՞նչ է կյանքը,— մի քա՞ոս է, թե՞ մի խելացի շարժում, ինչ՞ է նրա խմաստը, ինչ՞ է կյանքի նպատակը...

Լևոնյանի նախկին դասընկերներն այժմ ավարտելուց հետո՝ թվում էր՝ արագորեն փոխվում էին և արդեն ուրիշ մարդիկ էին: Առաջ՝ դիմնադի պատերի մեջ դանազան ազդությունների և խավերի պատկանող աշակերտները՝ միևնույն դասարանում նստած, միևնույն ռեժիմի տակ ու միաձև հագուստի մեջ, դոնե արտաքուստ թվում էին հավասար, իսկ այժմ կարծես ամեն քայլափոխում դիտմամբ շեշտվում էր՝ նրանց հարստությունը, նրանց դիրքը:

Անցյալ օրը Լևոնյանը պատահեց փողոցում իր նախկին դասընկեր Բարսեղյանին: Նա գնում էր իր մոր հետ թանցուկ՝ ոտից դլուխ պճնված: Նա անցավ Լևոնյանի մոտով, պատասխանեց նրա բարևին դլխի թեթև շարժումով,— կարծես ասում էր այդ բարևով, թե ինքը հարուստ է, ուրեմն և կարող է նույնիսկ չբարևել իր նախկին աղքատ ընկերոջ... իսկ մայրը, որը նույնպես ծանոթ էր Լևոնյանին, բարևեց այնպես բարձրից, ասես ողորմություն էր տալիս իր բարևով... Լևոնյանն անցավ նրանց մոտով, դդալով մի խայթող վիրավորանք, վճռելով էլ երբեք չբարևել իր նախկին ընկերոջ: Դրա հետ միասին իր հետ տարավ մի բուռն ատելություն,— ոչ միայն Բարսեղյանի դեմ, այլ «բարսեղյանների» դեմ...

Մյուս ընկերները նույնպես այս կամ այն ձևով ցուցադրում էին իրենց ծնողների դիրքը: Կյանքը բացահայտորեն բաժանում էր նախկին դասընկերներին, կարծես համոզելով, որ նրանց մեջ ընդհանուր կապ չկա: Ամեն մեկն այժմ շարժվում էր տարբեր խավերում, տարբեր ուղիներով, իսկ եթե ընկերների մեջ կային

մի քանիսը՝ որոնք դուրս էին այդ ընդհանուր հոսանքից, նրանք էլ մնում էին անջատված, կղզիացած: Այդ կղզիացումը բերում էր թախիծ. երբեմն թվում էր, թե այդ փոքրաթիվ ընկերները՝ առհասարակ դուրս են կյանքից:

Իսկ իրականությունն արդեն բերում էր նոր հոգսեր ու մռայլում նրանց ճակատները.— դեռևս որոշ չէր համա՛լսարան դնալը, և կասկած էր ծագում, թե կարող է բոլորովին չհաջողվել, որովհետև դա կախված էր նյութականից... Իսկ ի՞նչպես չդնալ համալսարան, չզինվել գիտությամբ՝ կյանքի հարցերը վճռելու, ժողովրդին լուսավորելու համար... Չէ՛, այդ մտքից հրաժարվելը կլիներ ամենամեծ դժբախտությունը...

Այս խառը տրամադրության մեջ երկու ընկերները բաժանվեցին իրարից: Լևոնյանը գնաց իր հայրենի գյուղաքաղաքը, իսկ Մարգարյանը մնաց Թիֆլիսում:

III

Իր հայրենիքը ընդունեց Լևոնյանին երկու հակադիր տպավորությամբ. դեռ հեռվից՝ շրջակա բնությունը գրավեց նրա հայացքը հին կարոտով, իսկ երբ կառքն ընկավ այդինների սավերախիտ ճանապարհը, մի ընտանի մթնոլորտ պարուրեց նրան դուրեկան բուրմունքով. խաղողի այդինները, պաղատու ծառերի ծանոթ շարքերը ամեն կողմից նրա ուշադրությունն էին հրավիրում... «Լա՛վ է, լա՛վ է»,— ասում էին նրա զգայարանքները մինչև գյուղաքաղաքին հասնելը, բայց այստեղից տպավորությունը փոխվեց:

Կառքն ընկավ քաղաքի գլխավոր փողոցը, որը միաժամանակ և խճուղի էր... նրա երկարությամբ շարված էին իրար եռևից խանութներն ու արհեստանոցները: Խանութների առաջ՝ սավերում՝ հենց մայթերի վրա տեղ-տեղ խմբով նստած էին ծերունիները՝ երկար, ալեհեր մորուքներով, հանդիստ, խոհուն դեմքերով: Նրանց գլխներին ծանր, մորթե վարխալներ էին ու ձեռներին՝ կեռ ծայրերով հոնի ձեռնափայտեր. նրանք զրուցում էին հին, անցած բաներից, իրար լրացնում էին հիշողություններով ու հանգիստ հորանջում, կարծես ավելի խտացնելու համար կյանքի միօրինակությունն ու թմրածությունը:

Այնքան ծանրորը՝ փողոցը, որ քաղաքից եկած կառքը ամենքի ուշադրությունն է գրավում: Անշարժ նստած դերձակները, կամ մորթե գդակ կարողները մի բոպե հանգստացնում են իրենց աչքերը, նայելով կառքին, ու հետո հարց տալիս՝ թե «էս ո՞վ էր եկողը»:

Որ կողմն էլ դարձնում էր իր հայացքը Լևոնյանը՝ աղքատության ու հետամնացության տպավորություն էր ստանում: Տները թվում էին ցածր, կարծես վերևից ճնշված լինեին. խեղճ էին թվում մարդիկ իրենց հին տարազով. ինչ որ թաղնված անհուսություն էր տարածված բոլորի մեջ, որը կարծես ասում էր — «այս է՝ ինչ որ կա, էլ ուրիշ ոչինչ չի լինելու»: Ու այս բոլորը մի վանող զգացում էր բերում Լևոնյանի մեջ.— «էլի նույնն է, ինչ որ տեսել եմ»,— մտածում էր նա,— միթե՞ մշտապես այսպես էլ մնալու է»...

Ծնողներն ընդունեցին Լևոնյանին ջերմ կարոտով: Մայրը հաղիվ մի քանի խոսք ասաց. ու ամբողջովին հալվեց իր համբուրների, զգացումների մեջ: Նորից Լևոնյանն զգաց մոր վաղաքչանքի, նրա ուրախության արցունքների քաղցրությունը:

— Բա էսքան կեղանա՞ն, աչքս ջուր կտրեց սպասելով,— կշտամբեց նա:

Ու այդ հանդիպման բոպեից, իր Սուրենը երևակայությունից իջավ իրականության և դարձավ իր պաշտամունքի առարկան: Նա հիանում էր իր տղայի ամեն բանից — նրա խոսելուց, նրա քայլվածքից, «ուսումից», հագուստից: Նա քիչ էր խոսում, բայց շարունակ աչքը չէր հեռացնում նրանից, երբեք չհագենալով նայելուց: Այժմ նա ծածուկ երազում էր՝ ինքն իրան խաբում, երևակայելով, թե Սուրենն էլ չի դնա քաղաք, կմնա տանը, կամուսնանա, իսկ հետո՝ երևակայությունը բերում էր սիրունիկ թոռնիկներ... անսահմա՞ն երջանկություն...

Տունը, իրենց բակը, հարևանների տները բոլորը նույնն էին մնացել: Մայրը պատմեց մի քանի նորություններ,— մի երկու պառավներ էին մեռել իրենց թաղում, մի երկու երիտասարդներ՝ ամուսնացել կամ դնացել էին քաղաքներ՝ բանվորության:

Երեկոյան դեմ եկավ հայրը, հոգնած օրվա աշխատանքից, բարևեց Սուրենին իր կոշտացած, ուռչպարի ձեռքով ու այս անգամ համբուրեց ճակատը՝ նրա ա[illegible] Ամիսով:

92788
ՀՍՍՌ ԱՌ[illegible]
5/69
47

— Ապրես, որդի, քո անունն էլ, մերն էլ պարզ արիր,— ասաց նա գոհունակությամբ:

Ապա սկսեց հարցեր տալ որդուն քաղաքի ու աշխարհի նորություններից: Սուրենն աշխատում էր բացատրել հորը այս կամ այն հարցը, բայց հոգնած հայրը դժվարությամբ էր հետևում նրա բացատրություններին: Նա միայն արտահայտեց իր զարմանքը որդու ուսումից:

— Բա էսքան կարդալ կլի՞, լավ լղարացրել են քեզ. ուսումը զո՞ռ է, հա:

Պարծենալով իր «ուսում առած» որդով, նա միաժամանակ քաշվում էր նրանից, ղղալով այն տարածությունը, որ կար իր և նրա մեջ:

Փիչ անց՝ Սուրենը դնաց իր պապի մոտ: Նա իր մոր հայրն էր և նյութապես օգնում էր իրեն: Այս շրջապատի մեջ ղլխավոր դեմքը նա էր,— նրա հետ ռեսնվելը պիտի լիներ ավելի հանդիսավոր, խոսակցությունը՝ ավելի երկար:

Սուրենն արդեն հեռվից նկատեց պապին.— նա նստած էր իր երկհարկանի տան պատշգամբում, փոքրիկ կլոր սեղանի առաջ:

Նորից նա բարձրացավ քարե սանդուղով, որի մաշված աստիճաններն այնքան ծանոթ էին նրան մանկության օրերից:

— Ա, բա՛րև, բա՛րև Սուրեն,— ասաց պապը, ձեռքը մեկնելով,— ի՞նչ մեծացել ես. «չնորհավորում եմ քո ավարտելը. ապրես, «լավ է անուն բարի, քան դանձն աշխարհի»... բայց ինչու՞ ես նիհարել, չա՞տ ես պարապել, հա՞:

Պապը նույնն էր մնացել:—Նույն ալեհեր, ժիր ծերունին իր անխափան սովորություններով: Նույն կիսահեղնական ժպիտն էր ճերմակ մազերի շրջանակում, իր հին պարեզոտը հագած, որից եկեղեցական մոմի հոտ էր գալիս ու գլխին վարդապետական թասակը, որը ո՞վ գիտե քանի տարեկան էր: Նրա առաջ էին և իրեն անբաժան իրերը.— իր ակնոցների տուփը՝ մաշված ու թուլացած, իր կարճ մատիտը, որը նա այնպես խնայողաբար էր գործածում, իր փոքրիկ դանակը, որին նա գրչահատ էր անվանում, ու իր հասարակ, դեղին թղթից ծոցատետրը, որտեղ նա նշանակում էր իր մանր ծախսերը և կարդացած գրքերից խրատական մաքեր: Նրա առաջ էր և Սմայլսի

«Ինքնօգնություն» գիրքը, որը նա հաճախ սիրով կարդում էր, իսկ գրքի վրա՝ «Մշակ» լրագիրը:

Այդ բոլոր իրերը դասավորված էին կանոնավոր՝ ամեն մեկն իրեն տեղը. երբեմն նա փոքր ինչ քաշում էր մի կողմը ակնոցի տուփը կամ դանակը, ու կարծես նրա ուշադրությունը միշտ հետևվում էր դրանց, ստուգելով՝ տե՞ղն են արդյոք, թե չէ:

Սուրենը նստեց կլոր սեղանի մոտ: Շուտով ներքևից բարձրացավ վերև փոքր ինչ կորացած տատը՝ նույն սև շորերով, ու գլուխը, բերանը հին ձևով կապած: Նա փաթաթվեց Սուրենին, համբուրեց բերելով իր հետ, իր թոռանը մանկությունից ծանոթ, քթախոտի հոտը:

— Ի՜հ, մի թիզ երեխա էիր, էս ե՞րբ մեծացար,— ասաց նա, ձեռքը չփելով Սուրենի դեմքին — մի տե՛ս, բեխերն էլ են եկել...

Ապա՝ նկատելով պապի լուրջ դեմքը, որը կարծես ասում էր, թե՝ «սա կանանց տեղը չի», նա մի քանի խոսք էլ ասեց ու շտապեց դեպի ներքև, նախանձելով պապին, որ պիտի երկար խոսեր թոռան հետ:

— Դե՛, պատմիր Սուրեն, տեսնենք, ինչ՞պես անցան քննությունները,— այստեղ նշանակած են ավարտողների ազգանունները — ասաց պապը, ցույց տալով իր առաջի «Մշակ» լրագիրը:

Սուրենը պատմեց քննությունների ամբողջ անցուդարձը: Պատմեց կրոնի քննության առթիվ ծագած միջադեպը. պապն անսպասելի կերպով անցավ Սուրենի կողմը:

— Լավ ես արել,— ասաց նա— Թիֆլիսի քահանաները բոլորը որկրամոլ են.— իսկապես որ «զուլուս կլանեն»...

Ապա փոքր ինչ լռելուց հետո նա հարցրեց.

— Զլի՞նի անհավատ ես դարձել:

— Ես վաղուց եմ անհավատ:

Պապը մռայլեց հոնքերը, որ նշանակում էր, թե նրան դուր չէր գալիս այդ հայտնությունը:

— Զուր ես այդպես մտածում,— ասաց նա լրջությամբ,— հայտնի փիլիսոփաներն ընդունում են կրոնը, իսկ դու ինչո՞ւ չպիտի ընդունես.

— Նախ ոչ բոլորն են ընդունել, իսկ եթե ընդունել են, ոչ

թե համոզմունքով, այլ մեծամեծներին հաճոյանալու համար:

Պապը նայեց զարմացած, նա մտածում էր, թե «ո՞րտեղից են դալիս այսպիսի մտքերը ջահելների մեջ:

Նկատելով, որ Սուրենի դիմադրությունն ուժեղ է, նա բարվոք համարեց չվիճել և դիմեց հաշտվողական տակտիկայի:

— Բայց ես հույս ունեմ, որ դու այդ մտքերը հասարակության մեջ չես արտահայտիլ՝ ուրիշներին չդայթակղեցնելու համար:

Սուրենը հասկացավ, որ պապը խուսափում է վեճից, ու էլ չշարունակեց խոսքը նույն հարցի շուրջը:

Այո՛, պապը նույնն էր մնացել, բայց փոխվել էր Սուրենը,— պապն այժմ թվում էր որպես մի հին մարդ՝ մոլորված իր հին հավատով. նա հեռու է դիտությունից, այդ պատճառով էլ չի դղում, որ իր պաշտած՝ աստվածը երևակայության արդյունք է...

Իսկ պապը սրտի խորքում այն կարծիքին էր, որ բանը հավատալու կամ չհավատալու մեջ չէ, այլ կյանքում հաջողակ լինելու մեջ.— նա մտածում էր, որ Սուրենը կավարտի, կդառնա անվանի (այսինքն հարուստ) բժիշկ, կամուսնանա, կընդունի կյանքի կարգերը և նրանց հետ՝ անխուսափելի կրոնը, թեկուզ և առերես: Առայժմ դլխավորն այն է, որ նա «հերետիկոսություն» չանի և ուրիշներին էլ չդայթակղեցնի...

Ծառան բերեց մատուցարանի վրա երկու բաժակ թեյ ու փոքրիկ շաքարամանը, և դրեց սեղանի վրա: Պապը՝ ըստ իր սովորության՝ հայացքը դարձրեց շաքարամանի վրա, կարծես սառուցելով նրա բովանդակությունը: Դա մի փոքրիկ մետաղյա փայլուն շաքարաման էր, որ հիշեցնում էր եկեղեցական սկիհը: Լինելով խնայող, պապը շատ չափավոր էր գործածում շաքարը և նույնիսկ հյուրերի մոտ չէր կարողանում թաղցնել իր խնայողական տենդը:

Սառակցությունը պատվում էր զանազան հարցերի շուրջը, Սուրենը պատմում էր քաղաքի դեպքերից, դպրոցից, իր սովորած առարկաներից: Պապը լսում էր, հարցեր տալիս, բայց Սուրենին այժմ մտահոգում էր, թե ինչո՞ւ պապը չի խոսում իրեն համախոհաբար ուղարկելու մասին: Վերջապես պապը՝ փոքր ինչ լռելուց հետո ասաց՝

— Սպրես, Սուրեն, մեծ հաջողություն է, որ ավարտել ես, այժմ պետք է մտածենք, համալսարան ուղարկելու մասին. ես նամակ եմ դրել քեռուդ, հուսով եմ, որ չի մերժիլ...

«Ուրեմն հարցը դեռ որոշ չի»,— մտածեց Սուրենը,— համենայն դեպս ինքը՝ պապը չի ուղարկելու... Նա պիտի դիմեր Սուրենի քեռուն, որը հարստացել էր Բաղվում և կարող էր օգնել իր քրոջորդուն...

... Արդեն մթնել էր, սարերից փչող հովը հետզհետե ուժեղանում էր: Պապը վեր կացավ տեղից ու վրան ձչելով իր ամառվա վերարկուն, ասաց.

— Ինձ կներես, Սուրեն, ես փոքր ինչ տկար եմ, դնանք ներս:

— Ես կդամ քիչ հետո,— ասաց Սուրենը:

Պապը կանչեց ծառային, պատվիրեց հավաքել թեյի պարագաներն ու դնաց իր առանձնասենյակը, զգուշությամբ հավաքելով սեղանի վրայի լերերը:

Սուրենը մնաց միայնակ ու ընկավ անցյալի հիշողությունների մեջ: Զով երեկոն բերում էր մանկության օրերի պատկերները: Ո՞րքան այս բոլորը հիշեցնում է անցյալը... պապի հետ խոսելիս նրան թվում էր, թե ոչինչ չի փոխվել: Ահա հնչում է պապի զանգի ձայնը. զանգը կախված է պատշգամբում ու թելով միացած սենյակին, նա քաշում է; զանգահարում երկու անգամ, որ նշանակում է, թե կանչում է ծառային: Քիչ անց՝ լսվում են ծառայի քսմսալող քայլերը... Այո՛, ամեն ինչ այստեղ մնում է նույն դրության մեջ... Ինչ որ ճնշող զգացում էր դալիս մեջը: Նա մտածում էր, որ իր կյանքը բարդացել է այն օրից, երբ դուրս է եկել այս միջավայրից... արդյոք լավ չէ՞ր լինիլ, ինքն էլ մնար այստեղ, ապրեր նույն սահմանափակ կյանքով...Այն ժամանակ նա չէր զգա այն խորթությունը, որը նկատվում էր ամեն մի քայլափոխում... Այո՛, նա այժմ հասել է այն կետին, որ այլևս չի կարող ապրել այս միջավայրում... բայց ի՞նչ կլինի իր դրությունը, եթե չհաջողվի գնալ համալսարան և մնա այստեղ ... Բայց այդ միտքն այնքան դաժան էր թվում, որ նա չէր ուզում նրա վրա կանգ առնել: Նա վեր կացավ տեղից ու զանգաղ քայլերով դնաց դեպի տուն:

IV

Հաղիվ մի երկու օր տեվեց այն հետաքրքրությունը դեպի իր հայրենի գյուղաքաղաքը, որ Լևոնյանը բերել էր իր հետ՝ մի տարվա բացակայությունից հետո: Մի շաբաթ անց նա գրում էր իր ընկերոջ՝ Մարգարյանին:

«Ուղարկում եմ քեզ իմ նամակը, որը միաժամանակ քո ցանկացած օրագիրն է. եթե մինչև վերջը հասնելը չպատռեմ, բախտ կունենաս ստանալու...

«Այստեղ ամեն ինչ նախկին անշարժ դրության մեջ է. անցյալ ձմռանն ասում էին, թե նոր տանուտերի հետ փոփոխություններ են տեղի ունեցել. առայժմ փոփոխությունն այն է, որ նոր տանուտերը նոր տուն է շինել իր համար: Երկու տարի է դիմում են տվել դրաղարան — ընթերցարան բանալու մասին, բայց դեռևս թույլատվություն չեն ստացել նահանգապետից.—դեռևս շարունակում են տեղեկություններ հավաքել դիմում տվող ուսուցչի բարեհուսության մասին... սպա՞սիր թե երբ տեղ կհասնի գործը...

«Խաղաղ է այստեղ, այնքան խաղաղ, որ նինջ է բերում, որ լրագրական լուրերը թվում են անիրական: Խոստովանում եմ՝ ամենից շատ ես վախենում եմ այդ «նինջից».—երբեմն թվում է, թե նա ինձ էլ կարող է վարակել...

«Այս անդորրության մեջ երբեմն պատահում են նշանակալից դեպքեր.— օրինակ մոտ օրերս գյուղի դլխավոր փողոցում երկու կոշկակար կռվել են իրար հետ. մեկը ծեծել է մյուսին այն պատճառով, թե ինչո՞ւ է նա համարձակվել վերցնելու այսինչ մարդու կոշիկների պատվերը. չէ՞ որ ինքը պիտի վերցներ... Ասում են, որ մի քանի հարված էլ դիպել է չարաբաստիկ պատվիրողին...

«Արդեն երկու անգամ ընդհարվել եմ պապիս հետ կրոնի մասին վիճելով. այժմ հաշտություն է տիրում՝ այսինքն էլ չեմ վիճում: Օրերս անցնում են ընթերցանությամբ, մասամբ էլ մեր՝ երկուսիս սիրտը մաշող համալսարանի շուրջը մտածելով: Այդ հարցը դեռ սպասողական դրության մեջ է...

«Իմ պատշգամբից հետաքրքիր տեսարաններ են բացվում.— այստեղից երևում է գյուղացի Վարդանի տունը, հիշեցնելով նրա չարաբաստիկ «մի եղի» պատմությունը... Այդ մարդը մի տարի առաջ ուզեց իր միակ եղը զույգ դարձնել և դրանով իր գործերն առաջ տանել. դնաց փող վերցրեց հայտնի վաշխառուից և ուզեվորված սկսեց սայլը բանացնել: Բայց... մինչև գործերը կարգի բերելը պարտքի ժամանակը լրացավ և վաշխառուն և-կով մուրհակը ձեռքին... և ահա պարտքի դիմաց դնաց նախ մի եղը՝ ասա մյուսը, և այժմ էլ վաշխառուն պտտվում է նրա սայլի շուրջը...իսկ Վարդանը թակարդն ընկած մկան պես ոչ մի տեղ հանգիստ չի զգում,—նստում է «փիքը» անում, վեր կենում մտածում, դուրս գալիս փողոց, վերադառնում տուն, նայում սայլին նորից մտածում... Ո՞վ պետք է մտածի Վարդանի մասին...

«Անցյալ օրը մի դեպք էլ պատահեց, որ ինձ է վերաբերվում.— գյուղացին սայլը խուրձ բարձած քշում էր փողոցով, մի տեղ փոսի պատճառով սայլը փոքր ինչ թեքվեց դեպի մայթը, իսկ այստեղ այդ ժամանակ կանգնած էր պրիստավը (շրջանային ոստիկանը): Նա խիստ մոտեցավ գյուղացուն ու ձեռքի մտրակով սկսեց ծեծել, մի քանի անգամ էլ խփեց դեմքին: Այդ ժամանակ ես անցնում էի փողոցով և նկատելով այդ, ասացի պրիստավին:

— Դուք իրավունք չունեք ծեծելու:

Պրիստավը հերքեց և թողնելով գյուղացուն, սկսեց սպառնալիքներ տալ ինձ, անվանեց բունտովշիկ (խռովարար) և այլն և այլն: Պապիս ասելով, գործը շատ բարդացել էր, և միայն իր միջամտությամբ գավառապետը մոռացության էր տվել ի պատիվ նրա «հոդեվոր պաշտոնի»:

Ի՞նչ է սպասում մեզ կյանքում...

Քո Սուրեն:

Լևոնյանը վերջացրեց նամակն ու սկսեց հետ ու առաջ քայլել սենյակում, մտքում չարունակելով նամակը. նա կարիք էր զգում երկար խոսելու իր ընկերոջ հետ, խոսելու իրեն տանջող հարցերի շուրջը: Նա ուղարկեց նամակը պոստը ու պատրաստվում էր գնալ իր ընկեր Գալստյանի մոտ, երբ հանկարծ նա ինքը եկավ:

Նա ներս մտավ մռայլված, սառը բարևեց ու նստելով սեղանի մոտ, անտարբեր թերթեց ինչ որ գիրք։

Գալստյանը նոր էր ավարտել Ներսիսյան դպրոցը և ցանկանում էր շարունակել ուսումը արտասահմանում. նա գիմել էր մի հարուստի՝ թոշակի համար. սկզբում նա խոստացել էր, իսկ հետո՝ մերժել։

— Ի՞նչ կա,— հարցրեց Լևոնյանը։

— Է՛հ, ի՞նչ ասեմ.— մարդու ամբողջ ապագան ոտնակոխ է լինում...

— Չհաջողվե՞ց։

— Մերժել է...

— Իմ բանն էլ դեռ կասկածելի է— ասաց Լևոնյանը։

— Քեզ ի՞նչ կա, քու պապը ողջ լինի, դու երջանիկ մարդ ես...

Որքան էլ Լևոնյանը համոզում էր, թե պապից հույս չկա, Գալստյանի վրա չեր ազդում, նա հավատացած էր, որ այդպես չէ։

— Ա՛հ, մարդու թևերը կտրում են,— ասաց նա վեր կենալով տեղից.— ուզում ես գնալ, պատրաստվել գաղափարական գործունեության համար, իսկ կյանքը տանում է քեզ՝ վարժապետ դարձնում... է՛հ, դու երջանիկ ես, Սուրեն...

Լևոնյանը՝ երկրորդ անգամ լսելով «երջանիկ» բառը, էլ չդիմադրեց. նրան տխրեցնում էր այդ, զգալ էր տալիս, որ ինքը որոշ չափով «արտոնյալ է», նախ՝ որպես պետական դպրոցն ավարտած, և երկրորդ՝ շնորհիվ պապի օգնության, իսկ Գալստյանը զուրկ է այդ հնարավորություններից։

— Հացի խնդիրը, Սուրեն, դեռ ո՞վ գիտե, ի՞նչ անսպասելի հարվածներ է տալու...

Նրանք դուրս եկան պատշգամբը ու նստած խոսում էին։

Հետզհետե անցան գրքերին, բայց Գալստյանի մտքերն ուրիշ տեղ էին,— նա մոտ օրերին պիտի վճռեր ուսուցչության գնալու հարցը, դա էր այժմ նրան տխրեցնում,— նա պիտի հեռանար ուսումը... ո՞վ գիտի, քանի տարով...

Տարորինակ զրույթյուն էր Լևոնյանի համար,— ինքն էլ տառապելով նույն հարցերից, նա այժմ ոտանձնել էր մխիթարողի դերը, և հուսադրում էր ընկերոջը թե «կարող է հաջողվել», «չպետք է հուսահատվել»... և այլն։

— Գնանք այդին,— ասաց Լևոնյանը։

Նրանք դուրս գնացին ու ընկան այդինների փողոցը. գնում էին խոսելով,— եռանդուն շարժելով ձեռքերը։

Գալստյանը՝ մոռացած իր օրվա խնդիրը, կարծես մխիթարվում էր ապագայի երազներով։

— Երեվակա՛յիր Սուրեն... դալիս ենք միասին արտասահմանից, արդեն ուսումն ավարտած, թև-թևի տված երկու գեղեցիկ օրիորդների հետ... դալիս ենք, տաք-տաք վիճելով «հասարակական խնդիրների» շուրջը... մեզ ընդունում է գրկաբաց երիտասարդությունը, ու տանում է դեպի դպրոցի շենքը, որտեղ մենք պիտի դասախոսություն կարդանք... Օրիորդները նույնպես ավարտած են, նույնպես միացած մեզ հետ աշխատում են...

— Եվ իհա՛րկե, նրանք մեր «սիրելիները» կլինեն և մեր «ընտրելիները»— ասաց Լևոնյանը, ժպտալով։

— Հա՛, իհարկե,— ասաց Գալստյանը— առանց դրան ի՞նչ է կյանքը...

... Արևը մայր էր մտնում անտառապատ սարի ետևը, թողնելով իր ետևից անդորրություն բերող սավերները։ Ամառվան մեղմ ու զով երեկոյան՝ նստած այդում՝ առվի եղերքին, նրանք խոսում էին իրենց ապագայի մասին, ու տարվում անխուսափելի երազներով, իսկ առվակն իր քչքչոցով ճայնակցում էր նրանց։

V

Օրվա աշխատանքից հոգնած՝ դյուղաքաղաքը քնի մեջ էր։ Նրա երկարությամբ անցնող գլխավոր փողոցի վրա մնում էին բաց միայն երկու ամենախոշոր խանութները։ Նրանց տերերը նստած պայքարում էին քնի դեմ.— ննջում եին ու ստեպ-ստեպ արթնանում ամեն մի չխկոցից, ենթադրելով, թե դալիս է ամենացանկալի հաճախորդներից մեկը՝ դավառական վարչության կամ դատարանի ծառայողներից։

Հետևյալ ժամին այդ երկու խանութներն էլ փակվեցին և

գյուղաքաղաքի ձայներն ամբողջովին տեղի տվին գիշերային համերգին՝ դորտերի կռկռոցին, որը՝ հետզհետե ուժեղանում էր, տարածվելով գետից դեպի վերի թաղերը:

Լուսնի տակ մեղմացել էր տների դորշ, փոշոտած տեսքը. տափակ կտուրները փայլում էին, իսկ կղմինդրե տանիքները խորհրդավոր սավերներ էին տալիս:

Գիշերային համատարած քնի մեջ կար մեկը, որը չէր հետևում ընդհանուր կարգին: Այդ ժամին պատշգամբում հետ ու առաջ էր քայլում Լևոնյանը: Երբեմն նա կանգ էր առնում, նստում աթոռի վրա ու ձեռքը խրելով իր երկար մազերի մեջ, անորոշ նայում էր իր շուրջը սգվածած տեսարանի վրա: Երկար ընթերցանությունից հետո, նա այժմ հանդիստ էր փնտռում գիշերային զով օդում:

Զգտնելով դրսի կյանքում հետաքրքրություն, նա այժմ ժամանակի մեծ մասը տալիս էր ընթերցանության, փակվելով սենյակում: Դրսից այնպես էր թվում, թե նա ընկղմված է լուրջ պարապմունքների մեջ (այդպես եր կարծում և պապը), բայց իրողությունն այն էր, որ պատանի փիլիսոփան այդ մի-ջոցին մոռացության էր տալիս իրեն մաշող հարցերը:

Նրա սեղանի վրա անկարգ շարված էին գրքերը. առջևի մասում էին՝ «Առանց դավանանքին», մի հրապարակախոսական գիրք՝ «Դարավերջին այլասերումը», «Սոցիալական էվոլյուցիա», որը նա դժվարությամբ էր հասկանում, բայց համառությամբ շարունակում էր կարդալ ու «Ֆրանսիական հեղափոխության պատմությունը»: Կային վեպեր, համարյա բոլորը ռուսերեն. կային նաև մի քանի հայերեն գրքեր պապի դրադարանից— Մխիթարյանների հրատակություններից, որոնք առանց կարդալու զարդարում էին նրա սեղանը, դգդռելով պապի հանդգնությունը,— նա շարունակ վախենում եր, թե այդ գրքերը կարող են կորչել:

Աթոռի վրա ընկած էր մի փոքրիկ «Ֆաուստ», որին նոր էր ծանոթացել, և որը ցնցեց նրան թունդ օդու նման հենց առաջին մոնոլոգից: Ֆաուստը պատկերացավ նրա առաջ որպես մի մարդ՝ դժգոհ կյանքից, գիտությունից: Եվ նա հատկապես կլսչում էր այն տեղերին, որտեղ արտահայտվում էր այդ դժգոհությունը:

Աթոռի վրա էր նույնպես մի հաստ տետր, որը պիտի լիներ «օրագիր», բայց նրա առաջին երեսի վրա միայն վերնագիրն էր նշանակված:

Այժմ նա մտածում էր, որ գրքերն էլ չեն բավարարում, որ նրանք հեռու են այն հարցերից, որոնք այժմ իրեն տանջում են: Ու դժգոհությունը սկսում էր աճել. գիտակցությունը՝ շղթայված ի նման չեր կարողանում պարզել իր թեվերը:

Իսկ իրեն տանջող հարցն այն էր, թե ի՞նչ ճամբով պիտի գնա ապագայում, ինչ գործունեություն պիտի ընտրի... Այժմ արդեն պատասխան էր եկել քեռուց, թե «ժամանակին մի բան կանի»... Թեպետ անորոշ էր խոստումը, բայց էլի հույս կար, որ չի մերժի: Այժմ նրա առաջ արդեն գործնական խնդիր էր ծագում, թե ի՞նչ մասնագիտություն պիտի ընտրի, ո՞ր ֆակուլտետը պիտի մտնի, որպեսզի իր «նպատակներին» մոտ լինի, և հետո՝ ի՞նչ է այդ նպատակը,— ո՞րքան իրագործելի է... Նրան չնորհավորում էին ավարտելու առիթով, նրան նույնիսկ «երջանիկ» էր համարում իր ընկերը, բայց այդ բոլորը թվում էր հեգնանք, քանի որ նա չէր կարող պատասխանել իր «զվարթ հարցին»՝ թե ի՞նչ պիտի անի «կյանքում»:

Կյանքի բոլոր սովորական ուղիները նրան չէին բավարարում. նա չէր կարողանում երևակայել իրեն որևե մասնագետի կամ ծառայողի դերում. այդպիսի մարդիկ—նրա կարծիքով ձգտում էին պահպանել կյանքի սովորական, «հին» ընթացքը, որից նա խորշում էր բնազդաբար:

Եթե նա երբեմն զբաղվում էր հօդուտ որևե մասնագիտության, օրինակ՝ նա մտածում էր բժիշկ դառնալու մասին, (դա պապի ջերմ ցանկությունն էր)— այդ էլ պատկերացնում էր ոչ սովորական ձևով,— նա երևակայում էր, թե կթափառի գյուղերում՝ մեջքին կապած մի պայուսակ, որի մեջ կլինեն անհրաժեշտ դեղորյաք. այդպես կանցնի գյուղից-գյուղ ու ձրի կբժշկի աղքատ գյուղացիներին:

Իսկ երբեմն էլ մտածում էր, թե կդառնա ուսուցիչ, կքաշվի մի անհայտ գյուղ, ու մի հասարակ բլուզ հագած՝ գիշերցերեկ կաշխատի, կլուսավորի գյուղը այն աստիճան, որ լրագիրները կսկսեն երկար հոդվածներով գովաբանել այդ գյուղը, զարմանալով ուսուցչի համառ ու տոկուն աշխատանքից... Բայց

հենց որ նկատելի դառնա ինքը, նա խսկույն կթողնի կյուղը և կքաշվի մի ուրիշ «խուլ անկյունը», կգնա դեպի մի նոր «անհայտություն» ու այնտեղ կշարունակի նույն գործը...

Նրա մեջ կար մի անորոշ ձգտում՝ լինել «հասարակական գործիչ», «ծառայել ժողովրդին», բայց նա չգիտեր, թե ինչպես է լինելու այդ գործունեությունը: Այդ մասին նա գրքերում և իր ՀՐՋապատի մեջ գտնում էր միայն անորոշ ակնկարկներ, որոնք ուղեցույց լինել չէին կարող...

Ճիշտ է, նա լսել էր, որ եղել են ու կան հեղափոխականներ, որոնք կռվել են կառավարության դեմ ու երկար տարիներով նստել են խորհրդավոր, մութ բանտերում, բայց այդ հերոսները թվում էին այնքան հեռու իրականությունից, որ նրանց գործերը կարծես երկրային չէին, այլ առասպելական պատմություններ:

Այդպես՝ կյանքի սովորական ուղիներից նա խորշում էր, իսկ իր երազած կյանքը թվում էր ամպերում՝ հեռու իրականությունից: Այս հարցերի մասին նա շատ էր խոսել իր ընկեր Մարգարյանի և ուրիշների հետ, բայց նրանք դարձյալ մընում էին անորոշ: Այդ անորոշությունը ճնշում էր նրան: Երբեմն թվում էր, թե այդ խնդիրներն անլուծելի են, և նա չի կարող դուրս գալ այս թանձր մառախուղից...

Հետ նայելով դեպի իր դպրոցական տարիները, նրան այնպես էր թվում, թե իրեն ձգել էին մի մութը նկուղ, պահել խստությամբ մթի մեջ ու հետո բաց թողել: Ճիշտ է, նա անցել է Հռոմի պատմությունը, նա հասկանում է Նյուտոնի ձգողական օրենքը, բայց ի՞նչ փույթ դրանից, եթե նա չի կարողանում գտնել իր կյանքի ուղին: Այժմ, դպրոցն ավարտելուց հետո նա նույնքան անզոր է զգում իրեն, ինչպես և այն օրերին, երբ նոր էր ոտք դնում այնտեղ:

Նա հիշում էր դպրոցական կյանքի առաջին օրերից մի դեպք,— մի անգամ դասարան բերին մի նկար ու փակցրին պատին. դա մեծ քաղաքի փողոցային կյանքի մի տեսարան էր, որին նայելով աշակերտները պատմում էին նրա բովանդակությունը: Քաղաքի հրապարակն էր՝ իր կլոր փողոցներով,— անցորդների բազմություն, կառքերի շարան, մի լիքը մարմնով վաճառական կանգնած էր իր մաղազինի առաջ. քահանան գնում էր դեպի եկեղեցի. զինվորները մաքրում էին փողոցի ճյուղը. զինվորների մի վաշտ էր անցնում երաժշտության ուղեկցությամբ... Բայց այս բոլորի մեջ կար մի տեսարան, որը առանձնապես հատում էր իր վրա Լևոնյանի ուշադրությունը,— մի խումբ կալանավորներ՝ բանտային մոխրագույն զգեստներով անցնում էին ոստիկանների ուղեկցությամբ:

Ամեն անգամ, երբ աշակերտները՝ նկարը բացատրելիս հասնում էին կալանավորներին, մի ճնշող տխրություն էր իջնում Լևոնյանի վրա, որի պատճառը նա չէր կարող բացատրել: Մի մռայլ անհուսություն էր դալիս պատկերից: Կյանքը թվում էր մի նեղ, շատ նեղ ՀՐՋան՝ փակված անմատչելի ցանկապատով, որի մեջ պիտի մտներ և ինքը... ու նկարը կարծես ասում էր — «այսպես է լինում միշտ և այսպես կլինի միշտ»... Նա բնազդաբար ատում էր այդ իրական կյանքի պատկերը:

Այժմ՝ դպրոցն ավարտելուց հետո, թվում էր, թե նա նորից կանգնած է այդ նկարի առաջ, միայն նրա տեղ այժմ ինքը կյանքն է, նույնպես տխուր և անբացատրելի... Նա ասում է — «միշտ այսպես է լինում և այսպես էլ կլինի. դու էլ պիտի մընես այս ՀՐՋանի մեջ և համակվես ընդհանուրին... դու էլ պիտի գնաս սովորական ուղիներով»...

Ահա իր առաջ սփռված է դյուղաքաղաքն իր բազմաթիվ ինակիչներով. ժողովուրդը տնքում է աղքատության մեջ. նրան կեղեքում են ամեն կողմից, նա ստրկացած է իշխանության ամենավերջին հարբեցող «չինովնիկի» առաջ... ո՞վ պիտի իր ուժերը դնի այդ բոլորը վերացնելու համար և հնարավո՞ր է այդ ու ինչ միջոցներով: Ի՞նչ ցույց տվեց իր փորձը, երբ նա միջամտեց դյուղացուն ծեծելիս,— մի փոքրիկ դեպքը դարձավ հեղափոխություն... Իր չորս կողմը նա շարունակ այն է լսում, թե ամեն մարդ պիտի աշխատի իր համար, հետևի իր գործին, այսինքն՝ որ իր և հազարավոր մարդկանց մեջ ոչ մի ընդհանուր կապ չկա...

Ո՞րքան երջանիկ էին թվում իր ընկերներից շատերը. ի՞նչ հեշտությամբ են նրանք վճռում իրենց ապագայի հարցը,— նրանք ձգտում են սովորական անձնական կարյերի, իսկ իրեն և իրեն նման մի քանի հատիկ ընկերներին նրանք անվանում էին «վերացական իդեալիստներ»:

Այդպես է այն իրական կյանքը, որը նա չի սիրում... իրականությունը ժխտում է իր ձգտումները... դուցե ճիշտ է, որ իր այժմյան ձգտումները՝ դեպի հասարակական գործունեությունը նույնպիսի ցնորքներ են, ինչպես և իր պատանեկան երազները, որոնք մի ժամանակ դրավում էին այս նույն պատշգամբում, նույն լուսնի տակ...

Երբ նա ամառվա արձակուրդներին վերադառնում էր հայրենիք, հաճախ՝ գիշերներն այստեղ պառկած՝ անձնատուր էր լինում ռոմանտիկ երազներին: Նա երևակայում էր, թե դիմացի անառապատ սարի տակ, այն դեղեցիկ բացատում հայտնվում է խորհրդավոր մի «էակ»... լուսնի կաթնամշուշի մեջ ծանրաքայլ, անշշուկ մոտենում է մի օրիորդ... նա նման չէ իր տեսած որևե կնոջ, ասես երկրային չէր, այլ իջել է հեռավոր աստղերից: Գալիս է սիրատենչ հայացքով, մոտենում է... ու նրանց շրթունքները հպվում են իրար... Սակայն այդ տևում է միայն մի ակնթարթ,— չնաչխարհիկ օրիորդն խնկուն անհետանում է, ցրվում լուսնի կաթնամշուշի մեջ...

Երազային այդ քնքուշ լոպեներին պատշգամբի ներքևից լսվում էին շատ պրոզայիկ ձայներ. այնտեղ կապած ձին մեծ աղմուկով խժռում էր այդուց բերած հաստացողուն խոտը, ստեպ ստեպ փռնչալով: Նրանից քիչ հեռու նույնն էր անում և էշը, որը երբեմն իր զռռոցով ցնցում էր ամբողջ թաղը: Բայց երազող պատանին չէր նկատում այդ բոլորը. նա շունչը պահած՝ երևակայության մեջ հետևում էր «լուսնի աղջկան» ու աննկատելի կերպով քնի մեջ ընկնում, շարունակելով իր տեսիլը՝ երազում:

Այժմ անցել են և այդ պատանեկան ցնորքները: Երևակայական «ոչ երկրային» օրիորդների տեղ, նա երբեմն մտածում է Հեղինեի մասին, որին նա սիրում է՝ առանց սակայն որևե կերպ հայտնելու իր սերը: Հեղինեն էլ ծածկված է ռոմանտիկ քողով, և հայտնվում է միայն իր երազներում...:

Այժմ նրա իղձերը գնում են դեպի «ժողովուրդը», որը մի գրավիչ նպատակ է, բայց մշուշային է... ո՞րտեղ էր իր գործունեության բանալին...

Նա ուզում է ապրել մի ուրիշ կյանքով, ուր ամեն ինչ նվիրված կլինի հասարակական «վեհ գաղափարներին»... ճիշտ է՝ այդ գաղափարները այժմ ծածկված են մշուշով, բայց եթե նրանք բացվել են ուրիշների համար, դուցե կբացվեն և իր համար... Հարկավոր է աշխատել, փնտռել իսկական ուղին և նա կբացվի...

Նա կգնա համալսարան, կսովորի գիտություններ, կլայնացնի իր հորիզոնը, կծանոթանա նոր մարդկանց հետ, կունենա նոր ընկերներ, որոնք կօգնեն իրան՝ դուրս գալու այս մշուշից դեպի պայծառ արշալույսը...

Պետք է գնալ, սովորել...

Լևոնյանը չհամբերեց մինչև իր նշանակած օրը, այլ մի շաբաթ առաջ ճանապարհ ընկավ դեպի Ռուսաստան: Նա չատպում էր շուտով ընկնել իր երազած ուսանողական շրջանը, որը նա պատկերացնում էր վարդագույն մշուշի մեջ: Պապին նա ասաց, որ մտնելու է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը, բայց մտքում դրել էր գնալ մայրաքաղաք՝ Պետերբուրգ և ընտրել բնագիտական ճյուղը: Նա ավելի լավ էր համարում կատարված փաստի առաջ դնել պապին, իսկ հետո բացատրել, թե այդպես ավելի «հիմնավոր» կլինի, քանի որ դրանով նա ձեռք կբերի ավելի լուրջ բնագիտական պատրաստություն և հետո կանցնի բժշկական ֆակուլտետը: Բնագիտությունը Լևոնյանի՝ ինչպես և աշակերտության որոշ մասի համար մի առանձին հմայք ուներ, որպես առաջադեմ և նախապաշարմունքները մերկացնող մի գիտություն. այդ հմայքը դալիս էր ռուս հայտնի քննադատ Պիսարևի ընթերցումից:

Լևոնյանի ընտրությունը ուրախացնում էր պապին, որովհետև նրա կարծիքով բժշկությունը ամենապատվավոր և ամենաարդյունավետ զբաղմունքն էր: Ուրախ էր նույնպես, որ կարողացավ համալսարանի ծախսը ձգել Սուրենի մորեղբոր վրա:

Վերջապես եկավ Լևոնյանի մեկնելու օրը: Նրա մայրը վեր էր կացել առավոտյան ծեգին և փսփսում էր դուրսը, ճանապարհի պաշարը հոգալով: Տխրությունը տենդի նման հանգիստ

չէր տալիս նրան։ Ստեպ-ստեպ նա մտնում էր սենյակը, նստում Սուրենի դլխավերևը ու շատ զդույշ շոյում նրա մազերը, ինքն իրեն փսփսալով ու դլուխը տխուր օրորելով։ Նա մտածում էր, որ իր Սուրենը դնում է Ռուսաստան, որը շատ հեռու է ու շատ ցուրա... Ո՞վ պետք է հեռևի, վերմակը ծածկի, որ չմրսի, ո՞վ պետք է կերակուր դնի առաջը... ինչպե՞ս պետք է ինքը դիմանա երկար ամիսներով...

Սուրենն արդեն զարթնել էր, բայց ձևացնում էր, իբր քնած է, որպեսզի թույլ տա մորն իր կարոտն առնելու։ Երբ մայրը դուրս դնաց, նա վեր կացավ անկողնից ամպամած տրամադրության մեջ։ Բաց դռնից երևում էին անտառապատ սարերն ու հին վանքի դմբեթի ծայրը, որը մանկությունից ծանոթ էր նրա աչքերին։ Դրսից լսվում էր մոր աղոտ ձայնը. նա մոմոռում էր ինչ որ բայաթանման մեղեդի, հիշեցնելով նույնպես մանկության օրերը... Այո՛, նա այժմ մնաս բարև է ասում իր միամիտ օրերին, որոնց հետ կապված են այնքան հիշողություններ։ Մոր տխրությունը վարակում է նրան ու դանդաղեցնում հագնելը. նա այժմ տխրում էր, որ պիտի դնա հեռու Ռուսաստան, մինչդեռ մի օր առաջ նա ժամեր էր հաշվում, որպեսզի շուտով մեկնի։

Ժամերն անցան, Սուրենի դամբյուղն արդեն լցվել էր սպիտակեղենով, մի փոքրիկ դամբյուղ էլ պատսպարեց ուտելեղենի պաշար։ Մայրն անհանդստանում էր, շփոթվում.— նրան չարունակ թվում էր, թե ինչ որ պակաս կա, որ նա չի հիշում։

Եկավ կառքը, կանգնեց փողոցում՝ տան առաջ, ու միաժամանակ կարծես ինչ որ դաղտնի հրավերով, եկան հավաքվեցին ընտանիքի անդամներն ու բարեկամները։ Ահա իր հորաքրոջ տղան թռցնում է դամբյուղը, տեղավորում կառքում. նրա փոքր եղբայրը ճիդ անելով անկողնի կապոցն է տանում։

Պապը եկավ և իր արժանապատվության դդացումով ընդունեց հարդանքի արտահայտությունները՝ կանանց խորը դլուխ խոնարհելն ու իր ձեռքը համբուրելը։ Նկատելով Սուրենի մոր արցունքները, նա ասաց.

— Ինչո՞ւ ես լաց լինում, ուրախացի՛ր, աղաղ դնում է ուսում առնելու, մեծ մարդ դառնալու։

Մայրը զսպեց իր արցունքներն ու լուռ համբուրվեց Սուրենի հետ, հուզմունքից չկարողանալով խոսել։ Լևոնյանը մոտեցավ պապին, պաշտոնապես լսեց նրա բարեմախթությունները, ապա անցավ տատին ու հորը։

— Է՛հ, որդի,— ասաց հայրը դդացված ձայնով,— մինչև հիմի մեր երեսը պարզ ես արել, որանից հետո էլ կանես...

Նրա մեջ երկու դդացում խառնվել էին իրար. մի կողմից նա ուրախ էր, որ իր տղան դնում է ուսումի, որը նրա աչքում բարձր դիրք ու պատիվ էր նշանակում. մյուս կողմից էլ տխրում էր, մտածելով, որ քանի Սուրենի ուսումն ավելանում է, նա ավելի է հեռանում ու օտարանում ծնողներից։

Վերջապես կառքը շարժվեց, Սուրենը դլխարկը վերցրեց նորից հրաժեշտ տալով։ Մայրը հուսակտուր դնաց դեպի տուն, քաշվեց մի անկյուն ու հորդառատ արցունքներով հաղորդ տվեց իր սրտի կսկիծին։

Կառքն անցնում էր դյուղաքաղաքի դլխավոր փողոցով, տեղ-տեղ կանդ առնելով. ճանապարհորդները շուտով դրավեցին կառքի բոլոր տեղերը։ Լևոնյանը ոչինչ չէր նկատում իր շուրջը. նա չարունակ տեսնում էր աչքի առաջ իր մոր ընկճված դեմքն ու խղճահարվում. նա հիշում էր տատի խոսքերը իր մորը՝ «էհ, մոր օրը սեվ օր է՝ պահում է, պահում երեխեն, մի օր էլ տեսար թռավ, դնաց...»։

Կառքը դուրս եկավ դյուղաքաղաքից։ Ճանապարհի տպավորությունները չեղեցին Սուրենի մտածումները։ Զով, թարմ առավոտը, պայծառ արևը ցրում էին նրա տխուր մտքերը։ Նրա երևակայությունը թռչում էր դեպի իր ապագա ուսանողական կյանքը, որը նրա կարծիքով պիտի հիմնովին վերափոխեր իրեն։ Ասես մեքենաբար նա հասավ երկաթուղու կայարանը, նստեց վագոն, չմասնակցելով իր ուղեկիցների խոսակցությանը, չարունակ զբաղված իր մտքերով։

Քաղաք հասնելով, նա իջավ տիկին Սոֆիայի բնակարանը, որտեղ ապրում էր վերջին երկու տարին։ Նա այնպես էր ընտելացել այդ ընտանիքին, որ տանտիկնոջը հորաքույր էր անվանում։

Տիկին Սոֆիան հանդիպեց նրան իր սովորական սրտառուչ և աղմկարար բացականչերով, ապա ասաց հեգնող տոնով.

— Էդ ի՞նչ սեվացել ես, դյուղացի ես դառել:

Տիկինը, ինչպես և առհասարակ քաղաքի կանայք, դռեհկություն էին համարում արևկեղ, սեվացած դեմքերը:

Հորաքույրը հարց ու փորձ արավ Լևոնյանի ծնողներից ու բարեկամներից, ըստ սովորության բոլորին քննադատելով: Ապա հագենալով Լևոնյանի լուրերից, նա իր հերթին պատմեց քաղաքի նորություններից:

— Գիտե՞ս, Էփեմիան մեռել է:

— Ի՞նչ Էփեմիա — հարցրեց Լևոնյանը:

— Բա չես իմանո՞ւմ. նրա մոտ էին գալիս ամբողջ քաղաքի կանայք լոտո խաղալու:

Լևոնյանը հանեց թաշկինակն ու դրեց աչքերին, ձեվացնելով երբ լաց է լինում:

— Տո անպիտան, մասխարա ես դցո՞ւմ,—ասաց տիկին Սոֆիան, ձեռքի ափով թեթեվ խփելով Լևոնյանի այտին.— բա ձեր բերանը կապած նանի-բալջիներն են լո՞վը:

Ծիծաղեցին: Լևոնյանը վեր կացավ տեղից ու գնաց դրոսնելու:

Արևն արդեն մայր էր մտնում, բայց շողը դեռևս տաք հոսանքով խփում էր տների պատերից ու մայթերի սալերից: Գավառի անդորրությունից հետո քաղաքը թվում էր արագաշարժ ու տենդոտ. կարծես թե մարդիկ անհանդիստ շտապում էին, վախենալով ուշանալուց: Լևոնյանը գնում էր դեպի քաղաքի կենտրոնը: Արդեն սկսեցին վառվել լույսերը, որոնք թվում էին այնպես առատ ու պայծառ: Մաղազինների փայլուն ու շքեղ վիտրինները, անցնող կանանց ճյունավայել շղարշե զգեստները,— այս բոլորը կարծես կյանքում չէր, այլ բեմի վրա: Դիտելով շորս կողմի աչք ծակող շքեղությունը, անընդհատ անցնող զույգերին, Լևոնյանը համակվեց նորից իրեն ծանոթ թախծով.— թվում էր, թե մի ձայն ասում էր,— «այս բոլորը քեզ համար չէ»··· թվում էր թե բոլորը գտել են իրենց երջանկությունը, և միայն ինքն է զուրկ ամեն բանից···

Հոգնելով երկար քայլելուց, նա ուզեց մտնել քաղաքային այդին՝ հանգստանալու, երբ հանկարծ մեկը բռնեց նրա թևից:

— Վա՜հ, Սուրեն, դու ե՞ս,— լսվեց մի ծանոթ ձայն:

Լևոնյանը հետ նայեց: Իր դասընկերն էր, Սահակյանը:

— Ինչ լավ է, որ եկել ես. իսկը ժամանակին ես հասել. այսօր իմ քրոջ՝ Նինայի ծննդյան օրն է, կգնանք մեզ մոտ:

Լևոնյանը փորձեց մերժել, ասելով, թե ճանապարհի վրա է, հոգնած է, բայց չհաջողվեց. ընկերը համառությամբ պնդում էր, որ պիտի անպատճառ դա:

— Գիտե՞ս ով է լինելու մեզ մոտ,— ասաց նա խորհրդավոր տոնով, ապա մոտենալով, փսփսաց ականջին.

— Հեղինեն:.

— Ա՜հ, ի՞նչ կապ կա իմ և Հեղինեի մեջ,— ասաց Լևոնյանը, աշխատելով անտարբեր ձեվանալ:

— Լավ, ինձանից չես թաղցնիլ··· քո բաղդից մութը տեղ ենք թե չէ կարմրելդ կերևար:

— Մարդարյանը վերադարձե՞լ է,— հարցրեց Լևոնյանը, ուզենալով խոսքը փոխել:

— Չէ, ինչպես երևում է, պինդ է նստել դյուղում:

— Ափսոս, ես կուզեի տեսնել նրան դնալուց առաջ:

— Է՛հ, լավ, դուք առանց այն էլ շատ եք խոսել իրար հետ, երկուսդ իրար ուղղակի փչացնում եք «փիլիսոփայությունն» անելով և էյանքից չեղվելով. մարդ պետք է ապրի, ուրախանա, և ոչ թե վերացական հարցերի մեջ ընկնի:

— Քեզ համար կյանքը միշտ ուրախություն է՞:

— Ես միշտ ուրախ չեմ, բայց միշտ աշխատում եմ հեռու քշել ինձանից տխրությունը, որպեսզի չթթվեմ:

Երկու ընկերները զրուցելով դնացին տիկին Սոֆիայի բնակարանը, որտեղ Լևոնյանը պիտի հաղնվեր երեկույթի համար:

— Ես գործ ունեմ,— ասաց Սահակյանը,— բայց տես, քո խաթրու գալիս եմ հետդ, որպեսզի չփախչես ինձանից:

Սահակյանը քաղաքացի այն կենսուրախ տղաներից էր, որոնք թվում է, մոտ են դասարանի բոլոր աշակերտների հետ, բայց առանձնապես ոչ ոքի հետ մոտ չեն: Նա անտարբեր էր դեպի դպրոցական ուսումը. գիտեր, որ անհրաժեշտ է ավարտել դպրոցը և համալսարանը՝ փաստաբան դառնալու համար, իսկ դպրոցը և համալսարանը՝ այնուհետև հարկավոր էր «ապրել» և «բավականություն ստանալ», ինչպես այդ անում էին իր շրջապատի մարդիկ:

Իր սենյակում Լևոնյանը հագավ նոր, քաղաքացիական կոստյումը, դժվարությամբ հարմարեցնելով օպլայած կարծր կոշտությամբ

օձիքակալները, որոնց նեղ լինելու պատճառով ջղայնանում էր ու առատ քրտնում:

— Այս ինչ է, թարս ես կապել,— ասաց հեղնանքով Սահակյանը և ուղղեց նրա փողկապը:

Վերջապես նրանք դուրս եկան փողոց, ու կառք նստեցին:

Ճանապարհին կցկտուր զրույցի մեջ Լևոնյանը մոռանում էր Հեղինեի մասին: Ճիշտ է, նա անտարբեր ձևացավ, բայց որոշ խորքում ինչպիսի ուրախ էր, որ տեսնելու է նրան: Մինչև այժմ Հեղինեն ամպի նման հեռու մի երազ էր, իսկ այժմ նրա մոտ է լինելու, խոսելու է հետը... ի՞նչ կլինի այդ բոլորից հետո...

Արդեն մի ուրբ էր, ինչ նրանք իրար համակրում էին, բայց դա հեռու, օդային մի զգացմունք էր: Առաջին անգամ նրանք ծանոթացել էին աշակերտական խմբակում, որտեղ իրար ոչ մի խոսք չէին ասել, իսկ այնուհետև հազվադեպ հանդիպելով փողոցում, բարևում էին իրար, ամեն անգամ լցվելով ուրախությամբ: Այժմ նրան տարօրինակ էր թվում, որ հանդիպելու է Հեղինեին տան մեջ: Ինչպե՞ս կընդունի նա իրեն, ի՞նչ կասի... այս բոլորը հուզող հարցեր էին...

VII

Մոտ քառորդ ժամից հետո կառքը կանգ առավ Սահակյանների սեփական տան առաջ, որը թեպետ հին, բայց կոկիկ շենք էր՝ արևելյան ոճով: Պատշգամբը և հանդիսավոր մուտքը լուսավորված էին կերոսինի լապտերներով, որոնց ապակիները հատկապես այդ օրվա համար խնամքով մաքրած էին: Մուտքի սանդուղքների կարմիր ներկած աստիճանները փայլում էին, արտացոլելով լապտերների լույսը: Ամեն ինչ ասում էր, որ արտակարգ մի բան է կատարվում տան ներսը:

Լևոնյանի սիրտը թրթռաց, երբ նա մտավ երկրորդ հարկի նախասենյակը. այնտեղ նրա աչքին ընկավ կախարանի վրա մի կանացի ամառային վերարկու. նրան թվաց, թե այդ Հեղինեինն է:

Դահլիճում արդեն բավականաչափ հյուրեր կային, դիպլոմորակս երիտասարդներից: Մինչև պարերի սկսելը նրանք զբաղված էին խաղերով:

— Տեսե՛ք, ում եմ բերել,— ասաց Սահակյանը, դահլիճ մտնելով Լևոնյանի հետ թևանցուկ ու մոտ տանելով նրան հյուրերին:

— Ա-ա՛,— լսվեց մի ընդհանուր բացականչություն. խաղը թողնելով՝ մի խումբ շրջապատեց նորեկներին:

— Ինչ փոխվել եք,— ասաց Հեղինեն, քնքշորեն ձեռք մեկնելով Լևոնյանին ու հետաքրքիր հայացք ձգելով նրա վրա:

— Պառավել է,— ասաց Սահակյանը,— պետք է մի քիչ աշխուժացնել:

— Այդ նրանից է, որ քաշվել էր դյուղը և ճղնում էր,— ավելացրեց Սահակյանի քույրը, ապա առաջարկեց.

— Դե՛, եկե՛ք, միացեք մեր խաղին:

Ընդհատված խաղը նորից սկսվեց: Լևոնյանը չէր ուզում մասնակցել, բայց նրան ուժով ներս քաշեցին: Քիչ անց՝ ծիծաղը թնդաց, երբ Լևոնյանը, հենց առաջին անգամից անշնորհք կերպով բռնվեց խաղի մեջ: Բայց նրա չվոթությունը երկար չտևեց. ուրախ տրամադրությունը նրան էլ վարակեց, մանավանդ որ Հեղինեն միշտ իր աչքի առաջ էր: Նրանք շարունակ ձգտում էին իրար կողքի լինել խաղի ժամանակ, բայց այնպես էր թվում, թե դա ինքնաբերաբար է լինում: Այն մշուշային զգացումը, որը անթեղած կրակի նման պահվում էր նրանց մեջ, այժմ բացվում էր ու բոցկլտում դուրեկան կայծերով:

Հյուրերը հետզհետե ավելանում էին և դրա հետ զուգընթաց աճում էր աղմուկը: Պարբերաբար լսվում էին հանկարծակի քրքիջներ՝ այս կամ այն խաղացողի ձախորդության առիթով:

Երբ հյուրերի թիվը հասավ ցանկացած չափի, Սահակյանը բարձր ձայնով կանչեց.

— Պարե՛ր...

Խաղերը դադարեցին: Սահակյանի քույրը՝ ցածրահասակ ու սև, խոշոր աչքերով մի օրիորդ՝ նստեց ռոյալի մոտ և ուժգին հարվածներով սկսեց նվագել ամենատարածված, սանտիմենտալ մի վալս: Հյուրերն իրար անցան, զույգեր փնտռելով, ու մեկ մեկու եռևից պարի մեջ ընկան: Շատ չանցած՝ ամբողջ դահլիճը շարժվում էր երաժշտության ալիքներին ներդաշնակ:

Սահակյանի մայրը՝ մոտ քառասուն տարեկան կին վրացա-

կան տարաշով՝ լսելով նվագի ձայնը, դուրս եկավ դահլիճ և ինքնաբավական ժպիտով նայում էր պարողներին, մոռանալով քիչ առաջ ունեցած իր ընդհարումը ամուսնու հետ, որը նախատում էր, թե կինը շատ է ծախսել: «Մի դա տեսնի է, ի՞նչ անտիկա բան եմ սարքել»,— մտածում էր նա:

Լևոնյանը պարից խուսափելու համար քաշվել էր հարևան սենյակը: Այնտեղ մի խումբ հասակավորներ թղթախաղի էին նստել կանաչ սեղանի շուրջը՝ բծախնդիր լրջությամբ հետևելով քարտերին, դեմքերը խոժոռած կնճիռներով: Լևոնյանը մոտեցավ սեղանին ու սկսեց դիտել թղթախաղը, մտածելով, թե դուցե ժամանակ է տուն գնալու: Բայց այդ րոպեին նա լսեց իր ետևից Սահակյանի ցիլ ձայնը.

— Ահա թե ո՞րտեղ է եղել մեր վախտականը,— ասաց նա, մոտենալով թևանցուկ Հեղինեի հետ: — Որ իմանաս ի՞նչ զուրդ եմ բերել քեզ համար...

— Բայց ես մի տարի է չեմ պարում,— ասաց Լևոնյանը, հաղիվ ծածկելով իր շփոթությունը:

— Եվ շատ վատ ես անում,— պատասխանեց Սահակյանը, դա միանգամայն անտեղի է ... իսկ այսօր իմ և Հեղինեի հրավերով պիտի անպայման պարես:

Մերժումը չօգնեց: Սահակյանը բռնեց Լևոնյանի և Հեղինեի ձեռքերից ու մոտեցնելով իրար, հրավիրեց դահլիճ: Երբ նրանք ներս մտան, ռոյալը նվագում էր «Դանուբի ալիքներ» վալսը: Լևոնյանն ու Հեղինեն սկսեցին պարել ու ընկան ընդհանուր հոսանքի մեջ: Նրանք պտտվում էին, հեռուհեռե տարվելով երաժշտության օրորուն ռիթմով, ասես սահելով անթերևույթ ալիքների վրա:

Իր համակրելի օրիորդի մոտիկությունը, սանտիմենտալ երաժշտությունը, բերում էին Լևոնյանին մի նոր դեռ չապրած զգացում, ինքնամոռացում: Թվում էր, թե իր և Հեղինեի այդ անսպասելի, երջանիկ մտերմությունը պիտի տևեր հավետ, անվերջ... Ու չէին նկատում, թե որքան երկար էր նվագում երաժշտությունը, քանի որ հոգնածությունը նրանց համար դոյություն չուներ: Նրանք սթափվեցին միայն այն ժամանակ, երբ երաժշտությունը դադարեց և զույգերը հոգնած, քրտնած, ծանր շնչով քաշվեցին դեպի պատերի երկարությամբ շարված

աթոռները: Հեղինեն իր հովհարն էր շարժում, իսկ Լևոնյանն իր թաշկինակը: Նստեցին աթոռների վրա ու կցկտուր խոսելով, ժպտում էին, հաճույքով լսելով իրար ամեն մի հնչյունը:

Աթոռների մի մասը զբաղեցրել էին մայրերը. նրանք չէին պարում, այլ ուշադրությամբ դիտում էին պարողներին՝ գլխավորապես հետևելով իրենց զավակներին, բայց զննող աչքերը բաց չէին թողնում և ուրիշներին բամբասանքի նյութ հավաքելով:

— Գնանք մյուս սենյակը,— ասաց Հեղինեն, անախորժություն զգալով ինչ որ դիտող աչքերից:

Նրանք քաշվեցին դահլիճի կողքի սենյակը, որը զարդարված էր բամբուկե թեթև կահով, ու նստեցին իրար մոտ բազմոցի վրա: Նրանք չէին կարող ասել, թե ինչի՞ մասին են խոսում. պիտեին միայն, որ այդ խոսակցությունը անչափ հաճելի է և կուզեին, որ դա շարունակվեր անվերջ: Ինչ որ զգացում համակել էր նրանց ու նա էր ղեկավարում ամեն խոսքը, ամեն մի հայացքն ու ժպիտը...

— Դուք այնպես փոխված եք թվում աչքիս — ասաց Հեղինեն,— ավարտելը ձեր արտաքինի վրա էլ նկատվում է:

— Դուք էլ եք փոխվել,— ասաց Լևոնյանը:

— Է՛հ, իմ փոխվելու մասին ավելի լավ է չխոսենք... Փոփոխությունը լավ է, եթե մեր ցանկության համաձայն է լինում...

— Ի՞նչ կուզեիք որ լիներ:

— Միթե՞ դժվար է իմանալ... Կուզեի գնալ Ռուսաստան, ընկնել ուսանողական աղաղ շրջանը...

— Բայց միթե՞ ձեր գնալը հնարավոր չէ. ինձ թվում էր ձեր ծնողները կարող են...

— Իմ ընտանեկան հանգամանքները չեն թույլ տալիս...

Հեղինեն դժվարանում էր ասել, որ իր ծնողներն արգելում են ուսման շարունակելը, ավելորդ համարելով աղջկա բարձրագույն կրթությունը: Այժմ Լևոնյանի մոտ նա ավելի խորը դառնությամբ էր զգում ծնողների այդ վերաբերմունքը: Դեռ ավելին՝ նա գլխի էր ընկնում, որ ծնողները մտածում են ամուսնացնել իրեն՝ սովորական հին ձևով: Թեպետ թագցնում էին

իրենից այդ ծրագիրը, բայց երբեմն մատնում էին անզգույշ խոսքերով:

— Բայց կարծում եմ ձեզ կհաջողվի շարունակել ուսումը,—ասաց Լևոնյանը հավատացած,—պետք է ամեն կերպ աշխատել, պայքարել...

— Պայքարե՞լ... դժբախտաբար իմ պայմանները բացառիկ են, չեն թույլ տալիս...

Հեղինեն տխուր նայեց Լևոնյանին, կարծես օգնություն էր կանչում կաշկանդող դրությունից ազատելու համար:

Լևոնյանը կուզեր հույս տալ, քաջալերել, բայց խոսք չէր գտնում՝ ասելու — «ընտանեկան հանգամանքները» պատի նման կանգնած էին առջևը:

— Ուրեմն դուք վաղը գնալու է՞ք,— հարցրեց Հեղինեն խոսքը փոխելու համար:

— Այո՛, գնում եմ, տոման արդեն վերցրել եմ,— տխուր պատասխանեց Լևոնյանը, ասես նոր գիտակցելով որ, անջատվելու է Հեղինեից:

— Բայց ինչո՞ւ այդպես շտապում եք, չե՞ք սպասում ձեր ընկերներին:

— Ճիշտն ասած՝ ես շտապում եմ շուտով ազատվելու այս նեղ, ճնշող մթնոլորտից... Դուք խոսում եք իմ ընկերների մասին... բայց պիտի խմանաք, որ ես վերջին տարին հազիվ մի երկու ընկերոջ հետ եմ պահպանել մոտ հարաբերություններ...

— Ես ձեզ հասկանում եմ,— ասաց Հեղինեն, իր սև, երկար թերթերունքներով աչքերը մտերմաբար դարձնելով Լևոնյանի դեմքին,— այո՛, նեղ է, սահմանափակ է մեր շրջապատը...

Թև առնելով Հեղինեի համակրանքից, Լևոնյանը սկսեց խոսել իր ձգտումների, իր ապագա գործունեության մասին: Այդ բոլորը անորոշ էր հալվող ամպի նման, բայց համակված էր զգացումով և դրանով գրավում էր Հեղինեին, որպես մի ձգտում՝ դեպի անհայտ, հեռավոր երջանկությունը:

Խոսակցությունն աննկատելի անցավ դեպի իրենց կարդացած վեպերը· սկսեցին օրինակներ բերել ռոմանտիկ հերոսներից, իրանց երազային ապագան կապելով նրանց հետ...

— Ո՞րքան լավ կլիներ, եթե մենք միասին գնայինք ուսանելու — ասաց Լևոնյանը, չդիտակցելով իր խոսքի ինտիմ իմաստը:

— Այո՛, լավ է, գնալ,մտնել ուսանողական շրջանը, ազատվել այս նեղ, ճնշող միջավայրից — ասաց Հեղինեն ինքն էլ տարվելով Լևոնյանի ասածներով:

Նրանք շարունակում էին խոսել ավելի ու ավելի մտերմաբար մոռանալով իրենց շրջապատը:

Հանկարծ երկուսն էլ ցնցվեցին Հեղինեի մոր ձայնից·

— Խտեղ ինչ ես շինում,— բարկացկոտ տոնով հարցակվեց մայրը,— քանի ժամանակ է, սպասում եմ քեզ:

— Հանգստանում եմ պարից հետո, ինչ կա որ,— ասաց Հեղինեն վեր թռչելով տեղից ու հազիվ զսպելով իր բարկությունը:

Լևոնյանը նույնպես վեր կացավ տեղից ու չփոթված նայում էր երկուսին էլ:

— Դե ես ինչ իմանամ, թե այստեղ ես,— ասաց մայրը, անհարմար զգալով, որ իր բարկությունն արտահայտեց Լևոնյանի մոտ:

Ապա, ցանկանալով մեղմել տպավորությունը, մայրն ավելացրեց· այս անգամ դիմելով երկուսին էլ·

— Ինչ՞ու եք փակվել այստեղ, եկեք պարեք, ուրախացեք ...

Հեղինեն կարծես իջավ ամպերից անհրապույր իրականության մեջ: Նա չէր կարողանում հանդուրժել մոր վարմունքին,— մինչև ե՞րբ պետք է ինձ երեխայի տեղ դնեն, մտածում էր նա — ո՞վ գիտե, ինչ կասի մտքում Լևոնյանը,— «դեռ մոր փեշի տակից չի դուրս եկել... Ախ այս ծնողները... Նա մի ամաչկոտ, չփոթված ժպիտ ուղղեց Լևոնյանին ու դլխի թեթև շարժումով հրաժեշտ տալով, գնաց մոր կողից:

Երբ նրանք մտան դահլիճ, մայրն ասաց ցածր ձայնով·

— Ի՞նչ ես օտար տղայի հետ քաշվել մի անկյուն ու քշշվում· ի՞նչ կասեն չորս կողմը...

— Օ՜հ· մայրիկ, դու ուղղակի ջղայնացնում ես ինձ քո նկատողություններով, կարծես մի հանցանք եմ գործել:

— Ինչևէ, կարդ չի, դու քեզ պետք է լուրջ պահես, չէ՞ որ արդեն նշանելու աղջիկ ես:

— Ա՛խ, մայրիկ, խնդրում եմ ինձ հանդիստ թողնես... Ես այլևս քեզ հետ ոչ մի տեղ չեմ գնալ:

— Լա՛վ, մի՛ բարկանալ, մոր խրատից չեն նեղանալ,— հանդստացրեց մայրը, ապա ավելացրեց,— դե մի՛ հուզվիր, քեզ հավաքիր, այնտեղ սպասում են...

Հեղինեն զիտեր, թե ինչ էր ուզում ասել մայրը,— այդ հիշեցումը կարծես ճմռան շունչ բերեց իր նոր զգացումների՝ զարնան ծաղիկների վրա...

Լևոնյանը դուրս եկավ սենյակից այնպիսի տրամադրությամբ, ասես գողության մեջ էր բռնվել: Նա վճռեց տուն վերադառնալ, բայց հետաքրքրությունը քաշեց նրան դեպի դահլիճը: Այնտեղ արդեն պարերի թափը հասել էր իր գագաթնակետին: Դիրիժորը՝ սև ֆրակը հագին, օսլայած շապկի կուրծքը դուրս գցած՝ կանչում էր ղել ձայնով.

— Ա՛ղշ.. (դեպի ձախ):

— Ա՛ղրուտ... (դեպի աջ):

Նա հանկարծակիի էր բերում պարող զույգերին իր հրամաններով, զվարճալի շփոթություններ և ընդհարումներ առաջացնելով նրանց մեջ և ծիծաղ հարուցանելով:

Լևոնյանը կանգնեց մի աննկատելի տեղ՝ մի խումբ մարդկանց ետևը, որոնք աշխույժ զրույցի մեջ էին. մի օֆիցեր սրախոսում եր, իսկ զիմացի տիկինները անընդհատ ծիծաղում էին: Լևոնյանը հեռվից զիտում եր Հեղինեին: Նրա կողքին նստած եր մոտ երեսուն տարեկան մի պարոն, լիքը մարմնով ու մսեղ, նոչտ դեմքով: Նա չարունակ պայքար էր մղում իր քրտինքի դեմ, անընդհատ սրբելով թաշկինակով դեմքն ու վիզը: Ինչ որ ասում էր Հեղինեին, աշխատում էր հաճոյանալ, ժպտում էր անբնական ձևով, իսկ նա էլ պատասխանում էր ըստ երևույթին շատ կարճ (երևի «այո» կամ «ոչ» ասելով). Լևոնյանին թվում էր, թե Հեղինեի դեմքն արտահայտում է ստիպած զժգոհություն. իսկ մայրը քաղաքավարի ժպիտը դեմքին՝ ցուցադրում էր գերադույն ուշադրություն դեպի պարոնը:

«Երևի ուզում են ամուսնացնել»,— անցավ Լևոնյանի մտքով ու մոայլվեց այնպես խորը, կարծես Հեղինեին գերի էին տանում: «Երևի փեսացուն հարուստ և զիրքով մարդ է»,— մտածում էր նա,— Այո՛, Հեղինեն էլ կդնա այն սովորական

ճանապարհով, որով գնում են շատերը, իսկ այն, ինչ քիչ առաջ նա ասում էր, երազ էր, ցնորք»...

Նրան ջղայնացնում էր երաժշտությունը. նա այժմ անցել էր մազուրկայի աշխույժ եղանակին, որն այնպես չէր գալիս իր տրամադրության. նրան զրգռում էին պարողները, որոնք աշխատում էին որքան կարելի է ուժեղ դոփել գետնին. նրանք թվում էին թեթևսոլիկ ու անմիտ:

Նա մտադրվում էր գնալ տուն, երբ հանկարծ տեսավ պարող զույգերի մեջ Հեղինեին այն պարոնի հետ...

Լևոնյանը ցնցվեց: «Պարզ է ... իհարկե, ամուսնացնելու են» ... — մտածում էր նա: Իր ենթադրությունը նա համարում էր ճիշտ, նույնիսկ ավելի էր խանգնում, կարծես ինքն իրեն ավելի խոցելու համար:

Հանկարծ նա սթափվեց, նկատելով, որ իրան ծածկող խումբը չկա առջևը, որ կանգնած է պարողների հանդեպ իր մոայլ տրամադրությամբ. նա իսկույն անցավ նախասենյակն ու գլխարկը վերցնելով, դուրս գնաց տանից: Սկզբում արագացրեց քայլերը, որպեսզի Սահակյանը չնկատի ու հետ չկանչի, ապա զանդաղեց ու սկսեց շրջել փողոցները, տխուր խորհրդածելով:

«Մի թե՞ հնարավոր է, որ Հեղինեն ենթարկվի իր ծնողներին... այն Հեղինեն, որն իր հետ զրուցելիս թվում էր՝ ձգտում է դեպի հասարակական գործունեություն...

«Գուցե այդ բոլորը նրա կողմից սովորական կանացի կոկետությո՞ւն էր՝ ինձ զրավելու համա՞ր... իսկ ես երևակայում էի... անմի՛տ երազներ... Հեղինեն իր էությամբ նույնն է, ինչ իր շրջապատի հասարակությունը և ի՞նչ զարմանք, որ նա էլ գնալու է նույն, սովորական ճանապարհով... հարուստ փեսացու, փող, զիրք,— այդ բոլորը նրանց աշխարհն է ...

Ու սկսեց կշտամբել ինքն իրեն, թե ինչո՞ւ գնաց Սահակյանների տուն, կարծես մի անուղղելի հանցանք էր կատարել,— ի՞նչ կապ իր և այդ հասարակության մեջ: Չէ՞ որ նա միշտ երազել է այնպիսի մի կնոջ մասին, որն իր հետ պիտի գնա «ձեռք-ձեռքի՝ զաղափարական գործունեության ուղիով»... Չէ՛, այդ ճահիճը իր աշխարհը չէ...

Արդեն գիշերը թեքվում էր դեպի լուսաբաց, երբ նա ծանր քայլերով վերադարձավ տուն ու առանց շորերը հանելու ընկավ անկողնի վրա: Նրան թվում էր, թէ չէ քնելու, բայց հոգնած մարմինն իրեն պահանջն ուներ. շատ չանցած նա քնեց և ընկավ երազների մէջ...«Հեղինեն սիրում է իրան, բայց գերի է մի խորհրդավոր տան մէջ... նա ծածուկ գնում է մութ գիշերով, համոզում է նրան փախչել: Նրանք թռչում են արագավազ կառքով: Ի՞նչ հրաշալի բնութիւն է,— կապույտ երկինք, կապույտ ջրեր, շուրջը կանաչ դաշտեր ու հրաշալի ծաղիկներ... բայց ինչո՞ւ նրանք չեն իջնում այստեղ, նրանք գնում, թռչում են ... մթնում է... ինչ որ շքեղ պալատի լուսները հրավիրում են հեռվից... Մի մեծ դահլիճ է, անթիվ ջահերով... նա պտտվում է Հեղինեի հետ պարելով, նվագում են «Դանուբի ալիքները» վալսը... Ինքնամոռացութեան մէջ նրանք պտտվում են, գնում անվերջ, իսկ դահլիճը ձգվում է անծայր... նա միասին է Հեղինեի հետ, մի հեքիաթային վայրում. ու էլ չի բաժանվելու նրանից...

VIII

Արևն արդեն մայր մտնելու մոտ էր, երբ հանրակառքը դուրս եկավ Ռազմա-վիրական ճանապարհի քաղաքային կայարանից: Փողոցների աղմուկը, շարժումը, ամեն ինչ չքանում էր մի դեմքի՝ Հեղինեի առաջ. երեկ նա վճռել էր հանել նրան իր մտքից, բայց անզոր էր այդ անելու. նույնիսկ ափսոսում էր, որ մի քանի օր չմնաց քաղաքում՝ Հեղինեի հետ նորից տեսնվելու համար: Այժմ Լևոնյանը մտածում էր, որ նա սիրում է իրեն...

Վերջալույսի նարնջի դույները հեռուհեռե մարում էին, անցնելով դորշ ու մթին: Կառքը սլանում էր դեպի ափով, հետևելով նրա պտույտներին: Ահա՛ և Ռազմավիրական ճանապարհը...

Արդեն մութն ընկել էր: Ճանապարհորդները՝ դեռևս իրար չընտելացած՝ չէին խոսում: Կառքը հանկարծ կանգ առավ «Սպիտակ դուքսի» առաջ, և Լևոնյանի մտքերը կարծես ինչան դեպի իրականություն: Լսվեց դուդուկի ձայնը. նվագում էին արևելյան մի թախծոտ եղանակ: Մի խումբ կինտոներ քեֆ էին անում խանութի առաջը:

Կառքին մոտեցավ մի կինտո՝ մի ձեռքին բռնած մատուցարանը, որի վրա շարված էին գինով և օղով լիքը բաժակներ ու մի փոքրիկ լապտեր, իսկ մյուս ձեռքով նա իր փոքր դդակով ողջունում էր ճանապարհորդներին: Նա հերթով մոտեցավ ամեն մեկին, բացի մի տիկնոջից: Ցուրաքանչյուրը խմում էր մի բաժակ գինի կամ օղի, վերցնում էր հացի կտորը՝ պանրով կամ մսով, ու ձգում մատուցարանի վրա արծաթե փողեր: Վերջացնելով իր հյուրասիրությունը, կինտոն հեռացավ կառքից ու լոթավարի բարձրացնելով դդակը, ասաց.

— Բարի՛ ճանապարհ:

Այդ պարելով նա գնաց դեպի քեֆ անողների սեղանը: Լույսի շրջանում պարզ երևաց նրա կերպարանքը իր լայն շալվարով ու արծաթե լայն գոտիով: Խանութի լապտերի առաջ Լևոնյանը նկատեց խոշոր ցուցանակը, որի վրա նկարած էր արընթաց վազող քառաձի մի կառք, իսկ նկարի տակ գրված էր.

Не уезжай голубчик мой,
Не покидай страны родной!

Կառապանը՝ խանութում լավ «ճաշակելուց» հետո նստեց իր տեղն ու պատրաստվեց քշելու ձիաները: Արևելյան թախծոտ եղանակի ելևէջները մտնում էին ջղերի մէջ, խորացնում հրաժեշտի տխրությունը: Կառքը շարժվեց: Այժմ նա ասես նոր թափ առնելով, ավելի արագ էր սլանում: Կիսալուսինը ծագեց լեռների ետևից, կարծես շղարշի միջով ադոտ լույս սփռելով շրջակա բնության վրա: Ճանապարհորդներն աչխուժացան, սկսեցին զրուցել: Ընդհանուր խոսակցությունը սկսվեց խճուղու վարչության քննադատությունից և հետզհետե անցավ քաղաքականության՝ Անգլիայի դավերին: Բայց երկար չտևեց զրույցը.— այս ու այն կողմից խոսողները թմրեցին ու սկսեցին ննջել:

Լևոնյանը սրբազգեցություն էր համարում քնել այնպիսի

բնության մեջ. նա ուրախ էր, որ լուսինը հնարավորություն է տալիս դիտելու զեղեցիկ տեսարանները: Շարունակ նայում էր կաթնամշուշով սքողված անտառապատ սարերին, ականջ էր դնում երբեմն լսվող գետի վշշոցին: Նրա հիացմունքը ջերմանում էր իր կարդացած գրքերից՝ ռուս բանաստեղծների նկարագրություններից:

Ստեպ-ստեպ նրա միտքն էր գալիս Հեղինեն. այժմ արդեն նա խորհրդավոր հեքիաթային մի էակի էր նման: Մի դառնություն էր գալիս այդ հիշողությունից, որը սակայն անցնող ժամերի պես մեղմանում էր:

Իր մտորումներից նա սթափվում էր միայն կայարաններում, երբ կառքը կանգ էր առնում, իսկ շարժվելուն պես նորից հյուսում էր իր ռոմանտիկ երազը, մի ուրիշ ծայրից... Վերջապես կառքը կանգ առավ լեռնանցքի սկզբի կայարանում, որտեղ պիտի գիշերեին; Քնկոտ ճանապարհորդները մեկ մեկու ետևից իջան կառքից և մտան կայարանի շենքը: Լևոնյանը մի քանի րոպե անց ու դարձ արավ դրսում ու հետևեց մյուսներին. բնության ռոմանտիկ «հսկողությունը» նրան արդեն հոգնեցրել էր. նա էլ հանդիստ էր փնտռում: Ճանապարհորդները մի անգամ էլ աչխուժացան թեյի ու ընթրիքի ժամանակ, ապա խորը քուն մտան:

Առավոտյան ամենից ուշ զարթնեց Լևոնյանը: Արևն ընկել էր լեռներին, իր կենսուրախ փայլով բացելով շրջակայքի փարթամ դեղեցկությունը: Կառքը սկսեց ոլորապտույտ բարձրանալ սարի լանջով: Հեռուհեռե հորիզոնը լայնանում էր, իր մեջ առնելով հոյակապ լեռնային տեսարանները:

Առավոտյան թարմ օդը խաղում էր կրծքում կենդանարար շնչով: Զորս կողմն ասես մի նոր, չտեսնված աշխարհ էր, ուր ամեն ինչ գրավում էր ու վերացնում. այս վիթխարի, անմատչելի լեռներն ու ձորերը՝ թվում էր՝ սովորական մարդկանց համար չէին, այլ հեքիաթական հսկաների համար:

Ճանապարհորդներից մի քանիսն իջան կառքից և բարձրանում էին կածաններով: Լևոնյանը նույնպես իջավ և ուղենալով մենակ դնալ, հետ մնաց մյուսներից: Նրա հետ միայն մնաց չինովնիկի դեղեցկադեմ ռուս կինը, որը այժմ բացել էր դեմքի խիտ վուալը: Ամուսնու մոտ նա համարյա չէր խոսում ուրիշնե-

րի հետ, իսկ այժմ սկսեց աչխուժ զրուցել: Բնության այս վայրի ու վիթխարի տեսարանների մեջ տիկինը թվում էր թույլ ու դյուցազուհի: Նա հաճախ կանգ էր առնում, շունչը հետ բերում, աչքերը ձգում հորիզոններին ու ասում.

— Ի՞նչ դեղեցիկ են այն լեռները:

Նրանք հաղիվ մի կածան անցնելով կանգ առան, խճուղու վրա. տիկինը դժվարությամբ էր շնչում և էլ չէր կարող շարունակել վերելքը: Մինչև կառքի դալը նրանք զրուցում էին, վերհիշելով ռուս բանաստեղծների գրածները Կովկասի մասին: Տիկինը արտասանեց Լերմոնտովի «Դեվից».

— «Ե՛վ վայրի, և՛ հրաչալի էր ողջ աչխարհը...»

— Այս բնությունը, ճիշտ է, դեղեցիկ է, բայց և դաժան է ու վայրենի.— ասաց նա,— երբ ես առաջին անգամ եկա Ռուսաստանից; սարսափում էի այս ահռելի լեռներից ու անդընդախոր ձորերից:

— Այս բնությունը հասկանալու համար պետք է փոքր ինչ կովկասցի լինել,— ասաց Լևոնյանը ժպտալով...

Լևոնյանը կարծես վերացել էր սովորական կյանքից. ամեն ինչ շուրջը թվում էր արտակարգ ու հրաչալի. իր ամենասովորական խոսքը հնչում էր որպես ստեղծագործություն:

Կառքը մոտեցավ խճուղիով, տիկինն ու Լևոնյանը նստեցին: Հետեվյալ պտույտում ամուսնու նստելուց հետո տիկինը նորից երեսին քաշեց իր հաստ վուալը ու պապանձվեց:

Լեռնանցքի ամենաբարձր կայարանում բոլոր ճանապարհորդները դիտում էին շրջակայքը՝ որը անկեղծ, որը չինծու հիանալով բնության տեսարաններով: Այդ պատճառով կառապանը իր պարտքը համարեց մի տասը րոպե ուշանալ:

Կառքն սկսեց իջնել դեպի Թերեքի ձորը: Այժմ մոտակա տեսարաններն արագությամբ անցի էին տալիս մեկը մյուսին, կառքի արագընթաց վազքի հետ: Ահա ձյան մի կույտ, որ դեռ չի հալվել ամառվա ընթացքում. նրա տակից առուները են վազում ու սփռվում կանաչների վրա, ահա հովիվը յաղնջին ուսին հետեվում է վոչխարներին, հենված իր մահակին:

Ներքևում ճանապարհը սեղմվեց նեղ կիրճի երկու խոր ժայռոտ ափերի մեջ: Գետը կատաղի մռնչում էր, կարծես սպառնալով: Մի ահաբեկող ճնշում էր դալիս ձորի բարձր պատերից,

գետի խլացնող աղմուկից: Նեղ ճանապարհն անցնում էր անդունդի ծայրով: Պռուսյաններում կոնդուկտորը նվագում էր իր շեփորը, զգուշացնելով դիմացից եկող կառքերին ու սայլերին:

Ուշ գիշեր էր, երբ կառքը հասավ Վլադիկավկազ:

IX

Լևոնյանն արդեն երկաթուղու կայարանումն է: Նրա հետ եկած ճանապարհորդները տեղավորվում են ըստ իրենց կարգության.— վաճառականը, չինովնիկը և նրա կինը նստում են երկրորդ կարգի վագոնում, իսկ Լևոնյանը և մի հաշվապահ՝ երրորդ կարգում: Երկար ձգված կառախումբը դանդաղ շարժվում է երեք զանգից հետո, կարծես դիտմամբ ուշացնելով իր մեկնումը՝ ավելի հանդիսավոր դարձնելու համար: Այժմ, երբ Լևոնյանն արդեն դանվում էր Կովկասյան լեռնաշղթայի մյուս կողմը, թվում էր, թե մի վարագույր ինքավ իր անցյալի և ներկայի մեջ. ամեն մի հիշողություն անցյալից թվում էր հեռավոր ու աղոտ: Շուրջը նոր բնություն էր՝ լայնատարած դաշտեր ու բլուրներ: Ամառվա վերջի միապաղաղ դեղին դույնով ներկվել էին վագուց հնձած արտերն ու արոտները: Արևի տաքությունն անդրադառնում էր դեռևից, ճնշելով շնչառությունը. խոտերի միջից անընդհատ, միալար հնչում էր ծղրիտների ձայնը:

Քանի անցնում էին ժամերը, գնացքը դառնում էր ավելի ընատանի. մարդիկ սովորում էին իրենց տեղին. խոսակցությունները երկարում էին, որպես հանդիստ ժամանցի դրույցներ: Երեկոյան բոլորն այս կամ այն կերպ տեղավորվեցին ու քնեցին, օրորվելով գնացքի շարժումից, ու դարթնելով միայն կայարաններում, երբ շարժումը դադարում էր:

Առավոտը՝ աչքերը բացելով, Լևոնյանը նկատեց իր շուրջը լցված նոր ճանապարհորդներով: Գիշերը նստել էին մի խումբ պարսիկ վաճառականներ, որոնք գնում էին Նիժնիի տոնավաճառը: Ցերեկվա ընթացքում ճանապարհորդների մի մասն իջավ մոտակա կայարաններում, և պարսիկները կարողացան տեղավորվել ավելի արձակ:

Լևոնյանն սկսեց զրուցել նրանց հետ, խառնելով թուրքերենն ու ռուսերենը: Ծանրաբարո, դանդաղաշարժ վաճառականները երկար մորուքները շոյելով խոսում էին խտացած լրջությամբ իրենց գործերից, ճանապարհորդություններից: Լևոնյանի մյուս կողքին նստած էին երկու ռուս դյուղացիներ: Մազակալած դեմքերից մռայլ ու կասկածոտ նայում էին աչքերը՝ մերթ Լևոնյանին, մերթ պարսիկներին:

Երբ վաճառականները քաշվեցին վագոնի մյուս բաժանմունքը՝ նախաճաշելու իրենց ընկերների մոտ, դյուղացիներից մեկը հարցրեց Լևոնյանին.

— Դուք ինչ՞ ազգից եք:

— Ես հայ եմ:

— Ուրեմն քրիստոնյա եք. այդ մարդկանց հետ միք խոսիլ.

— Ինչո՞ւ:

— Դրանք բասուրմաններ են (մուսուլմաններ), անմաքուր են:

Լևոնյանը մնաց ապշած այս հայտարարությունից: Նա սկսեց համոզել, որ չի կարելի այդպիսի խտրություն դնել մարդկանց մեջ, բայց նրա բոլոր ջանքերն իզուր անցան. դյուղացիք շարունակ պնդում էին, թե նրանք «անմաքուր» են, նրանց հետ չի կարելի խոսել: Այդ համառ դիմադրությունը, այդ նախապաշարմունքը ճնշում էր Լևոնյանին. նա չէր կարողանում հաշտվել, որ ինքն անզոր է համոզելու դյուղացիներին:

Ռոստովի կայարանում գնացքը փոխվեց: Այս անդամ Լևոնյանին վիճակվեց ուսանողական վագոնը: Ուսանողների ներկայությունը բերում էր մի երիտասարդական ազատ մթնոլորտ: Մի տեղ երգն էր հնչում՝ «Դուբինուշկան» կամ «Վոլգան», մեջ ֆին դալիս և Լևոնյանին անհայտ «ազատ» երգեր: Սովորաբար սկսում էր մեկը, հետո միանում էին իրար հետևից բոլորն ու երգը դառնում էր մի ուժգին հոսանք, ասես հաղթական արշավ էր դալիս:

Մի ուրիշ տեղ հանկարծ բռնկվում էր վեճ այս կամ այն հասարակական հարցի շուրջը: Կայծն և լուռ պայքարող շահատաք խաղացողներ՝ չրջապատված իրենց խորհրդատուներով:

Դրսի տպավորություններն այլևս չէին դրավում: Հարյուրավոր և հազարավոր վերստերով ձգվում էին նույն դաշտերը,

միօրինակ պեյզաժով. անցնում էին երկարաձիգ գյուղերն իրենց անխուսափելի եկեղեցիներով ու դաշտերում մոլորված հողմաղացներով:

Վարոնեժի կայարանում վագոն մտավ մի կույր երաժիշտ՝ թևանցուկ իր աղջկա հետ: Նա մոտ քառասուն տարեկան էր, բաց—շիկահեր մազերով ու թափանցիկ, անարյուն դեմքով: Աղջիկը մոտ տասնհինգ տարեկան էր, ջղուտ ու դժգոհ դեմքով. նա շարունակ ամաչկոտությունից հայացքը ներքև էր ձգում, որպեսզի չնայի մարդկանց դեմքերին:

Երաժիշտը մի պահ կանգ առավ, կույր աչքերը չռեց, շարժելով ճակատի կնճիռները, կարծես ձգտելով տեսնել իր ունկնդիրներին, ապա մոտեցրեց բերանին ֆլեյտան ու սկսեց նվագել Բերանժեի յերգը: Նվագելուց հետո երգեց իր աղջկա հետ ռուսերեն.

Ժամի դռնում դողդողալով
Կանգնած էր մի աղքատ կին...

Վերջացնելով երգը, նա նորից չռեց աչքերը, ասես ականջ դնելով ու մնաց կանգնած: Աղջիկը բացեց մի հին ռեդիկյուլ: Ամեն կողմից ուսանողներն արծաթե փողեր ձգեցին ռեդիկյուլի մեջ, բացի մի չքեղ հագնված ուսանողից, որը արհամարհանքով լի մի հայացք ձգեց երաժիշտի վրա:

Երբ կույրն իր աղջկա հետ անցավ վագոնի մյուս բաժանմունքը, նա ասաց.

— Ի՞նչ եք սանտիմենտալ զգացումներով տարվում. իմ կարծիքով ավելորդ է, նույնիսկ վնասակար՝ դրանց փող տալը.

— Ինչո՞ւ,— հարցրեց դիմացը նստած ուսանողը, աչքերը բարձրացնելով գրքից:

— Որովհետև դրանք կյանքի «ընկածներն» են, այսպես ասած՝ տականքները... Նիցշեն ասում է՝ հրիր ընկածին, իսկ դուք հետ եք քաշում... սանտիմենտալ զգացումներ...

— Ինչպե՞ս թե ընկածներ,— միջամտեց ակնոցավոր ուսանողը սուր հայացքը ձգելով ասողի վրա,— ես ձեզ խորհուրդ կտայի ընկածներին փնտռել հասարակության մի ուրիշ խավում, որը երևի ձեզ շատ հարազատ է:

— Մեթե դուք չեք ընդունում Դարվինի թեորիան,— շեշտակի ու ապլոմբով վրա բերեց առաջին ուսանողը— դոյության կռվում թույլերն ընկնում են...:

— Եթե կուզեք՝ ես չեմ ընդունում ձեր հասկացած դարվինիզմը,— դուք լսել եք զանգի ձայնը, բայց չգիտեք, ո՞րտեղից է գալիս,— ասաց նա ռուսական առածով:

— Զարմանում եմ, որ դուք չեք ընդունում Դարվինի թեորիան, դա ընդհանրացած ճշմարտություն է...

— Ճշմարտություն է, բայց ոչ ձեր ուղածով... ինչո՞վ կարող եք դուք ապացուցել, որ սրանք ընկածներ են:

— Դա ապացուցելու կարիք չունի:

— Ձեզ համար ընկածները երևի նրանք են, որոնք աղքատ են և ձեզ նման չեն հագնված:

— Դուք շեղվում եք բուն խնդրից և ընկնում բարոյախոսության մեջ. փաստն այն է, որ դրանք ընկնում են, իսկ թե ի՞նչպես է այդ լինում, հետաքրքիր չէ: Սա բնության օրենք է,— dura lex, sed lex...*)

— Ես չեմ զարմանում, որ դարվինիզմին դուք նայում եք ձեր շրջապատի աչքերով. դա շատ ձեռնտու է, բայց իրականությունը ձեզ կարող է հիասթափեցնել... ուժեղները ոչ թե ձեր շրջանումն են, այլ այնտեղ, ուր կուտակված են ձեր արհամարհած տարրերը...

— Այդ միայն ձեր կարծիքով,— ասաց հարուստ ուսանողը և սկսեց ջղայնորեն ծխել: Ապա ավելացրեց, դիմելով մի ուրիշ ուսանողի.

— Այստեղ շատ ճանճրալի է, պետք է գնալ...

Նա եկել էր առաջին կարգի վագոնից, կարծելով թե այստեղ ավելի «հետաքրքիր» կլինի, բայց այժմ սկսեց հավաքել իրերն ու գնաց իր առաջվա տեղը:

Լևոնյանն ուշադրությամբ հետևում էր վեճին, ուրախանալով ակնոցավոր ուսանողի հաղթությունից: Ճիշտ է, նա կարդացել էր դարվինիզմի մասին, բայց այսպիսի տեսակետների դեռ չէր հանդիպել:

---

*) Դաժան է օրենքը, բայց օրենք է:

... Գնացքը շարժվում էր դեպի հյուսիս, լայնածավալ Ռուսաստանի դաշտերով: Վագոնում արդեն խոսում էին Մոսկվայի մասին: Իրար ետեվից անցնում էին մեծ ու փոքր կայարանները: Բայց քանի մոտ էր թվում Մոսկվան, այնքան ավելի նա անհամբեր էր դարձնում ճանապարհորդներին.— չարունակ Մոսկվայի տեղ երևում էին փոքր կայարանները: Վերջապես գնացքը երկար սուլեց ու մտավ վագոնների երկար շարանների մեջ, դանդաղեցնելով իր ընթացքը, ապա կանգ առավ: Մեծ քաղաքի դորշ, անհրապույր կայարանը մռայլ դեմքով հանդիպեց ճանապարհորդներին:

Լևոնյանը տեղափոխեց իրերը Նիկոլաևսկի կայարանն ու դուրս եկավ քաղաք դրոսնելու: Ահա իր առաջ էր ռուսական ամենաատիպիկ քաղաքը՝ իր Կրեմլով, իր հնություններով, բազմաթիվ եկեղեցիներով, մատուռներով, սրբապատկերներով, որոնց առաջից անցնելիս, շատերը երեսները խաչակնքում էին: Ամեն տեղ աչքի էին ընկնում հոգևորականները. երևում էր՝ նրանց թիվը պատկառելի էր: Եկեղեցիների մոտ աղքատների բազմություն էր սպասում հարուստ այցելուներին: Շլացուցիչ հարստությունը աչքի էր զարնում քաղաքի կենտրոնի չքեղ մաղազիններից:

Կրեմլի դռներից մեկում հաստափոր մի քահանա կանգ առավ և ձեռքի լայն շարժումով խաչակնքեց դեմքը: Երկու բանվոր անցնելիս խնդացին նրա վրա.

— Вот дармоеды (ա՛յ թե ձրիակերներ են)— ասաց մի ընկերը մյուսին ու քմծիծաղեց:

Լևոնյանը հոգնեցուցիչ դիտեց Կրեմլը, մոտակա թանգարանները և կարգ նստելով շտապեց դեպի կայարանը: Երբ նա մտավ վագոնը, տեսավ լեփ-լեցուն ուսանողներով. Ռուսաստանի որ կողմերից ասես նրանք չէին հավաքվել՝ Պետերբուրգ գնալու համար: Ուրախ, աշխույժ ուսանողական մթնոլորտը վարակեց Լևոնյանին: Գնացքը շարժվելուն պես վագոնը թնդաց խմբական երգերով: Կոնդուկտորը զգուշացնում էր, որ չի կարելի երգել, բայց նրան լսող չկար: Նույն երգերը, վեճերը, նույն երիտասարդ, մտածող ու պայքարող Ռուսաստանը, որը շարժվում էր դեպի մայրաքաղաք:

... Առավոտը գնացքը սուլելով, ինչացնելով կանգ առավ

մայրաքաղաքի կայարանում: Մռայլ, թուխպ օր էր, անձրևը նոր էր դադարել: Խոնավությունն առատորեն տարածված էր ու բուրում էր ամեն կողմից:

Մեծ քաղաքն անտարբեր ընդունեց Լևոնյանին իր հազարավոր հյուրերի հետ:

X

Հասնելով մայրաքաղաք, Լևոնյանն անհանգիստ սրտով դուրս եկավ գնացքի վագոնից և գնաց դեպի կայարան. ամպամած, խոնավ օրն ավելի էր նպաստում նրա անհանգստությանը: Բայց մինչև իրերը կայարանում պահ տալն ու փողոց դուրս գալը, եղանակը ցույց տվեց իր փոփոխական դեմքը:— Դուրսն արդեն արևն էր փայլում՝ երկնքում բացված մի մեծ ճեղքվածքից:

Նա անցավ հրապարակով ու ընկավ հռչակավոր Նեվսկի Պրոսպեկտը: Գնում էր դանդաղ, կանգ առնելով աչքի ընկնող տների ու մագազինների դիմաց, սակայն տպավորությունները կարծես նրան չէին կպչում, որովհետև չարունակ մտածում էր, թե ինչպե՞ս պիտի հաստատվի այս մեծ քաղաքում, ո՞ւմ պիտի դիմի...

Նա հետը բերել էր մի նամակ՝ ինչ որ ծառայողի անունով. նա պիտի օգներ իրան՝ սենյակ գտներ, քաղաքին ծանոթացներ, և առհասարակ առաջին դժվար օրերին խորհրդատու լիներ: Բայց Լևոնյանը կասկածում էր՝ հարմա՞ր է արդյոք այս անծանոթ մարդուն դիմելը. և հետո՝ հանձն կառնի՞ արդյոք նա այդ նեղությունը: Ինչևէ՝ թեկուզ և ուզենար դիմել, այս ժամին նրան տանը չէր գտնիլ, այդ պատճառով էլ նա վճռեց առայժմ չրջել քաղաքում, ծանոթանալ փողոցներին:

Հասնելով պրոսպեկտի ծայրը, նա մտավ մի այգի և տխուր նստեց կանաչ նստարանի վրա: Տխուր էր, որովհետև օտար, մեծ քաղաքի մեջ էր, որտեղ՝ այս խիտ բազմության մեջ չկար մի բարեկամ, մի ծանոթ: Նրան թվում էր, թե այս միայնության տխրությունը չարունակվելու է ընդմիշտ — այնքան մարդիկ են անցնում իր մոտով, բայց բոլորն էլ անտարբեր, ի՞նչպես պիտի դլուխ դուրս հանի նա այս պայմաններում: Եվ ո՞րքան փոքր ու չնչին է թվում այստեղ ինքը՝ իր բոլոր խոհերով ու

երաշներով... Եղանակը նորից մռայլվեց, ավելի սնունդ տալով նրա տխրությանը. քամին բերեց անախորժ թաց հոսանք ու հեռը՝ մի արտասովոր սիրտ խառնող խոնավության հոտ:

Շատ չանցած՝ նա վեր կացավ ու սկսեց շրջել այդում, դիտմամբ երկար կանգ առնելով ծաղկանոցների ամեն մի մարգի առաջ, որպեսզի ժամանակը շուտ անցնի: Հանկարծ նա նկատեց դրոշների հուշարձանները, և ուրախության մի թեթև ալիք անցավ նրա մեջ, ասես իր հին բարեկամներին էր հանդիպում: Ահա Գոդոլը, որի արձանի տակ փորագրված է՝ «Իմ դառը ծիծաղով կծիծաղեմ ես»... ահա Լերմոնտովը, Ժուկովսկին... Նա մեկ-մեկ մոտենում էր ամեն հուշարձանի, կարդում բոլոր արձանագրությունները, վերհիշում իր կարդացած երկերը:

Մինչ Լևոնյանն այսպես դիտում էր դրոշների հուշարձանները, նրան մոտեցավ կովկասյան տիպի մի ուսանող. նրանք նայեցին իրար և երկուսն էլ հիշեցին, որ ծանոթ են:

— Վա՜հ, այս ո՞ւմ եմ տեսնում,— ասաց ուսանողը ռուսերեն, բայց կովկասյան արտասանությամբ ու պինդ սեղմեց Լևոնյանի ձեռքը:

Լևոնյանն ուրախությունից քիչ էր մնում համբուրվի նրա հետ, թեպետ նա մի պատահական հեռավոր ծանոթ էր: Նա հանդիպել էր նրան Թիֆլիսի մի ընտանիքում և ծանոթացել, դիտեր միայն, որ նա վրացախոս հայ էր և ազգանունն էլ Ամմազով էր:

— Եկել ես ուսանելո՞ւ,— հարցրեց նա,— լավ եք արել. ուսանող լինելն ավելի լավ է, քան անդլիական թաղավոր: Դե՛, արի մի պատմիր, տեսնենք ինչ՞ կա...

Ու Լևոնյանի թևից բռնելով, տարավ նրան դեպի դիմացի նստարանը: Նա այնպես մտերմաբար էր խոսում, կարծես վաղուցվա մոտ ընկեր էր: Նա հարց ու փորձ արավ Թիֆլիսից, Կովկասից:

— Ճանապարհին ոչ մի արկած չպատահե՞ց...

— Ոչ,— բարեխղճորեն պատասխանեց Լևոնյանը:

— Բան չկա, որ ուսանող դառնաս, ամեն տեսակի արկածներ կգան եռևիցդ: Ափսոս, որ հեռդ գինի չես բերել...

Նա փոքր ինչ լռեց, սվաղելով իր սև բեխերը, ապա ասաց, ձեռքը խփելով Լևոնյանի ծնկան.

— Նո՛ւս, հիմա ասա տեսնենք, ի՞նչ ես մտադիր անելու:

Լևոնյանն ասաց, որ նամակ է բերել հեռը և սպասում է հարմար ժամի, որպեսզի դնա այն մարդուն տեսնի:

— Էդ ի՞նչ, պապերի խորհուրդներով ես շարժվո՞ւմ, ի՞նչ սպասել, վեր կաց գնանք, ամեն բան կսարքեմ քեզ համար... արդեն ժամի մեկն է, մի քիչ կշրջենք, իսկ ճաշից հետո՝ կմտածենք քո սենյակի մասին:

Նա մտավ Լևոնյանի թևը ու տարավ նրան նորից դեպի Նեվսկի պրոսպեկտը: Նա շարունակ սրախոսում էր բարձր ձայնով, չարաճճի հայացքներ ձգելով դիմացից եկող կանանց վրա: Նրանք շրջեցին մի քանի կենտրոնական փողոցներ ու եկան «Լեհական» ճաշարանը: Այդ անունով էր կոչվում մայրաղաքաքի էժանագին ճաշարանների մեծ մասը, որոնց մեջ դա ամենալավն էր:

Ճաշարանում արդեն տեղերի մեծ մասը բռնված էր և սպասավորների տենդոտ վազվզոցը սկսվել էր: Տիրում էր այն սովորական, կենսուրախ ժխորը, որը հատուկ էր ամռան վերջին՝ բարձրագույն դպրոցների բացվելու նախորյակին: Ճաշողների մեծ մասը ուսանողներ էին, մանավանդ Լևոնյանի նման նորեկներ: Այդ ժխորը բարձրացնում էր Ամմազովի տրամադրությունը, ասես արբեցնում էր, իսկ Լևոնյանին ճնշում էր, ավելի խոտանելով նրա ամաչկոտությունը:

Նստելուն պես Ամմազովը դլխի սիրալիր շարժումով կանչեց սպասարկող կնոջը, որը մի հաստամարմին, փարթամ կրծքով ու փքված այտերով կին էր:

—Տանյա, պետք է խոստովանեմ, որ առանց քեզ չեմ կարող ապրել,— ասաց Ամմազովը:

— Հա՛, ասում եք, էլի,— պատասխանեց Տանյան, իր ժպիտով խախտելով դեմքի զուսպ արտահայտությունը:

Ճաշը թեթև էր և ավելի տեսքով ու սարքավորումով էր դրավում, քան սննդով. բայց մատչելի դները ծածկում էին ամեն ինչ: Սպասավորների փութկոտությունն ու իրարանցումը հիշեցնում էին երկաթուղային կայարանների ճաշերը:

Դարեջրի երկարավիզ շշերը ճգվեցին նրանց առաջ: Ամմազովը հաճախ լցնում էր բաժակները ու խմում խիստ ծարավ մարդու ագահությամբ և կշտամբում էր Լևոնյանին, որ քիչ է

խմում։ Ճաշից հետո խմեցին «լեհական» փրփրան սուրճը, որը սովորական էր այդ ճաշարանի համար և դուրս եկան։

— Նուս, այժմ կարող ենք դրաղվել քո սենյակի հարցով,— ասաց Ալմազովը, արդեն վերջնականապես անցնելով «դու»-ի, իսկ մինչ այդ նա խառնում էր «դուք»-ի հետ։

Նրանք նստեցին ձիաքարշ տրամվայի երկրորդ հարկում, որը բացոթյա էր և դնացին այն թաղերը, որտեղ ապրում էին համալսարանի ուսանողները։ Անցնելով փողոցից-փողոց, կանգ էին առնում այն տների առաջ, որոնց մուտքերի կողքին նկատում էին կպցրած կանաչ դույնի թերթիկներ,— դա նշան էր, որ այդ տներում սենյակներ են տրվում վարձով։ Բարձրանում էին մեծ մասամբ չորրորդ կամ հինգերորդ հարկերը, դիտում, եթե անհարմար կամ մատչելի չէր լինում իր դնով, իջնում էին ու շարունակում փնտռումները։ Ալմազովը անդադար սրախոսում էր, սիրաբանում դուռը բացող աղախինների՝ երբեմն էլ երիտասարդ տանտիրուհիների հետ, զարմացնելով Լևոնյանին իր համարձակությամբ։

Վերջապես երկար ու դվարճալի փնտռումներից հետո Ալմազովը հավանություն տվեց մի համեստ ու արժան սենյակի։ Լևոնյանն անմիջապես համաձայնվեց ու կանխավճար տվեց տանտիրուհուն։

— Դե՛, հիմա դնանք քո իրերի հետևից,—ասաց Ալմազովը, երբ նրանք դուրս եկան փողոց։

— Դուք նեղություն մի՛ քաշիլ, ես ինքս կբերեմ։

— Չէ, քեզ տեղավորենք, վերջացնենք, որ էլ ուրիշների օդնության չդիմես,— պատասխանեց Ալմազովը և, մոտենալով փողոցի անկյունին, բարձր ձայնով կանչեց կառապանին։

Կառքը սլացավ դեպի կայարան։ Լևոնյանը նայում էր աջ ու ձախ և կարծես նոր էր նկատում տների ու մարդկանների չքեղությունը։

Երբ իրերը հասցրին տուն, աղախինը ժպիտով ընդունեց նրանց, ու ինքը ներս տարավ փոքրիկ ճամբրուկը։ Նկատելով մահճակալի վրա դցած ներքնակը, Ալմազովը փառավորապես պառկեց։

— Դու ինձ կներես, ուզում եմ փորձել քո ներքնակը,— ասաց նա ու պառկելուն պես սկսեց խմփփացնել։

Լևոնյանը բացեց իրերը, տեղավորեց։ Հաղիվ կես ժամանց՝ Ալմազովը վեր թռավ ու նստեց այնպիսի դեմքով, ասես խսկի չէր քնել։

— Լավ անկողին ունես, բարով մաչես, այժմ ես քեզ կթողնեմ մենակ։ Ես արդեն մի տարվա՝ այսինքն հին ուսանող եմ, դու էլ նոր ես։ բայց քեզ խրատել, ճառ ասել հարկավոր չէ։ մի ամսից հետո այնքան բաներ կիմանաս, որ ո՞վ գիտե ինձանից էլ անցնես։ Մի քիչ ամաչկոտ ես, բայց ոչինչ, ինչքան չլինի՝ էլի կովկասցի ես։ ուստ աղջիկներն էլ լավ են, հայ աղջիկների նման յոթը կողպեքով չեն կողպված... Է՛հ, կապրես կիմանաս... Ցարական կառավարությունն էլ հո գիտես, ուսանողներին թշնամի է։ բայց պետք է լավ իմանաս, որ ուսանողը... (նա բարձրացրեց ձեռքը և թափահարեց մատը)— ուսանողը... կարող է ամեն ինչ անել ... կարող է հեղաշրջել ամբողջ աշխարհը ... Բայց սա ճառ դարձավ ... Նուս, ցտեսություն...

Նա դուրս դնաց։

Մնալով մենակ, Լևոնյանը դասավորեց մնացած իրերն ու ապա նստելով աթոռին, մտածումների մեջ ընկավ։ Ահա իր սենյակը... Նրա միակ պատուհանը նայում է դիմացի պատին, և հաղիվ ցույց է տալիս վերևից՝ բարձր պատերի մեջ խոր ընկած դավթի մի կտորը։ Եվ այստեղ սկսվում է իր կյանքի մի նոր շրջանը... Մինչև այժմ նա ապրել է ծնողների, բարեկամների, ուսուցիչների հսկողության տակ, իսկ հիմա ազատ է... Բայց ինչո՞ւ տխրությունը մշուշի նման պատում է իրեն... ինչո՞ւ այս շրջապատը խորթ և տխուր է թվում, իսկ ընդհակառակը՝ իր նոր անցած կյանքը գրավում է ... իր դասընկերները՝ նույնիսկ նրանք, որոնք հակակրանք էին հարուցանում, այժմ թվում են լավ... Իսկ իր սիրած Հեղինեն... Նա չի հեռանում իր հիշողությունից... Մի՞թե կարող է պատահել մի ուրիշ այդպիսի աղջիկ...

Տարօրինակ փոփոխություն։— այդ նոր անցած կյանքն իր ամբողջ շրջապատով թվում եր մի վարդագույն երազ, որն էլ չի կրկնվելու... Մնաս բարով, պատանեկան անցյալ,— ասում էր նա մտքում՝ հեռացող վարդագույն մշուշին...

XI

Հետևյալ առավոտ Լևոնյանը զարթնեց մի ղիլ ձայնից. բակի խորքից կանչում էր սունկ ծախող մի կին: «Սունկե՛ր... սունկիկնե՛ր... Ձայնն արձագանքում էր բակը շրջապատող պատերից ու տաղնապում բոլոր հինգ հարկերի կենողներին:

Լևոնյանը՝ անիծելով կնոջը, շուռ եկավ մյուս կողքի վրա, որպեսզի նորից քնի, բայց այդ րոպեին լսվեց մի ուրիշ ձայն՝ այս անգամ տղամարդու թավ բարիտոնով. «Խալա՛թ... խալա՛թ»... Դա էլ հին շորեր դնող կաղանցի թուրք էր:

Այլևս անկարելի էր քնել և Լևոնյանը վեր կացավ, լվացվեց անկյունում դրված հասարակ՝ փոքր ինչ թեքված լվացարանում, որի ծորակը փչացած էր և օգտվելու համար պետք էր ուսումնասիրել նրա «բնավորությունը»: Երեսը որբելով՝ նա մոտեցավ հասարակ կամոդին, որի վրա դրած էր մի հայելի: Պարզվեց, որ այստեղ էլ հարկավոր էր զգուշություն, որովհետև հայելու հենարանը շատ խախուտ էր:

Սանրվելու ժամանակ նա զարմացավ իր դեմքի դունատության վրա. կարծես հիվանդ էր: Մազերը երկարել էին և քունքերի մոտ դուրս ցցվել: «Դուցե դալուկ դեմքը սազում է մայրաքաղաքին, բայց այս մազերն անհանդուրժելի են»,— անցավ նրա մտքով:

Հագնվելուց հետո նա աչք ածեց սենյակի չորս կողմը. շատ անախորժ էր դրադարակի դատարկ տեսքը՝ նրա վրա միայն երեք գիրք կար. դրանք իր սիրած վեպերն էին, որ հետը բերել էր: Նա մտածում էր, թե ի՞նչ գիտական ու գեղարվեստական գրքեր ձեռք կբերի, ի՞նչպես կլցնի ամբողջ դրադարակը...

Դուռը թխկացրին: Ներս եկավ աղախինը՝ երկու ձեռքով բռնած մի հին պղտոր-դեղին դույնի սամավար: Դնելով սամավարը սեղանի վրա, նա խոնարհ ու խեղճացած ժպիտով կանգ առավ, նայելով Լևոնյանին: Նրա համեստ, նիհար դեմքին սազում էր հասարակ, լիմոնադույն հագուստը՝ իր սպիտակ գոգնոցով:

— Ուրիշ բան ցանկանո՞ւմ եք,— հարցրեց աղախինը:

Լևոնյանը չգիտեր ի՞նչ պատվիրի:

— Բուլկիներ,— ասաց նա անորոշ, հանելով արծաթե ռուբլիանոցը:

— Իսկ դուք թեյ, շաքար ունե՞ք:

— Հա, իսկապես այդ էլ կառնեք... ինչքան որ կհասնի մի ռուբլուն...

Աղախինը դուրս գնաց ու շատ չանցած բերեց պատվիրած թեյը, շաքարը, բուլկիները և շարեց սեղանի վրա, ապա զգուշությամբ դրեց նաև իր ձեռքի ափում սղմած փողի մնացորդ պղնձե դրամները:

— Ձեր անունն ինչ՞ է,— հարցրեց Լևոնյանը:

— Ավդոտյա:

— Դուք կարո՞ղ եք ասել, թե ո՞ր փողոցներով պիտի գնալ համալսարան:

— Չէ՛, ես նոր եմ եկել գյուղից, չգիտեմ, բայց տիրուհիս գիտի, իսկույն կկանչեմ:

Նրա գնալուց քիչ անց նորից լսվեց դռան թխկոցը. ներս մտավ տանտիրուհին: Դա հիսուն տարեկանի մոտ այրի կին էր, նիհար ու երկար մարմնով, բարեպաշտի սև հագուստով և նրան ներդաշնակ սպիտակ գոգնոցով, որի դրպանից դուրս էր նայում թաշկինակի ծայրը:

— Դուք կամենում եք իմանալ համալսարանի ճանապա՞ր-հը... Պետք է գնաք նախ դեպի աջ, հետո՝ ուղղակի, ապա փոքր ինչ ձախ... իսկ այնուհետև հեշտ է, ամեն մեկը ձեզ կասի...

Լևոնյանը չհասկացավ կնոջ ասածը, բայց չուզեցավ շարունակել հարց ու փորձը:

— Շնորհակալ եմ,— ասաց նա:

Տիկինը մի պահ հառեց Լևոնյանի վրա իր փոքր, խորշոմած դեմքն ու չռեց աչքերը ակնոցի տակից. ապա զլուխը թեքելով «Յոհեսություն» ասաց և դուրս գնաց հանգիստ, անձայն քայլերով:

Թեյը թվաց անհամ, նույնպես և բուլկիները, ուտելն ասես մի դժվար պարտականություն էր: Նա շտապում էր, մտադրվելով գնալ համալսարան, որպեսզի իմանա՝ ընդունվելո՞ է արդյոք, թե դուցե կա մի որևե արգելք:

Դուրս գալով փողոց Լևոնյանն այլևս իրան օտար և խորթ

չեր զգում, և գնում էր՝ հարցնելով դիմացից եկող մարդկանց և ոստիկաններին՝ համալսարանի ճանապարհի մասին:

Վերջապես տեղ հասնելով, նա կանգ առավ մի շենքի առաջ, չհավատալով իր աչքերին, թե դա համալսարանն է: Նրա երևակայության մեջ դա պիտի լիներ շքեղ պալատի նման, բայց դրա փոխարեն տեսավ մի հին, պետական շենք, պարզ ու անհրապույր, ներկված սովորական, էժանագին գեղին գույնով:

Դրասենյակում նստած քարտուղարի օգնականը կարծես արձանացել էր իր խոշոր, մռայլ դեմքով, որն ակոսված էր անշարժ կնճիռներով: Նա անտարբեր լսեց Լևոնյանին և անտարբեր էլ պատասխանեց իր խոպոտ ձայնով:

— Ձեր ներկայացրած դոկումենտների մեջ սխալներ կան...

Լևոնյանի մեջ չարագուշակ կասկած անցավ. նա ենթադրեց, թե այդ սխալը այնքան մեծ է, որ նրա պատճառով կարող են զրկել իրեն համալսարան մտնելու իրավունքից:

Մռայլ մարդը հանեց իր ետևի պահարանից մի դրապանակ ու սկսեց թերթել միջի թղթերը:

— Ահա՛,— ասաց նա, հանելով Լևոնյանի ձեռքով գրած մի թուղթ,— ձեր դիմումի մեջ դուք մոռացել եք հիշատակել ներկայացրած դոկումենտներից մեկը:

Լևոնյանի վրայից ծանրությունն ընկավ. այժմ նա կասկածում էր, որ այդ չնչին թերության համար մռայլ մարդն իրեն ահաբեկեց մի քանի բոպե: Նա վերցրեց գրիչն ու մանր տառերով ավելացրեց մի տող ևս իր դիմումի մեջ:

— Այ՞ս է բոլորը,— հարցրեց նա հեգնական զարմանքով:

— Այո՛, պաշտոնական տոնով պատասխանեց մռայլ մարդը:

Փողոցում նա ժպտաց, զավեշտի վերածելով նոր անցած դեպքը... «Ուրեմն ես կարող եմ ինձ ուսանող համարել»,— մտածում էր նա, ուրախ՝ քայլելով: Նա անցավ կամուրջով, դնաց գետափով, հետո ծռեց ճանապարհը, առանց հաշիվ տալու, թե ո՞ւր է գնում: Մոտենալով իր ուշադրությունը գրավող մի շենքի, նա նկատեց մուտքին փակցրած հայտարարությունից, որ այդտեղ թանգարան է ու ներս մտավ մի քանի հաճախորդների հետ:

Դա մի խոշոր թանգարան էր, որտեղ կարելի էր գտնել եվրոպական բոլոր ազգերի արվեստի նմուշներ: Անցնելով դահլիճից — դահլիճ՝ մեկը մյուսին գերազանցող նկարների ու արձանների շարքով, Լևոնյանը հետզհետե համակվում էր արվեստի շքեղությամբ: Թվում էր, թե այս բոլորը մի ուրիշ աշխարհից է, կապված է մի հարուստ ու փարթամ կյանքի հետ, որը մատչելի է միայն քչերին: Դա մի շքեղ կղզի է, որ ժառանգաբար անցնում է հարուստներին, մնալով միշտ նրանց շքեղ պալատի մեջ:

Լևոնյանը հետաքրքրությամբ դիտում էր նկարները, աշխատելով բաց չթողնել ոչ մեկը, բայց անցավ մի երկու ժամ, և նա՝ արդեն հագեցած տպավորություններով՝ կանգ էր առնում ոչ բոլոր նկարների առաջ, հետաձգելով մի ուրիշ անգամին մնացածները: Իսկ վերջին դահլիճում նա համոզվեց, որ այս ամբողջ «հարստությունը» ուշադիր դիտելու համար՝ անհրաժեշտ է առնվազն մի ամիս:

Նա ծանրացած գլխով դուրս եկավ թանգարանից և փողոցից-փողոց անցնելով՝ փնտրում էր մի ճաշարան: Հանկարծ նրա դիմաց երևաց Ալմաղովը.

— Վահ, ո՞րտեղ ես, չես երևում,— ասաց նա,— գնացի քո ետևից, տանտիրուհուդ էլ վախեցրի, հենց իմացավ կորել ես...

— Թանգարանումն էի...

— Ի՞նչ էիր շտապում. պատկերները հո չեն փախչում:

— Դե մի անգամով հո չի վերջանալու, դեռ քանի անգամ պետք է գնալ:

— Տե՛ս, տե՛ս, դեռ սպառնում ես մի քանի անգամ այցելելու... իսկ հիմա, բանն այնպես է՝ եղանակը լավ է, գնանք կղզիները. դիտես՞ ինչ տեղեր են...

Լևոնյանը համաձայնվեց, բայց հայտնեց, որ դեռ չի ճաշել:

— Ես էլ քո օրումն եմ,— ասաց Ալմաղովը,— դրա բանը հեշտ է, այնտեղ էլ կճաշենք:

Նրանք կառք նստեցին ու կես ժամ հետո հասան կղզիները: Իջնելով կամրջի մոտ, նրանք ճաշեցին մի հասարակ ռեստորանում, որը տեղավորվել էր ջրի վրա կառուցված մի փայտե շենքում:

— Հա՛յ գիտի, հա՛,— ասում էր Ալմազովը գարեջրի բաժակը ձեռքին,— մխոս է գալիս Թիֆլիսի «Քռի վրա» ռեստորանը... Մի անգամ այնտեղ պատմություն ունեցա...Բանը հասավ ոստիկանության...

— Ի՞նչպես թե,— զարմացավ Լևոնյանը:

— Դու երևի կարծում ես, թե գործը սկսվեց շատ մեծ պատճառների՞ց... Չէ, բանն այսպես էր...մի խումբ լավ տղաներ՝ մեր ուսանողներից, նստել էինք քեֆի, մեկ էլ տեսնեմ ներս մտավ մի պարոն՝ հեռը մի դեղեցիկ կին... Դեղեցիկ եմ ասում, է՛, որ տեսա, խելքս թռավ... Նստեցին հարևան սեղանի մոտ: Ես էլ հո գիտես՝ սեփականություն չեմ ընդունում, ... մի լավ նայեցի այդ կնոջը, նա էլ ինձ նայեց... Պարոնը դժվեց ու սկսեց սպառնալ, թե՝ այսպես կանեմ, այնպես կանեմ... Դե ես էլ պակաս դիժը չեմ. ասի՝ մինչև քո անելը՝ ես կանեմ... ու սկսվեց պատմությունը...

— Հետո ինչո՞վ վերջացավ:

— Հը՛մ... Վերջացավ ոստիկանության բարեհաճ մասնակցությամբ:

— Նստեցրի՞ն քեզ...

— Չէ, միայն մի փոքր ավելորդ ծախս ունեցա ոստիկանատանը, ուրիշ ոչինչ...

Ճաշից հետո նրանք անցան կղզին և հասնելով ծովախորշին, դրավեցին այնտեղ շարված նստարաններից մեկը: Արևը մեղմ փայլում էր ջրի վրա, արտացոլելով մանր ալիքներից: Շուրջը կղզու մեծ պարկն էր՝ իր ծառուղիների ցանցով, քիչ հեռու՝ ափը եղերում էր հյուսիսային անտառը: Բնությունը դեղեցիկ էր, բայց ինչ որ անհրապույր սառնություն, խոնավություն էր բուրում նրանից. կարծես ամեն ինչ հիշեցնում էր, որ այս կանաչը շատ կարճատև է լինելու...

Ալմազովը խորը հորանջեց:

— Ի՞նչ լավ կլիներ պառկեի այն կանաչի վրա,— ասաց նա, ցույց տալով դիմացի մարդը:

— Շատ խոնավ է:

— Է՛հ, հաշիվը մեկ է,— պատասխանեց նա, բայց ասելուն պես վեր թռավ, հանկարծ նկատելով ծառերի տակ շարած հեծանիվները:

— Կուզես նստենք հեծանիվ:

— Ես չեմ կարող:

Նա շտապով մոտ գնաց և մի հեծանիվ վարձելով, քշեց լայն ծառուղիով դեպի կղզու խորքը: Լևոնյանը մնաց մենակ ու նստած դիտում էր ծովախորշի տեսարանը: Հետո՝ թողնելով այդ, երեսը դարձրեց դեպի իր շուրջը հետզհետե կուտակվող հասարակությունը: Գլխավոր ծառուղիով մեկ-մեկու ետևից անցնում էին բաց կառքերը, դանդաղ՝ զբոսանքի ընթացքով: Շքեղ, փայլուն լանդոները, ցեղային, կուշտ ձիաների ռիթմիկ տրուփյունը, նոր, կապույտ զգեստներով զուգված կառապանների հանդիսավոր շարժումները, ուժեղ շրջանակներով պատած անիվների մեղմ շրշյունն ավազի վրա,— այս բոլորը վկայում էր, որ կառքերը «սեփական» էին և պատկանում էին նրանց միջի նստողներին: Այդ նստողները՝ պճնված կանայք ու տղամարդիկ, գալիս էին մի ուրիշ, հարուստ կյանքից: Այստեղ՝ մայրաքաղաքում՝ այդ շքեղությունն ու հարստությունն ավելի խտացած էին պատկերանում Լևոնյանի առաջ, կարծես աչք շլացնելու համար բեմ էին հանել ընտրովի հարուստներին:

Լևոնյանը նայում էր շարժվող կառքերին, հանդիպում նրանց տերերի դոռող ու արհամարհող հայացքներն ու լցվում թշնամանքով այդ մարդկանց դեմ: Նա հիշում էր այդ օրվա իր այցելած թանգարանն ու մտածում — «Ահա՛ թե ում համար է արվեստների այդ շքեղությունը»...

Մի քանի պտույտներ անելուց հետո Ալմազովը վերադարձավ, ու թողնելով հեծանիվը տիրոջ մոտ, նստեց Լևոնյանի կողքին:

— Լավ էր,— ասաց նա ոգևորված, արագ շնչելով,— մի աղջկա ետևից քշեցի... շատ չարչարեց ինձ, բայց վերջը ծանոթացա... հիանա՛լի է և ապագա է խոստանում...

— Ի՞նչ ապագա,— միամտաբար հարցրեց Լևոնյանը:

— Այդ կիմանաս համալսարանի երկրորդ կուրսում:

Լևոնյանն ամաչկոտ ժպտաց, զգալով իր միամտությունը:

— Իսկ դու ի՞նչ էիր անում,— հարցրեց Ալմազովը:

— Նստած նայում էի անց ու դարձին:

— Հա՛, հիմա դեռ նայում ես, բայց որ հետո մենակ դաս, տ՞ով դիտե ինչեր կանես:

— Չէ, սա իմ տեղը չի, ես ձեր ընդունակությունները չունեմ,— ասաց Լևոնյանը վեր կենալով: Ալմազովի հեղնանքն այնպես էր ազդում նրա վրա, ասես իր մարմինը խուտուտում էին:

— Ուզում ես ասել՝ դնանք, հա՞: Լավ, քայլենք:

Արդեն մութն ընկել էր, որ նրանք իջան ձիաքարշ տրամվայից՝ քաղաքի կենտրոնում:

— Դեռ վաղ է,— ասաց Ալմազովը,— արի՛ մի քիչ շրջենք. այստեղ էլ թատրոն է...

Ու Լևոնյանի թեվից բռնելով՝ նա մտավ մայթով շարժվող մարդկային հոսանքի մեջ: Կենտրոնական փողոցը՝ երեկոյան առատ լույսերի տակ ցուցադրում էր շքեղ մագազինների շարքը՝ նրանց դրավիչ ցուցափեղկերը: Շարժվող խառը բազմությունը թվում էր ավելի խորհրդավոր ու հետաքրքիր:

Լևոնյանն անցնում էր Ալմազովի հետ ու հետզհետե համակվում մի նոր, անհանդիստ, զգացումով: Դիմացից եկող կանայք՝ մերթ զուսիկ հայացքներով, մերթ խոսքերով՝ հրավիրում էին տղամարդկանց իրենց մոտ: Նրանց խիտ շպարված դեմքերը, արտառոց զլխարկներն ու զունեղ հագուստները, և մանավանդ կոշտ, կերված ձայները ցույց էին տալիս, որ դրանք «վաճառվող կանայք» են:

— Սա ի՞նչ բան է, չեն էլ թողնում մարդ ազատ անցնի,— ասաց Լևոնյանը:

— Դեռ խամ ես, կսովորես ամեն ինչի...

Հետո ժպտալով ավելացրեց.

— Դու կանանց հետ ո՞նց ես... Զլինի՞ թե «տոլստոյական» ես...

— Համարյա թե,— պատասխանեց Լևոնյանը, ցանկանալով կատակի վերածել հարցը:

— Ես էլ պիտի դառնամ «տոլստոյական»... հենց յոթանասուն տարիս լրանա թե չէ խկուշն կդառնամ...

Մի փողոցի անկյունում Ալմազովը կանգ առավ, աչք ածեց, ապա ասաց կամացուկ.

— Տեսնո՞ւմ ես այն օրիորդին՝ երկրորդ մագազինի առաջ... դա իմ նոր՝ «հեծանիվի ծանոթուհին է»... Դե, ուրեմն՝ ես գնացի, ցտեսություն...

Լևոնյանը բոպեաչափ նայեց Ալմազովի ետևից, ապա քայլեց դեպի տուն, խորհելով իր նոր, տարօրինակ ծանոթի մասին:

XII

Դեռ համալսարանի բացումից մի շաբաթ առաջ, Լևոնյանին հայտնել էին, որ ընդունված է և նա արդեն հագել էր ուսանողական զգեստը: Առաջին օրը տարօրինակ էր թվում այդ զգեստը, և ամեն անգամ, երբ նա պատահմամբ նկատում էր որևէ մաղազինի ցուցափեղկի հայելում իր պատկերը, թվում էր, թե իր առաջ մի ուրիշ մարդ է կանգնած:

Չնայած, որ այդ շաբաթն անցնում էր ուրախ, նա անհամբեր սպասում էր համալսարանի բացման. այդ օրը նա պատկերացնում էր առանձնապես հանդիսավոր և արտակարգ, թեպետ և ոչ մի հիմք չուներ դրա համար: Այդպիսի հուզումով էր նա սպասում մեծ տոներին՝ իր մանկության օրերին:

Այդ շաբաթվա ընթացքում Ալմազովը երևաց միայն մի անգամ, այն էլ մի քանի բոպեով: Սակայն Լևոնյանն արդեն չէր ողղում նրա կարիքը, նա ծանոթացել էր մի քանի նոր ուսանողների հետ, որոնց մեծ մասը կովկասցիներ էին: Ահա դրանց հետ էր անցկացնում վերջերս իր օրվա մեծ մասը: Խումբը՝ հետ էր անցկացնում վերջերս իր օրվա մեծ մասը: Խումբը՝ սպավորությունների ծարավ տուրիստների նման այցելում էր քաղաքի և նրա շրջակայքի բոլոր աչքի ընկնող վայրերն ու թանգարանները. շրջում էր աղմկելով, նոր ուսանողներին հատուկ չտեսությամբ և շեշտված արկածասիրությամբ. նրանք կարծես ամեն մի սովորական դեպք ձգտում էին վերածել արկածի և խնդալ այդ առթիվ:

Երեկոները հաճախում էին փոքր թատրոնները, որտեղ այդ դերասաններին հրամցնում էին թեթև օպերետներ, լինում էին հեռավոր կղզիների էժանագին ռեստորաններում, երբեմն էլ անցնում էին զլխավոր փողոցներով, ստեղ-ստեղ բռնկվելով անընպատելի խմբական ծիծաղով: Ամեն անգամ Լևոնյանը տուն էր դառնում տպավորությունների պղտոր մնացորդով, կշտամբում

էր ինքն իրեն այդ թեթև ժամանցի համար, հիշում էր նախատինքով, որ դեռ մի բացիկ էլ չի գրել տուն՝ համալսարան ընդունվելու մասին: Բայց ուրախանում էր, որ մի օր էլ անցավ և բացման օրն ավելի մոտեցավ:

Վերջապես եկավ այդ օրը: Առավոտը նշանակված ժամին, Լևոնյանը մտավ համալսարանի շենքը՝ գրքույկը ձեռին, բայց ոչ ոք չպահանջեց այն: Նրա հետ մտան և մի քանի ուսանողներ. հագուստից երևում էր, որ «նորեր» էին. չէ՞ որ նրանք էին ամենից անհամբեր ու շտապող մասը:

Ուրիշներին հետևելով՝ Լևոնյանը դնաց դեպի զգեստարանը: Սպասավորը՝ խոր գլուխ տալով շնորհավորեց նրան, հուսալով, որ կստանա «թեյի փող»: Լևոնյանը գրեց նրա ձեռքին հիսուն կոպեկանոց արծաթը ու բարձրացավ երկրորդ հարկը: Նա շարունակ քաշվում ու ամաչում եր, կարծես բեմի վրա էր ու չորս կողմից աչքերը հառած իրան էին նայում:

Ահա նա «դիտության տաճարումն» է՝ համալսարանի երկար ու ձիգ միջանցքներում: Մի տեղ նա նկատեց խմբված ուսանողներին և ինքն էլ մոտեցավ: Բոլորը նայում էին ապակու տակ վակցրած դասացուցակին:

Լևոնյանն ընտրել էր բնագիտական ֆակուլտետը, բայց նա մտադիր չէր սահմանափակվելու միայն մի մասնագիտությամբ. նա կուզեր հետևել նաև դիտության մյուս ճյուղերին, բայց նրանք այնքան շատ էին և բազմազան... Ահա լսվում է զանգի ձայնը՝ սկսվում են դասախոսությունները, իսկ Լևոնյանը դեռ չի հեռացել դասացուցակից... Վերջապես կանգ առնելով բիոլոգիայի վրա, նա դնաց դեպի լսարանը: Պրոֆեսորն անմանի էր, ուստի լսարանը խիստ լցված էր ուսանողներով: Մի կերպ տեղ բացելով ետևի նստարանում, Լևոնյանը սկսեց դիտել իր շրջապատը: Այստեղ հավաքվել էին ընդարձակ Ռուսաստանի բոլոր կողմերից. քա՞նի տիպի դեմքեր կային այս բոլորի մեջ, որոնցից մի քանիսը թվում էին արտասով:

Քառորդ ժամից հետո ներս մտավ ալեզարդ պրոֆեսորը և ուժգին ծափահարությունից չշմած՝ թախծոտ ժպտով նայեց իր նոր ունկնդիրներին: Նրա խորացած աչքերում՝ դաժան օրերում ապրած մարդու հիասթափությունն ու սկեպտիցիզմն էին խոսում... Ահա քա՞նի սերունդներ են եկել—գնացել իր լսարաններով, բայց ո՞րքան դանդաղ է փոխվում կյանքը...

Նա ձեռքով նշան է անում, որպեսզի դադարեցնեն ծափահարությունը, բայց նորից է բռնկվում: Պրոֆեսորի աչքերում մի ժպիտ է փայլում ու թեթև ակոսում նրա այտերը... «Ո՞վ գիտե, գուցե այս նոր սերունդն է կոչված վերափոխելու մեր երկիրը»... Նրա մեջ մի ցանկություն է ծագում՝ խոսելու պրոլետարյատ, արտահայտելու ինչ որ շատ կարևոր մտքեր, բայց նա համբի նման չի կարող այդ անել.— դա արգելված է... Նրա խոսքը կարող է հնչել միայն նեղ դժված սահմաններում...

Ծափահարությունը դադարում է և հանկարծակի բացված խորը լռության մեջ լսվում է պրոֆեսորի ձայնը: Նա խոսում է իր դիտության անցյալից. հիշում է նշանակալից անուններ...

— «Դիտության ճանապարհը դժվարին է ու փշոտ. խավարի դիմադրությունը համառ է և պահանջում է անընդհատ պայքար... այս պայքարի առաջապահ շարքերում կռվել են ու ընկել մտքի հերոսները... մարդկության նոր, դիտական աշխարհայացքը կյանք է մտել այդ զոհերի միջոցով».

Հին պրոֆեսորը՝ չնայած բոլոր կաշկանդումներին, կարողանում է թեկուզ և բարակ ուղով՝ առաջ տանել «վաթսունական թվականների» արդիցիան: Նա խոսում է դիտության պատմությունից, բայց այնպիսի ձևով է արտահայտում այդ անցյալը, որ քողարկված ակնարկում է Ռուսաստանի կարգերը:

Ունկնդիրների համակրությունն ու հետաքրքրությունը ջերմացնում են պրոֆեսորին. նա կարծես թոթափում է իր վրայից երկար տարիների ճնշող բեռը: Նա տարվում է իր մտքերով, զգացվում է ու վարակում լսարանը. և վերջացնելով իր ճառը, ծափահարությունների ուղեկցությամբ հեռանում է դահլիճից.

Լևոնյանը դուրս եկավ միջանցքը վառ ապավորության տակ: Ինչպես և շատերը՝ նա կարիք էր զգում արտահայտելու իրեն կարծիքը: Նա ծանոթ չէր իր կողքին նստած ուսանողներին, բայց բնականաբար սկսեց խոսել նրանց հետ: Ուսանողների մի խումբ չշրջապատելով դասախոսին, ուղեկցեց նրան

մինչև պրոֆեսորների սենյակը։ Համալսարանի «սուբեկտից» (օդնականներից) մեկը՝ անդորձությունից բթացած աչքերով, ուշադրություն դարձրեց «ուսանողների համակրության» այդ երևույթի վրա ու ասաց մաքում.

— Գեռը է հայտնել ում հարկն է «... անուղղելի է... երևի նորից խաթի մեջ կընկնի...»

Երբ Լևոնյանը մոտեցավ դասացուցակին, որպեսզի ընտրի իր երկրորդ դասախոսությունը, հանկարծ, նրա ականջին ընկավ Ղարաբաղի հայերենը։

— Հ՞ը, հո՞ւնց ա (ո՞նց է)։

Լևոնյանը հետ նայեց։ Նա ճանաչում էր այդ ուսանողին, բայց հազիվ մի քանի խոսք էր փոխանակել նրա հետ։

— Ո՞րտեղ էիք,— շարունակեց ուսերին Մարությանը (այսպես էր նրա ազգանունը)։

— Բիոլոգիայի դասախոսությանն էի։

— Իսկ ես գնացի քաղաքատնտեսության։ Կուզե՞ք հիմա էլ գնանք պատմության. այնտեղ հայտնի, հին պրոֆեսոր է...

Լևոնյանը համաձայնվեց և նրանք երկուսով գնացին պատմության լսարանը։

Պրոֆեսորը տարիքով էր, բայց առույգ ու պնդակազմ, և թվում էր՝ նա դեռ շատ չէր հրաժեշտ տալու իր ամբիոնին։ Այեհեր, լայն մորուքը, խոհուն ճակատի կնճիռները, ակնոցով պատենած աչքերը պատկառելի տեսք էին տալիս նրան։

Նա պիտի դասախոսեր նոր պատմությունը, բայց նախքան բուն նյութին անցնելը, նա իր ներածության մեջ ընդհանուր ակնարկով բնութագրեց ֆեոդալական կարգերը։

Նա խոսում էր փոքր ինչ մանվածապատ, լայն ընդհանրացումներով, ասես պատմության մեջ կենդանի մարդիկ չէին դեր խաղում, այլ ինչ որ «սկզբունքային ոգիներ», որոնք ժամանակի հետ փոխվում ու անցնում էին դարեցդար։

Այստեղ էլ Լևոնյանը նկատեց որ պրոֆեսորն «ակնարկում է» թեպետ ոչ անմիջորեն՝ Ռուսաստանի իրականությունը. մանավանդ դասախոսության վերջում՝ ամփոփելով ֆեոդալական կարգերի բնութագիրը՝ նա վերջացրեց Գյոթեի «Ֆաուստ» խոսքերով.

«Օրենքներն ու իրավունքները՝
հին հիվանդության նման
անցնում են սերունդից սերունդ.
... Իսկ նոր իրավունքի մասին,
որ մեզ հետ է ծնվում,
ոչ ոք չի խոսում»...

Ուսանողները բուռն ծափահարեցին ու դռների մոտ կուտակվելով՝ դուրս եկան միջանցքը։ Այստեղ խումբ-խումբ քայլում էին ու զրուցում, հաղորդելով իրար տպավորությունները, երբեմն էլ՝ վեճի բռնվելով։

Լևոնյանն ու Մարությանն էլ իրենց հերթին խոսում էին նույն նյութի վրա։

— Իմ կարծիքով բավական անորոշ է խոսում,— ասաց Մարությանը։

— Բայց պետք է ասել, որ բովանդակալից դասախոսություն էր։

— Մի հատնի ֆրանսիական հեղափոխությանը՝ տեսնենք, ի՞նչ կասի...

— Հա՛, այդտեղ կերևա նրա իսկական վերաբերմունքը...

Հետևյալ դասախոսություններին՝ նրանք հաճախում էին միասին. եղան դրականության, քիմիայի և իրավունքի փիլիսոփայության դասախոսություններին։

Լևոնյանը կարծես այդ օրը հոգնածության զգացողությունից դուրկ էր. քանի շատ էր հաճախում դասախոսությունները, այնքան ավելի էր դրդռվում նրա ախորժակը, ավելի էր ուժեղանում իմանալու, յուրացնելու ձգտումը։ Լարված ուղեղով նա վերջապես թողեց համալսարանի շենքը, կարծես դժգոհ, որ վերջացան այդ օրվա դասախոսությունները։

— Շատ բան կա սովորելու,— ասում էր նա դուրսը Մարությանին,— բայց ափսո՛ս որ ժամանակը չի թույլ տալիս, և ստիպված կլինենք սահմանափակվելու մեր մասնագիտություններով։

— Այդ բոլոր դիտումներն անհրաժեշտ են աշխարհայացքը մշակելու համար,— ասաց Մարությանն ուսուցչական

տոնով,— կարիք չկա շատ ուժվելու և ոչ էլ ամբողջովին խրվելու մի մասնագիտության մեջ...

Փողոցում, ճաշարանում, դարձյալ փողոցում՝ նրանք խոսում էին գիտությունների մասին. շուտով վեճի առարկա դարձավ թե ո՞ր գիտություններն են կարևոր: Մարությանը պնդում էր տնտեսական-իրավաբանական ճյուղերի վրա, իսկ Լևոնյանը՝ բնագիտական և փիլիսոփայական առարկաներն էր առաջ քաշում:

Տուն վերադառնալուց հետո՝ մինչև ուշ գիշեր Լևոնյանը դուրեկան հուզմունքի մեջ էր. թվում էր, թե մի խումբ շատ մտերիմ ու կարոտած ընկերներ էին հայտնվել հանկարծ իր շուրջը, որոնց ամեն մեկը մի նոր աշխարհ էր բացում իր առաջ:

Այդ բոլորին՝ իր վառված երևակայության մեջ նա հնարավոր էր համարում ընդգրկել ամբողջ գիտությունը՝ իր բոլոր ճյուղերով... Նա մեծ պահանջ էր զգում հաղորդակից անելու ուրիշներին իր զգացումների հետ. պատմելու, նամակներ գրելու շատերին, ամենքին...

Ծով-գիտությունը դուրեկան, մեղմ ծփանքով գրավում էր նրան...

XIII

Արդեն երկու ամիս էր, ինչ Լևոնյանը Ռուսաստանի մայրաքաղաքումն էր: Սկզբի օրերին նրան գրավում էին մեծ քաղաքի նշանավոր շենքերը, թանգարանները, շրջակայքի տեսարանները: Նրա առաջ մեծ քաղաքն էր՝ իր միլիոնավոր բնակիչներով, իր եռուն կյանքով, որտեղ ամեն ինչ թվում էր հետաքրքիր ու գրավիչ, և կարծես ստեղծված էր նորեկների զվարճության համար:

Սվելի ևս գրավեց Լևոնյանին համալսարանն իր գիտություններով, իր՝ անվանի պրոֆեսորներով: Նա մեծ եռանդով սկսեց հաճախել դասախոսությունները՝ թե իր ընտրած բնագիտական, և թե մյուս ֆակուլտետների առարկաներին:

Սակայն օրը օրի վրա հաճախելով դասախոսությունները, նա սկսում էր հիասթափվել. այն, ինչ սկզբում թվում էր մի

անսահման օվկիան, հետզհետե դառնում էր մի լիճ: Ամեն կողմից աչքի էին զարնում սահմանափակումներն ու կանխորոշված ուղղությունները. համալսարանական գիտությունը երկչոտ գիտությունն էր, որը լռում էր այնտեղ, որտեղ ծագում էր ամենահետաքրքիր հարցասիրությունը:

Նույն հիասթափումը դալիս էր նաև պրոֆեսորների վերաբերմամբ. առաջ՝ դեռ աշակերտական տարիներին՝ նրանք պատկերանում էին որպես արտակարգ, խոհրդավոր ու խմաստուն մարդիկ, որոնք կյանքից վեր են և զբաղվում են «բարձրագույն հնմարտություններով», իսկ այժմ՝ դիտելով իր շուրջը, տեսնելով ինչ հեշտությամբ են նրանք համակերպվում տիրող կարգին, Լևոնյանը շատ չանցած եկավ այն եզրակացության, որ պրոֆեսորներն էլ սովորական «առորյա» մարդիկ են իրենց սովորական թերություններով:

Իր շրջապատի ուսանողության մեջ նա նույնպես չէր գտնում այն, ինչ ենթադրում էր առաջ. այն ժամանակ նա կարծում էր, թե ուսանողները միշտ տարված են «բարձր ու վեհ պաղատարներով», որ նրանք միայն մի տենչ ունեն՝ ծառայելու ժողովրդին, զոհվելու նրա համար, իսկ այժմ նա հակվում էր այն մտքին, թե նրանցից ամեն մեկը գալիս է համալսարան՝ սովորելու որևէ մասնագիտություն՝ «ապրելու» համար, իր դիրքի, իր կարիերայի համար... ճիշտ է՝ ուսանողական մթնոլորտի մեջ կար ինչ որ ըմբոստություն, ինչ որ հակառակություն ընդդեմ կառավարության, բայց այս բոլորի մեջ Լևոնյանը չէր տեսնում իր երազած «վեհ ու բարձր» շարժումը: Եվ այժմ, երբ քաղաքն արդեն դիտված ու ծանոթ էր և այլևս չէր գրավում, երբ պարապմունքներն արդեն իրենց հունի մեջ էին ընկել, նա նորից մտածում էր, որ այստեղ էլ կյանքն ընթանում էր իր սովորական «հին ուղիներով»... Գուցե իր երազածը մի պատանեկական ցնորք է և ոչ մի հիմք չունի կյանքում: Ու նորից Լևոնյանի մեջ ծագում էր իր հին դժգոհությունը կյանքից, նրա ճնշող «սովորականից» ու «առորյայից»...

Հյուսիսային մայրաքաղաքն իր ամպամած երկնքով, հանախ տեղացող անձրևներով, մռայլ տպավորություն էր անում: Հարավից եկած մարդու համար այս խոնավ, մշուշոտ շրջապատը թվում էր մի արտակարգ վայր, որտեղ խլացած էին կյանքի

բոլոր արտահայտությունները: Քաղաքի արտաքինն իր խոշոր շենքերով՝ որքան էլ շքեղ էր, բայց ամպամած ու խոնավ երկնքի տակ դեղեցկությունը դորշանում էր, կորցնում էր հմայքը: Ինչ որ ճնշող զգացում էր գալիս քաղաքի պետական շենքերից՝ նրանց ծանրանիստ սյուներից: Հին կամուրջների անկյուններում գրած եգիպտական սֆինքսներն իրենց դաժան տեսքով կարծես ոստոնում էին անցորդներին, հիշեցնելով թաղնված, մութ ուժերի մասին:

Փողոցներում աչքի էին զարնում բաղմաթիվ ոստիկանները, գինվորականներն ու որոշ ժամերին՝ պետական ծառայողները՝ իրանց հաղար ու մի ձևի նշանաղգեստներով: Զորս կողմը շարժվում էր մի զսպված ու ճնշված կյանք, որը կարծես ներշնչում էր, թե ամեն ինչ գալիս է հնուց, սրբագործված է դարերով և անվոփոխելի է: Կենտրոնական փողոցներում ոստիկանները մի առանձին ուշադրությամբ հետևում էին կառքերի շարժմանը, ստեպ-ստեպ գինվորական ձևով բարևելով անցնող բարձրաստիճան մարդկանց: Երբեմն շքեղ կարետի պատուհանից ուրվականի նման նայում էր որև է մինիստր, չղջիկի աչքերով, խոժոռած հայացք ձգում բարևող ոստիկանին ու սլանում առաջ:

Լևոնյանի աչքում այս մեծ քաղաքն այլևս չուներ առաջին օրերի դրավչությունը: Քաղաքն այժմ իր խառնիխուռն, բազմերանգ երևույթներով թվում էր անհասկանալի ու խորհրդավոր: Մարդկային այդ հսկա զանգվածը շարժվում էր իր ուրույն օրենքներով՝ անտարբեր գեպի անհատը՝ նրա ձգտումներն ու երազները. նա կարծես ասում էր. «կյանքն ունի իր մշտական ընթացքը և քեզ մնում է միայն համակվել»... (ու այդ համակվելը հնչում է որպես «հպատակվել»)... Եվ եթե այդպես է՝ կյանքն ունի իր սովորական և հրամայական օրենքները, ուրեմն ի՞նչ է լինելու իր ապաղան... Նա կավարտի համալսարանը, կդառնա մասնագետ ու կընկնի կյանքի սովորական ուղիները, ինչպես այդ անում են շատերը... իսկ «սովորականից» նա խորշում է, որպես բանտից...

Վերջերս այդ մտքերը թանձր մշուշի նման պատել էին նրան, ծածկել հորիզոնները: Նա տանջվում էր իր մտքի անզորությունից՝ որ չի կարողանում գտնել իր ուղին՝ այս քաոսային երթի մեջ: Կյանքի այս ժխորի մեջ նրա ականջին հնչում էր

չարունակ. «ամեն ինչ սովորական է. և դու էլ կընթանաս սովորական ուղիներով»...

Նա զզում էր և մխայնություն, նոր ընկերները դեռ չէին ընտելացել, իսկ հները ուրիշ տեղ էին: Մոտ ժամանակներս նամակ ստացավ Մարգարյանից. նա գրում էր արտասահմանից ... իսկ Լևոնյանը հույս ուներ, վոր նա էլ կգա մայրաքաղաք, միասին կապրեն և կշարունակեն «հին ընկերությունը»...

... Այսօր կիրակի է, հոգեբարանում պարապմունք չկա. նա ավելի է ենթակա այդ մտքերին: Կյանքն իր առորյա մանրունքներով թվում է անմիտ ու ձանձրալի: Ու կարծես այդ մտքերով հաստատելու համար վերևի հարկից հնչում է դաշնամուրի ձայնը. լսվում են երաժշտական վարժությունները՝ սիրտ մաշող միոբինակությամբ...

Նա փորձեց զբաղվել ընթերցանությամբ, բայց չհաջողվեց. նրա ուշադրությունը խուսափում էր գրքի երեսներից և զբաղվում սեփական մտքերով: Վեր կացավ և պատրաստվում էր դուրս գալու, երբ դուռը թխկացրին:

Ներս մտավ ուսանող Միքայելյանը, և բարևելով, կանգնեց սեղանի մոտ: Նա Լևոնյանի նոր ծանոթներից էր՝ այն խմբից, որի հետ նա շրջում էր քաղաքը համալսարանի բացումից առաջ:

— Ինչ՞ ես տանը նստել,— ասաց Միքայելյանը.

— Բա ինչ՞ պիտի անեմ:

— Շատ բան կա անելու:

— Դե որ շատ բան կա, ասա, դու ինքդ ինչ՞ ես անում:

— Ձանձրանում եմ և տխրում...

— Երկուսի պատճառներն էլ պարզ են:

Միքայելյանը նստեց սեղանի մոտ ու ականջ դնելով վերևի հարկից լսվող դաշնամուրի ձայներին, ասաց.

— Իսկապես դու երջանիկ ես, որ ճաշակում ես այս երաժշտությունը...

— Ուզում էի փախչել այդ ձանձրույթից, բայց դու վրա հասար... ուրիշ, ասա, ո՞նց ես:

— Ի՞նչ ասեմ... կարծես թե շատ բան կա, բայց չկա ամենագլխավորը. մի տեսակ հիասթափություն է գալիս և համալսարանից, և ուսանողությունից...

— Գիտեմ, գիտեմ...

Լևոնյանն ինքն էլ տառապում էր նույն մաքերով, բայց լսելով Միքայելյանի բերանից, տարօրինակ ցանկություն էր զգում՝ առարկելու:

— Գիտությունը կբացի մեր ճանապարհը...

— Բայց ո՞ր գիտությունը... այս պրոֆեսորների՞, որոնք վախենում են իրենց ստվերից... Դու կարծես ինչ որ հույսեր ունես, ինչ որ հավատ...

— Բայց մենք գալիս ենք այստեղ ռոմանտիկ երազներով և հետո տխրում, տեսնելով որ իրականության մեջ չկան այդ երազները:

— Ինչո՞ւ ես երազներից խոսում. մենք պարզ տեսնում ենք իրականությունը...

— Դու մոռանում ես, որ մենք էլ պիտի մասնակցենք այդ իրականության մեջ, մեր ջանքերից էլ շատ բան է կախված...

— Ինձ թվում է՝ դու համամիտ ես ինձ հետ, բայց ինչ-որ արդարացում ես փնտրում... Եթե չկա կյանքում՝ ստա չկա, էլ մի կոծկիր... Բայց ի՞նչ ենք այստեղ նստել ու տխուր փիլիսոփայությամբ զբաղվում: Արի՛ գնանք մի քիչ շրջենք:

— Գնանք, ես արդեն քեզանից առաջ էի պատրաստվել...

Նրանք գնում էին սառած ձյունով ծածկված փողոցներով, գնում էին գրուցելով նույն հարցերի շուրջը, բայց այժմ Լևոնյանն էլ չէր առարկում, այլ ինքն էլ էր մասնակցում. լրացնելով Միքայելյանի սկեպտիկ մտքերը:

Աննկատելի կերպով նրանք անցան բավականին երկար ճանապարհ և դուրս եկան քաղաքի կենտրոնը: Երբ կանգ առան մի գրախանութի ցուցափեղկի առաջ, հանկարծ նրանց եռեից լսվեց մի ձայն.

— Հա՛, այ թե ինչով են զբաղված:

— Իս ո՞ւրտեղ ես, չես երևում,— ասաց Լևոնյանին լևոնային ինստիտուտի ուսանող Կարապետյանը:

— Հիմա քիչ եմ դուրս գալիս տանից:

Նրանք միասին անցան լայն պողոտայով: Երբ մոտեցել էին հայոց եկեղեցուն, Կարապետյանն ասաց.

— Դե գնանք հայոց աղի ակումբը, մի իմանանք, ո՞վ է դենդանի, ով է մեռել, ով է եկել Կովկասից, տեսնենք ում ուզում ենք և ում չենք ուզում. մի խոսքով ամեն ինչ...

— Օ՛հ, ինչ երկար ճառեցիր,— ասաց Միքայելյանը:

Եկեղեցու դավթում՝ այդ յուրահատուկ ակումբում, արդեն լրիվ հավաք էր և ժխորի ձայնը լսվում էր հեռվից:

Նրանք ներս մտան դավիթը:

XIV

Կիրակի օրերը մայրաքաղաքի հայերը հավաքվում էին եկեղեցու դավթում: Դա մի յուրահատուկ ակումբ էր, մի ժամանակավայր, որտեղ մարդիկ հանդիպում էին իրար, տեսնում էին հեռավոր հայրենիքից նոր եկածներին, նորություններ իմանում և նորություններ հաղորդում:

Երբ Լևոնյանն իր ընկերների հետ մտավ եկեղեցու դավիթը, այնտեղ արդեն խիտ բազմություն էր. ամեն կողմ խմբերով կանգնած էին մեծ մասամբ ուսանողներ՝ զանազան բարձրագույն դպրոցների դպրոցներով, որոնք աչքի էին ընկնում վերարկուների եզրակների կապույտ, կանաչ ու կարմիր գույներով և արծաթափայլ կամ ոսկեփայլ կոճակներով:

Եկեղեցու ժամերգությունը հաճախում էին դպիրավորտեսակները կամ բարձրաստիճան պետական ծառայողները: Նրանք խոժոռած դեմքերով մտնում էին եկեղեցի, կանգնում արձանների նման մինչև պատարագի վերջը և նույն փքված տեսքով դուրս գալիս, խորշանքով անցնելով դավթում խմբված «անասված» ուսանողների միջով: Նրանց դուրս գալն ուներ այն նշանակությունը, որ ազդարարում էր պատարագի վերջը, ուրեմն և դավթի հավաքույթի վերջը:

Եկեղեցու պաշտոնյաներից ամենահասատատը և կարելի է ասել՝ ամենանշանավորը՝ ժամկոչն էր: Նա ռուս էր, երևի մի-ակ ռուսը, որ ժամկոչ էր հայոց եկեղեցում: Նրա հագուստից կարելի է եզրակացնել, որ պետական ատորին ծառայող է: Շարունակ կամակատար ժպիտը երեսին, ամենքին լսելով ու ամենքին հնազանդելով, նա դարձել էր որպես մի փափուկ դարդ՝ եկեղեցին հաճախող հարուստների ոտների տակ: Նա քայլում էր անձայն, դպելով իր շարժումները և իր զգուշությունից

դարձել էր այնքան ճկուն, որ պատարագի ժամանակ կարող էր անցնել մարդկանց ամենախիտ շարքերի միջով՝ առանց որևէ մեկին անհանգստացնելու: Նա միշտ առիթ էր փնտռում խորը բարևելու հարուստներին և հաճախ կատարում էր նրանց զանազան պատվերները:

Ժամկոչը չէր սիրում նորեկ տիրացուին և զարմանում էր, թե ինչպե՞ս նա չի քաշվում և անզգույշ, բարձր ձայներ է հանում այդպիսի հարուստ, պատվավոր մարդկանց առջև: Մեծաքիթ և մեծաբերան այդ տիրացուն պահպանում էր հայոց եկեղեցու տրադիցիաները,— հենց որ նա սկսում էր երգել, ասես բերանից գել կռավոցով ագռավներ էին թռչում դեպի եկեղեցու առաստաղը: Այդ ձայնը խանդարում էր ներքևում կանգնած երգեցիկ խմբին, զրդռում էր իր դիսոնանսով խմբապետին, բայց և այնպես տիրացուն անհրաժեշտ էր, ինչպես եկեղեցուցյունները. նրան համբերությամբ լսում էին հարուստ ժամասերները, մտածելով, որ «իսկական» հայոց եկեղեցում այդպես է լինում:

Դրսում կանգնած ուսանողական խմբի մեջ, որտեղ Լևոնյանն էր, Բաքվից եկած լեժենները պատմում էր այնտեղի նորություններից,— թե ինչպես մի հարուստի նավթահանքում խփել է «ֆոնտանը» և դրա առիթով նա իր տանը սարքել է շամպայնի շատրվան: Մի ուրիշ խմբում երիտասարդ սպան ասում էր, որ սովորական ճանապարհով դժվար է առաջ գնալ պինվորական ծառայության մեջ, ավելի ձեռնտու է մտնել ժանդարմական մասը: Նրա դիմաց կանգնած ուսանողը, որը մինչ այդ լուռ էր և նոր էր ծանոթացել սպայի հետ, հարձակվեց վերջինիս վրա, ասելով — «դուք ժանդարմական հայացքներ ունեք»: Սկսվեց վեճակռիվ, որը կարող էր վերջանալ շատ անախորժ հետևանքներով, բայց մոտը կանգնած ընկերներն անմիջապես հեռացրին նրանց իրարից:

Մի այլ խմբում «կովկասյան ռեստորանի» տերը զրդռում էր ախորժակները, ասելով, թե Թիֆլիսից ստացել է կովկասյան պանիր, կարմիր բուղկ, կանաչի և ուրիշ շատ բաներ, որ «միայն ուտողը կտեսնի»...

Ազգայնական ուսանողների խմբում արտասահմանից եկած մի «ազգային»՝ պենսնեն աչքերին, կոկետորեն գլուխը շարժելով և չինաց լրջություն տալով դեմքին, հավատացնում էր, որ հույս կա մոտ ժամանակներս «հայկական հարցը» նորից շարժելու,— «տղաներն աշխատում են, անպատճառ մի բան կլինի»,— ասում էր նա խորհրդավոր լրջությամբ, շարունակ ուղղելով պենսնեն: Ունկնդիրները լսում էին ուշադրությամբ, բայց երբ փորձում էին խմանալու մանրամասները, անորոշ պատասխաններ էին ստանում:

Թիֆլիսից եկած մի դաղթական տաճկահայ, որը մտադրվել էր հաստատվել մայրաքաղաքում, հետը բերել էր վաճառելու «Հայաստանի փառք» նկարը, որի վրա շարված էին հայոց թագավորները. բերել էր նույնպես զանազան դրքեր՝ «Բարի մայր Շողակաթը» խրատական վիպակը, «Խորտակված սեր» վեպը, «Դժբախտ լարեր» բանաստեղծությունների ժողովածուն. առանձին սիրողների համար նա ուներ նաև Պոլսի հրատարակություններից՝ «Գաղտնիք հարստության» և «Երիտասարդության մեղքեր»:

Գաղթական հային մխիթարելու համար Միքայելյանը և Լևոնյանը մի-մի դիրք վերցրին և դնացին դեպի իրենց ծանոթ ուսանողական խումբը:

— Դու էլ այստեղ ես՞,— ասաց Լևոնյանը, ձեռք տալով ուսանող Մարությանին,՝ որին հանդիպում էր դասախոսությունների ժամանակ:

— Դե ինչ արած, մեր բարեխնամ կառավարությունը թույլ է տալիս հավաքվելու միայն եկեղեցու բակում. սա էլ մեր ակումբն է...

— Ավելի չուտ՝ անկելանոցը,— ասաց Միքայելյանը:

— Ինչ ասես կասա, բայց էլի փաստը մնում է նույնը:

Գավթի հասարակությունն արդեն հաղեցել էր իր զրույցներից, երբ ժամասերների խումբը սկսեց դուրս գալ եկեղեցուց: Դրսի ժխորը մի քառորդ ժամով նորից բորբոքվեց եկեղեցուց ելնող հոսանքից: Եկան ցրվեցին հասարակության մեջ երգիչները, ապա քիչ անց՝ դուրս եկավ քահանան, ծանրաքայլ ու հատուկ լրջություն տված իր պարարտ դեմքին: Նրա ետևից դալիս էր տիրացուն, մաղոտ հոնքերը վեր քաշած, անիմաստ ժպիտով նայելով ամբ ու այն կողմը, ասես հոտոտելով հասարակությունը: Մաղնիսի ձգողությամբ նա դառավ «կովկասյան

ռեստորանի» տիրոջ և խոնարհաբար բարևեց։ Նա մեկ-մեկ հյուրասենյակում էր տիրացվին և խնդրում նրա ղիլ, ականջ ծակող երգերից։

Արդեն հասարակությունն սկսել էր ցրվել, երբ Միքայելյանը մի կողմ քաշելով Լևոնյանին հայտնեց, որ այսօր հայ ուսանողների հայրենակցական միության ընդհանուր ժողովն է, պետք է դնալ, «հետաքրքիր» է։ Նա աչքերով ցույց տվեց այն ուսանողներին, որոնց հետ պիտի դնային։ Փողոցի մուտքի մոտ խումբը բաժանվեց մի քանի մասերի և շարժվեց մեկ-մեկու ետևից դեպի ժողովատեղը։ Այդ զգուշությունն անհրաժեշտ էր՝ ոստիկանության ուշադրությունից խուսափելու համար։

XV

Ժողովը հրավիրված էր հարուստ ուսանող Զաքարյանի մոտ, որը փոքր ինչ հետաքրքրվում էր «աղգային գործերով», իսկ հասարակական խնդիրներով զբաղվող ուսանողներին անվանում էր ֆրանսական արտասանությամբ «աղյասյոնիր»։ Ժողովը թեպետ գաղտնի էր, բայց ոչ շատ վտանգավոր, քանի որ դանազան ազգերի ուսանողական հայրենակցական միությունները ղլխավորապես զբաղվում էին աղքատ ուսանողներին օգնելով և նրանց աչքի ընկնող գործը՝ տարեկան մի համերգ-պարահանդես կազմակերպելն էր։

Այնուամենայնիվ ոստիկանության արշավը անխուսափելի էր, եթե ձեռք չառնեին որոշ միջոցներ։ Այդ նպատակով Զաքարյանի երկրորդ մեծ սենյակի կենտրոնում դրված էր մի երկար սեղան, որի վրա շարված էին գարեջրի շշեր ու ափսեներ՝ էժանագին ուտելեղենով՝ երշիկով, պանրով, ձկնով և այլն։ Սեղանի կենտրոնում դրած էր արհեստական ծաղիկների մի փունջ։ Ոստիկանության գալու դեպքում Զաքարյանը պիտի հայտներ, որ «հյուրերը» հրավիրված են իր անվանակոչության առիթով։ Տանտիկնոջ աջակցությունը նույնպես ապահովված էր, քանի որ նա բարեկամական հարաբերությունների մեջ էր ուսանող Զաքարյանի հետ։

Զաքարյանին՝ ըստ երևույթին դուր էին գալիս այս լրանցումը և այն վտանգը, որ սպասվում էր ոստիկանության կողմից։ Նա իր ուսանողական հանդիսավոր, երկար ղեբոը հագած, փայլուն դեղին կոճակներով կուրծքը սպայի նման դուրս ձգած, շարունակ անհանդիստ դես ու դեն էր շտապում, ընդունելով հյուրերին։ Նա ամենքին ձեռք էր տալիս սալոնական ձևով՝ կռանալով ու ձեռքը սեղմելով, բայց այդ դժվարությամբ էր հաջողվում, որովհետև նա իր գիրության պատճառով չէր կարողանում պատշաճ չափով կռանալ։

Նա ուտելու սիրահար էր և արդեն իր բանը տեսել էր՝ լավ կերել ու վրան էլ խմել էր ավելի, քան անհրաժեշտ էր։ Սակայն ուրիշների վերաբերմամբ նա ավելի ժլատ էր։ Երբ հյուրերը մեկ-մեկու ետևից դալիս էին ու զրդված ախորժակով նայում լիքը սեղանին, նա միշտ նախազգուշացնում էր, թե «այս լիառատ սեղանը կարելի է վայելել միայն տաղնապի ժամանակ», թեպետ խոսելիս նրա բերանից բուրող խմիչքների խառնուրդն այլ բան էր ասում ունկնդրին։

Հավաքվել էին մոտ հիսուն հոգի, որոնց մեջ կա՛յին երկու ուսանողուհի՝ շատ լուրջ դեմքով։ Ազատ ունկնդիր՝ ճեմարանցի Նահապետյանը, խորը ակնոցի տակից ինքնասեր լրջությամբ թեք նայում էր, պատրաստվելով իր «առանձին տեսակետը» մոցնելու ամեն հարցի մեջ։ Նա չէր մասնակցում այս ու այն կողմ զրուցողներին, որոնք զգալի ազմուկ էին բարձրացնում։

Դեռ նոր էին «հյուրերը» շարվել սեղանի շուրջը, երբ հանկարծ տանտիրուհին դուռը թխկացրեց։ Զաքարյանը շփոթված վեր թռավ տեղից ու դուրս դնաց միջանցքը։

— Դռնապանը եկել է,— ասաց տանտիրուհին դռնատված, փոշմանելով, որ հոմաճայնություն է տվել ժողովին։

— Ոչինչ — ասաց Զաքարյանը սիրտ տալու համար, բայց ներքուստ ինքն էլ անհանդիստ էր։

Գնացին դեպի խոհանոց։ Դռնապանը եկել էր ետևից՝ կամ ինչպես անվանում էին «սև մուտքից»։ Նա իր փորձված աչքով նկատել էր ուսանողների խումբ-խումբ դալը և եզրակացրել, որ ժողովի են գնում։ Սև քուրքը հագին, անկանոն կուտակված մորուքը սղալելով, նա սպասում էր, աչքերը ձգած դեմքին։

— Հը՛ ինչ կա, Իվան, հարցրեց Զաքարյանը փոքր ինչ վախենալով։

Դռնապանը մի ակնթարթ նայեց Զաքարյանին, ապա նրից աչքերը ձգեց հատակին:

— Այնպես որ բարին (աղա)... Ձեզ մոտ ժողով է... այնպես որ... ոստիկանությունն արգելում է...

— Ի՞նչ ժողով, այսօր իմ անվանակոչությունն է, հյուրեր եմ հրավիրել, ոլիտ ուրախանանք, քեֆ անենք:

— Իհարկե, Իվան,— միջամտեց տանտիրուհին,— հրավերը է, հյուրերը եկել են պարոն Զաքարյանին շնորհավորելու...

— Բայց ոստիկանությունը կարգադրել է...— ասաց Իվանը մռայլվելով և դլուխը բարձրացնելով,— այնպես որ... արգելված է...

— Ի՞նչ, մեթե՞ ընտանեկան հրավերքներն արգելված են,— ասաց Զաքարյանը ձեռքը տանելով դեպի դրպանը: Տանտիկինը, հասկանալով դործի էությունը, դուրս եկավ խոհանոցից: Զաքարյանը հանեց մի արծաթե ռուբլիանոց և դրեց Իվանի ձեռքին:

Իվանը քաշվելով ձդեց լայն ու խոր դրպանը և ասաց վազելով.

— Այդպես էլ կասեմ, բարին, որ ձեզ մոտ անվանակոչություն է, հյուրեր են հրավիրված...

— Հա, իհարկե, այդպես է...

Իվանը դուրս դնաց, իսկ Զաքարյանը շտապեց դեպի ժողովատեղը: Միջանցքով անցնելիս տանտիրուհին բաց դռնից ձեռքի նշանով կանչեց նրան իր սենյակը:

— Հը, ինչո՞վ վերջացավ:

Զաքարյանը դրկեց նրան, չնայած բողոքին ու ասաց.

— Գործը դրստեցի արծաթով...

Ապա դնալով իր սենյակը նա զարմացավ, որ «հյուրերն» արդեն խմացել էին «տաղնապի» մասին և իրենց դերը կատարելով, արդեն ուտելեղենի և խմիչքների մեծ մասը ոպառել են:

— Մենք փրկված ենք,— ասաց նա, ձեռքը բարձրացնելով,— բայց ինչպես երևում է, դուք էլ լավ եք աշխատել...

Նա պատմեց դռնապանի այցելության մասին:

— Բրավո-բրավո,— ձայն տվին ամեն կողմից, բարձրացնելով դարեջրի բաժակները:

Թիֆլիսեցի ուսանող Ավագյանը վեր կացավ տեղից ու սկսեց իր ճառը:

— Թույլ տվեք ընկերներ, բարձրացնելու բաժակը մեր այսորվա հերոս Զաքարյանի կենացը. նրա անվանակչությունն ավելի բարձր է, քան արևը, աստղերը, բարձր է, քան լուսինը և նույնիսկ՝ վոդոցի լապտերները...

— Նո՛ւ, նո՛ւ, իջեցրու ոդևորությունդ,— ասաց Զաքարյանը, ծիծաղը դեմքին մոտենալով Ավագյանին և չխկացնելով նրա բաժակին: Ապա դառնալով ընդհանուրին ասաց.

— Ընկերնե՛ր, սիրա՞նս (լուրթյո՞ւն), պետք է ասեմ, որ ձեր խժռելու եռանդը չափից անցել է. պետք է պաշարը թողնենք հետևյալ տաղնապի համար:

— Բրավո, քո կենացը,— կանչեցին ամեն կողմից:

Վարչության նախագահ Մալխասյանը վեր կացավ տեղից և ձեռքով նշան անելով, ասաց կիսաժպիտ դեմքով.

— Սկսե՛նք, ընկերներ:

Բոլորը հետ քաշեցին սեղանից աթոռները և ժողովը մտավ իր հունի մեջ:

XVI

Նախագահի ընտրությունից հետո դանձապահ Սարգսյանը սկսեց տարեկան հաշվետվությունը, որը բաղկացած էր մի ուսանողական ընդհանուր տեսքից, թեպետ զեկուցողը գործ էր ածում մի չարք խորիմաստ հաշվապահական տերմիններ՝ «սալդո», «բալանս» և այլն: Նրա դեմքը կյանքից հագեցած և ամեն ինչից ձանձրացող երիտասարդի տպավորություն էր թողնում: Նա երկու տարվա ուսանող էր, իրավաբան, և որպես վաճառականի որդի, ունևոր էր: Անցյալ տարի նա համաձայնվեց ընտրվել դանձապահ, ցանկանալով իր ձանձրալի կյանքը մի բանով լցնել: Սակայն այժմ նա վճռել էր թողնել այդ, որովհետև նրան դրդռում էին օդնության դիմող աղքատ ուսանողներն իրենց համառությամբ (նա այդ անվանում էր «աներեսություն») և ինքնասիրությամբ (նա այդ անվանում էր «ամբարտավանություն»— «աղքատ ու հպարտ»): Նա դիտեր, որ հաշվետվության դլխավոր կետը հին պարտապանների հարցն էր,

այսինքն այն ուսանողների, որոնք մի ժամանակ պարտք էին վերցրել և ավարտելուց հետո մոռացության տվել: Այս կետի վրա էլ Սարգսյանն ամենից շատ կանգ առավ: Դա այն ամբոցն էր, որի վրա ամեն տարի կատաղի հարձակումներ էին լինում, բայց երբեք չէին կարողանում վերցնել: Զեկուցումից հետո խոսողները նույնպես կպան ղլխավորապես այդ հարցից: Սպառնում էին, թե պետք է «խայտառակել» պարտապանների, հրատարակելով լրագրերում նրանց ազգանունները, կամ դատի կանչել նրանց: Մորուքավոր ճեմարանցին՝ շարունակ կրկնելով «իմ կարծիքով» «իմ տեսակետով», «սկզբունքորեն մոտենալով» բառերը, բարվոք էր համարում կազմակերպել մի շարք վայրերում հատարակական դատեր, բայց հիասթափեցրեց շատերին իր բարդ առաջարկությամբ: Սակայն վոթորիկը հեղհեղեց ինքավ և վերջն ընդունվեց մի որոշում՝ առայժմ դտնել պարտապանների հասցեները և նամակներով «հիշեցնել» նրանց, իսկ եթե այդ միջոցը հետևանք չի ունենալ, նորից քննության դնել:

Ժողովն անցավ մի շարք ուրիշ հարցերի, բայց նրանք քննվում էին ավելի նվազ թափով: Լևոնյանը դիտում էր ժողովը զարմանքով: Նա ենթադրում էր, թե այստեղ կլինեն վիճաբանություններ «դաղափարական» հարցերի շուրջը, կիսոսեն ժողովրդի ցավերից, նրան «ծառայելու», օգնելու և լուսավորելու մասին, բայց չդտնելով այդ, նա ավելի խորն էր հիասթափվում: «Այս բոլորը մանրունք է, վայել չէ ուսանողներին,— մտածում էր նա,— պետք է խոսել «իսկական» հարցերի մասին...

Բայց քիչ անց նրա մտածումներն արտահայտեց ուսանող Մարությանը, որը մինչև այժմ իր նման լուռ էր: Նա համարձակ և կտրուկ քննադատեց ուսանողական միությանը, ասելով, որ նա զբաղվում է միայն բարեգործությամբ,— հեռու մնալով դաղափարական գործունեությունից,— «եթե մենք միայն այս մանր-մունր հարցերով պիտի լցնենք մեր օրակարդերը, այդ դեպքում չարժե շարունակել այս կազմակերպության գոյությունը»,— եզրափակեց նա:

Մարությանի համարձակ քննադատական տոնը թարմացնող ազդեցություն թողեց Լևոնյանի վրա, ասես ճնշող, նեխված օդի մեջ թեթև քամի խաղաց: «Ուրեմն կան և այսպիսի քննադատներ,— մտածում էր նա,— անշուշտ կարող են լինել և ուրիշները, որոնց հետ կարելի է միանալ»:

Բայց Մարությանի դեմ սկսվեց բուռն վիճաբանություն: Հակառակորդները պնդում էին, որ նա քարշում է ուսանողական միությանը դեպի հեղափոխություն, որ այդ ընթացքը կործանիչ է և վատ կանդրադառնա ոչ միայն հայ ուսանողության վրա, այլև «հայ ազգի» վրա:

Խոսողների մեջ տարօրինակ շեղումներ էին տեղի ունենում — մաթեմատիկոսը օրինակ եր բերում «անընդհատ» և «ընդհատվող» ֆունկցիաներից, բժիշկ ուսանողը՝ դիագնոստիկայից, ընագետը՝ միջատների մետամորֆոզից:

Մարությանն իր հակառակորդներին դիմադրում էր սրամիտ ռեպլիկներով, որոնք ավելի էին գրգռում նրանց հակառակությունը: Նրան պաշտպանեցին միայն երկու ուսանող, բայց մեկմ ու անորոշ արտահայտելով իրենց մտքերը, ասես ձգտելով մարելի դարձնել Մարությանի ասածը, սակայն նրանք սիրտ տվին Լևոնյանին: Սա էլ խոսեց այն մտքով, թե ժողովուրդն իր նոր, լուսավոր սերնդից պահանջում է դաղափարական գործունեություն, որ ժողովրդին ազատողը, օգնողը, նրա ցավերը վերացնողը պիտի լինի ուսանողությունը:

Մի իրավաբան ուսանող սկսեց ճառել, համեմելով իր խոսքը լատինական ասացվածքներով. նա երևակայում էր իրեն դատարանում և աշխատում էր դործադրել հայտնի փաստաբանների «հանդերը»: Նրա ճառը մշուշային էր, բայց մեծամասնությունը ընդունեց դոհունակությամբ, քանի որ նա կոչ էր անում «չքանդել կառուցված շինքը», պահպանել «ուսանողական տրադիցիաները», այսինքն՝ նա դեմ էր որևե նորմուծության:

Իրավաբանի խոսքը վերջ տվեց վիճաբանություններին: Մի քանի ուսանողներ անաղմուկ ծափահարեցին նրան. հաջողությունը լայն ժպիտ բերավ իրավաբանի դեղեցկատեսիլ, ոսկե պենսնեով զարդարված դեմքին, թեպետ Զաքարյանը անհանդստանում էր ծափահարությունից, վտանդավոր համարելով այն «ոստիկանության տեսակետից»:

Սկսվեցին ընտրությունները, որոնք բավականին երկար դրաղեցրին ժողովը:

Իրար հետևից սկսեցին դրել թերթիկների վրա դլխավորապես այն ուսանողների անունները, որոնք խոսել էին ժողովում: Ամենից շատ ձայներ ստացավ ոսկե ակնոցավոր իրավաբանը. շատ ձայներ ստացավ և ուսանող Ատոմյանը՝ մի ցածրահասակ, դյուրաշարժ ուսանող, որը շարունակ ակնոցն ուղղելով խոսում էր ամեն հարցի մասին և ամեն խոսողի հարց կամ ռեպլիկ էր տալիս: Ճեմարանցին ընտրվեց «հայրենադիտության մասնաժողովում»: «Սկեպտիկ» Միքայելյանը նստել էր անկյունում և աթոռին թեք ընկած, հոնքերը մռայլ կուտակած, նա ճանճրանում էր ժողովից, անհամբեր սպասելով նրա վերջին: Երբեմն նա երևակայում էր, թե ինքը հայտնի հռետոր է և այնպիսի ճառ է ասում, որ բոլորին ամաչեցնում է, ցույց տալով, որ դրաղվում են «անմիտ բաներով»: Բայց ամեն անդամ, երբ նախագահը կարդում էր ընտրվածների անունները, Միքայելյանի մեջ սկսում էր ակամա տարածվել մի տխուր դդացում, որի անունը նա չէր ուղենալ տալ: Ահա Մարությանին և Լևոնյանին էլ ընտրեցին թատրոնական հանձնաժողովում՝ (երեկույթների կազմակերպման համար), ահա լսվեցին համարյա բոլորի անունները, բայց իրենը՝ Միքայելյանինը չկար նրանց մեջ: Նրա սիրտը պակասում էր ամեն մի նոր անունից: Այժմ պարդ էր նրա համար, որ բոլորը ընտրվել են, բացի իրենից, որ ինքը «վերջինն է» բոլորի մեջ...

Կարծես վտարված այս հասարակությունից, նա դեռ ժողովը չվերջացած աննկատելի դուրս եկավ փողոց: Նա կանդ առավ փոքրիկ հրապարակում, խորը շնչեց սառը, խոնավ օդը: Նա փորձում էր ինքն-իրեն հանդստացնել,— չէ՞ որ այս ուսանողներն իր ուդած մարդիկը չեն, չէ՞ որ իր աչքում նրանք ցածր են, ուրեմն ի՞նչ նշանակություն ունի, որ իրեն չեն ընտրել: Կամ ասում էր՝ «չէ՞ որ դեռ ինձ չեն ճանաչում. երբ կը-ճանաչեն այն ժամանակ էլ կընտրեն»: Բայց այս բոլոր դատողությունները չէին օդնում. «տխուր դդացումը» տեղի չէր տալիս ոչ մի դատողության առաջ ու դնում նորից իր այրող հարցը.— «Մի՞թե ես վերջինն եմ այդ բոլորի մեջ»...

Նա անցավ աննպատակ բավականին երկար ճանապարհ՝ մինչև հոդնելը, ապա ներս մտավ մի դարեջրատուն, պահանջեց մի չիշ դարեջուր, ու դատարկելով վերջին բաժակը, մխիթարեց ինքն իրեն.

— Վերջիններին կլինեն առաջիններին...

... Երբ ժողովականներն սկսեցին ցրվել, Զաքարյանը մոտեցավ իր մոտ ընկերներից երեքին և փսփսաց ականջին.

— Դուք չդնաք, շարունակություն է լինելու...

Իսկ երբ բոլորը ցրվեցին, և մնացին յուրայինները, նա դուրս եկավ միջանցք ու մի քանի րոպեից հետո ներս մտավ թևանցուկ իր բարակ և նազելի տանտիրուհու հետ, որն աղմըկոտ ծիծաղով սուտ դիմադրում էր:

— Ներկայացնում եմ ձեզ մեր համակրելի Մարյա Դիմիտրովնային:

Բարևելուց հետո տանտիրուհին սկսեց կարդի բերել սեղանը չորս ընկերների համար:

Զաքարյանը ուրախ բացականչություններ էր անում. նա ուրախ էր, որ «փարավոնները» (ոստիկանները) իրեն նեղը չդրեցին և քեֆի պաչարն էլ դեռ չէր սպառվել:

Տանտիրուհին չտապով լրացրեց սեղանը առանձին պահած կոնյակի և դինու շշերով, ու մի քանի «դելիկատեսներով»: Զաքարյանը նրա հետ զուդընթաց կարդի էր բերում իր փորը, որն այժմ մեծ տաղնապի մեջ էր. նա կանդնած ուտում— խըմում էր, չսպասելով նստելուն:

— Դե, ընկերներ, նստեցեք և լիացեք,— ասաց նա իր հատ մարմնով ընկնելով աթոռի վրա:— Մարիա Դիմիտրովնա, դուք էլ մեր սեղանակից դարձեք և եղեք, ինչպես ձեր տանը»:

Մարիա Դիմիտրովնան շնորհակալություն հայտնեց և ասելով թե՝ «դործ ունիմ, շուտով կվերադառնամ», դնաց ու էլ չեկավ: Իսկ քիչ անց Զաքարյանը մոռացավ ոչ միայն իր տանտիրուհուն, այլև ամեն ինչ:

— Էս «աղդասյորները», դիտեք ի՞նչ... կարծես ծուռն են ծնվել,— ասում էր նա,— չես իմանում, ի՞նչ են անհանդստանում, ի՞նչ հաշիվներ ունեն էս աշխարհի հետ. հիմի էլ էն Մարությանն էր քամին ցանում... չէ, ուղիղ է, ծուռ են ծնվել էդ մարդիկ...

Նա բարձրացրեց բաժակը՝ ու սկսեց երգել հայտնի ուսանողական երգը՝ «Գաուդեամուսը»։

Gaudeamus igitur
Juvenes dum sumus···*)

Ընկերները ձայնակցեցին նրան։

··· Լևոնյանն ու Մարությանը գնում էին միասին։

— Ի՞նչ տպավորություն ստացաք այս բոլորից,— հարցրեց Մարությանը։

— Ես հիասթափվեցի ավելի, քան մինչև այժմ էի,—ասաց Լևոնյանը,— ես ենթադրում էի գաղափարական գործունեություն···

— Հա, այդ բոլորը հեռու է նրանցից։ ··· Դրանք քաբե գանգեր են և հնչում են միայն իրենց համար։ Վաղը-մյուս օրը այդ մարդիկ իրենց հարուստ հայրերի նման պիտի նստեն ժողովրդի վզին և նրան ստրկացնեն···

— Բայց իհարկե, ուսանողության մեջ կան և ժողովրդի գործին նվիրված տղաներ։

Մարությանը փոքր ինչ լռեց, ապա ասաց.

— Կան, իհարկե, բայց՝ փոքրաթիվ են և նրանց համար հնարավոր էլ չի ամեն տեղ բացարձակ արտահայտել իրենց մտքերը···

— Բայց ձեր խոսքը բավականին շարժեց ճահիճը···

— Ճիշտ է, սակայն ինձ նման խոսողները քիչ են։ դժգոհներ կան, բայց նրանցից շատերը պարզ չեն գիտակցում, թե ի՞նչ են ուզում, ինչի՞ դեմ է ուղղված նրանց դժգոհությունը։

Իր տան մոտ Մարությանը կանգ առավ։

— Ես այստեղ եմ ապրում, կուզե՞ք գնանք ինձ մոտ։

— Հիմա հոգնած եմ, մի ուրիշ անգամ։

— Խնդրում եմ հաճախ գաք ինձ մոտ, հարցեր շատ կան··· Նրանք բաժանվեցին։

*) Ուրախանանք, քանի երիտասարդ ենք։

XVII

Ամմազովի անունը ընկերական շրջանում «մետեոր» էին դրել։ և իսկապես՝ նրա հայտնվելն ու անհայտանալը միշտ լինում էր հանկարծակի։ Նա չէր կարող երկար մնալ մի տեղ և շարունակ թափառումների մեջ էր։— մեկ լսում էին, թե նա եղել է Կովկասում, մեկ թե՝ ծովի ափին՝ Օդեսսայում, իսկ մի անգամ նույնիսկ հասել էր Արևմտյան Սիբիր։ Սակայն այդ լուրերն իմացվում էին այն ժամանակ, երբ նա վերադառնում էր և անձամբ պատմում, իսկ նրա բացակայության ժամանակ ոչ ոք չէր կարող ասել, թե ուր է գնացել և ինչ նպատակով, չէր կարող ասել նույնիսկ նրա հավիտենական սիրուհին՝ Նադյան։

Դա մի տարօրինակ սիրային կապ էր, որի մեջ թվում էր՝ ամեն ինչ պիտի նպաստի խզվելուն,— Ամմազովի երկարատև բացակայությունները, նրա սովորական սառնությունը, դավաճանությունները··· Բայց Նադյան զարմանալի հավատարմությամբ չարունակում էր նրան սիրել։ Դա մի նրբակազմ այրի կին էր, որ մի անգամ անհաջող ամուսնությունից հետո վախենում էր կապվել ամուսնությամբ որևէ տղամարդու հետ։ Նա տանջվում էր Ամմազովի բացակայությունից, բայց ոչ պակաս տանջվում էր և նրա ներկայությունից, որովհետև այդպիսի անհանգիստ, փոթորկալից մարդու սերը հեշտ չէր տանել։ Ամմազովը միշտ կարող էր իջնել նրա մոտ, բայց սովորաբար ապրում էր ուրիշ տեղ և մեկ-մեկ այցելում էր Նադյային։

Ամմազովի թափառումներն անդրադառնում էին նրա պարտականքների վրա։— ուսման առարկաները, քննությունները, նրա բարեկամները չէին։ այդ էր պատճառը, որ նա չվում էր մի համալսարանից մյուսը, բնականաբար փոխելով և քաղաքները։ Երբեմն նա կարծես սթափվում էր և հիշում պարապմունքները։— մի երկու ամիս մեծ եռանդով աշխատում էր, մի քանի քննություններ տալիս, ապա նորից մնաս բարև ասում դիտության և պրոֆեսորներին։ Այնուհետև գնում էր որևէ քաղաք, գործ էր ճարում, փող վաստակում և վերադառնում մայրաքաղաք։

Այս անգամ Ամմազովը եկավ ավելի քան անակնկալ ու հան-

կարծակի։ Կես գիշերն անց էր, Նաղարյանն արդեն խորը քնի մեջ էր, երբ հանկարծ զարթնեց դռան ուժգին թխկոցից։ Նա շշմած վեր թռավ տեղից ու շապկանց, բորիկ, մոտեցավ դռանը։

— Ո՞վ է,— հարցրեց նա ջղայնացած, ենթադրելով, թե ինչ անախորժ բան է իմանալու։

— Շուտ արա, բացիր, Միշան է։

— Ա՛յ սատկի Միշան, գիշերն էլ հանգիստ չի տալիս,— վնթփնթաց Նաղարյանը, ապա բանալով դուռը, նորից շտապեց դեպի անկողինը։

— Էլի պառկեցի՞ր, սատանա. ինչո՞ւ լամպը չվառեցիր,— ասաց Ալմազովը մտնելով սենյակը. ապա հանելով դրպանից լուցկին, վառեց կիրոսինի լամպը։

— Ինչ՞ ես ուշ գիշերին խանդարում կարդին մարդկանց քունը,— ասաց Նաղարյանը քնկոտ ձայնով։

— Սա՛ս, թե չէ հենց այդպես՝ շապկանց կտանեմ կդնեմ հրապարակում... չգիտե՞ս որ կարդին մարդիկ նոր են սկսում ապրել... Բայց այս բոլորը դատարկ բան է,— դու էն ասա, փող ունե՞ս։

— Վատ ժամանակի ես եկել, քեսատ եմ։

— Մի հանիր տեսնենք, ինչքան է։

Նաղարյանը մեկնեց ձեռքը դեպի աթոռը, հանեց շալվարի դրպանից իր պորտմոնեն, և ուզում էր բացել, բայց Ալմազովը խլեց ձեռքից ու ամբողջը թափեց սեղանի վրա։

— Այ է՞ քո փողը... է՛, սրանով բան չի դուրս գալ...

Նա վերցրեց երկու արծաթ ռուբլիները, մնացած մանրուքը թողնելով Նաղարյանին։ Ապա փոքր ինչ մտածմունքի մեջ ընկնելով, կարծես ելք էր փնտռում իր դրությունից։ Հանկարծ նրա աչքին ընկավ պատից կախված վերարկուն։

— Էս ի՞նչ հրաշալի է,— ո՞րտեղից ես ճարել։

— Նոր եմ գնել մի ավարտած ուսանողից, այն էլ որպես հին։

Ալմազովը մոտեցավ վերարկվին ու սկսեց տնդղել.

— Ի՞նչ հին, բոլորովին նոր է, մի տե՛ս, ի՞նչ չքեղ մորթե օձիք է ... սա ուղղակի կարող է մարդու փչացնել... հա՛, լա՛վ է, ես հիմա կհագնեմ այս վերարկուն,— տանից դուրս եկա տուժուրկայով, բայց մրսեցի։

Ու չսպասելով Նաղարյանի պատասխանին, նա հագավ վերարկուն և աջ ու ձախ մի քանի շարժումներ արավ։

— Փառավոր բան է,— ասաց նա, մոտենալով հայելուն։

— Բայց վաղը անպատճառ պետք է վերադարձնես,— ասաց Նաղարյանը.

— Դու քնիր և շատ մի խոսիր, բժիշկները խորհուրդ չեն տալիս...

Ապա մոտենալով Նաղարյանին, նա բարձրացրեց նրան և ուժգին թափահարելուց հետո դուրս եկավ սենյակից։

Նաղարյանի քունը փախավ այդ ցնցումից. նա երկար ժամանակ պառկում էր անկողնում, մտածելով Ալմազովի մասին.— Ի՞նչ տարօրինակ մարդ է, մեկ տեսնում ես՝ փող լցրեց գրպանը, սրան-նրան բաժանեց, մեկ էլ տեսնում ես՝ մնացել է առանց կոպեկի ու դիմում է սրան-նրան... ամենքի սիրելին է, բայց ո՛րքան անհանգստություն է պատճառում...

Այսպիսի մտածումներով նա նորից քնեց և ընկավ խառը երազների մեջ։

Այդ հանդիպումից հետո Ալմազովը գնաց ու գնաց։ Նրան փնտռելը դուր էր, որովհետև ոչ ոք չէր կարող ասել, թե ո՛ր-տեղ է նա։ Ցրտերը սաստկացան, իսկ Նաղարյանը դեռ սպասում էր, թե Ալմազովը պիտի բերի իր վերարկուն։ Հույսը կտրած՝ նա ճարեց Մարությանից մի հին, ամառվա վերարկու և սրթսրթալով ապրում էր անիծելով ցուրտն ու Ալմազովին... «Ինչ՞ վերարկու տարավ անպիտանը»... մտածում էր նա ու դայրույթ կուտակում նրա դեմ։

Վերջապես մի երեկո, երբ Նաղարյանը նստած ինչ որ մաթեմատիկական խնդիրներով էր զբաղված,— դա նրա սիրած զբաղմունքն էր,— հանկարծ դուռը բացվեց ու ներս ընկավ Ալմազովը՝ հագած յափնջին և կովկասյան մորթե փափախը գլխին։

— Հ՛ը, կենդանի ե՞ս — ասաց նա,— մի ձայն հանիր է։

— Վա՜հ, դու ե՞ս,— զարմացավ Նաղարյանը ու վեր կենալով տեղից, ձեռք մեկնեց նրան.— ես ո՞ւր էիր կորել...

Նաղարյանն ուզում էր նեղացած ձևանալ, բայց չէր հաջող-

վում,— Ամմազովի արտաքինը անկարելի էր դարձնում ամեն մի տրամադրություն, բացի ուրախությունից:

— Հ՛ը, թթված ես երևում,— չլինի՞ ձեթ ես խմել:

— Տո՛, անպիտան, էլի խոսում ե՞ս.— ասաց Նազարյանը, հավիվ զսպելով իր ծիծաղը — ինչ արիր իմ վերարկուն — ի՞նչ ես մտածում, ցուրտ է՞, թե չէ:

— Բո վերարկուն լոմբարդումն է:

— Գրավ ես դրե՞լ: Բա ուր է անզոբրաղիրը, գոնե տուր, հետ վերցնեմ:

— Դե սպասիր փնտռեմ:

Այս ասելով Ամմազովը հետ բացեց յափնջին և հանեց մի տիկ գինի ու մի կապոց ուտելեղեն.

— Էս ինչ՞ բաներ են.— զարմացավ Նազարյանը.— Կովկասից ես գալիս՞:

— Հա, գնացի ու եկա, լավ տեղ է ախպեր, բայց այստեղ էլ պակաս չի... տո՛, մի ձեն հանի է՛:

Ու զրկելով Նազարյանին, պինդ սեղմեց իր երկար ձեռներով:

— Թո՛ղ, ջարդեցիր — ցավով կանչեց Նազարյանը:

Ամմազովը բաց թողեց Նազարյանի փոքր, վախտ մարմինը:

— Դու խակը հոգեհան ես իմ գլխին. ցրտիցը փիչ եմ տանջվել, հիմա էլ պակասը լրացնում ե՞ս... մի ասա, ի՞նչ արիր վերարկուս:

— Հա՛, անզոբրաղի՞ը ... Նա հանեց իր տուժուրկայի ծոցի գրպանից մի ճլիտած, կապույտ թուղթ ու ձգեց Նազարյանի վրա:

— Դե՛, հիմա ուշքի եկ. էս ինչո՞վ ես զբաղված, թվերո՞վ... ե՞րբ պետք է մի կարգին բանով զբաղվես:

— Օրինակ ինչո՞վ:

— Ա՛յ օրինակ երգիչ դառնալիր:

Երկուսն էլ սկսեցին ծիծաղել, որովհետև Նազարյանը բոլորովին «բաղաձայն» էր.

— Դե, էլ ժամանակ չկորցնենք,— էսօր մեր տղերանց պիտի հրավիրենք:

Այս ասելով նա հանեց գրպաններից լրացուցիչ ուտելեղենները:

Նազարյանը սկսեց չեմ ու չում անել, բայց Ամմազովը ուժով դուրս բերեց նրան ու հետը տարավ: Նրանք սահնակ նստեցին ու հերթով մտնում էին ամեն մեկի մոտ, վերցնում էին հետները ու նոր սահնակ վարձելով, շարունակում էին ճանապարհը: Տներում դանելով վեց հոգի, նրանք վերադարձան չորս սահնակով, որոնք իրար հետևից կից գնալով անցորդների ուշադրությունն էին գրավում:

Նազարյանի փոքրիկ սենյակը լցվեց հյուրերով և անխուսափելի ուսանողական աղմուկով, որի մեջ գերիշխողը Ամմազովի ձայնն էր: Նրա «ոգին» էր տիրում ամեն կողմը և ամեն ձևով, ասես սենյակի ամեն անկյունից մի ձայն ասում էր՝ «Ամմազովն այստեղ է»... Սենյակում տարածվել էր Ամմազովի բերած յուրահատուկ, կովկասյան բուրմունքը, որի մեջ մասնակցում էին՝ նրա յափնջու, գինու և տիկի հոտը:

Գալուն պես Ամմազովը զբաղվեց սեղանի պատրաստությամբ, մեջ-մեջ թողնելով իր սրախոսություններն ու կովկասյան բացականչները:

Ընկերները նրան օգնում էին, բացի Մարությանից, որը նստել էր սեղանի մոտ և ինչ որ գիրք էր թերթում.

— Ամմազով, դե չուտ արա, տեսնենք ինչո՞վ ես մեզ հյուրասիրում, ի՞նչ կովկասյան դելիկատեսներ ես բերել:

— Դե, պրոֆեսորություն մի անիլ, այստեղ համալսարան չի, թե ճաշակ ունես, արի օգնիր,— ասաց Ամմազովը, շարունակելով լցնել տիկի գինին չչերի մեջ:

Վերջապես երբ ամեն ինչ պատրաստ էր և սեղանի վրա շարված էին կարմիր գինով լիքը չչերը, կովկասյան պանիրը, ձկնեղենը և ուրիշ «դելիկատեսները», Ամմազովը հրավիրեց բոլորին, երկու ձեռքը լայն տարածելով:

Երբ ընկերները նստեցին, նա լցրեց բաժակները ու աչք ածելով հյուրերին, թնդաց.

— Վա՛հ, էս ինչ ոսկի տղաներ եք, դե, մի բարձրացրեք բաժակները... էս կարմիր գինով խմենք մեր պայծառ Կովկասի կենացը:

Քեֆը սկսվեց և նրա հետ՝ Ալմազովի թամադայական լեխանությունը: Ինքը հետզհետե տաքանալով, նա վարակում էր բոլորին մի ցնծագին աշխուժությամբ, խտացնելով բոլորի ուրախությունը: Նա չարունակ կատակում էր, սրախոսում, սրան-նրան ձեռք առնելով, անընդհատ ծիծաղի մեջ պահելով բոլորին:

Քիչ անց, երբ դինու ազդեցությունը բարձրացավ, լսվեց թառի ու քամանչի նվագը. երկու ընկերները բարեխղճորեն կատարում էին իրանց դերը, թեպետ Ալմազովի քեֆի տեմպը չէր գալիս արևելյան երաժշտության դանդաղ տեմպին: Հետզհետե ծավալվող աղմուկի մեջ երաժշտության ձայնը մեկ խեղճանում էր, մեկ նորից բարձրանում պարի եղանակներով:

Մինչև ժամի երեքը տեվող այս աղմկալի խնճույքը, Ալմազովը ղեկավարում էր հանդգնություն չտալով իր ընկերներին: Սրախոսությունները կենացների վրա, զավեշտական ճառերը, երգերը, պարերը հետևում էին իրար՝ կարծես մի անսպառ աղբյուրից. նա ստիպեց բոլորին պարել, նույնիսկ Մարությանին:

Վերջապես ժամի երեքին համբուրվելով ընկերների հետ Ալմազովը ճանապարհ դրեց նրանց մինչև տան մուտքը ու ապա դառնալով սենյակը, սկսեց չվացնել ու ձեռներով պարի շարժումներ անել:

Նաղարյանը փորձեց կարդի բերել սենյակը, բայց քիչ անց թողեց այդ ու ընկնելով աթոռի վրա, հորանջեց:

Ալմազովը մոտեցավ և նայելով նրա քնկոտ դեմքին, ծիծաղեց.

— Ի՞նչ ես հավի նման աչքերդ փակում — էլի պիտի քեֆը չարունակենք ես ու դու... Բայց մի քանի րոպեից հետո նա սկսեց օրորվել, ապա վերցնելով իր յափնջին, փաթաթվեց մեջը ու պառկեց Նաղարյանի անկողնի վրա, թողնելով վերջինս աթոռներից հոգալու իր անկողինը:

Քիչ անց տիրեց լռությունը, ապա սկսվեց Ալմազովի ուժեղ խոմփոցը:

XVIII

Սկսած առաջին հանդիպումներից՝ դասախոսությունների ժամանակ թե ճաշարանում, Լևոնյանն առանձին համակրանք էր զգում դեպի Մարությանը:

Լևոնյանը դեռ պատանեկան հասակից իր ընկերներին միշտ իրականից բարձր էր դասում, երևակայելով նրանց ապագա նշանավոր մարդիկ կամ հերոսներ: Այդպիսի աչքով էր նայում նաև Մարությանին: Հայրենակցական ժողովում հնչեցին Մարությանի նոր, անծանոթ լարերը, դա առիթ տվեց Լևոնյանին ենթադրելու, թե նրա մեջ կան դեռ ուրիշ թաղված կողմեր: Լևոնյանի համար հետաքրքիր էր, թե ի՞նչպես է նա լուծում իրեն՝ Լևոնյանին զբաղեցնող հարցերը, ի՞նչ հայացքներ ունի, ի՞նչ է մտածում իր ապագա գործունեության մասին:

Նա կուզեր ավելի մոտ, ընկերական կապ հաստատել նրա հետ, հաճախ խոսել իրենց հետաքրքրող հարցերի շուրջը: Այդ էր պատճառը, որ Լևոնյանը ուրախությամբ ընդունեց Մարությանի հրավերը՝ հայրենակցական ժողովից հետո: Մի քանի օր անց՝ երեկոյան նա գնաց Մարությանի մոտ:

Երբ Լևոնյանը բարձրացավ սանդուխներով չորրորդ հարկը, ապա կկոսկոսավար միջանցքով մոտեցավ Մարությանի սենյակին, ներսից լսվեց բարձրաձայն խոսակցություն: Երկու անգամ պինդ թխկացնելուց հետո ձայները լռեցին:

— Մտե՛ք,— խուլ հնչեց Մարությանի ձայնը:

Լևոնյանը ներս մտավ, բարևեց ու հարցական հայացքով կանգ առավ սենյակի մեջ: Վիճողները Մարությանն ու Միքայելյանն էին: Լևոնյանն անհարմար դրության մեջ էր զգում իրեն, կարծելով թե խանգարեց նրանց:

— Նստի՛ր,— ասաց Մարությանը,— քեզ համար էլ հետաքրքիր կլինի մեր վեճը,— սա ինչ որ մաթեմատիկական օրենքներ է դուել պատմության վերաբերյալ, բայց ափսո՞ս որ մինչ այժմ չի հայտարարել մարդկությանը:

— Դու փոխանակ հերքելու՝ հեգնում ես,— ասաց Միքայելյանը դրդռված,— դեռ մի լսիր մինչև վերջը, հետո խոսիր:

Ու հայացքը դարձնելով Լևոնյանին, չարունակեց.

— Ես ասում եմ՝ եթե մի ընդհանուր հայացք ձգենք երկ-

բաղնդի բոլոր երկրների վրա, մենք կտեսնենք, որ չկա մի վայր, որ մարդկությունն այս կամ այն ձևով սարկության մեջ չլինի: Ապա ես ասում եմ՝ հետ նայենք դեպի պատմության խորքերը և հարց տանք մեզ՝ եղել՞ է արդյոք մի դարաշրջան, երբ մարդկությունն այս կամ այն ձևով սարկության մեջ չի եղել...

— Լավ,— վրա բերեց Մարությանը,— ուրեմն քո ասելով պատմությունը չի փոխվում...

— Փոխվում է, բայց արտաքինով, իսկ նրա էությունը՝ մարդկային հարաբերությունների բնույթը չի փոխվում, և այդ անփոփոխ կորիզը ես համեմատում եմ մաթեմատիկական հարաբերությունների հետ. օրինակ՝ տասի և հնգի հարաբերությունը հավասար է երկուսի. եթե այդ վերցրած թվերը բաղմապատկենք երեքով, չորսով... յոթով և այլն, թվերը թեպետև կփոխվեն, բայց նրանց հարաբերությունները կմնան նույնը, օրինակ քսանի և տասի հարաբերությունը նույնպես հավասար է երկուսի:..

Մարությանը անհամբեր վեր կացավ տեղից.

— Զնայած, որ դու դործ ունես մաթեմատիկայի հետ, բայց մեծ չփոթ ես մտցնում մտքերիդ մեջ. նախ՝ ինչո՞ւ պիտի բաղմապատկենք թվերը, և ոչ բաժանենք կամ հանենք... և հետո՝ ինչպես երևում է՝ դու քո օրենքը համարում ես հավիտենական, այնպես չէ՞...

— Եթե անցյալը և ներկան այդպես են ընթանում, ինչ՞ հիմք ունենք ուրիշ կերպ պատկերացնելու ապագան:

— Դու նման ես այն մարդուն, որն աչխարհ է եկել ձեթի ճրագի դարում և նայում է չորս կողմն ու ասում,— մեր պապերը և հայրերը ձեթի ճրագ են վառել, ներկայումս էլ ամեն տեղ նույն բանն ենք տեսնում, ergo (ուրեմն՝) ձեթի ճրագը հավիտենական կլինի...

— Դա վերաբերում է կենցաղին, կուլտուրային, իսկ ես խոսում եմ մարդկանց հարաբերությունների մասին:

— Բայց դու համաձայնվեցիր, որ կյանքը փոխվում է...

— Ընդունեցի, բայց վերապահումով...

— Միևնույն է, քո վերապահումը չի օդնի. ընդունելով, որ կյանքը փոխվում է, դու քո ձեռքով ջնջում ես քո օրենքը և հակասության մեջ ես ընկնում. ճշմարտությունն այն է, որ ամեն ինչ շարժվում է, ամեն ինչ փոխվում է...հասկանո՞ւմ ես, դեռ հին փիլիսոփա Հերակլիտն է ասել,— ամեն ինչ հոսում է panta rei ...

Լևոնյանն ինչ որ դրքում կարդացել էր հույն փիլիսոփայի այդ խոսքերը, բայց նրանք սահել անցել էին ուշադրության վրայով, իսկ այժմ՝ այս վեճի մեջ այդ աֆորիզմը մի նոր, խորհրդավոր իմաստով մնաց նրա հիշողության մեջ:

— Իսկ ես ասում եմ,— նորից մեջ ընկավ Միքայելյանը,— որ ընդունում եմ այդ հոսանքը, բայց ավելացնում եմ, որ նրա մեջ ծանր իրերը միշտ իջնում են վար, իսկ թեթևները դեպի վեր:

— Դու նորից դիմում ես քո սիրած համեմատության, բայց պետք է իմանաս, որ համեմատությունն ապացույց չէ. քո թվական հարաբերություններն անտեղի են, պատմական պատկերացումը նույնպես ճիշտ չէ,— մարդկությունն ունեցել է մի շրջան, երբ եղել է նախնական կոմունիզմը և ոչ թե քո ասած սարկական դրությունը. իսկ ինչ վերաբերում է ապագային, այնտեղ էլ քո «օրենքը» դործ չունի... Մարդկության լավագույն դավակներն ապրում են լուսավոր ապագայի սպասելիքներով՝ հենց այն հիման վրա, որ իրենց շուրջն ամեն ինչ փոխվում է ... և մարդկությունն էլ շատ անդամ է պայքարել, հանուն այդ ապագայի...

— Դու խոսում ես որպես Հռոմի անխախտելի պապը, շարունակ աղավաղելով իմ մտքերը,— ասաց Միքայելյանը,— շատ լավ, համաձայն եմ, մարդկությունը միշտ ծիածանի դույներով է ներկայացնում իր ապագան, բայց այդ երազները մնում են անիրագործելի և միայն ուտոպիստների հատորներն են ավելացնում... Այո՛, ճիշտ է, պատմության ընթացքում եղել է պայքար, եղել են հեղափոխություններ, բայց նրանցից հետո քարը նորից գլորվել, ընկել է իր առաջվա տեղը...

— Բայց դու դուր ես կարծում, որ ամուր բերդը մի դրոհով կարելի է վերցնել. դա միամիտ մոտեցում է. պայքարը կարող է երկար տևել...

— Միամիտ է, թե խորիմաստ, փաստը մնում է փաստ՝ որ մարդկությունը միշտ մնում է նստած իր կտրած տաշտակի

մոտ. պատմության ընթացքում մենք չարունակ տեսնում ենք էլի՛ էն ջուրը, էլի էն ջրաղացը...

— Հիանալի է, նույնիսկ հրաշալի... քո պատմական տեսությունը դրկախառն կընդունեն աշխարհիս բոլոր հարուստները, դա մի հովերդություն է, որ անուշ նիրհ կբերի նրանց աչքերին...

— Է՛հ, չարժե քեզ հետ վիճել,— ասաց Միքայելյանը, տեղից վեր կենալով — դու միշտ կամ աղավաղում ես իմ առածները, կամ դեմագոգիայի դիմում... ի՞նչ կապ ունի իմ ասածը հարուստների հետ...

— Շատ պարզ է այդ կապը — հարուստը միշտ աղոթում է, որ իր դիրքերը անխախտ ու ամուր մնան...

— Է՛հ, լավ է գնամ, չարժե չարունակել,— ասաց Միքայելյանը, գլխարկը վերցնելով:

Ու դժգոհ տրամադրությամբ նա գնաց, կիսաբերան «ցը» ասելով:

— Սպասիր թեյ խմենք,— ասաց Մարությանը, բայց Միքայելյանը չպատասխանեց:

— Հ՞ը, լսեցի՞ր, ինչ՞ մարգարիտներ էր շարում,— դիմեց Մարությանը Լևոնյանին:

— Հա, հեռաքրքիր վեճ էր:

— Մնում է միայն ավելացնել, որ կյանքի հավիտենական հարմոնիան ասուված է ստեղծել և մարդիկ չպետք է մտածեն սրևե փոփոխության մասին, այլ միայն աղոթեն, որ դա հաստատ մնա...

Խոսակցությունն ընդհատվեց աղախնի ներս գալով, որը բերեց ուսանողի մշտական սիրելի սամովարը: Մարությանը պատվերներ տվեց աղախնուն և զբաղվեց թեյի պատրաստությամբ:

XIX

Մինչ Մարությանն զբաղված էր սամովարի շուրջը, Լևոնյանը մտածում էր նոր անցած վեճի մասին՝ որ թեպետ Մարությանի սկզբունքները համակրելի էին, բայց անորոշ էին և չէին կարող գործունեության ուղեցույց լինել:

Նա աչք ածեց սենյակին,— համեստ, ուսանողական կահավորում էր,— մի սեղան, երեք աթոռ, մահճակալ, գրադարակ: Բայց սենյակի ամեն կողմը նկատվում էին կուտակված գրքեր,— գրադարակը ճկուել էր խիտ բարձած գրքերի ծանրությունից, սեղանի վրա, պատուհանի գոգում, նույնիսկ անկողնի վրա կային գրքեր:

— Այս ի՞նչ շատ գրքեր ունեք,— ասաց նա, մոտենալով գրադարակին:

— Հա՛, մեկ-մեկ գնում եմ գրքեր, եթե միջոցներս ներում են, բայց ո՞ր մեկի ետևից կհասնես,—ars longa, vita brevis est*),— ասաց նա գլուխը շարժելով և այնպիսի տոնով, կարծես շատ ապրած ու շատ բան տեսած մարդ էր:

— Դեռ վաղաժամ են այդ խոսքերը,— մեր կյանքի ուղին դեռ նոր է բացվում,— ասաց Լևոնյանը, թերթելով գրադարակի գրքերը:

— Հա, բայց մինչև մարդ կպարզի իր շրջապատը, աշխարհի պատկերը և իր անելիքը նրա մեջ, քա՞նի ամիսներ ու տարիներ կանցնեն... այ քեզ որինակ՝ նոր մենք տաք-տաք վիճում էինք, բայց պետք է խոստովանեմ՝ թեպետ ես իմ համոզմունքն էլի պաշտպանում, սակայն չեմ կարող պարծենալ իմ հայացքների պարզությամբ:

— Ես էլ պիտի ասեմ, որ թեպետ համաձայն էի ձեր տեսակետներին, բայց նրանց մեջ անորոշություն էլի նկատում:

— Աշխարհայացքը՝ ինչպես տեսնում եմ՝ մի անդամից չի տրվում. նա պահանջում է երկար ու համառ աշխատանք... դե՛ եկեք, թեյ խմենք, խոսելու դեռ շատ բան կա...

Լևոնյանը նստեց սեղանի մոտ: Թեյի շուրջը հետզհետե ծավալվեց այն հաճելի զրույցներից մեկը, որոնց դուրեկանությունը նույնքան կապված է զրուցողների թարմ տարիների հետ, որքան և նրանց անկեղծ ու վառ ձգտումների հետ: Խոսակցությունը ցրիվ էր, թռչում էր հարցից հարց, բայց հարուստ էր ապագայի սպասելիքների վառ զգացումով: Խոսում էին իրանց կարդացած գրքերի մասին, այս կամ այն պրոֆեսորի, հայտնի գրողների, գիտական հարցերի մասին: Մի օտարի

*) Արվեստը (գիտությունը) երկար է, կյանքը՝ կարճ:

այդ զրույցը կթվար անկապ ու տարօրինակ, բայց երկու ընկերներին դա ջերմացնում էր իր ներքին՝ խոսքերից դուրս մընթնոլորտող զգացումներով: Այս բոլորի մեջ կար թերևս դեռ նոր թոթովող սնափառություն,— մի ցանկություն շլացնելու ընկերոջը մի նոր դրքի, հեղինակի անունով, կամ զարմացնելու ինքնուրույն մտքերով, բայց դա էլ երկուստեք լինելով, չէր դուրս գալիս ներդաշնակող սահմաններից և իր հերթին հաճելի էր ամեն մեկին այն դիտակցությամբ, թե ինքը զարգացած տղա է, հետևում է գիտության և գրականության և կարող է աչքի ընկնող տեղ գրավել ապագայում:

Խոսակցությունն անցնելով Նյուտոնից Դարվինին, Գյոթեից Տոլստոյին, ֆրանսական հեղափոխության ու նրա հերոսներին, հասավ իր արբեցման կետին, երբ խոսակիցներն այլևս չեն զգում հոգնածություն և պատրաստ են ամբողջ գիշերը նվիրելու անընդհատ գիտալոգին: Բայց աղախինը նորից ընդհատեց նրանց, քնկոտ դեմքով ներս մտնելով՝ սամովարը տանելու համար:

Նկատելով, որ երկու ընկերները ոչ թե «սովորում են», այլ խոսում են, նա շատ զարմանում էր մտածելով, թե ի՞նչ ուրախություն կարող է պատճառել երկար նստելն ու չոր ու ցամաք խոսելը:

Մինչև աղախնի դուրս գնալը երկուսն էլ լուռ էին: Լևոնյանը գիտում էր իր ձախ կողմը կուտակված ամսագրքի համարները:

— Կարդո՞ւմ եք այս ամսագիրը,— հարցրեց նա թերթելով համարներից մեկը:

— Նոր եմ սկսել. ինձ խորհուրդ տվեց Գարունյանը. չե՞ք ճանաչում...

— Ո՛չ:

— Երևի առիթ կունենաք ծանոթանալու, նա մեր աչքի ընկնող ուսանողներից է: Այս ժուրնալը հաղիվ մի տարի է գոյություն ունեցել, հետո արգելել են, բայց այդ կարճ ժամանակում կարողացել է պահպանել որոշ ուղղություն...

Լևոնյանը հարցական դեմքով նայեց Մարությանին:

— Ես դեռ լավ ծանոթ չեմ այդ հոսանքին,— շարունակեց Մարությանը,— ոմանք անվանում են այն «տնտեսական», ոմանք էլ՝ «պատմական մատերիալիզմ». այդ ուղղությունը պատմական բոլոր երևույթները բացատրում է տնտեսական հիմունքներով:

— Իսկ մարդկանց հոգեկան կյա՞նքը,— հարցրեց Լևոնյանը:

— Ամեն ինչ ... պատմական բոլոր անցքերը, որոնց մեջ մենք սովորել էինք տեսնել «իդեալական» ձգտումներ՝ հեղափոխությունները, կրոնական կամ մտավոր շարժումները՝ այդ թեորիայի տեսակետից բղխում են տնտեսական հիմքից...

Լևոնյանը բացասական շարժեց գլուխը.

— Քո ասած սկզբունքով չի կարելի լիովին բացատրել պատմական բարդ և բազմակողմանի երևույթները...

— Կեցությունն է որոշում գիտակցությունը,— ասաց Մարությանը, չնչելով ամեն մի բառը,— պատմության ամբողջ ընթացքը ամփոփված է այս մտքի մեջ...

Մարությանն զգաց, որ դեռ քիչ է տեղյակ և չի կարող համոզել Լևոնյանին, ուստի օգնության կանչեց իր գրքերին՝ սկսեց թերթել և այս ու այն տեղից կարդալ ցիտատներ, բայց Լևոնյանին չէր կպչում այդ բոլորը: Նրա մեջ մի կասկած ծագեց դեպի այդ թեորիան, որը կարծես խորտակում էր այն երազները, որոնք կապված էին իր ապագա գործունեության հետ: Ինչ՞ ... Մի՞թե պատմության փայլուն էջերը չեն խոսում հերոսության, անձնազոհության մասին... Մի՞թե Գալիլեի, Բրունոյի, ֆրանսական մեծ հեղափոխության հերոսների գործունեությունը չի բղխում անշահախնդիր, «իդեալական» ձգտումներից... Ո՛չ, միանգամայն սրբապղծություն է բացատրել այդ բոլորը տնտեսական պայմաններով...

— Գարունյանը խորհուրդ տվեց զբաղվել այս հարցերով,— ասաց Մարությանը:

— Դուք հաճա՞խ եք տեսնվում Գարունյանի հետ:

— Պատահում ենք ոչ հաճախ: Նա երեք ամիս է ինչ վերադարձել է աքսորից:

Խոսակցությունը կենտրոնացավ Գարունյանի վրա, ազատելով ընկերներին լարված դրությունից: Երբ այդ նյութն էլ սպառվեց, Լևոնյանը նայեց իր ժամացույցին և զարմանքի

բացականչությամբ վեր կացավ տեղից,— արդեն ժամի երկուսն էր: Նրանք հրաժեշտ տվին իրար:

Դուրս գալով փողոց, Լևոնյանը զբոսված ուղեղով կարծես շարունակում էր իր վեճը Մարությանի հետ: Քիչ անց՝ թարմ օդից հանգարտվելով նա մտածում էր, որ պետք է շատ պարապել, դիտելիքներ ձեռք բերի, որպեսզի կարողանա բացատրել կյանքի և գիտության բարդ հարցերը: Նորից սովորելու տենչը բռնկվում էր նրա մեջ, դրա հետ և այն վստահությունը, որ կարող է հասնել իր նպատակին, պատրաստվել ապագա գործունեության համար, արդարացնել այն կարծիքը, որ ունի ինքն իր մասին:

Այսպիսի մտքերով նա վերադարձավ տուն:

XX

Իր գալու սկզբից Լևոնյանը ստեպ-ստեպ գնում էր հանրային գրադարանը: Այժմ Մարությանին այցելելուց հետո նա մի առանձին թափով սկսեց հաճախել իր սիրած գրադարանը: Ստանալով իր պահանջած գրքերը, նա անցնում էր ընդարձակ դահլիճով ու նստում մի հեռավոր անկյունում: Բազմաթիվ սեղանների մոտ պարապում էին՝ մի տեղ պատկառելի մորուքով գիտնական, որի առաջ կուտակված էին հին, կաշեկազմ գրքեր, մի ուրիշ տեղ երիտասարդ դոցենտն ասես բարկացած հարձակվում էր իր առջևի հաստ գրքերի վրա: Կային նստակյաց ուսանողներ, կային և ոչ-նստակյացներ, որոնք չտապում էին իրենց ուրքն առնել գրքերից և հեռանալ այս տխուր տաճարից դեպի «կյանքը»: Կային վերջապես և պատահական ընթերցողներ,— մեկը նրանցից՝ բարյացակամ ու ժպտուն դեմքով իր հաճույքն էր վայելում գեղարվեստական գրքից, մյուսը՝ ոսկրոտ դեմքով չիկակարմիր մազերով մի համառ ադամզավոր՝ կրոնական գիրքն առած, կարդում էր, կանգ առնելով ամեն մի տողի վրա ու դիմադրելով իր՝ ասես երկաթե պատյանի մեջ ամփոփված ուղեղով: Երբեմն այնտեղ կտեսնեիք և ինտելիգենտ գործադուրկների, որոնք հոգնած ու հուսահատ զայիս էին, օտարոտի նայում առջևի գրքերին, ցրիվ կարդում և հանդիստ առնում տաք անկյունում: Լինում էին և տեսակ-

ցության սպասող տղաներ կամ աղջիկներ, որոնք կես հայացքով գիտում էին պատկերազարդ հրատարակությունները, մյուս կեսը դարձնելով դեպի դահլիճի մուտքը:

Նստելով երկար սեղանի մոտ, Լևոնյանն սկսեց հաճույքով թերթել մեկ-մեկու ետևից իր վերցրած գրքերը, թեթևակի ծանոթանալով նրանց բովանդակությանը: Թեպետ նա վճռել էր պարապել որոշ սիստեմով, բայց հենց սկզբից շեղվեց իր մտադրությունից,— երկու օր նա անցնում էր մի գրքից մյուսը, չկարողանալով կենտրոնանալ: Վերջը կանգ առավ մի գրքի վրա, որը երկար վերնագիր ուներ և վերլուծում էր պատմությունն ինչ որ նոր «մոնիստական» տեսակետից: Գրքի մեջ շարունակ հիշվում էին Հեգելի և մի շարք ուրիշ փիլիսոփաների անունները, որոնց ավելի մոտ ծանոթանալու համար Լևոնյանը վերցրեց կարդալու մի փիլիսոփայության պատմություն:

Ընթերցանության այդ ընթացքը տարօրինակ շեղման մեջ ընկավ, երբ նա հանդիպեց հույն փիլիսոփա Հերակլիտի անվան: Նա չէր կարող բացատրել, թե ինչո՞ւ նրա նշանավոր աֆորիզմը՝ «ամեն ինչ հոսում է» այնպես հուզում է իրեն: Տպավորությունն այն էր, ասես արշալույսի մի թռչնեղջ ավետեց նրան դարձյան գալու մասին: Նա հիշեց այն երեկոն, երբ Մարությանը վեճի ժամանակ մեջ բերեց այդ խոսքերը, բայց թվում էր, թե դրանից առաջ էլ երկար ժամանակ նա ստսել է հույն փիլիսոփային և այժմ հանդիպում է նրան:

Նա սկսեց կարդալ այն ամենը ինչ կարելի էր գտնել Հերակլիտի մասին, ծանոթացավ այդ կցկտուր հատվածներին, որոնք մնացել են նրանից: Մի քանի օր նրա ուղեղն զբաղված էր հույն փիլիսոփայով: «Ամեն ինչ հոսում է», ամեն ինչ փոխվում է,— կրկնում էր նա հաճախ գրադարանում, տանը, փողոցում. թվում էր, թե այդ հզոր մտքից ինչ որ գոներ են բացվում այս «արդելված» չղթայակապ կյանքում, շարժվում են քաղաքի ծանրանիստ, մռայլ շենքերն ու կամուրջների վրա նստած դաժան սֆինքսները՝ անշարժության ու բռնակալության այդ սիմբոլները...

Բայց քանի կարդում էր, նա ավելի էր մնում ծարավի այն, ինչ կարդում էր, չէր գալիս իր ստեղծած պատկերին. հույն

փիլիսոփան թվում էր ավելի խորը, քան ներկայացնում էին ուրիշները, իսկ նրանից մնացած մտքի բեկորները դարձնում էին նրան ավելի խորհրդավոր: Երևակայությունը տանում էր նրան շատ հեռու,— նա ծրագրում էր մի խոշոր ուսումնասիրություն, որով պիտի լուսաբաներ այդ «մութ փիլիսոփային», կամ երևակայում էր, թե ճանապարհորդում է Հունաստանում և այնտեղ՝ լեռնային մի հին վանքում փոշիների մեջ դտնում է հանկարծ Հերակլիտի ձեռագիրը և հայտարարում է ամբողջ աշխարհին...

Այդ օրերին նա չէր գնում համալսարան և օրվա մեծ մասն անց էր կացնում դրադարանում. չէր լինում և ընկերների մոտ: Նա իրեն զգում էր լեցուն մի ներքին ներդաշնակությամբ, որը բացում էր նրա առաջ դեղեցիկ հեռանկարներ: Նա դալիս էր դրադարան հենց բացվելու ժամից, նստում էր միշտ նույն տեղը և սկսում էր ընթերցանությունը, չհետաքրքրվելով իր սեղանի շուրջը պարապողներով: Բայց մի օր, երբ Լևոնյանն ընդմիջեց ընթերցումը և գնաց պահանջելու մի նոր գիրք, նա իր տեղը դառնալով, նկատեց դիմացը նստած մի օրիորդի, որն առջևը դրած երկու գիրք, մատիտով արագ դրում էր տետրում: Նրա դեմքը՝ իր կապտավուն, վճիտ աչքերով, փարթամ, շաղանակագույն մազերով դրավեց Լևոնյանի ուշադրությունը. այդ դեմքի վրա չկար որևե արհեստական, կեղծ գիծ. դրա փոխարեն նշմարվում էր մի շնորհալիություն, որը գեղեցկության չափ հմայիչ եր:

Օրիորդի համեստ, կապույտ բլուղից՝ որը մինչև օձիքը փակ էր, նրա ազատ կեցվածքից Լևոնյանը եղրակացրեց, որ նա կուրսիստկա է, (ուսանողուհի) և մի երկու հայացքից հետո շարունակեց իր ընթերցանությունը: Սակայն հաղիվ մի քառորդ ժամ անց լսեց նրա ձայնն իր կողքից.

— Կարելի՞ է մի քանի բոպեով ձեր մատիտը... իմս կոտրվեց...

— Խնդրեմ,— ասաց Լևոնյանը, տալով իր մատիտը:

Երբ օրիորդը նստեց իր տեղը, Լևոնյանը նորից նայեց նրան, այս անգամ կասկածելով՝, չլինի՞ մատիտը միայն պատրվակ էր, իսկ բուն նպատակը իր հետ ծանոթանալն էր... Կարծես զգալով իր վրա Լևոնյանի հայացքը, օրիորդը գլուխը դարձրեց ու նայեց նրան մեղմ ժպիտով:

«Երևի ես ծիծաղելի եմ իմ տարօրինակ ոգևորությամբ»,— անցավ Լևոնյանի մտքով: Նա կարմրեց ու մոայլվեց, նորից ընկղմվելով իր գրքերի մեջ: Սակայն հետաքրքրությունը երկու կողմից էլ չէր թողնում անտարբեր լինել միմյանց հանդեպ: Երբ Լևոնյանը մերթ ընդ մերթ՝ աչքերին հանգստություն տալով թողնում էր գիրքը, նրա հայացքը՝ քիչ անց՝ հանդիպում էր փոխադարձ հայացքի, և ամեն անգամ համակրանք էր նկատում օրիորդի դեմքին:

«Եթե իմանա, ինչո՞վ եմ տարված, նա էլ կոգևորվի,— մտածում էր Լևոնյանը: Երբ օրիորդը բացեց գրքի երկրորդ հատորը, Լևոնյանը նկատեց վերնագիրը,— դա «Մատերիալիզմի պատմությունն» էր: Այդ հանդամանքն ավելի բարձրացրեց օրիորդին նրա աչքին, «ուրեմն նա էլ է հետաքրքրվում փիլիսոփայական հարցերով»,— անցավ նրա մտքով, իսկ մնացածը լրացրեց նրա երևակայությունը,— «Ի՜նչ ներդաշնակություն կստեղծվեր, եթե մենք ծանոթանանք, մոտենանք իրար... միասին ճանապարհ հարթենք նոր աշխարհայացքի համար»... Եվ սին ճանապարհ հարթենք նոր աշխարհայացքի համար»... Եվ ահա օրիորդը ռոմանտիկ երթով ներս եկավ նրա՝ վարդագույն շղերով դունավորված «Հերակլիտյան» աշխարհը...

XXI

Այժմ Լևոնյանը ցանկություն էր զգում ծանոթանալու այդ «տարօրինակ» օրիորդի հետ, որը «հաղվադյուտ» փիլիսոփայական հակումներ ուներ և այնպիսի հաճելի դեմք... Նա մտածում էր, թե ինչպե՞ս կարող է իրագործել իր ցանկությունը, բայց առիթը եկավ ինքն իրեն:

Մի օր նրանք պարապեցին մինչև դրադարանի փակելու ժամը և միասին ինքն հանդերձարանը: Մինչ նրանք սպասում էին վերարկվին, օրիորդը սկսեց ինչ որ փնտռել ռեդիկյուլի մեջ և վայր ձգեց իր տետրը: Լևոնյանն իսկույն վերցրեց տետրը և տվեց օրիորդին:

— Շնորհակալ եմ,— ասաց օրիորդը ժպիտով:

— Զարմե,— պատասխանեց Լևոնյանը, ակամայից կարմրելով:

Նա արդեն ծանոթությունն սկսված էր համարում, բայց մի երկու բոպե կարծես պապանձվել էր, խոսք չէր գտնում բերանը. վերջը ճիգ անելով, նա ասաց.

— Դուք բավական կանոնավոր եք հաճախում:

— Ես աշխատում եմ շուտ վերջացնել, որովհետև շատ դժվար է... Իսկ դո՞ւք, երևի ռեֆերատ եք պատրաստում:

— Ոչ,— պատասխանեց Լևոնյանը և նորից կարմրեց, կարծես հանցանք էր գործել, որ ռեֆերատ չէր գրում:

Վերարկուները հագնելուց հետո նրանք դուրս եկան միասին: Փոխադարձ համակրանքը միացնում էր նրանց, բայց երկուսն էլ քաշվում էին ավելի ինտիմ կապից: Խոսակցությունը դժվարությամբ էր առաջանում և պտտվում էր դարձյալ իրենց դասընթացների շուրջը:

— Դուք ի՞նչ եք ուսումնասիրում,— հարցրեց Լևոնյանը:

— Ուսումնասիրո՞ւմ ... Ո՛չ, ես ցիտատներ եմ արտագրում եղբոր համար: Նա մի աշխատություն է պատրաստում մատերիալիզմի մասին:

Ապա՝ Լևոնյանին չհիասթափեցնելու համար նա ավելացրեց.

— Բայց ես ինքս էլ հետաքրքրվում եմ այդ հարցերով. արտագրությունը վերջացնելուց հետո պիտի կարդամ թե՛ այդ և թե՛ մի քանի ուրիշ գրքեր: Իսկ դուք ինչ՞ եք կարդում:

— Հերակլիտի փիլիսոփայության մասին...

— Փիլիսոփայությա՞ն ... բայց դուք այնպես հափշտակված էիք կարդում, որ ինձ թվում էր՝ ձեր առաջ մի հետաքրքիր վեպ էր:

— Գուցե այդ նրանից է, որ ես հետաքրքրվում եմ,— ասաց Լևոնյանը շփոթվելով, կարծես մի կարևոր գաղտնիք էր բացվել:

— Բայց ինչո՞ւ դուք հատկապես զբաղվում եք Հերակլիտով:

— Ես մի առանձին համակրանք եմ զգում դեպի այդ մտածողը և կուզեի հին դարերի այդ փիլիսոփային «վերակառուցել» այնպես, ինչպես ճարտարապետները՝ ավերակներից թափված բեկորներից վերակառուցում են շենքերը և տալիս նրանց ամբողջական նկարները:

Օրիորդը ժպտաց Լևոնյանի ինքնավստահության վրա: Վերջինս ինքն էլ զգաց, որ իր երևակայության թռիչքը բավականին մեծ էր:

— Ճիշտն ասած՝ տարօրինակ է ձեր զգևորությունը:

— Ինչ՞ եք ուզում ասել դրանով,— հարցրեց Լևոնյանը, ենթադրելով, թե օրիորդը հեղնում է:

— Ուզում եմ ասել միայն, որ մի քիչ անսովոր է,— եղբորս ընկերների մեջ երբեմն լինում են վեճեր՝ Կանտի, Հեգելի և այլ նորերի շուրջը... Լավ է, համենայն դեպս, երբ մարդ ձգտում է տեսնել մի գրողի, մի մտածողի մեջ ավելին, քան սովորաբար տեսնում են... Բայց մենք հեռացանք... երևի դուք ուրիշ կողմն եք գնալու...

Նրանք հասել էին վագոնի անկյունին: Լևոնյանը կուզեր շարունակել իր ուղևորությունը, բայց նրան թվաց անհարմար: Նա սեղմեց օրիորդի ձեռքը, հայտնելով իր ազգանունը:

— Զարինա,— պատասխանեց օրիորդը և ցտեսություն ասելով, գնաց դեպի ձախ:

Լևոնյանը դուրեկան հուզմունքի մեջ շարունակում էր քայլել առաջ, թեպետ գնում էր իր տան հակառակ: Նրա մեջ ռոմանտիկ շփոթ էր տիրում,— իրար էին խառնվում իր մտքերն ու զգացումները, իր «Հերակլիտյան արշալույսը» և այս օրիորդը, որի հետ նա սկսում էր կապել ինչ որ գաղտնարական հեռանկարներ... Վերջապես նա սթափվեց ու հետ դարձավ դեպի տուն, շարունակելով մտածել իր նոր ծանոթուհու մասին, պատկերացնելով նրան ոչ իրական գույներով, տեսնելով նրան ավելի մոտ ու մտերիմ...

Հեռյալ օրն օրիորդ Վերան (այսպես էր նրա անունը) գարթնեց մի նահանջող տրամադրության մեջ,— «ես այսօր դրդարան չեմ գնալ,— ասում էր նա ինքն-իրեն,— այն հափշտակվող կովկասցի ուսանողը կարող է ենթադրել, թե ես ձգտում եմ մոտիկության և ո՞վ գիտե, թե ինչ՞ ... ու կարող է վաղաժամ քայլեր անել... իսկ իմ դրության մեջ այսպիսի կապերը... է՛հ... կանացի մտածումներ են, բայց այդպես լավ է...

Իսկ Լևոնյանն այդ օրը եկավ հենց դրդարանը բացվելուն պես և առաջին բոպեից ընկավ սպասողական անհանգիստ դրու-

թյան մեջ: Անցնում էին բոպեներ, անցավ մի ամբողջ ժամ և օրիորդը չկար... Ենթադրությունները մեկ-մեկու եռևից դափս, գնում էին... «Գուցե դժդոհ է և չի ուզում շարունակել ծանոթությունը... Գուցե սա մի խաղ էր... Գուցե հիվանդ է»...

Այս բոլոր ենթադրությունները բղխում էին մի աղբյուրից,— նա հետաքրքրվում էր օրիորդով, նա մեծ ցանկություն ուներ նրան տեսնելու: Նա ինքն էլ զարմանում էր այն փոփոխությունից, որ նկատում էր իր մեջ: Ամեն կերպ աշխատում էր կենտրոնանալ գրքի վրա, լարում էր-ինքն-իրեն, բայց մի չարաճճի զգացում գալիս շեղում էր, պայքարում նրա լրջության դեմ:

Մյուս օրը Վերան եկավ ուշացած, սիրալիր և կարոտով բարևեց Լևոնյանին: Խախտված զգացումները նորից չունչ առան և ավելի ինտիմ ձևով, քան առաջ: Նրանք այժմ ավելի հաճախ էին իրար նայում, ավելի քիչ զսպում իրենց ժպիտները: Այդ երեկո նրանք դուրս եկան դրադարանի փակվելուց մի ժամ առաջ և այնպես միաժամանակ, կարծես առաջուց խոսք էին տվել իրար: Փողոցում խոսում էին ավելի ազատ, որպես լավ ծանոթներ: Խոսակցությունից պարզվեց, որ օրիորդը կանանց բարձրագույն կուրսերի ուսանողուհի է, երկու տարի է, ինչ մայրաքաղաքումն է և ապրում է իր ուսանող եղբոր մոտ:

Այնուհետև սովորություն դարձավ, որ Լևոնյանն ուղեկցում էր Վերային, հետը զրուցելով զանազան գիտական, գրական հարցերի շուրջը: Լևոնյանի մեջ աճող զգացումը ձգտում էր ավելի մտերմական կապի, բայց ամեն անգամ կարծես դեմ էր ընկնում ինչ որ արգելքի առաջ: Օրիորդը մի օր ընդառաջում էր այդ մոտիկությանը, բայց մյուս օրը նրան սքողում էր թախիծը. այդ օրերին Վերան թվում էր կաշկանդված, հաճախ հարցեր էր տալիս Լևոնյանին, ասես հարցաքննում էր նրան, երբեմն էլ թվում էր, թե ինչ որ ուզում է ասել, բայց սիրտ չի անում բացվելու:

Մի օր նա ասաց.

— Եղբայրս հետաքրքրվում է փիլիսոփայական հարցերով,— ես նրան պատմեցի ձեր պարապմունքի մասին. նա ասում էր, որ մարդկության մտքի պատմության մեջ կան շըրջադարձ կետեր, որոնք միշտ առանձնապես գրավում են...

— Դե ես մի սկսնակ եմ, նոր կյանք մտնող մի ուսանող, շատ հարցերին անծանոթ և նոր հանդիպող դաղափարներից էլ զարմացող, այնպես որ ես արժանի չեմ այն ուշադրության, որ դուք ինձ շնորհում եք...

— Ոչինչ, երբեմն առաջին քայլերը բնորոշում են և հետագայինը... ձեր տարբերությունն այն է, որ դուք՝ եթե կարելի է այսպես ասել՝ ռոմանտիկ դունավորում եք տալիս ձեզ հետաքրքրող հարցերին: Բայց միևնույն է, դուք էլ կհասնեք այն եղրակացության, որին հանդել են մյուսները... ես էլ այդպես թափառում էի մտքով, բայց եղբայրս ինձ օգնեց. նա շատ պատրաստված տղա է. կուզե՞ք, ես ձեզ կծանոթացնեմ նրա հետ... նա ձեզ կարող է օգտակար լինել:

— Ուրախությամբ,— ասաց Լևոնյանը:

— Լավ, մոտ օրերս կտանեմ ձեզ նրա մոտ:

XXII

Մի երեկո, երբ նրանք դուրս եկան դրադարանից, փողոցներում խորը ձյուն էր նստել:

— Ի՜նչ լավ է,— ասաց Վերան:

— Կուզե՞ք, սահնակ նստենք,— առաջարկեց Լևոնյանը, և գեռ օրիորդի համաձայնությունը չառած, կանչեց կառապանին:

— Դեպի կղզին,— պատվիրեց նա:

Նրանք նստեցին սովորական՝ երկտեղանոց սահնակը, ոտներին ձկեցին տաք մորթե ծածկոցն ու սահեցին ջինջ ձյունի վրայով: Ձին փոփուկ տրոտում էր, ոտներով ցրելով ձյունի գեղեցիկ փոշին: Շուրջն ամեն ինչ թվում էր մեղմացած՝ փափուկ ձյունի ազդեցության տակ. փողոցի կերոսինի լապտերները՝ ասես քաշվում, ամաչում էին իրենց դեղին լույսերից: Մաղազինների չքեղ լույսերը նույնպես մեղմացել էին, սքողվելով քրտնած ապակիներով:

Վերան չավ արամադրության մեջ էր: Նրա մեջ արտահայտ-

վում էր հյուսիսային մարդու յուրահատուկ սերը դեպի առատ ձյունը: Հայացքը չրջելով չորս կողմը, նա բացականչեց նորից.

— Ի՞նչ լավ է:

— Բչիր դեպի կողու վերջը,— նոր պատվեր տվեց կառապանին Լևոնյանը:

Նստած իրար կողքի, ձեռքերը թևանցուկ, նրանք ընկել էին իրար համակրող զույգի երջանիկ ինքնամոռացության մեջ: Բայց հենց այդ բոպեներին, երբ նրանք ամբողջովին ընկել էին իրենց զգացմունքի գերիշխանության տակ, հանկարծ օրիորդն ասես ինչ որ մտաբերելով, ասաց.

— Գլուխս պտտվում է... Ասեք կառապանին, որ հետ դառնա և կամաց գչի...

Կառապանը պտտեց սահնակը և գչում էր ավելի դանդաղ: Օրիորդը մի քանի անգամ ճակատը չփեց ձեռքերով:

— Գուցե բժշկի մոտ տանեմ ձեզ,— առաջարկեց Լևոնյանը:

— Ո՛չ, չի հարկավոր, կանցնի...

Եվ իսկապես, քիչ անց՝ Վերան հանգարտվեց ու կարծես ինքն իրեն հետ խոսելով ասաց.

— Ինչո՞ւ մարդ չի կարող ապրել իր ազատ զգացմունքներով... ազատ մտքերով... ինչո՞ւ մենք պիտի միշտ ապրենք դամոկլյան սրի տակ... ե՞րբ պիտի դա այն լուսաշող օրը... երբ մարդկությունը կընդդիմի իր վայրիացած ազատությունը... ա՛հ, դեռ ո՞րքան զոհեր են հարկավոր այդ երջանիկ ապագային հասնելու համար...

— Բայց չէ՞ որ կա երջանկություն հենց իրեն՝ պայքարի մեջ,— ասաց Լևոնյանը:

— Դա ռոմանտիկ վերաբերմունք է:

Վերան՝ սթափվելով, դլխի նշանով ցույց տվավ կառապանի կողմն ու լռեց,— դա նշանակում էր՝ «կառապանը կարող է լսել, պետք է զգուշանալ»...

Պտույտը վերջացավ: Սահնակը կանգ առավ Վերայի տան առաջ: Մինչ Լևոնյանը վճարում էր կառապանին, Վերան նրա եռևը կանգնած դիտում էր փողոցը: Երբ կառքը հեռացավ, նա հարցրեց.

— Դուք չնկատեցի՞ք մեր ետևից մի սահնակ:

— Ոչ, ի՞նչ կա:

— Ոչինչ... այնպես, հետաքրքրվեցի... այժմ ես ձեզ կխնդրեմ մի փոքր տեղ ինձ ուղեկցել...

— Ուրախությամբ... ո՞րտեղ կուզեք:

— Այս գիշեր ես պիտի անցկացնեմ ընկերուհուս մոտ. դուք ինձ կսպասեք երկրորդ փողոցի անկյունում. ես այժմ կմտնեմ տուն, բայց շուտով կվերադառնամ:

Վերան արագ քայլերով գնաց տուն, իսկ Լևոնյանն առաջ անցավ դեպի փողոցի անկյունը: Հաղիվ քառորդ ժամ անց նրան մոտեցավ մի կին, երկար չքեղ վերարկվով, մորթե օձիքը բարձրացած ու հատատ վուալով:

— Ձե՞զ ճանաչում,— հարցրեց Վերան,— դե գնանք:

— Այդ դո՞ւք եք, ա՛յ քեզ փոփոխություն...

Մի փողոց էլ կարելով, նրանք թեքվեցին դեպի ձախ ու քիչ անց կանգ առան մի երկհարկանի վայտե տան առաջ: Տանելով Լևոնյանին դեպի տան մութ անկյունը, Վերան ասաց.

— Այստեղ մենք կբաժանվենք... դուք երևի զարմանում եք իմ նոր տեսքից, ո՛չինչ, դեռ շատ բաներ կտեսնեք ու չեմ կասկածում՝ ինքներդ էլ կանեք... դուք այժմ ընկել եք այն ճանապարհը, որ տանում է «դեպի Հռոմ»...

Ապա հառելով իր հայացքը Լևոնյանի դեմքին, ասաց հուզմունքով:

— Ես չեմ մոռացել իմ խոստումը... Կարծում եմ՝ վաղը երեկոյան դրադարանից հետո կհաջողվի ձեզ տանել եղբորս մոտ... իսկ այժմ... մնաք բարև...

Նա պինդ սեղմեց Լևոնյանի ձեռքն ու հանկարծ համբուրելով նրան, մի անկնթարթում դուրս ընկավ նրա գրկից ու արագ քայլերով շտապեց դեպի դարպասի դուռը:

Այս բոլորը կատարվեց այնպես հանկարծակի, որ Լևոնյանը մնաց մի երջանիկ տարակուսանքի մեջ... ինչպե՞ս բացատրել Վերայի այս հակասական քայլերը. «Ինչո՞ւ ասաց «прощайте!» (մնաք բարև»), և ոչ «ցտեսություն», չէ՞ որ վաղը պիտի տանի ինձ իր եղբոր մոտ... իսկ չորերը փոխելը, ընկերուհու մոտ դիշերելը... ի՞նչ է նշանակում այս բոլորը... և հետո՝ այս վերջին քայլը՝ համբույրը... չէ՞ որ նա միշտ խուսափում էր իր զգացումներն արտահայտելուց...

Որքան էլ այս հարցերը հանելուկային էին թվում, խճճում էին, բայց և այնպես նա զնում էր տուն՝ սիրտը լիքը մի նոր, երջանիկ զգացումով, որը դեռևս նոր էր ձևավորվում նրա մեջ..

Եկավ հետևյալ օրը: Լևոնյանը հիվանդագին անհամբերությամբ սպասում էր զրաղարանում Վերային, բայց նա չեկավ: Կարծես մի զաղտնի ուժ վճռել էր սպառել նրա համբերությունը: Վերան չերևվաց երկրորդ, երրորդ օրը... և մի ամբողջ շաբաթ անցավ առանց նրան տեսնելու: Ցասնյակ ենթադրություններ էր անում Լևոնյանը, բայց չէր կարողանում կանգ առնել նրանցից որևե մեկի վրա: Նա չէր զնում և Վերայի տուն՝ անհարմար զգալով,— ո՞վ դիտե, զուցե կար մի հանգամանք, որ կարող էր վիրավորել իր ինքնասիրությունը...

Բայց երբ շաբաթն անցավ, նա արդեն էլ չկարողացավ համբերել և վճռեց ինչ էլ լինի իմանալ, թե ի՞նչ է պատահել Վերային: Ու մի երեկո նա սրտատրոփ բարձրանում էր Վերայի տան սանդուխներով: Երրորդ հարկի մուտքի առաջ նա կանգ առավ, նորից տատանվելով, բայց վերջապես քաշեց զանգը: Դուռը բացվեց. մի փոքր, նեղ արանքից դուրս նայեց տանտիրուհին՝ մի պառավ կին՝ խոժոռած դեմքով:

— Օրիորդ Վերան տա՞ն է,— հարցրեց Լևոնյանը:

— Ո՛չ, նա մեկնել է Մոսկվա:

— Իսկ նրա հասցեն կարո՞ղ եք տալ:

— Ո՛չ, հասցեն չի թողել:

— Ու փակեց դուռը:

Լևոնյանը տխուր քայլերով իջնում էր ներքև, ավելի ապշած, քան առաջ: Սանդուխներից դեռ չիջած, նրան հասավ տանտիրուհու աղախինը՝ վրան շալը ծածկած. նա միանգամ տեսել էր Լևոնյանին Վերայի հետ տան մուտքի առաջ:

— Դուք Վերա Սերգեևնային՞ եք ուզում:

— Այո՛:

Աղախինն ավելի մոտեցավ ու ցածր ձայնով ասաց.

— Վերային և իր եղբորը մի շաբաթ առաջ ձերբակալեցին...

«Ահա թե ո՞րտեղ էր թաղնված զաղտնիքը,— մտածում էր Լևոնյանը սրտի ճմլոցով: Այժմ նրա համար հասկանալի էր զանում Վերայի տարօրինակ վարմունքը... ահա թե ի՞նչն էր կանգնում նրա զգացումների առաջ, ի՞նչն էր դարձնում նրան խուսափուկ...

... Վերան բանտարկված է... այս խոսքերով մի վարագույր էր իջնում նրանց մեջ, մի լռություն էր դալիս, բայց ոչ մոռացություն...

XXIII

Վերայի ձերբակալությունից հետո տխրությունը համակել էր Լևոնյանին: Արդեն երկու շաբաթ էր, նա չէր հաճախում հանրային զրաղարանը.—նրան ծանր էր թվում՝ նստել ու հանդիսատես պարապել այնտեղ, ուր ամեն ինչ հիշեցնում էր Վերային, ամեն ինչ ասում էր, որ նա ձերբակալված է ... Այժմ էլ շարունակ մտածում էր նրա մասին. իր հիշողության մեջ անջնջելի մնացել էին Վերայի վերջին երեկոյի խոսքերը— «զեռ ո՞րքան զոհեր պիտի տանք երջանիկ ապագային հասնելու համար»...

Լևոնյանին ցավ էր պատճառում և այն, որ Վերան տարավ իր հետ հեղափոխական զաղտնիքը: Նրա անորոշ ակնարկներից կարելի էր եզրակացնել, որ իր եղբայրը պարապում էր մի խմբակի հետ. այժմ պարզ է, որ դա հեղափոխական խմբակ էր, բայց հարց էր ծագում, թե ի՞նչ ծրագրով էր զեկավարվում ... այս բոլորն իհարկե, կբացվեր մի օր, զուցե ինքը՝ Լևոնյանն էլ միանար այդ խմբակին, եթե անսպասելի ձերբակալումը չբաժաներ նրանց միմյանցից:

Ու կարծես ցանկանալով խլացնել իր տխրությունը, Լևոնյանն ուժեղացրեց իր համալսարանական պարապմունքները,— նա այժմ հաճախ էր լինում դասախոսություններին, մասնակցում էր նաև զործնական պարապմունքներին: Նա ամեն կերպ աշխատում էր բեռնավորվել մասնագիտությամբ և ընթերցանությամբ (այժմ միայն տանը), որպեսզի տեղ չթողներ իր տխուր մտքերին:

Վերջերս նա միացել էր մի խումբ ուսանողների, որոնք պիտի զբաղվեին լաբորատորիայում սկզբնական քիմիական փորձերով: Պրոֆեսորի կարգադրությամբ արդեն հատկացրել էին

այդ խմբի համար փորձասեղաններ և նշանակել էին մի լաբորատոր նրանց ղեկավարելու համար: Պարապմունքները պիտի սկսվեին երկու օրից հետո, բայց Լևոնյանը չհամբերեց,— նա վճռեց հենց այսօր սկսել, հաճույք տեսնելով այդ ազատ ու անղեկավար պարապմունքի մեջ:

Երբ նա առավոտը քիմիայի դասագիրքը ձեռքին ներս մտավ լաբորատորիա, այնտեղ միայն երկու ուսանող կային,— մեկը հեռավոր անկյունում ինչ որ բաղադրություն էր վերլուծում ամարտական աշխատության համար, իսկ մյուսը, որն ավելի մոտ էր Լևոնյանի տեղից, թեպետ շրջապատված էր զանազան քիմիական անոթներով, բայց նստած կարդում էր: Լևոնյանը մտածեց, որ հաջող մոմենտի է եկել,— կարող է քիմիական փորձեր կատարել առանց քաշվելու, քանի որ շուրջը համարյա մարդ չկա:

Նա մոտեցավ փորձասեղանին ու սկսեց դիտել վերևի դարակում շարված սրվակները, որոնց մեջ նկատեց իրան ծանոթ մի քանի բաղադրություններ: Ապա բացեց դասագիրքը և վճռեց փորձ կատարել հենց առաջին պատահած ռեակցիայից: Նա վերցրեց դարակից դրքում հիշված սեւադույն մի բաղադրություն, թափեց լայնաբերան սրվակի մեջ, ապա վրան ավելացրեց թթվուտը: Քիչ անց սրվակում նշմարվեց դեղին-կանաչ գույնի մի գազ: Առաջին րոպեին Լևոնյանը ժպտաց, ուրախանալով, որ փորձը հաջողվում է: Բայց քիչ անց սկսեց տարածվել մի անախորժ ծանր հոտ, նա ստիպված եղավ հեռանալ սրվակից և այդպես դիտել փորձը: Սակայն հեղձուցիչ հոտը հետզհետե ուժեղանում էր. նա սկսեց հազալ, փռշտալ, բայց չէր դադարեցնում ռեակցիան, մտածելով, որ իսկական դիտնականը պետք է կարողանա դիմադրել դժվարություններին.— իսկապես ի՞նչ կլիներ քիմիայի դրությունը, եթե դիտնականները խուսափեին վատ հոտերից...

Մինչ Լևոնյանն այսպիսի շփոթ վիճակում ճգնում էր ինքն իրան խրախուսել, հանկարծ նա լսեց ետևից մի ձայն.

— Կոլլեգա (ընկեր), այս ի՞նչ եք անում...

Լևոնյանը ցնցվեց այնպես, կարծես նրա ականջին մի մեծ զանգ զողանչեց: Հետ նայելով, նա տեսավ այն ուսանողին, որը նստած կարդում էր:

— Փորձ եմ անում — ասաց Լևոնյանը խուլ ձայնով:

— Բայց դիտե՞ք, որ կարող եք թունավորվել... չէ՞ որ այս գազը թունավոր է ...

Լևոնյանը կարմրեց, հանկարծ հիշելով, որ քլորը թունավոր է... բայց ո՞ր սատանան է մոռացել այդ...

— Այո՛, ճիշտ է — ասաց նա չփոթված,— ... ես երկար պահեցի ... խնդրում կդադարեցնեմ — ասաց նա չփոթված ու անմիջապես ծածկեց թղթով սրվակի բերանը, վրան էլ դնելով իր դասագիրքը:

— Շուտով բացեք դիմացի պատուհանը,— կարգադրեց Պետրովը (այդպես էր նրա ազգանունը),— իսկ ես կանեմ այս:

Լևոնյանը հրդեհաշեջի արագությամբ մոտեցավ պատուհանին, չարչարվելով բացեց կրկնակի փեղկերը, իսկ Պետրովը՝ տարավ սրվակը դեպի ապակեծածկ բաժանմունքը և թափեց ներսում: Երբ նա դարձավ Լևոնյանի մոտ, վերջինս՝ կանգնած բաց պատուհանի դիմաց, սարսուռ էր զգում ներս խուժող ցրտից:

— Պետք է իմանաք, կոլլեգա, ասաց Պետրովը հանդիստ և լուրջ տոնով, որ թունավոր բաղադրությունների համար այստեղ կա մի առանձին կամերա, (նա ցույց տվեց ձեռքով ապակեծածկ բաժանմունքը): Այսպիսի փորձերը այնտեղ են կատարում:

Լևոնյանը լսում էր խոժոռած դեմքով, անհամբեր սպասելով, թե երբ կվերջանա այս անախորժ դրությունը:

— Դուք երևի նոր եք սկսում սովորել,— շարունակեց Պետրովը,— եթե կուզեք, ես կարող եմ ձեզ օգնել...

— Շնորհակալ եմ — պատասխանեց Լևոնյանը, զսպելով իր բղավող ինքնասիրությունը:

Լևոնյանի լարված դրությունը հասավ իր գագաթնակետին, երբ լաբորատորիայում լսվեց խոսակցության ձայն. մեկ-մեկու ետևից ներս եկան մի քանի ուսանողներ, քթները շարժելով դրդռումից և իրար հարցնելով՝ թե ի՞նչ է պատահել:

— Այժմ փակեք պատուհանը և դնացեք, չրջեք ազատ օդում, մինչև որ գազի ազդեցությունն անցնի:

Երբ Լևոնյանը փակեց պատուհանը ու նորից մոտեցավ

Պետրովին, վերջինս նկատելով նրա մոայլված դեմքը, ձեռքը դրեց ուսին.

— Ничего (ո՛չինչ),— ասաց նա,— սկզբում միշտ այդպես է լինում, ես էլ այդպիսի սխալներով եմ սկսել իմ մասնագիտությունը... կսովորեք, հետո ամեն ինչ կհեշտանա...

Պետրովի հեռանալուն պես Լևոնյանը ցրված փութկոտությամբ տեղավորեց քիմիական անոթները, ու մոռանալով իր դասագիրքը սեղանի վրա, արագ քայլերով դուրս եկավ լաբորատորիայից: Նա չէր նայում աջ ու ձախ, ենթադրելով թե ուսանողները խոսում ու խնդում են իր ձախլիկ արարմունքի շուրջը:

Դուրս գալով փողոց, նա երկար թափառեց մաքուր օդում, բայց քիչ թեթևություն զգաց. քթի մեջ ասես ընդմիշտ բուն էր դրել մի անտանելի այրող ու խեղդող հոտ. գլխացավը ճընշում էր, կաշկանդում մտքերը, բայց ամենից շատ նրան տանջում էր իր արած սխալը, որը պատկերանում էր արտակարգ, հիպերբոլիկ չափերով և որի համար շարունակ կշտամբում էր ինքն իրան: «Պետրովը ճիշտ է, հանդստացրեց ինձ,— ասում էր նա ինքն իրեն,— բայց դա անում էր քաղաքավարությունից, իսկ մտքում ո՞վ գիտե, ինչ դառը բաներ էր ասում իմ մասին»...

Արդեն հոգնած երկար քայլելուց նա վերադարձավ տուն և ընկավ մահճակալի վրա.— «էլ երբեք չեմ գնալ լաբորատորիա, ,— վճռում էր նա,— կթողնեմ և քիմիան...դա իսկապես թյուրիմացությունների դիտություն է»...

Բայց հետզհետե հանդստացող ջղերը բերում էին ավելի հանդիստ վերաբերմունք, հետ մղելով դրդված ուղեղի շուտափույթ վճիռները,— ի՞նչ մեղ ունի քիմիան — մտածում էր նա,— դա մի դրական դիտություն է, որով զբաղվել են ամենանշանավոր դիտնականները Լավուազիեն, Մենդելեևը և ուրիշները... — իսկ ինչ կարող եմ ասել ես իմ մասին... հա՛, իհարկե, ուրիշ կերպ լինել չէր կարող... զբաղվում եմ վերացական բաներով,— փիլիսոփայությամբ, կարդում եմ Գյոթե և հետո զարմանում, որ քիմիական փորձը չի հաջողվում»...

Այդ օրը նա այլևս չգնաց համալսարան, իսկ հետագա երեք օրվա ընթացքում հաճախում էր միայն դասախոսությունները, խուսափելով լաբորատորիայից:

XXIV

Այդպիսի տարորինակ դիպվածով սկսվեց Լևոնյանի և Պետրովի ծանոթությունը: Իհարկե, Լևոնյանի որոշումը՝ այլևս չգնալ լաբարատորիա, շուտով չքացավ նրա մտքից, բայց և այնպես առաջին որերը նա խուսափում էր Պետրովից: Սակայն մի շաբաթից հետո այդ էլ վերացավ: Մի օր Պետրովը եկավ նրա մոտ, սիրալիր բարևեց, դրվեց նրա փորձը և տվավ նրան մի գիրք:

— Սա ձեզ շատ կօգնի,— ասաց նա,— հենց սկզբնական քիմիական փորձերի մասին է ... եթե որևե դժվարություն զգաք, խնդրեմ դիմեք ինձ, ես ձեզ կօգնեմ...

Շնորհակալություն հայտնելով, Լևոնյանը մնաց Պետրովի բարյացակամ ժպտի ազդեցության տակ և հետաքրքրությամբ գնում էր նրա մոտ, հարցեր տալիս, խորհրդակցում:

Խոսակցության ընթացքում Պետրովը ստեպ-ստեպ հարցեր էր տալիս Լևոնյանի անցյալի, նրա ձգտումների մասին, բայց ինքը՝ նույնանման հարցերին պատասխանում էր զուսպ, ասես զգուշանալով: Դա տպավորություն էր տալիս Լևոնյանին ենթադրելու, որ Պետրովն ապրում է նաև մի ուրիշ թաղնված կյանքով, որի դռները իր առաջ փակ էին: Նա կարողացավ միայն իմանալ, որ Պետրովը Սարատովի նահանգից է, արհեստավորի որդի և երբորդ կուրսի ուսանող է: Բայց այդ դաղտնապահությունը չէր անդրադառնում Լևոնյանի օրըստօրե աճող համակրանքի վրա: Հաղիվ մի ամիս էր անցել ծանոթության օրից, բայց նա այնքան էր ընտելացել, որ մոտ ընկերական զգացումներ էր տածում դեպի նա: Պետրովի ներկայությունը կարծես լցնում էր լաբորատորիան մի դուրեկան, իմաստալից բովանդակությամբ:

Պետրովի արտաքինը շատ համեստ էր. նրա հագին մի հին ուսանողական տուժուրկա էր, որի վրա տեղ-տեղ նկատվում էին թթվուտից այրված բծեր: Նրա դեմքը՝ իր լայն ճակատով, ներքև ուղղած հայացքով ու մտազբաղ արտահայտությամբ հի

վեճի էր բռնվում լաբորանտների հետ՝ այս կամ այն քիմիական հարցի շուրջը։ Երբ Լևոնյանը հարց էր տալիս նրա մասնագիտական պարապմունքների մասին, Պետրովն ասում էր թախծոտ ձայնով.

— Է՛հ, թե մեր ուզած պայմանները կլինեի՞ն... բայց այդպես չէ... մենք դեռ հող պիտի պատրաստենք ապագա աղտա դիտության համար...

Սկզբում երկու նոր ընկերների զրույցները պտտվում էին քիմիայի շուրջը, բայց հետզհետե անցնում էին ուրիշ դիտություններին, իսկ երբեմն էլ թևակոխում էին հասարակական հարցերի շրջանը։

Մի օր Լևոնյանը տեսավ Պետրովի սեղանի վրա մի գիրք՝ «Ռուսաստանի տնտեսական կացությունը» վերնագրով։ Նա հետաքրքրվեց ու սկսեց թերթել, տեղ-տեղ կարդալով։

— Եթե ցանկանում եք, կարող եք վերցնել և կարդալ,— առաջարկեց Պետրովը։

Տանը կարդալով այդ գիրքը, Լևոնյանը նկատեց, որ հեղինակը, թեպետ և մեծ զգուշությամբ, համեմատում է Ռուսաստանի ներկա տնտեսական դրությունը նախահեղափոխական Ֆրանսիայի հետ։ Ընթերցողի մեջ ակամա ծագում էր այն եզրակացությունը, որ Ռուսաստանը գտնվում է հեղափոխության նախաշեմին։

— Հը, ի՞նչպես է, հավանեցի՞ք — հարցրեց Պետրովը, երբ Լևոնյանը մի քանի օրից հետո վերադարձրեց գիրքը։

— Լավ գիրք է,— ասաց Լևոնյանը, ժպտալով,— և լավ եզրակացության է բերում ընթերցողին՝ Ռուսաստանի վերաբերմամբ։

— Բայց, իհարկե, նմանությունը չպետք է հասցնել պատճենի,— ասաց Պետրովը,— ժամանակի փոփոխությունները նշանակություն ունեն։

Գրքի շուրջը ծագեց մի զրույց, որը նշանակալից էր Լևոնյանի համար նրանով, որ այս անգամ Պետրովը բացեց իր հայացքների վարագույրի մի մասը, ասելով որ Ռուսաստանն էլ պիտի անցնի Ֆրանսիայի ճանապարհով,— հեղափոխության միջով, բայց գործող ուժերը կլինեն ուրիշ դասակարգերից...

Այդպես՝ սովորություն դարձան նրանց հաճախակի զրույցները, որոնք քանի գնում տեղափոխվում էին դեպի սոցիալական հարցերի բնագավառը։ Երբ Լևոնյանը պատմեց իր ընթերցանության մասին, (որը հետագայում դարձյալ չարունակվում էր հանրային գրադարանում), իր աշխարհայացքի կազմակերպման դժվարությունների մասին, Պետրովն ասաց.

— Ինչպես տեսնում եմ, ձեր հիմնական սխալը կայանում է նրանում, որ դուք կարծում եք, թե աշխարհայացք մշակելու համար գոյություն ունի մի ունիվերսալ ճշմարտություն, որը գտնելուց հետո կվճռվեն բոլոր հարցերը։ Բայց պետք է իմանաք, որ «ճշմարտությունները» շատ անգամ տրամագծորեն իրար հակառակ են, նայած ո՞վ, ի՞նչ շահերով է մոտենում... Ինչպես ասում է մի գրող՝ պալատներում և հյուղերում մարդիկ միատեսակ չեն մտածում...

— Ուրեմն մարդիկ իրանց գործունեության մեջ ղեկավարվում են անձնական շահերո՞վ...

Լևոնյանը բացատրեց իր տարակուսանքը այդ հարցի վերաբերմամբ, օրինակներ բերելով «գաղտոփարին» նվիրված մարդկանց անշահախնդրության և անձնազոհության մասին։

Պետրովը ժպտաց.

— Այդ առարկումը հաճախ են մեջ բերում, բայց թյուրիմացաբար՝ սխալ հասկանալուց...

Ու նա իր սովորական պարզությամբ սկսեց բացատրել՝ նույնպես պատմական օրինակներով, որ այդ հերոսներին պետք է նայել պատմական հեռանկարի մեջ, որ նրանք՝ ինչ էլ լինեն անձնապես՝ կատարում են իրանց դարի և դասակարգի «պատգամները»...

Ամբողջովին չհամաձայնվելով Պետրովի հետ, Լևոնյանը, այնուամենայնիվ սկսեց նոր տեսանկյունով նայել պատմական դեպքերի ու դրանց մեջ գործող հերոսների վրա. պատմական անձնավորությունների տեղ նրա ուշադրությունը սկսեց կենտրոնանալ նրանց «պատգամներ տվող» շրջապատի վրա.— նրա միտքը սկսեց պտտվել այն նոր, խորհրդավոր գաղափարի շուրջը,— «կեցությունն է վորոշում գիտակցությունը»,— հետզհետե տեղի տալով նրա ալիքներին...

XXV

Պետրովի հետ ծանոթանալուց հետո Լևոնյանը նկատում էր, որ նա չի արտահայտվում ամբողջությամբ, թաղցնում է իրանից ինչ որ նվիրական գործ: Երբեմն Պետրովի մոտ էին գալիս ուսանողներ՝ ուրիշ ֆակուլտետներից, խոսում էին ցածր ձայնով, ինչ որ գործի մասին:

Մի անգամ զրույցի ժամանակ Պետրովը հարցրեց Լևոնյանին.

— Ճանաչո՞ւմ եք Գարունյանին:

— Մոտ ծանոթ չեմ:

— Լավ տղա է,— ասաց Պետրովը.— Նրանից շատ բան կարելի է սպասել...

Այդ խոսքերից Լևոնյանը եզրակացրեց, որ ինչ որ կապ կա նրա և Գարունյանի միջև և ավելի լարեց իր հետաքրքրությունը դեպի Պետրովի «գաղտնիքը»:

Սակայն այդ գաղտնիքը բացվեց ավելի շուտ, քան Լևոնյանը կարող էր սպասել: Մի օր նա սովորականից ավելի վաղ գալով լաբորատորիա, մոտեցավ Պետրովին և բարևեց: Վերջինս նայեց Լևոնյանին մտահոգ ու զննող հայացքով, իսկ խոսակցության ժամանակ անուշադիր էր: Հանկարծ նա ասաց ցածր ձայնով.

— Կարծես այդ կողմերը մարդ չկա...

— Չկա՛,— պատասխանեց Լևոնյանը:

Պետրովը հանեց իր առջևի արկղից մի հաստ՝ քիմիային վերաբերյալ գիրք, ու բացելով այն, ասաց.

— Այս մեջի գիրքը կպահեք, կկարդաք և շուտով կվերադարձնեք. ոչ ոքի չեք ցույց տալ և ոչ ոքի չեք ասել սրա մասին... Սա հեղափոխական արգելված ժուռնալ է...

— Լավ — ասաց Լևոնյանը, և վերցնելով ժուռնալը, դրեց ծոցն ու էլ չմնաց լաբորատորիաում, այլ ուղղակի գնաց տուն:

Նա ներսից կողպեց դուռը և նստելով սեղանի մոտ, սկսեց կարդալ: Դա մի ամսագիր էր՝ «Բանվորական արշալույս» անունով, տպագրված շատ հասարակ, դեղնավուն թղթի վրա, մութդորշ շապկով, և առհասարակ շատ համեստ արտաքին ուներ:

Հենց առաջին տողերից ցնցող մտքերը ասես տենդով բռնկեցին Լևոնյանին. թվում էր, թե նա չի նկատում դրքի տողերն ու բառերը, այլ ընդունում է իր մեջ հրավառ մի հոսանք. արտակարգ մտքեր էին՝ համարձակ, շեշտակի ու պարզ, որոնք գալիս համակրանքով փարվում էին նրա հիշողությանը: Հաղիվ մի քանի երես կարդալով, նա չկարողացավ շարունակել կուտակվող հուզմունքից, վեր թռավ տեղից ու սկսեց քայլել սենյակում:

«Ահա թե որտեղ է եղել գաղտնիքը,— ասում էր նա զարմանքով ինքն իրան՝ նման այն մարդուն, որից երկար ժամանակ թաղցրել էին մի բան և որը տիրանալով գաղտնիքին, տխոսում է; թե ինչո՞ւ ավելի վաղ չի իմացել այդ բոլորը...

Նա նորից նստեց ու շարունակեց կարդալը — «բանտերը լեռի լեցուն են, լիքն են աքսորավայրերը,— գրում եր ժուռնալը,— բայց շարժումը կանգ չի առնում, ընդգրկում է ավելի մեծ շրջան, ավելի խորն է մտնում բանվորության մեջ, ավելի ու ավելի է գրավում հասարակական ուշադրությունը»...

Այդպես նա կարդում էր, ստեպ-ստեպ վեր կենալով տեղից և քայլելով սենյակում, կարծես ինքն իրան հաշիվ տալու համար, թե ինչ՞ է կատարվում իր մեջ, Ահա գիրքը վերջացրեց, բայց անսպասելի մտքերի շարժումը դեռ շարունակվում էր: Արբեցած մարդու նման նրա աչքին ամեն ինչ թվում էր արտակարգ— նոր մտքերը ներշնչում էին նրան հսկայական ուժ, թվում էին անհաղթելի, նրանց առաջ ոչ մի արգելք, ոչ մի ամրություն չի կարող դիմանալ...

Ու վերհիշելով իր գաղափարական վնտռումները, իր տարակուսանքները, Լևոնյանը զարմանում էր, թե ո՞րքան նա մոտ է եղել իր վնտռածին, բայց պատվում էր դրա շուրջը, համարելով այն հեռու և դժվարամատչելի: Այդպես ճամբորդը՝ հետ նայելով իր հասած բարձունքից, նկատում է, որ ավելի կարճ ճամբով կարող էր հասնել իր նպատակին:

Լևոնյանին այժմ զարմանալի էր թվում և այն, որ մինչդեռ գրքերից ու կյանքից օրեցօր ելնող աշխարհայացքի մասերը մնում էին աննշմարելի, ինքը միշտ սպասում էր «իսկական աշխարհայացքին», որը պիտի դար և հրաշալի բանալիով բացեր նրա առաջ գործունեության ասպարեզը...

Ահա՛ և հրաշալի բանալին...

«Ահա՛ թե ինչով էին զբաղված օրիորդ Վերան և իր եղբայրը, դուցե և նրանց ամբողջ խումբը... մտածում էր Լևոնյանը — ահա թե ինչո՞ւմն եր Պետրովի «գաղտնիքը» ... Ու Պետրովի անձնավորությունը բարձրանում էր նրա աչքին, դառնում էր ավելի մտերիմ և սիրելի:

«Երևվի այս բոլորին մասնակից է և Մարությանը,... դրանով պիտի բացատրել այն գաղտնապահությունը, որ նկատելի էր նրա մեջ վերջին ժամանակ» ...

Եվ Լևոնյանի մեջ մի ցանկություն էր գալիս՝ գնալ Մարությանի մոտ և անսպասելի կերպով նրա առաջ դնել «բանավորական արշալույսը» ... բայց դա անկարելի էր... չէ՞ որ խոսք է տվել Պետրովին՝ ոչ ոքի չասել սրա մասին.—

... Նա հանեց իր հուշատետրը, սկսեց գրել. «իմ կյանքի ուղին բացվում է... այստեղից է սկսվում իմ նոր երթը դեպի լուսավոր ապագան... այստեղ կա այն, ինչի մասին երազում էի մինչ այժմ,— կա՛ ճշմարտություն, կա՛ նպատակ, կա՛ պայքար...

«Մինչև այժմ ես դեգերում էի սովերների մեջ... ո՞րքան ազոտ է թվում աչքիս այն բոլորը, ինչ ես կարդում էի առաջ «սովորական» գրքերում ու թերթերում»...

Լևոնյանը դեռ երկար կդեգերեր իր նոր աշխարհի մեջ, եթե իրականությունը չհիշեցներ իր մասին.— հանկարծ դուռը թխկացրին:

Նրա մեջ խոկույն մի միտք ծագեց, թե ոստիկանությունը իմացել է, որ իր մոտ արգելված գիրք կա և եկել է խուզարկելու. նա անմիջապես պահեց Ժուռնալը, իր անկողնի ներքնակի տակ, իբր թե դրանով կարող էր թաքցնել գիրքը:

Սակայն դուռը բանալով, նա տեսավ իր առաջ... տանտիրուհուն:

— Ներեցե՛ք, ես կարծում էի՝ չլինի՞ թե հիվանդ եք,— ասաց նա մտահոգված,— որովհետև երկար ժամանակ է, փակված եք սենյակում և չգնացիք ճաշելու...

— Ոչ, ես հիվանդ չեմ,— պատասխանեց Լևոնյանը չփոթված, կարծես տանտիրուհին գիտեր, որ նա թաքցրած գիրք ունի:

— Ներեցեք,— ասաց տանտիրուհին, ինքն էլ վարակվելով Լևոնյանի չփոթությունից, ու դդուչ քայլերով դարձավ դեպի միջանցքի խորքը:

Լևոնյանը հաղնվեց ու դուրս գնաց փողոց:

Նա մի արտասովոր ուրախության մեջ էր,— նրան թվում էր, թե ինքը մի նշանավոր դյուտ է արել, իսկ չորս կողմը չարժվող մարդիկ՝ այդ հոծ բազմությունը դեռևս անհայտության մեջ են, դեռևս չգիտեն, թե ի՞նչ է հրաշալի բանալին...

XXVI

Արդեն մի ամիս էր, ինչ Լևոնյանը տեղափոխվել էր նոր սենյակը: Իր առաջվա տեղը՝ չնորհիվ տանտիկնոջ կրոնասիրության, ամբողջ բնակարանում տիրում էր մի ծանր կրոնական մթնոլորտ, որը ճնշում էր Լևոնյանին: Երբեմն թվում էր, թե նա գտնվում էր մի եկեղեցում, որտեղ ինչ որ մռայլ դեմքերով մարդիկ լուռ աղոթում էին: Շաբաթը մի անգամ տանտիկնոջ մոտ էր գալիս մի պառավ կույս, որի հետ ավելտարան էին կարդում: Նույն կրոնական կնիք էր դրել տանտիկինը և ազախնու վրա: Այս ուրվականներից ազատվելու միակ հնարքը մնում էր սենյակը փոխելը: Բայց նոր սենյակում, քիչ անց՝ սկսվեց մի տարօրինակ տաղնապ, որի պատճառը այնտեղ թաքցրած մի «դպրոցն» էր:

Արդեն երկու շաբաթ էր, Լևոնյանը լարված դրության մեջ էր.— նրա սենյակում մի կապոց անլեգալ գրականություն կար, բաղկացած հեղափոխական թերթերից, բրոշյուրներից ու թռուցիկներից: Այդ գրականությունը նրան հանձնել էր Պետրովը, և ինքը մեկնել էր հայրենիք ասելով, թե Գարունյանը կհոգա դրա մասին: Կապոցը պիտի վերցներ նրանից մի անծանոթ ընկեր՝ Մաքսիմ անունով, բայց ահա անցել էր յոթն օր նրա գալու ժամկետից և նա չկար...

Առավոտ էր:

Լևոնյանը կանգնել էր պատուհանի առաջ: Դուրսն աշնան խորը ամպամած օր էր՝ Պետերբուրգի այն օրերից, երբ թվում է, թե այդպես էլ կչարունակվի ընդմիշտ, ու էլ երբեք արևը չի ծագի:

Սովորաբար՝ նա առավոտը՝ լվացվելուն պես անմիջապես սկսում էր իր ուսանողական պարապմունքները, բայց այսօր

պարապելու տրամադրություն չկար.—մի հարց կլանել էր նրան ամբողջովին: Նա ծխում էր ու մտածում, կշռադատում իր երկու վճիռները, որոնք մի շաբաթ էր՝ պատվում էին նրա դեմ խում.— մեկն ասում էր՝ «պետք է իմաց անել», մյուսն ասում էր՝ «պետք է սպասել»...

Այսօր՝ զարթնելուն պես նա հակվեց այն մտքին, թե այլևս չի կարելի սպասել, որովհետև ժամանակը երկարելով՝ վտանգը հավանական էր դառնում: Բայց քանի որ «իմաց անելն» էլ կապված էր որոշ վտանգի հետ, նա կարիք էր զգում նորից վերանայելու իր որոշումը:

Նա վտանգավոր էր համարում իր սենյակում երկար պահել «կապոցը», որովհետև կարծում էր, որ դրսում գաղտնի ոստիկանները հետևում էին իրեն: Գուցե հետևում էին ուրիշ կապերից երնելով, բայց դա կարող էր շատ թանգ նստել. նա լսել էր, որ երբեմն գաղտնի ոստիկանները կաշառում են աղախիններին և ուսանողի բացակայության ժամանակ ծածուկ ներս մտնում նրա սենյակն ու նախապես աչք ածում, իսկ հետո դալիս՝ խուզարկում: Կարող են այդ նույնն անել և իր սենյակում...

Լևոնյանն ընդհանրապես վստահ էր, թե աղախնի, թե տանտիկնոջ վերաբերմամբ, բայց երբեմն կասկածը ներս էր սպրդում, ու նա ինքն իրեն հարց էր տալիս. «ինչ գիտես, ինչպես կարող ես երաշխավորել...»:

Այս հանգամանքներն ի նկատի առնելով, նա այսօր հակվում էր այն մտքին, թե պետք է գնալ հայտնել Գարունյանին, բացատրել դրությունը, չէ՞ որ ինքը պարտավոր է վտանգի առաջն առնել, ազատել «գործը» տապալումից...

Սկզբում, երբ Պետրովը հանձնեց նրան կապոցը, թվում էր, թե խնդիրը շատ պարզ է.— նա կդնի իր ճամբրուկում, իսկ ինքը կապրի սովորական ուսանողական կյանքով, մանավանդ որ նրան հրահանգված էր՝ կասկածի առիթ չտալու համար այդ ժամանակամիջոցում հեռու մնալ հեղափոխական կապերից, չվիվել մինչև քաղաքականապես չեզոք ուսանողների հետ:

Նա այդպես էլ սկսեց, բայց հենց երկրորդ օրը՝ թատրոն գնալով, ներկայացման կեսում հանկարծ հիշեց իր «կապոցը»:

Նրան շատ տարօրինակ թվաց, որ թողել է այն տանն ու եկել թատրոն... իսկ այնտեղ ո՞վ գիտե, թե ինչ կարող է պատահել... Ու ծծկեր երեխային տանը թողած մոր նման նա լցվեց անհանգիստ, կասկածոտ մտքերով ու կիսատ թողնելով ներկայացումը՝ գնաց տուն:

Այժմ նա փոխեց իր կյանքի ընթացքը.— վճռեց ժամանակի մեծ մասն անցկացնել սենյակում,— առ ժամանակ չհաճախել դասախոսությունները, թողնել լաբորատորական աշխատանքը: Նա տանից դուրս էր գնում միայն ճաշելու ժամանակ, երբեմն էլ երեկոները գնում էր ընթրելու:

Օրվա մեծ մասը նա նստած պարապում էր: Առավոտը թեյից հետո, նա կարդում էր բնագիտության հատ դասագրքերը, մատիտով առատորեն նշելով գրքի կարևոր տեղերը, ու առջևը կուտակած թղթերի վրա կոնսպեկտ կազմում:

Նրա փոքրիկ, նեղ սենյակի մեծ մասը գրավում էին մահճակալն ու սեղանը. միակ պատուհանը նայում էր դեպի դավիթ: Մի անկյունում տեղավորված էին գրքերը, մեծ մասամբ տնտեսագիտական և սոցիալական հարցերի վերաբերյալ:

Սեղանի աջ կողմը հատկացրած էր մասնագիտական գրքերի, որոնց մեջ լչխում էր Մենդելեևի «Քիմիայի հիմունքները», իսկ ձախ կողմում դրված էին այն ընթերցանության գրքերը, որ նա կարդում էր ներկայումս: Նրանց մեջ աչքի էին ընկնում Վ. Իլյինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» և Մարքսի «Կապիտալի» առաջին հատորը:

Բայց այս պարապմունքը հիմնված էր հրաբուխի վրա.— ամեն անգամ, երբ միջանցքից լսվում էր զանգի ձայնը, նա դադարում էր կարդալուց ու ականջ դնում՝ իմանալու համար, թե ո՞վ է գալիս. ապա հավաստիանալով, որ եկողը կապ չունի իր հետ՝ նորից շարունակում էր:

Տանտիկինը՝ բնակարանատիրուհին՝ արդեն սկսել էր հետաքրքրվել, թե ինչո՞ւ նա այլևս չի հաճախում համալսարան: Նրա հարցերին Լևոնյանը պատասխանում էր, թե պատրաստվում է քննության, բայց Եվգենյա Պետրովնան չէր բավարարվում դրանով:

Անտարբեր չլինելով դեպի Լևոնյանը, նա ենթադրեց, թե նա մնում է տանը... իրեն համար... Ու այդպես մտածելով

Նա կրկնապատկեց իր ուշադրությունը դեպի այդ կովկասցի ուսանողը, որին նա առաջին տեսնելուց հավանել էր:

Նա չգիտեր, որ իր այդ հետաքրքրությամբ մեծ անհանդգստություն էր պատճառում Լևոնյանին և նրա տարօրինակությանն էլ վերագրում այն, որ նա երբեմն մոռայլվում է իր հետ խոսելիս: Լևոնյանն արդեն զգում էր, որ Եվգենյա Պետրովնան ավելի ակտիվ է դառնում իր վերաբերմամբ և մտածում էր, թե նրա հետաքրքրությունը կարող է շատ հեռու տանել,— նա կսկսի հետաքրքրվել իր նամակներով, գրքերով, իրերով... ու կարող է հասնել «կապոցին»... Եվ այդ կասկածի բողեներին՝ նա ատում էր տանտիկնոջը:

Այսպես՝ «կապոցի» հոդն ամեն կողմից պաչարել էր Լևոնյանի միտքը: Կանգնած պատուհանի մոտ՝ նա մտածում էր, որ վերջապես պիտի վճռել... Այժմ միակ ելքը մնում էր գնալ՝ Գարունյանի մոտ և բացատրել դրությունը: Բայց դժվարությունն այն էր, որ Գարունյանն ապրում էր դաղտնապահ և պատվիրել էր ընկերներին չգալ իր մոտ: Պետք է արգյոք խախտել այս կարգադրությունը, թե էլի սպասել. ո՞րն էր ավելի նպատակահարմար: Այս երկընտրանքի մեջ էր Լևոնյանը մոտ մի շաբաթ, ու այժմ արդեն հակվում էր դեպի առաջին վճիռը:

XXVII

Դուռը թեթև թխկացրին:

— Մտե՛ք,— ասաց Լևոնյանը:

Ներս մտավ աղախինը՝ Մարֆան, ձեռքին բռնած մատուցարանը, որի վրա դրած էին սամովարն ու թեյի պարագաները: Նա բարևեց ու դրեց մատուցարանը սեղանի վրա: Փոքրիկ դեղին սամովարն իր թշշոցով խախտեց սենյակի լռությունը:

Մարֆան դյուղացի աղջիկ էր, ժպտուն դեմքով, փոքր ինչ երեխայական արտահայտությամբ:

Նա իր ճռվողուն ձայնով հարցրեց.

— Ինչ՞ բերեմ ձեզ համար:

— Կբերես ֆրանսական բուլկի և պանիր:

— Ինչո՞ւ մի շաբաթ է, միշտ նույնն եք պահանջում:

— Ես այդ եմ սիրում,— ասաց ներքուստ մոռայլվելով Լևոնյանը այդ «մի շաբաթ» խոսքերից:— Նրան դուր չէր գալիս, որ աղախինն էլ նկատել է իր վերջին շաբաթվա կյանքի տարօրինակությունը:

Մարֆան՝ փողն առնելով, զնաց պատվերը կատարելու, իսկ Լևոնյանն սկսեց զբաղվել թեյով: Ցրված ուշադրությամբ նա թեյն ածեց՝ փոխանակ թեյամանի՝ բաժակի մեջ, հետո ուղղեց իր սխալը և թեյամանը դնելով սամովարի վրա, սկսեց քայլել սենյակի մեջ:

Մարֆան նորից եկավ՝ երեսը կարմրած ու արագ շնչելով՝ սանդուղքները բարձրանալուց: Նա դրեց սեղանի վրա երկու ափսե, ու մի քանի վայրկյան կանգնեց, կարծես սպասելով նոր պատվերի:

— Մարֆա, ի՞նչ կա դուրսը,— հարցրեց Լևոնյանը:

— Զյուն, սառնամանիք... ինչպես միշտ լինում է...

— Իսկ ձեր դյուղում չի՞ լինում,— նորից հարց տվեց Լևոնյանը մի բան ասելու համար:

Բայց Մարֆան չկարողացավ պատասխան տալ. այդ րոպեին լսվեց միջանցքից տանտիկնոջ ձայնը.

— Մարֆա...

Նա խսկույն դուրս ընկավ սենյակից.

«Խանդում է տիկինը» — անցավ Լևոնյանի մտքով, որովհետև այդ նույնը կրկնվում էր համարյա ամեն օր, երբ Մարֆան ներս էր մտնում իր սենյակը:

Լևոնյանը զբաղվեց թեյով, բայց նա խմում էր մեքենայաբար, ավելի մտածելով իր դլխավոր հարցի մասին:

Բայց դռնից լսվեց միջանցքով անցնող տանտիկնոջ ձայնը. նա մռմռում էր օպերայից.—

Ночью и днем, все лишь о нем
Думаю я...

Տանտիրուհին՝ մոտ երեսունհինգ տարեկան կին էր, դեղեցիկ, բայց մաշված ջղերով: Նրա ամուսինը ծովային սպա էր, և ամիսներով բացակայում էր, թողնելով կնոջն իր ազատության մեջ: Եվգենյա Պետրովնան աշխատում էր թե իր արտաքինով, թե իր կենցաղով դեկադենտական խորհրդավորություն տալ իր կյանքին: Մաղերը՝ որոնք չաղանակագույն էին, ներկել էր շատ մուգ սև դույնով ու թռչունի թևի նման կախել աջ

այտի վրա։ Աչքերը մոլեգին արտահայտություն ունէին ու թվում էր՝ արբեցում էին վնտռում։ Դեմքի վրա կարծես գիշերային դրոշմ կար՝ կերասինի լամպի դեղին լույսի դրոշմը։

Նա իր կյանքը լցնում էր արհեստական մթնոլորտով. ցերեկը սիրում էր մթությունը. նրա սենյակի պատերը ծածկված էին մութ դույնի պաստառներով. մի պատուհանի վրա վարագույրը շարունակ իջեցրած էր։ Մթությունը, դիշերայինը նրա տարերքն էին,— դա խորհրդավորություն էր տալիս իր կյանքին։ Սիրում էր ոսկեզոծ բարակ դլանակներ, խմում էր սև դարեջուր և երազում ինչ որ ուրի՛շ, հեռավո՛ր աշխարհի մասին։

Նրա սիրած հեղինակը Ֆրանսական դրող Ռոստանն էր. նա կարդում էր՝ ասես երդելով նրա «Անուրջի իշխանուհին», կարդում — հրճվում էր նրա արհեստական սիրային դեկլամացիայով։

Երբեմն՝ երեկոներն ուշ՝ նա դնում էր «սեանսի»՝ մի խումբ երկրորդական դեկադենտ — սիմվոլիստ պոետների ու նրանց համակրողների մոտ. այնտեղ կարդում էին մութ, անհասկանալի ոտանավորներ ու կարդալուց հետո լռում, «խորհում» էին. որքան ավելի անհասկանալի էր լինում «բանաստեղծությունը», այնքան ավելի խորհրդավոր էր թվում։

Լևոնյանին տանտիկինը հավանեց հենց առաջին օրերից. նրան դուր էին դալիս՝ Լևոնյանի կովկասյան դեմքը՝ խոշոր սև աչքերն, ու բեխերը։ Երբեմն նա պատկերացնում էր նրան որպես «մի լեռնային ավազակի», երևակայում էր, թե նա հարձակվում է ու առևանդում իրեն։

Լևոնյանի սառնությունը ավելի էր վառում տանտիկնոջ, քանի որ նրան թվում էր թե նա դաղտնի, «խորհրդավոր» սեր է տածում դեպի ինքը։ Նա ամեն կերպ աշխատում էր իմացնել նրան իր զգացմունքների մասին.— մոտովն անցնելիս թեթև հառաչում էր, նայում էր սանտիմենտալ հայացքով, կարդում էր բանաստեղծություններ բարձր ձայնով, կամ երդում, որպեսզի Լևոնյանը լսի։

Իսկ Լևոնյանն օրեցօր ավելի էր ջղայնանում՝ տանտիկնոջ մոտիկանալու տենչից, և նույնիսկ մտածում էր՝ կապոցը «լիկվիդացիա» անելուց հետո հեռանալ այդ բնակարանից։

... Թեյը խմելուց հետո Լևոնյանը կողպեց դուռն ու վճռեց սուզվել իր կապոցը։ Երբ նա ուզեց բացել ճամբրուկը, հանկարծ նկատեց, որ նա բացվում է առանց բանալիի, ու բռնկվեց կասկածից։ Նա նայեց ճամբրուկի ներսը. կապոցն իր տեղն էր, նույն դիրքում. բայց ինչո՞ւ էր բացվել... Երկար փորձերից հետո նա համոզվեց, որ կողպեքը փչացած է եղել և ինքը չի նկատել...

Այս հանդամանքն ավելի ամրացրեց նրա վճիռը՝ որ պետք է իմաց անել Գարունյանին, ու վերջ տվեց իր բոլոր տատանումներին։ Դրությունը նա համարում էր վտանգավոր...

XXVIII

Լևոնյանը սպասեց մինչև կեսօր ու հետո դուրս եկավ տանից և դնաց իր սովորական ճանապարհով դեպի համալսարան։ Ամեն կողմ սփռված էր առատ խոնավությունը, որը՝ թվում էր՝ ծծվում է իր ամբողջ մարմնի մեջ։ Մառայլ, խորը թխպած օրը՝ իր կնիքն էր դրել շենքերի, փողոցների վրա, պղտորելով, մշուշելով նրանց դույները. անցորդները թվում էին խորասուզված ինչ որ մռայլ, անլուծելի մտքերի մեջ։

Իր ետևից դալիս էր մի մարդ. նա մեծ հետաքրքրություն ուներ դեպի այդ մարդը, բայց հիշում էր Գարունյանի հրահանդները.— «Հեղափոխականը պիտի սովորի անցնել փողոցներով և դիտել առանց աչ ու ձախ նայելու, իսկ հետ նայելը մահացու հանցանք է, դրանով նա իրեն կմատնի դլխովին»...

Բայց մարդն առաջ ընկավ դնաց, ոչ մի կասկած չհարուցելով. չինովնիկ եր, մաշված նշանադրեստով, հնացած պորտֆելը ձեռքին. դեմքը ճնշված էր ու դալուկ՝ առատ մորուքով ու հոդսերով։

Փողոցի անկյունում՝ լրադրավաճառի մոտ նա հեռվից նկատեց մի ուրիշ մարդու, որը կանդնած էր երեսը դեպի իր կողմը։ Լևոնյանը մտադիր էր լրադիր դնելու, բայց նկատելով այդ մարդուն, թողեց իր մտադրությունը։ Հեռվից նա որքան կարելի էր՝ դիտեց։ Այդ մարդը հագած էր մորթի օձիքով վերարկու, սև մորթե գդակ ու նման էր որոշ տիպի վաճառականի կամ առևտրական ագենտի։ Սակայն հագուստը դաղտնի ոստի-

կանի համար ոչ մի նշանակություն չունի, նա կարող է փոխել այն՝ օրական մի քանի անգամ:

Կաակածելի մարդը, որին Լևոնյանը գաղտնի ոստիկան էր համարում, մինչև որոշ տարածություն դիտում էր իրեն, միաժամանակ խոսելով լրագրավաճառի հետ. բայց հենց որ Լևոնյանը մոտեցավ, նա ձևացավ անտարբեր և սկսեց ավելի ուժգնորեն իր զրույցին:

Լևոնյանն անցավ, առանց նայելու լրագրավաճառին, որն այդ րոպեին իր ուշադրությունն էր հրավիրում բարձրաձայն կրկնելով լրագրերի անունները:

«Գուցե հոսն առել են» — մտածեց Լևոնյանը.— այս «տիպը» նորություն է այստեղ»...

Հասնելով համալսարան, նա հարցրեց Պետրովի մասին, բայց իմացավ, որ նա դեռ չի եկել: Նա անցավ իրավաբանական ֆակուլտետը, ու ներս մտավ հենց առաջին հանդիպած աուդիտորիան:

Փոքրիկ աուդիտորիան կիսով չափ լիքն էլ ուսանողներով: Ամբիոնի մոտ կանգնած էր պրոֆեսորը՝ կլոր դեմքով, ցածրահասակ, լայն մարմնով մի մարդ: Նրա աչքերի արհեստական եռանդը, ձեռքերի հաճախակի շարժումները՝ բոլորը կարծես ի սպաս էին դրվել ապացուցելու ունկնդիրներին «պատվիրած ճըշմարտությունը»,—որ ռուսական դյուղական օրշչինան (համայնքը) մի ինքնածին, օրգանական երևույթ է, օդտակար և անփոխարինելի. նա նույնքան օրգանական և անբաժանելի կառուցվածք է, ինչպես և մեր ձեռքի մատները: (Այդ ասելով՝ նա ցույց էր տալիս իր թաթը): Այս և նման հիմունքներով նա ապացուցում էր, որ Ռուսաստանի ճանապարհն այլ է, նման չէ Եվրոպային. այդ պատճառով էլ կապիտալիզմի զարգացումը գործ չունի Ռուսաստանում:

Լևոնյանը ժպտաց այս թեզիսի վրա ու հիշեց Իլյինի գիրքը: Նկատելով Մարությանին, նա աչքերով նշան արավ, որով կարծես ասում էր—մի տե՛ս, ինչե՛ր է դուրս տալիս...

Նա ուրախ էր, որ դասախոսությունը շուտ վերջացավ, ու գնաց գեղի Գարունյանի բնակարանը, մտածելով նոր լսած դասախոսության մասին. «այսպես են հրամայում պրոֆեսորին, նա էլ այդպես է խոսում» ...

Փոքր ինչ առաջ գնալով, նա նստեց ձիաքարշ տրամվայն ու բարձրացավ երկրորդ էժանագին հարկը: Ապա նշանակած տեղը ցած եկավ ու ծռեց ճանապարհը: Գնում էր՝ մտածելով, թե ինչ կասի Գարունյանը. նրան թվում էր, թե նա կասի՝ «լավ ես արել, այդպես էլ պիտի անեիր... դուցե դու դրանով փրկեցիր գործը տապալումից... թեպետ ես արդեն էի ինձ մոտ գալը, բայց ի՛հարկե ուրիշ ելք չկար»...

Մինչդեռ նա այսպես մտածելով գնում էր, հանկարծ նկատեց, որ ամբողջ փողոցը լցվեց դռնապաններով. նրանք շարվեցին մայթի ծայրին՝ փողոցի ուղղությամբ: Նա քայլում էր մայթով՝ մարդկային պատի և սովորական պատի միջև: Շարքերը հետզհետե խտանում էին. դռնապաններին խումբ-խումբ միանում էին միատեսակ վերարկուով ու գդակով մարդիկ, որոնք անշուշտ գաղտնի ոստիկաններ էին:

Լևոնյանի համար ստեղծվեց մի ծանր դրություն. մարդկային շարքից համարյա բոլորը կատաղի հայացքներ էին ձգում նրա վրա, առանձնապես դիտելով նրա ձեռքերը՝ իմանալու համար, թե արդյոք զենք կամ ռումբ չունի՞...

Նա գլխի ընկավ, որ փողոցով անցնելու է թագավորը կամ նրա ընտանիքի անդամներից մեկը: Ուրեմն նա պիտի մնար օգակի մեջ մինչև հանդիպական փողոցին հասնելը և այն էլ՝ եթե թագավորն այդ փողոցից չեր սպասվում:

Նա չեր կարող ոչ հետ գնալ, ոչ կանգ առնել. երկուսն էլ վտանգավոր էր: Նա մտածում էր, որ կարող են մի չնչին կասկածի առիթով հենց այստեղ ձերբակալել իրեն և ուղարկել ոստիկանատուն, իսկ այնտեղ՝ իմանալով հասցեն, խուզարկել իր սենյակը և գտնել իր կապոցը ...

Բայց այդ րոպեին բոլորի ուշադրությունը գրավեց աղմուկը, որն արագ մոտենում էր և ուժեղանում: Հանկարծ ամբողջ շարքերը բռնկվեցին երկարատև «ուռայով», շարժվեցին գըլխարկները: Երևաց շքեղ կարետա՝ ցեղային կուշտ ու կոկիկ ձիաներ լծած ու էլեքտրական հոսանքի նման մի վախ անցավ շարքերով, ասես ամեն մեկը հանցանք էր գործում թագավորին տեսնելու համար... Պատուհանից երևաց Նիկոլայ թագավորի գունատ, մոմե դեմքը, իր հիվանդոտ ժպտով: Նա շարունակ աջ ձեռքը պահում էր գլխարկի մոտ, պատասխանելով «ժողո-

վրդի»՝ այսինքն հաղուստը փոխած ոստիկանների ողջույն-ներին:

Լևոնյանն ուրախացավ, որ բոլորի ուշադրությունն անցավ թաղավորի կողմը, և օգտվելով հանդամանքից՝ արագացրեց քայլերն ու հասնելով փողոցի անկյունը, ծռեց ճանապարհը դեպի ձախ:

Դուրս գալով օղակից, նա աղատ շունչ քաշեց ու դանդաղեցրեց քայլերը: Նա գնում էր ու մտածում: «Եվ այս մոմե արձանը կառավարում է վիթխարի Ռուսաստանը...

Նա պտտեց մի փողոց ևս ու վերջապես կանգ առավ մի խոշոր տան առաջ, ստուգեց համարն ու բարձրացավ չորրորդ հարկը:

XXIX

Լևոնյանը քաշեց հասարակ զանգի բռնակը: Քիչ անց՝ դուռը բացեց մի հասակն առած կին՝ զորշ հաղուստով ու վաղաժամ թառամած դեմքով: Նա փորձող հայացքով դիտեց Լևոնյանին:

— Տա՞նն է Գարունյանը:

— Այո՛, տանն է, խնդրո՛ւմ:

Լևոնյանը ներս մտավ միջանցքն ու ոտաստեց: Կինը մոտեցավ աջ կողմի դռան ու թիկնացրեց, ապա, երբ դուրս նայեց Գարունյանը, նա հայտնեց:

— Ձեզ կանչում են:

— Ա՛, բարև,— ասաց Գարունյանը, նկատելով Լևոնյանին, ու ձեռքից բռնելով, ներս տարավ սենյակը:

Ներսում՝ մի մեծ կլոր սեղանի մոտ նստած էր մի ռուս օրիորդ, որի դեմքը Լևոնյանին ծանոթ թվաց. նրա առաջ՝ ժուռնալի մի տարվա համարներն էին իրար վրա դարսած ու մի քանի ուրիշ գրքեր:

— Լենա, ծանոթացիր, սա մեր լավ ընկերներից է,— ասաց Գարունյանը, մոտ բերելով Լևոնյանին:

Օրիորդը վեր կացավ տեղից ու ձեռքը մեկնեց: Լևոնյանի տրամադրությունը բարձրացավ Գարունյանի սիրալիր ընդունելությունից: Դրանից նա եզրակացրեց, որ գործը լավ կվերջանա և իր գալը «հանցանք» չէ...

— Նստեցեք,— ասաց Գարունյանը, մոտ բերելով աթոռը, իսկ ինքը մտավ շիրմայի եռևը:

Լևոնյանը նստեց: Լենան (կամ Ելենան) շարունակում էր թերթել ժուռնալը: Լևոնյանը հիշեց, որ նա Գարունյանի նշանածն էր:

Մի լուսավոր ուրախություն համակեց Լևոնյանին: Այո՛, նա հենց այսպես էլ պատկերացնում էր իր կյանքը՝ որպես հեղափոխականի,— նա կունենա մի սիրող կին, մի ընկեր, որի հետ կանցնի հեղափոխական ուղիով, որի սերը ջերմ կպահի նրա զգացումները բանտերում ու աքսորավայրերում...

Նրան դուր էր գալիս Գարունյանի սև կրակոտ աչքերը, առույգ ու եռանդոտ ձայնը: Նրա բնավորության մեջ զարմանալի ներդաշնակությամբ միացել էին իր հայրենի լեռներից բերած անվեհերությունը և ռուս ինտելիգենտի մեղմ սրտակցությունը՝ ընկերական հարաբերությունների մեջ:

Համակրելի էր և Լենան. նրա սեղմ շրթունքները ցուցադրում էին վճռականություն, իսկ համարձակ, փոքր ինչ հեղնող աչքերը՝ մի կենսուրախ ըմբոստություն:

Գարունյանը դուրս եկավ շիրմայի եռևից ու մոտեցավ Լևոնյանին:

— Ի՞նչով բացատրել ձեր անակնկալ այցելությունը,— հարցրեց նա ժպտալով, ինքն էլ նստելով աթոռի վրա:

Լևոնյանը հարցական հայացքով նայեց Գարունյանին, հետո օրիորդին ու տատանվում էր՝ ասե՞լ, թե չէ:

— Ասա՛, կարելի է,— դիմեց Գարունյանը, դլխի ընկնելով, որ Լևոնյանը չի իմանում՝ կարելի՞ է խոսել «գործի» մասին օրիորդի մոտ, թե չէ:

Լևոնյանը պատմեց իրողությունը, զարմանալով որ Գարունյանը՝ հանդիստ էր վերաբերվում իր պատմածին:

— Այդպե՞ս,— ասաց Գարունյանը, վեր կենալով տեղից ու սկսեց քայլել սենյակում, մատներով տրորելով իր սև մորուքը: Ապա կանգ առնելով Լևոնյանի առաջ, նա ասաց.

— Այդ բոլորն ինձ հայտնի է— և արդեն կարգադրված էր, որ վաղը երեկոյան վերցնեն քեզանից կապոցը... Բայց քանի որ դու եկար ինձ մոտ... պետք է վերցնել այսօր՝ երեկոյան...

Ապա՝ փոքր ինչ լռելուց հետո՝ նա շարունակեց հայերեն,

չուզենալով անհարմար դրության մեջ դնել Լևոնյանին օրիորդի առաջ.

— Դու պետք է իմանաս, որ մենք ավելի ենք մտածում քո կապոցի մասին, քան դու ինքդ. դա չափազանց կարևոր կապոց է, դրա մեջ «կրակ» կա... Բայց պետք է ասեմ, որ քո այստեղ գալը վտանգավոր է գործի համար...

Լևոնյանը կարմրեց, ինչպես աշակերտն ուսուցչի առաջ: Հակառակի պես հայերեն խոսակցությունն ակամայից դրավեց Լենայի ուշադրությունը և նա մի ակնթարթ նայեց Լևոնյանին, կարծես ստուգելու համար, թե ի՞նչ է ասում Գարունյանը և դրանով ավելի չփոթացրեց նրան:

— Ընկեր Գարունյան,— ասաց Լևոնյանը փոքր ինչ շփոթվելով—դրությունն այնպես էր, որ ինձ թվում էր, թե իմ լռությունը կարող է վտանգել գործը:

— Այնուամենայնիվ՝ եթե ուզում էիր հայտնել՝ պիտի այդ անելիր ուրիշ ընկերների միջոցով... Չէ՞ որ ես ոստիկանության հսկողության տակ եմ...

— Բայց ես չգիտեի, թե ում միջոցով կարող եմ իմաց անել...

— Ինչ և է, եղածը եղած է,— ասաց Գարունյանը կանգառներով Լևոնյանի դիմաց,— ոչինչ, կփորձվես, կսովորես... ես այս բոլորն ասում եմ ընկերաբար... մեղավորը մեր ընկերներից մեկն է, որը պիտի դար և հայտներ քեզ, թե ինչ պիտի անել: Նա չի եկել, դու էլ որպես սկսնակ հեղափոխական, չափազանց զգուշությունից այս քայլն ես արել: Պետք է ասած, որ հեղափոխականին վնասում է ոչ միայն անուշադիր լինելը, այլև չափազանց զգուշությունը, որովհետև դրանով նա կարող է դարձնել իր վրա ոստիկանության ուշադրությունը... պետք է կարողանալ գտնել իսկական չափը:

Լևոնյանն զգաց, որ ինքը դեռևս շատ անփորձ հեղափոխական է, բայց նրա ինքնասիրությունը՝ իր այդ նե՛րքին խոստովանության հակառակ՝ թելադրում էր արդարանալ... Սակայն նայելով Գարունյանի դեմքին, նա քաշվում էր— իր բոլոր ասելիքները թվում էր անարժեք, չնչին նրա առաջ...

— Да (այո՛),— ասաց նա,— և այս բոլոր դժվարությունները երեսից են, որ մարդ քիչ կա... Լեռների չափ շատ գործ կա, բայց մարդ քիչ կա...

Փոքր ինչ լռելուց հետո նա ասաց.

— Ինչ՞պես են մեր նոր ուսանողները, ես համարյա չեմ լինում համալսարանում. չի՞ կարելի այդ «Համբարձումներից» մի քանիսին գործի մեջ քաշել:

Լևոնյանը ժպտաց,— «Համբարձում» անունով հեղափոխական շրջանում անվանում էին քաղաքականությունից հեռու քաշված ուսանողներին:

— Առ այժմ հեռու են փախչում. մեկը վախենում է, մյուսը թշնամաբար է վերաբերվում, իսկ մի ուրիշն էլ հհասկանալու է տալիս...

— Այժմ դու նրանց շրջանում հաճա՞խ ես լինում:

— Այո՛, ինձ հրահանգված է ավելի նրանց հետ լինել...

— Իսկ ինչպե՞ս է, քեզ հետևու՞մ են:

— Այո՛, մի քանի անգամ նկատել եմ մեր փողոցում...

— Իսկ տանտիրուհիդ, աղախինը հուսալի՞ են:

— Առայժմ դեռ բան չեմ նկատել,— ասաց Լևոնյանը, զգալով, որ իր կասկածները շատ չնչին են, և չարժե նրանց մասին խոսել:

— Ուրեմն հարցն այսպես է վճռվում,— այսօր մոտ ժամը ութին կգա քեզ մոտ մի ընկեր՝ «Զինա» անունով, կվերցնի քո կապոցը:

— Իսկ ինչո՞ւ «Մաքսիմը» չի գալիս:

— Որովհետև նա ձերբակալված է... ավսո՛ս... շատ կարևոր տղա էր... Վերջերս շատ են խուզարկում և ձերբակալում. ըստ երևույթին՝ պրովակատորներ կան... ի դեպ՝ պիտի ասեմ, որ ամենից վտանգավորը պրովակատորներն են և դժբախտաբար՝ ամենից դժվար ճանաչելիները: Ահա որտեղ է հարկավոր սրատեսությունը...

Ապա, կարծես մտաբերելով մոռացածը՝ շարունակեց.

— Այժմ մնում է մտածել, թե ի՞նչ ճանապարհով պիտի վերադառնաս, որպեսզի եռևիցդ «պոչ» չտանես... դու կգնաս ոչ թե դեպի քաղաքի կենտրոնը, այլ հակառակ ուղղությամբ, իսկ հետո կպտտես դեպի քո տունը:

— Լենա,— դիմեց նա օրիորդին,— մի գնա խանութ, բանման գնիր և աչք ածա դուրսը:

Ելենան հագավ վերարկուն ու լուրջ դեմքով՝ ասես զինվորական պարտավորություն էր կատարում՝ դուրս գնաց փողոց: Զանցած մի տասը րոպե նա վերադարձավ, հետը վերցրած ծխախոտ ու երշիկ:

— Чисто (մաքուր է),— ասաց նա ժպտալով:

Դա նշանակում էր, որ փողոցում հսկողություն չկա:

— Դե, այդպես, քաջ եղիր,— ասաց Գարունյանը, սեղմելով Լևոնյանի ձեռքը: Մեր թիվը քիչ է, բայց մեր եռևը պրոլետարիատի միլիոնավոր բանակներ կան, պատրաստվի՛ր, մարդվիր՝ ավելի մեծ գործերի համար...

Լևոնյանը դուրս եկավ՝ ողողված մի դուրեկան ջերմությամբ: Նրա տրամադրությունը թևեր էր առել, ներսում զգալով մի անսպառ եռանդ՝ գործելու հեղափոխության համար: Նրան ոգևորում էր այն, որ կապվել է Գարունյանի նման անձնվեր հեղափոխականի հետ, մտածում էր, որ ինքն էլ հետզհետե առաջ կգնի լուրջ գործերի մեջ և իր ամբողջ կյանքը կնվիրի հեղափոխությանը...

Այս մտածումները նրան խանդարում էին լավ դիտելու փողոցները. և նա բավականին տեղ անցնելուց հետո միայն սկսեց աչալուրջ դիտել կասկածելի տեղերը:

Երկար պտույտ անելով՝ նա հասավ համալսարան ու երկրորդ դռնից ներս մտավ ճաշարան: Այստեղ ևս մի քանի ժամ անցկացնելով նա ենթադրում էր, որ կարող է իր «հետքերը կորցնել»:

XXX

Ճաշարանն արդեն կիսով չափ լցվել էր ուսանողներով: Դահլիճում նա նստեց մի փոքրիկ խումբ «չեզոք» ուսանողների մոտ:

— Այսոր ինչ՞ կերակուրներ են,— հարցրեց նա:

— Ռուլետ է,— ասաց մյուս ուսանողը: Իսկը ծույլ մարդու համար է:

— Այսինքն քեզ համար է, էլ ո՞ւր հեռու գնանք,— ասաց ուսանողին նրա հարևանը:

Խոսակցության առարկան հետզհետե անցավ այդ խմբի համար հետաքրքիր և տևական նյութին՝ կանանց:

Լևոնյանը լսում էր ու երբեմն մի երկու խոսք ասում, ցույց տալու համար, որ ինքն էլ է մասնակցում:

Ճաշից հետո նա գնաց շախմատի սենյակը և խաղով անցկացրեց մի քանի ժամ, ապա վերադարձավ տուն՝ արդեն մթնած:

Երբ նա մտավ միջանցքը, մի խորշանք զգաց այն առանձնահատուկ հոտից, որը տարածվում էր տանտիկնոջ բնակարանից՝ նրա գործածած անուշահոտություններից: Դարձյալ բաց դռնից լսվում էր նրա դեկլամացիան: Զգալով դանդի ձայնից, ապա՝ քայլերից, Լևոնյանի դալը, տանտիրուհին ավելի ուժեղացրեց ձայնը.—նա սանտիմենտալ տոնով արտասանում էր.

Я хочу того, чего нет на свете!...

Լևոնյանը ժպտաց հեգնորեն. Եվգենյա Պետրովնան ապրում էր շատ պրոզայիկ կյանքով, բայց իր ցնորքների մեջ փնտռելով մի ուրիշ աշխարհ, կարծում է, թե ապրում է հետաքրքիր ու չտեսնված կյանքով,— մտածում էր Լևոնյանը:

Սենյակում Լևոնյանը թիկնեց անկողնի վրա ու ընկավ անորոշ մտածումների մեջ:

Տանտիկինն այժմ ավելի լսելի անելու համար սկսեց նվագել դաշնամուրը. նվագում էր ինչ որ տարածված ռոմանս, որի մեջ հնչում էր սիրո աղերսանք.— նա այդ նվագում էր Լևոնյանի համար:

— «Զանձրույթ, խկապես մի մեծ ձանձրույթ է ապրում այդ կինը,— մտածում էր Լևոնյանը:— Մինչև երազում է, թե կգա իր «ասպետը» և կտանի այն «ուրիշ» աշխարհը...դատարկությո՛ւն»...

Այս մտածումների մեջ նա հանկարծ լսեց դանդի ձայնը: Նա դիտեր, որ Զինան է դալիս, բայց կասկածի առիթ չտալու համար, ինքը չբացեց միջանցքի դուռը, այլ սպասեց իր սենյակի դռան մոտ, փոքր ինչ բացելով այն և արանքից դիտելով:

Աղախինը բացեց դուռը. Լևոնյանը լսեց իր ազգանունը:

Մի կին մոտեցավ արագ քայլերով ու թիկացրեց կիսաբաց դուռը.

— Դո՞ւք եք ընկեր Լևոնյանը:

— Այո՛, համեցեք։

Եկողը հագած էր մորթե օձիքով վերարկու, գլխին նույնպես մորթե գլխարկ էր, իսկ ձեռքին՝ մի խոշոր ռեգիկյուլ։ Նրա հագուստը շքեղ էր, և չէր համապատասխանում իր կրողին։

— Բարև ձեզ,— ասաց կինը և ձեռքը մեկնելով, ավելացրեց։

— Զինա...

— Բարև,— ասաց Լևոնյանը նրա ձեռքը սեղմելով։

Նա հանեց վերարկուն, փռեց մահճակալի վրա։ Այժմ Լևոնյանի առաջ պատկերացավ կապույտ աչքերով մի դեղագեղ օրիորդ, որը սակայն թվում էր՝ չէր մոռանում իր արտաքինի մասին։

— Նախ դրությունը,— ասաց նա,— չէ՞ որ նրանով պիտի ծանոթանք։ Ու ձեռքը տանելով դեպի կորսետն, սկսեց փընտռել, բայց չկարողացավ հանել։

— Դուք պիտի օգնության դաք,— ասաց նա,— ահա՛ այստեղից հանեք...

Լևոնյանը մոտեցավ, բայց ամաչելով՝ մնաց անշարժ։

— Ի՞նչ ամաչելու ժամանակն է,— ասաց Զինան կշտամբանքով,— ամեն րոպեն թանգ է... չգիտե՞ք, որ կանանց ամենապատվով տեղը սա է։— բուրժուական կանայք այստեղ են թաղցնում սիրային նամակները, իսկ մենք...

Լևոնյանը ձեռքը տարավ կորսետի արանքը, զգաց մարմնի հաճելի ջերմությունը և գտնելով փոքրածալ մի թուղթ՝ տվեց Զինային։

— Սա ձեզ համար է, կարդացեք,— ասաց Զինան։

— Լևոնյանը բացեց թուղթն ու կարդաց։

— Ընկեր Վիկտորի մոտ մնացած իրերը խնդրում եմ հանձնես ընկեր Զինային։ Քո Նատրով։

«Վիկտորը» Լևոնյանի հեղափոխական անունն էր, իսկ «Նատրովը» Գարունյանի։

Լևոնյանը բացեց ճամբրուկը, հանեց կապոցն ու դրեց սեղանի վրա։ Զինան աչխույժ շարժումներով բացեց կապոցը, բաժան-բաժան արավ ու դասավորեց իր փոած, վերարկոյի գաղտնի գրպաններում։ Ապա վերջացնելով գործը, հագավ վերարկուն, նորից քաշեց դեմքին վուալը, ու բուրժուական սոլիդ կնոջ տեսք ստացավ։

— Դե՛, ցտեսություն,— երևի կհանդիպենք։ ասաց նա այն առանձին մտերմական տոնով, որը հատուկ է մի գործի մեջ պայքարող մարդկանց։ Շտապով ձեռք մեկնելով Լևոնյանին, նա անաղմուկ, թեթև քայլերով դուրս եկավ բնակարանից, թողնելով Լևոնյանի սրտում մի զգացում, որն ավելի բարձր էր, քան սերը...

XXXI

Կապոցը տանելուց հետո Լևոնյանին թվաց, թե իր սենյակը դատարկվեց, ամայացավ։ Մի քանի րոպե միայն տևեց այն ուրախությունը, որ նա զգաց իր պարտականությունը կատարելուց՝ իրեն հանձնած գործը տեղ հասցնելուց։ Իսկ այժմ նրան թվում էր, թե իր միջից հանել են ինչ որ թանկագին, կենսատու մի հյութ, առանց որի նա չի կարող ապրել։ Նա զգում էր մի անբացատրելի թախիծ, ասես նրան զրկել էին հեղափոխական լինելու իրավունքից։

Միջանցքից լսվեց տանտիկնոջ զրդռված ձայնը։

— Մարֆա։

Լևոնյանը հասկանում էր նրա ջղայնության պատճառը,— նրա համար պարզ էր, որ Եվգենյա Պետրովնան նկատել էր Զինային և խանդում էր։ Նա կանչում էր աղախնուն՝ հարց ու փորձ անելու այդ անհայտ կնոջ մասին։

Նա մոտեցավ պատուհանին։ Դիմացը՝ երրորդ հարկի պատուհաններում ուժեղ լույս էր։ Նորից մարդ ու կին նվագում էին հյուրերի համար, մեկը՝ ջութակ, մյուսը՝ դաշնամուր։ Երբեմն նա հաճույքով նայում էր այդ դուդին, ենթադրելով այնտեղ երկու «խորը» սիրող սրտեր, կուլտուրական կյանքի «ներդաշնակություն», իսկ ա՞յժմ... ինչո՞ւ այս «քաղքենական իդեալիան» թվում էր այդպես դատարկ, այդպես չարլոն... Լևոնյանը հեռացավ պատուհանից ու թիկնելով մահճակալին, շարունակում էր իր մտածմունքները... իր կյանքը լինելու է բարձր քաղքենական սողացող իդեալներից... Նա չի կարող ապրել առանց հեղափոխության՝ առանց «կրակի»... չկա՞ «կրակը», չկա՞ և իր կյանքը...

Սպա նա ընկավ ապագայի մշուշապատ երազների մեջ։ Հանկարծ նա լսեց դռան թխկոց։

Կիսաբաց դռնից ներս նայեց Եվգենյա Պետրովնան.

— Ներեցեք... կարելի՞ է...

— Համեցե՛ք, խնդրեմ,— ասաց Լևոնյանը, տեղից վեր կենալով.

— Ներողություն որ խանգարեցի... — եթե հարմար եք տեսնում՝ կուզեի ձեզ հետ խոսել մի կարևոր հարցի մասին...

Լևոնյանը զարմացավ։

— Խնդրեմ նստեցե՛ք,— ասաց նա, ու երբ Եվգենյա Պետրովնան նստեց, ինքն էլ նստեց նրա կողքին։

— Դուք չզարմանաք... և կներեք ինձ, որ ուզում եմ ձեզ հետ անկեղծ խոսել... այդ նրանից է, որ ես ձեզ... նա ուզում էր ասել՝ «համակրում եմ», բայց դրա տեղ ասաց — «ես ձեր լավն եմ ցանկանում»,— Ասացեք, խնդրեմ, դուք հեղափոխությամբ եք զբաղվում...

Լևոնյանը ցնցվեց այդ խոսքերից. նրա մեջ մի կասկած մտավ՝ չլինի՞ թե տանտիկինը հետևել է իրեն և դիտի ամեն ինչ... դուցե և կապ ունի գաղտնի ոստիկանության հետ...

— Ո՛չ, ես ոչ մի առընչություն չունեմ հեղափոխության հետ,— ասաց նա լուրջ,— ես միայն եկել եմ համալսարան՝ մասնագիտություն սովորելու և ուրիշ ոչինչ։

— Իսկ ինձ թվում է՝ դուք անկեղծ չեք... բոլոր նշաններից երևում է, որ դուք այդ ճանապարհի վրա եք... Եվ ուզում եմ բարեկամաբար ասել ձեզ...

«Դուցե ուզում է խոսք դուրս քաշել ինձանից,— անցավ Լևոնյանի մտքով... և ինչո՞ւ հենց այսոր է հարցնում, երբ կապոցը տարել են... չլինի՞ թե Զինային հետևել են և ով դիտե՝ ձերբակալել»...

— Դուք թյուրիմացության մեջ եք,— ասաց Լևոնյանը,— ես ոչ միայն չեմ խառնվում այդպիսի գործերին, այլև հակառակ եմ...

— Դե, իհարկե, դուք պիտի բացատրեք, ինչպես բացատրում են բոլորը. դա շատ բնական է ... համենայն դեպս թույլ տվեք իմ առելիքն ասեմ։— ինձ համար պարզ է, որ դուք այդ գործի մեջ եք, և ես եկել եմ ձեզ բարեկամաբար ասելու,— Թողե՛ք

այդ ճանապարհը... դա ձեզ կկործանի, ինչպես կործանել է շատերին... Թողեք այդ սարսափելի, այդ դաժան գործը... Ա՛խ, դուք չգիտեք, թե ի՞նչ է սպասում ձեզ... Որքա՞ն մարդիկ են զոհ գնացել... Ինձ մոտ ապրում էր մի ուսանող... ի՞նչ զեղեցիկ, ի՞նչ խելոք... բայց նա տարվեց հեղափոխությամբ և այժմ հեռավոր Սիբիրումն է... նրա կյանքը խորտակվեց— կորավ նրա փայլուն կարերան... մի քանի ամիս առաջ ես իմացա, որ նա Թոբոլսկի երրորդ աստիճանումն է։ Ասեք, ինչո՞ւ պիտի նա զոհվեր, ո՞ւմ համար... ո՞վ կվերադարձնի այդ թանկագին, զեղեցիկ կյանքը... Եվ վերջապես հարց եմ տալիս.— ի՞նչ միտք ունի այդ բոլորը, միթե՞ որևե բան կարող է տալ հեղափոխությունը... Թողեք այդ ճանապարհը, դա թույն է. մահ է ... ափսոս է ձեր երիտասարդ կյանքը...

Եվգենյա Պետրովնան ձեռքը դրեց Լևոնյանի ձեռքին ու մի սիրատենչ հայացք ձգեց նրա վրա։ Լևոնյանը նայում էր շվարած։

— Ես ձեզ ասում եմ, նույնիսկ խնդրում եմ՝ Թողե՛ք այդ բոլորը, զբաղվեք ձեր մասնագիտությամբ, իսկ ազատ ժամերը նվիրեցեք թատրոնին, երաժշտության, գրականության... ես ձեզ կարող եմ տանել մեր բանաստեղծական սեանսներին... ապրեք դեղարվեստով, ապրեք իսկական հույզերով. դուք ունեք բոլոր տվյալները երջանիկ լինելու համար, սիրելու և սիրվելու համար... (վերջին խոսքերը նա արտասանեց մի առանձին սանտիմենտալ տոնով).— ձեր ընդունակությունները, ձեր արտաքինը ...

— Բայց ինչի՞ց եք եզրակացնում, որ ես հեղափոխությամբ եմ զբաղվում,— հարցրեց Լևոնյանը փորձելու համար,— չէ՞ որ ես ամբողջ ժամանակս նվիրում եմ իմ մասնագիտությանը։

— Ա՛հ, ինչ միամիտ բաներ եք ասում — պատասխանեց Եվգենյա Պետրովնան։— Ես չեմ ստիպում ձեզ ընդունելու իմ ասածը... դա իմ դիտողությունն է թելադրում, իսկ եթե սը խալվում եմ, դուք կներեք ինձ, չէ՞ որ այս բոլորը ես ասում եմ բարեկամական զգացմունքներից դրդված... Ես տեսնում եմ, որ դուք չեք համոզվում, բայց կգա մի օր և դուք կմտածեք...

Նա նորից հառեց իր սիրալի հայացքը Լևոնյանի վրա։

— Ա՛հ, թողեք այդ դաժան, տրադիկական ասպարեզը... դուք ստեղծված եք ուրիշ հույզերի համար...

Այժմ արդեն ամեն ինչ ասված եր և Եվգենյա Պետրովնան դանվում էր սպասողական մեղմ դրության մեջ. նա ամեն ինչով սեր էր ակնարկում՝ իր հայացքով, ձայնով... նա արել էր ամեն ինչ՝ ցուցադրելու իր զեղեցկությունը,— հագել էր իր կապույտ հագուստը, որն իր կարծիքով ամենից շատ էր սազում իրեն, առանձին խնամք էր տարել մազերի, դեմքի վրա... Նա սպասում էր ամենազվխավորին՝ իր զիմացինի փոխադարձ սիրուն, բայց Լևոնյանի առաջ ասես իջնում էր մի երկաթե պատ ու անջատում նրան տանտիկնոջից:

Լևոնյանին թվում էր, թե այդ կինը դալիս էր մի ուրիշ աշխարհից, որ եթե ինքն ընկներ «նրա» աշխարհը, այնտեղից այլևս վերադարձ չեր լինի...

Եվգենյա Պետրովնան զգաց իր «անհաջողությունը» և այժմ մի ելք էր փնտռում պատվով դուրս դալու այս դրությունից: Բայց նա չհամբերեց, չկարողացավ թաղցնել իրեն այրող խանդը:

— Ներեցե՛ք... կուզեի ձեզ մի անհամեստ հարց տալ. ո՞վ էր այն կինը, որը եկավ ձեզ մոտ այս երեկո,— ձեր նշանա՞ծն էր:

— Ո՛չ:

— Կամ գուցե ձեր մոտ ծանոթն էր... ձեր սիրուհի՞ն...

— Ո՛չ, նա իմ ընկերոջ կինն էր, եկել էր Բաքվից և ինձանից տեղեկություն էր հարցնում իր աղդականի մասին...

Եվգենյա Պետրովնան, կարծես հանդստացավ խանդից, մի վերջին աղերսող հայացք ձգեց Լևոնյանի վրա, բայց նրա ինքնասիրությունն խիստ սանձը քաշեց և սթափեցրեց նրան: Նա վեր կացավ տեղից:

— Ես իմ խոսքն ասացի անկեղծորեն... այժմ ես իմ պարտականությունը կատարած եմ համարում... մնացածը, դուք դիտեք,— ասաց նա ընկճված ձայնով ու դուրս դնաց:

Նա մտավ իր բնակարանը ու նստելով սեղանի մոտ, երկու ձեռքով բռնեց դլուխն ու դառնորեն մտածում էր,— արդյոք սա վերջին ճի՞դն էր, թե էլի կարող է հույս դնել...

Իսկ Լևոնյանը մնալով միայնակ, աղատ շունչ քաշեց, դուրս դալով իր կաշկանդված դրությունից: Նա չեր կարողանում առարկել տանտիկնոջ՝ իրեն չմատնելու համար, բայց մեծամանակ դժվար էր և լռելը:

Նա քայլում էր սենյակում, հուզված տանտիկնոջ նոր արած «բացատրությունից»: «Այստեղ ոդիներն էին սավառնում» — հիշեց նա «Ֆաուստի» խոսքերը, այստեղ «կրակն» էր իշխում, իսկ սա ուզում է ինձ ձգել իր տափանքի ցանցի մեջ... և դալիս է նույնիսկ մի խանդոտ ծրագրով՝ ինձ հանելու հեղափոխությունից... չէ, այս քաղքենական ճահիճն ինձ համար չէ»...

Նա տեսնում էր իրեն շրջապատված քաղքենական կյանքով, որը ամեն կողմից ձգտում էր պաշարել իրեն, խառնել «սովորականի» հետ... Ամեն ժամ նա պիտի պատրաստ լինի պայքարելու այդ «սողացող» քաղքենական աշխարհի դեմ...

Տիրող լռության մեջ՝ ներքևի հարկից թույլ հնչում էին դաշնամուրի դամմանները՝ վարից վեր ու վերից վար, միօրինակ ու ձանձրալի: Նրան թվում էր, թե իր շրջապատի քաղքենական «պրոդան» էր կենտրոնացել այդ դամմանների մեջ...

Ո՛չ, այս կյանքն իր համար չէ. իր կյանքն «ապաղայի» հետ է... իր ուղին թեպետ և լի է տառապանքներով, բայց դրա համար միայն արժե պպրել... «Զկա «կրակը», չկա և իմ կյանքը» — կրկնում էր նա քայլելով...

XXXII

Դասախոսությունը նոր էր վերջացել: Համալսարանի միջանցքում մի քանի ուսանողներ՝ կանդնած պատուհանի մոտ, դրուցում էին:

Դուրսը՝ փողոցում, արևի տակ ձյունն էր փայլում, որը սառնամանիքից կարծրացած՝ կառքերի շարժումից փոշիացել էր ու փռռում էր ձիաների ոտների տակ:

— Արևը շատ է դոռ — դարունը մոտենում է,— ասաց Լևոնյանը,— երևի այս տարի լավ բերք կունենանք: («Լավ բերքը» նա կատակով անվանում էր հեղափոխական շարժումը):

— Տեսնե՛նք, ասաց Նիկիտինը,— առայժմ փարավոնները (ժանդարմները) շատ են աշխուժացել,— երեկ գիշեր չորս հոգու ձերբակալել են...

— Թող ինչ ուզում են անեն,— վերջը էլի հաղթությունը մերն է — ասաց Նաղարյանը:

Խմբին մոտեցավ Գարունյանը:

— Ողջույն բոլորիդ — ասաց նա— էս ի՞նչ հարցեր եք քննում:

— Գուշակություններ ենք անում այս տարվա մասին — ասաց Լևոնյանը:

— Տարին մեզ է նայում,— ասաց Գարունյանը ժպտալով — մե՛նք պիտի նրան անուն տանք.

Եվ կտանք,— ասաց Նիկիտինը:

Գարունյանը իր ձեռքը դրեց Նազարյանի ուսին.

— Նա՛զար, ինձ մի դիրք է հարկավոր, արի, տեսնենք, ունե՞ս, թե չէ:

Նազարյանը բաժանվեց խմբակից, հասկանալով, որ Գարունյանը կարևոր գործ ունի իր հետ:

Գարունյանը բացեց ձեռքի հաստ մատնագրքակաան դիրքը, իբր թե նրա մասին է խոսում, բայց նրա նպատակն ուրիշ էր:

— Կդաս ճաշարան այս դասախոսությունից հետո,— ասաց նա — խոսելու բան կա:

Լսվեց հետևյալ դասախոսության զանգը և Գարունյանը շտապեց դեպի մոտակա լսարանը:

Նազարյանը մտավ մի ուրիշ լսարան, ցրված ուշադրությամբ լսեց պրոֆեսորին, ապա գնաց ճաշարան: Այնտեղ ուսանողներ դեռ քիչ կային: Նա մոտեցավ հայտարարության տախտակին, որի մոտ խմբվել էին մի քանի ուսանողներ: Տախտակի վրա ինչ որ անհայտ ձեռք փակցրել էր մի թռուցիկ՝ ապա երկու քաղաքական հայտարարություններ,—մեկում ասված էր, թե «այս ինչ փողոցում դաղտնի ոստիկանությունը «դնարան է մտել», զգուշացեք», իսկ մյուսում՝ «անցյալ գիշեր ձերբակալվել են չորս հոգի» (ու հայտնում էր ազգանունները):

Ճաշարանում երևաց «սուբերիից» (տեսչի օգնականներից) մեկը, որը ամեն օր գալիս էր «աչք ածելու»: Նա արդեն ուսանողների խմբվելուց նկատեց, որ «մի բան» կա, ու սպասելով, մինչև խումբը ցրվի, մոտեցավ տախտակին, զգուշությամբ պոկեց հայտարարություններն ու ձեռքի ափի մեջ հավաքած տարավ հանձնելու տեսչի օգնականին:

Նազարյանը հեռացավ թռուցիկը կարդալուց հետո, համակված մի վառ զգացումով. նրան թվում էր, թե հաղարավոր մարդիկ ինչ որ տեղ թաղնված՝ պատրաստ են պայքարելու, իրար օգնության հասնելու..

Ընտրելով մի ապահով, հեռավոր անկյուն, նա նստեց երկար սեղանի մոտ ու սկսեց կարդալ լրագիրը: Շատ չանցած՝ Գարունյանը մոտեցավ նուսից՝ ձեռքին երկու ափսե բռնած:

— Կրկին ողջույն — ասաց նա,— ահա ճաշը բերել եմ, որպեսզի այլևս տեղերից վեր չկենանք:

Նա նստեց Նազարյանի կողքին:

— Դե՛, համ ուտենք, համ խոսենք, քանի դեռ մենակ ենք:

— Բանն այսպես է — ասաց նա հայերեն, ցածրացնելով ձայնը, դդալով խառնելով կերակուրը ու չնայելով Նազարյանին.— շուտով մեծ քաղաքական ցույց է լինելու... պատրաստություն ենք տեսնում... նախ՝ պիտի տպագրենք թռուցիկներ. ինձ հանձնված է մի օրագիր, որը են բաժանել եմ երկու խմբակի,— մեկի ղեկավարը դու կլինես, մյուսինը՝ Մարությանը:

Նա խոսում էր և ուտում, երբեմն էլ դդալով չխկացնում ափսեն, իբր թե խոսում է կերակուրի մասին.

— Պետք է դնաս մի ընկերոջ մոտ,— շարունակեց նա,— վերցնես հեկտոգրաֆը և տանես քո սենյակը: Հասցեն գրել եմ այս փոքրիկ թղթի վրա և ահա գնում եմ հացի տակ, կվերցնես, անդիր կանես ու հետո կպատռես... Հա, պարոլը (նշանաբանը) կլինի՝ «весна» (գարուն)... Այսքանը՝ կարծում եմ բավական է, մնացածը դու լավ գիտես,— զգուշությունը և այլն,— քեզ սովորեցնել հարկավոր չէ... Ո՞ւմ կկանչես քեզ օգնելու:

— Լևոնյանին և Նիկիտինին.

— Հա՛, լավ ընտրություն է... ուրեմն այդպես, ես շտապում եմ, պիտի գնամ. իմ տանից դուրս գալը՝ ձկան ցամաք դուրս գալու նման վտանգավոր է:

— Լավ, ապահով եղիր, ամեն ինչ կկատարեմ,— ասաց Նազարյանը: Ուրիշ ի՞նչ կա...

— Սա քի՞չ է — ասաց Գարունյանը սև աչքերը փայլեցնելով.— ընդհանրապես տարին փոթորկալից է լինելու, բայց այդ մասին մի ուրիշ անգամ... դե՛, ցտեսություն, ամուր կաց:

Գարունյանը շտապով գնաց, կիսատ թողնելով կերակուրը,

Իսկ Նաղարյանը փոքր ինչ նստելուց հետո, Լևոնյանին ու Նիկիտինին դռան և հրավիրեց իր մոտ՝ «աշխատանքի»:

Տուն վերադառնալով, նա հանեց իր ստացած հացն ու մի քանի անգամ կարդալուց հետո պառուեց ու այրեց լուցկիով:

Արդեն մթնած՝ նա դուրս գնաց տանից՝ Գարունյանի տված հացով ու գտնելով վնտռած տունը, առանց կանգ առնելու բարձրացաւ չորրորդ հարկը:

Զանգահարելուց հետո դուռը բացեց հենց ինքը՝ ընկեր Պոլինան, որի հետ պիտի տեսնվեր Նաղարյանը: Ըստ երևույթին նա արդեն սպասում էր «հյուրին»:

Երկար մթնանցքով Պոլինան տարաւ նրան մինչև ծայրը, ապա ներս մտաւ մի փոքրիկ կիսամութ սենյակ:

— Համեցե՛ք — ասաց նա, ուղղելով իր պենանեն, որը թելով կապած եր բլուղի կոճակից:

— Եկել եմ այն դորձիքը տանելու — ասաց Նաղարյանը:

Պոլինան նայեց Նաղարյանի դեմքին հարցական հայացքով՝ առանց պատասխանելու: Նաղարյանը հանկարծ դդաց, որ մոռացել է պարոլը (նշանաբանը):

— Весна! (գարուն) — ասաց նա ժպտալով ու ակամա ձեռք մեկնեց:

— Շատ ուրախ եմ — ասաց Պոլինան ձեռքը տալով Նաղարյանին,— մոռացել էիք գլխավորը, հա՞...

— Հա, մեկ-մեկ պատահում է...

— Այս բոպեիս — ասաց Պոլինան ու բացելով ճամբրուկը, հանեց հեկտոգրաֆը և նրա պարագաները, ու նորից խնամքով փաթաթեց լրագրի մեջ:

Նաղարյանը բացեց վերարկվի կոճակները ու հարմարեցրեց հեկտոգրաֆը իր ձախ կողմը, բռնելով այն գրպի գրպանի միջից, ապա նորից կոճկեց վերարկուն: Իսկ հեկտոգրաֆի «մասան» (լիցքը) և թանաքը դրեց ներսի գրպաններում:

Փողոցում նա քայլում էր դանդաղ՝ ձեռքերը գրպաններում, զգուշանալով, որպեսզի ձախ ձեռքից չընկնի հեկտոգրաֆը: Նրան թվում էր, թե փողոցով անցնողները բոլորն իրեն են նայում և գիտեն, ի՞նչ է տանում: Թվում էր նույնպես, թե

հեռվից հետևում է նաև գաղտնի ոստիկանը: Բայց մինչև տուն նա ոչ մի համոզիչ փաստ չունեցավ:

Տանը նա պահեց հեկտոգրաֆը չորերի պահարանի ներքևի արկղում, ապա կանչելով աղախնուն, ասաց.

— Նյո՛ւրա, այս երեկո ինձ մոտ հյուր են գալու ընկերներս, ուզում ենք փոքր ինչ ուրախանալ. ահա այս փողով կգնես երշիկ, ապուխտ, գարեջուր, հետո մնացածը դու գիտես...

Նյուրան ժպտալով ասաց — «խարաշո» (լավ) — ու փողն առնելով գնաց, իսկ Նաղարյանը հուզված քայլում էր սենյակում, ինքն իրեն հարց տալով, թե էլի ի՞նչ է պակաս «գործի» համար: Քննությանը սպասող աշակերտի նման նա անհանգիստ էր,— շարունակ մտածում էր, թե ինչպե՞ս պիտի սկսեն տպագրելը... Նրա ինքնասիրությունը չոյվում էր, որ իրեն հանձնել են այդպիսի լուրջ «գործ», և չատպում էր շուտով սկսել...

XXXIII

Աղախինը վերադարձավ՝ բարձված փաթեթներով:

— Շնորհակալ եմ, Նյուրա, հիմա էլ սամովար կդնեա:

Նյուրան գնաց, իսկ Նաղարյանն սկսեց դասավորել ուտելեղենը, աշխատելով որքան կարելի է խնճույքի սեղան ցուցադրել:

Զանգը տվին: Նաղարյանը ականջները լարած սպասում էր, թե ո՞վ կլինի: Ներս եկավ իր ընկեր Լևոնյանը և կանգ առնելով սենյակում, աչքերը հառեց Նաղարյանի վրա:

— Ասացեք, խնդրեմ, ինչո՞վ եք զբաղված:

— Այսպես ասած՝ քեֆով...

— Հը՛մ... միայն գրանո՞վ... մենք կտեսնենք...

Նա մոտեցավ սեղանին:

— Քեֆի պարագաները կարծես թե պատրաստ են. եթե աղախինն էլ չի գալու, դուցե սկսենք...

— Չէ, ավելի լավ է սպասենք Նիկիտինին,— ասաց Նաղարյանը,— իսկ մինչև նրա գալը զբաղվենք սրանով...

Նա հանեց ծոցից «Խակրա» («Կայծ») գաղտնի հեղափոխական թերթի համարը, որը տպագրված էր շատ բարակ՝ ծխախոտի թղթի վրա:

— Ա՛յ լավ ես արել — ասաց Լևոնյանը, ու վերցնելով «Իսկրան» մոտեցավ կերասինի լամպին ու աղահությամբ սկսեց կարդալ։

— Կարդա առաջ այս հոդվածը — մատով ցույց տվեց Լևոնյանը։— Գարունյանն ասում էր, որ դա Լենինի գրածն է։

Նաղարյանը սկսեց հենց այդ հոդվածից, որի մեջ խոսվում էր ուսանողության մասին։ Քանի նա խորանում էր հոդվածի մեջ, այնքան ավելի էր հուզվում ու տեղ-տեղ կարդում էր ձայնով։

Հոդվածը վերաբերում էր այն նոր օրենքներին, որոնց հիման վրա ուսանողներին զինվորության էին տալիս՝ որպես պատիժ՝ նրանց հեղափոխական պայքարի դեմ։ Խիստ հարձակվելով կառավարության վոճրագործ արարքների դեմ, վերջը կոչ էր անում բողոքի ցույց կազմակերպելու։

... «Բայց ցանկալի կլինի, որ այնտեղ, որտեղ կան ամուր, հաստատուն կազմակերպություններ, ավելի լայն և բացարձակ բողոքի փորձ արվեր հասարակական ցույցի միջոցով»...

Լևոնյանը վեր թռավ տեղից։

— Ուրեմն, այս ցույցը խոշոր գործ է լինելու... ասաց նա,— աչքերը հառելով ընկերոջ դեմքին։

— Ուրեմն՝ «կայծից բոց է վառվում»,—ասաց Նաղարյանը, կրկնելով այն էպիգրաֆը, որը գրված էր «Իսկրայի» ճակատին՝ վերնագրի տակ։— Մեր ցույցը մեծ արձագանքներ կունենա...

Լսվեց զանգի ձայնը։ Երկուսն էլ ակամա լռեցին ուշադրությունը հառելով դրսի կողմը։ Լևոնյանն արագ ծոցը դրեց «Իսկրան»։

Դուռը թեթև թխկացնելուց հետո ներս եկավ Նիկիտինը՝ ցրտից կարմրած այտերով։

— Ա՛հ... Նիկիտկա, դու ե՞ս... բացականչեցին երկու ընկերները, իսկ մենք կարծում էինք...

— Իսկ դուք կարծում էիք, թե փարավոններն ե՞ն գալիս... (ժանդարմները)։

— Ինչ՞պես է դուրսը — հարցրեց Նաղարյանը։

— Հանգիստ է։— ոչ մի նշան չկա...

— Մենք քեզ էինք սպասում, Նիկիտկա, դե ստանձնիր քո պաշտոնը։— առաջին հերթին մենք երկուսով կսկսենք տպագրել, իսկ դու լավ ձայն ունես՝ երգելով, բացականչելով ցույց կտաս, իբր թե մենք քեֆով ենք զբաղված։ բայց մի քիչ էլ սպասենք, որպեսզի աղախինը ներս բերի սամովարը։

Նա դուրս դնաց միջանցք, իսկ քիչ անց՝ ետևից եկավ աղախինը, բերելով սամովարը՝ թեյի պարագաներով, ափսեներ, դանակներ և բոլորը շարեց սեղանի վրա։

Նիկիտինը հանեց վերարկուն, ու մոտեցավ «ինճույքի» սեղանին, լցրեց բաժակները գարեջրով։

— Դե՛, ընկերներ, բաժակներն առեք,— ասաց նա,— խըմենք — (ապա ցածր ձայնով շարունակեց) — մեր գործի հաջողության կենացը։

— Բրա՜վո,— գոչեցին Նաղարյանն ու Լևոնյանը,— մեր կենացը...

Գարեջուրը խմելով, նրանք ոտի վրա շտապ կերան մի քանի բուտերբրոտներ։

— Դե, սկսենք,— ասաց Նաղարյանը։

Նա հանեց պահարանից հեկտոգրաֆը, նրա լիցքը («մասսան») ու կարգի բերելով ամեն ինչ, հանեց թուղթի օրինակը, որը պիտի բազմացնեին հեկտոգրաֆի միջոցով։ Առաջին օրինակը տպագրելով, նա ուշադրությամբ դիտեց ու, նկատելով, որ ամեն ինչ կարգին է, շարունակեց տպագրելը։ Մի քանի օրինակից հետո գործն ընթացքի մեջ ընկավ, հետզհետե արագացնելով։ Նաղարյանը դնում էր թուղթը լիցքի վրա, իսկ Լևոնյանը փոքրիկ գլանակը պտտեցնում էր նրա վրայով, ու հետո պոկում լիցքից տպագրված թերթը։

Մինչ այդ Նիկիտինը իր թավ ձայնով վեր էր քաշել «Դուբինուշկան», որի համար թվում էր՝ փոքրիկ սենյակը շատ նեղ էր։ Նա երգեց ամբողջը, ոչ մի տուն բաց չթողնելով, ապա վերջացնելով լցրեց բաժակներն ու գոչեց։

— Ձեր կենացը։

Ու չխկացրեց իրար բաժակները, ձկացնելով իբր ընկերները նստած են սեղանի մոտ։

Նաղարյանը բոպեաչափ կանգ առավ ու արձագանքեց բարձր ձայնով։

— Ուռա՛, Նիկիտա, քո թանկագին կենացը:

Նիկիտինը մոտեցավ հեկտոգրաֆի սեղանին ու վերցնելով տպագրած թերթերից մեկը, սկսեց կարդալ: Նա չատ թռուցիկներ էր կարդացել. բայց այժմ, երբ իրենք էին պատրաստում— նրանք մի առանձին, կիզիչ տպավորություն էին անում,— թվում էր, թե այդ թերթերը տպագրված էին կրակե տառերով, որոնք անցնում էին ամբողջ մարմնով ու տենդով բռնկում նրան:

«Ընկերներ,— կարդում էր նա,— ցարական կառավարությունը օրեցօր ծավալում է իր արյունարբու չարագործությունը, խեղդելով ժողովրդի ամեն մի ձգտում դեպի աղատ կյանքը»...

Այնուհետև հիշատակելով վերջերս կատարված դեպքերը, թռուցիկը կոչ էր անում բողոքելու,— դուրս գալու ցույցի քաղաքի հրապարակը:

— Նիկիտա, քո դերը մոռանում ես,—ասաց Նաղարյանը,— չէ՞ որ դու պիտի երգես, աղմկես, իսկ եթե հրամայենք՝ նույնիսկ պարես:

Նիկիտինը սթափվեց, չտալով մոտեցավ սեղանին, լցրեց բաժակները ու մոտ բերելով ընկերներին, տվեց նրանց՝ խմելու:

— Կեցցե՛, բրա՛վո, ուռա՛ — խառը լսվեցին բոլորի ձայները:

Նիկիտինը հետ տարավ բաժակները ու սկսեց երգել՝ մեկը մյուսի հետևից՝ ռոմանսներ, երգեր, բայց նկատվում էր, որ պատուղները հետզհետե երկարում են:

Մի ժամից հետո Նաղարյանը փոխեց բնագիրը, որն արդեն սկսել էր աղավաղվել, լվաց սամովարի տակ ջրով հեկտոգրաֆի լիցքի երեսը, ապա իր տեղը հանձնեց Նիկիտինին:

Նաղարյանը ազատվելով, մի բաժակ դարեջուր խմեց ու սկսեց քայլել սենյակում, ինչ որ երգի կտոր մոմոալով: Լսելով նրա ձայնը, Նիկիտինը սկսեց հռհռալ:

— Նու, Նաղարկա, դու բոլորովին բաղձայն ես, լավ կանես լռես և էլի առաջվան գործդ անես:

— Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է — ասաց Նաղարյանն ու նորից անցավ իր առաջվա գործին, այս անգամ աղատելով Լևոնյանին:

Լևոնյանը մոտեցավ սեղանին, լցրեց բաժակները ու մոտ տարավ ընկերներին:

— Թարմացեք,— ասաց նա, ուղղակի մոտեցնելով բաժակները նրանց բերաններին:

— Հա՛, չատ մի՛ զոռիլ դարեջրով,— ասաց Նաղարյանը,— թե չէ թարմացնելու տեղ կթառամեցնես:

Լևոնյանը «ստանձնեց իր դերը», երգելով ինչ որ հիշում էր, բայց եղանակները փոփոխելով, նա սկսեց երգել հայտնի հեղափոխական երգը:

Смело, друзья, не теряйте
Бодрость в неравном бою!...

— Լեոնիդ, դու էլ չեղվեցիր քո դերից,— ասաց Նիկիտինը,— այդ ինչ՞ է ես երգում, և այն էլ ինչ ժամանակ...

— Հա, գրողը տանի, մարդ երբեմն մոռացվում է,— ասաց Լևոնյանն ու անցավ հայ ժողովրդական երգի: Բայց չատ չանցած, նրա երգելու թափն էլ նվազեց: Այժմ բոլորն էլ մոռացան, որ ուրախություն, քեֆ պիտի արտահայտեն: Լևոնյանն էլ իր դերը թողնելով, օգնում էր նրանց: Գործի լրջությունը, այն մեծ վտանգը, որ սպառնում էր՝ կապարի ծանրությամբ ճնշում էր ընկերներին: Բոլորը մտածում էին՝ կհաջողվի՞ արդյոք առանց «տապալման» վերջացնել գործը... Դրությունը քանի գնում՝ ավելի էր լարվում.— բոլորը կարծես պապանձվել էին ու կենտրոնացել մի գաղափարի՝ թռուցիկների վրա: Այդ բոպեներին նրանց ականջները առանձնապես սրված էին և որսում էին դրսի ամեն մի շչուկ:

Ժամի տասնումեկից անց էր. հանկարծ լսվեց միջանցքից զանգի ձայնը: Երեք ընկերները ցնցվեցին ու վայրկենաբար մնացին անշարժ.

— Շո՛ւտ հավաքեք բոլորն ու դրեք պահարանում — ասաց Նաղարյանը, ինքը վերցնելով հեկտոգրաֆը:

Լևոնյանն ու Նիկիտինը հավաքեցին տպագրած թռուցիկներն ու պահեցին նույն տեղը:

— Նստեցեք մյուս սեղանի մոտ,— կարգադրեց Նաղարյանը ու ինքը կանգնելով դռների մոտ, ականջ դրեց:

Եկողը խոսեց աղախնի հետ ու մոտեցավ Նազարյանի սենյակին:

— Այստեղ է դալիս — չշնչաց Նազարյանը.— երդեցեք մի բան:

Սկսվեց ինչ որ տարօրինակ դուետ, մի անկարգ խառնուրդ ուսանողական երգից:

Դուռը ծեծեցին: Նազարյանը ղղուչությամբ բացեց և ապշած հետ-հետ եկավ:

— Վա՛յ, ղրողը տանի, դու ե՞ս,— ասաց նա, առաջը տեսնելով իր Ալմազովին:

— Ա՛հա, դու ե՞ս,— կանչեցին Լեոնյանն ու Նիկիտինը:

Սենյակը լցվեց բացականչերով: Ալմազովը հագել էր կովկասյան յափնջի ու գլխին դրել մորթե փափախ: Նա զարմացած նայում էր մերթ մեկ, մերթ մյուսի երեսին:

— Էս ի՞նչ բանի է՝,— հարցրեց նա վերաջապես:

— Քե՛ֆ է, քե՛ֆ,— հանվիր, դու էլ կմասնակցես:

— Տեսնում եմ՝ քեֆի պարագաներ կան, բայց դուք մոլորված հավերի նման եք...

— Հա՛նվիր, շատ մի խոսիլ,— ասաց Նազարյանը, ինքը վերցնելով նրա վրայից յափնջին:

Ալմազովը նստեց սեղանի մոտ, շպրտելով իր փափախը Նազարյանի անկողնի վրա:

— Նուս, ինչպես՞ եք, վո՞նց եք — ասաց նա հերթով նայելով բոլորի դեմքերին:

— Լավ ենք,— դու ո՞րտեղից, ո՞ր աշխարհից ես դալիս:

— Շա՛տ հեռվից... երկար պատմություն է:

Սկսեց մի յուրահատուկ զրույց, որի դունավորումը տալիս էր Ալմազովը: Բայց երկար չտևեց այդ.— Նազարյանը վճռեց նրան էլ մասնակից անել իրենց գործին: Նա ասաց ցածր ձայնով.

— Մի՛չա, մենք այսօր ուրիշ գործի համար ենք հավաքվել, իսկ քեֆը՝ այնպես, ցույց տալու համար է... դու էլ պիտի մասնակցես...

— Ինչո՞ւ չէ. ուրախությամբ:

Նորից հեկտոգրաֆը երևաց սեղանի վրա, նորից գլանակը շարժվեց ու ծանրախոհ լրջությունը մթնոլորտի նման տարածվեց սենյակում: Միշան եռանդով կպավ ու մնաց մինչև վերջը:

— Ախոռս, չենք կարող երկար աշխատել — ասաց Նազարյանը. արդեն ժամի մեկն է — ստիպված պիտի դադարեցնենք, կարող են կասկածել, բայց մեր պատվերը լրիվ կատարել ենք:

Մի երկու տասնյակ թերթ էլ տպագրելուց հետո գործը դադարեց. Նազարյանը հավաքեց թռուցիկները, մի քանի կապոց փաթաթեց ու այժմ մտածում էր, թե ինչպես պիտի տեղ հասցնի այս բոլորը:

Երբ Ալմազովը նկատեց, որ երեք ընկերներն էլ զբաղված են, նա դուրս դնաց միջանցքը, ու մի քանի րոպե այնտեղ մնալուց հետո, վերադարձավ, դուռը արագ փակեց, ու չշնչաց վախեցած ձայնով:

— Ոստիկաններ են դալիս...

Բոլորը շշմած վեր թռան տեղից, իսկ Նազարյանը, որն այդ րոպեին ձեռքին բռնած էր մի աղավաղված թռուցիկ, ճչխլեց այն ու ձգեց հատակին:

Ալմազովը նայեց բոլորին ոտից գլուխ ու սկսեց փառիատ ծիծաղել.

— Ա՛յ թե վախեցաք է՛...

— Ա՛յ դու անպիտան, խաբեցիր՞,— ասաց Նազարյանը:

— Իսկ դու, Նազար, շատ ծիծաղելի և անմիտ բան արիր.— ինչ՞ էիր մտածում, որ ձեռքիդ թռուցիկը ճխլեցիր ու ձգեցիր հատակին... դրանով ինչ՞ էիր ուզում ասել...

— Դա անգիտակցաբար եղավ,— ասաց Նազարյանը:

— Անգիտակցաբա՞ր... հա՛, հա՛, հա՛..., չե՛, սիրելիս դա կնշանակի՝ դեռ անփորձ ես... Այս բոլորը լավ, բայց մի գործ էլ ունենք վերջացնելու,— ասաց նա ու գաբեջրի վերջին շիշը դատարկեց բաժակների մեջ:

— Էս բոլորիդ կենացը՝ լավ տղաներ եք, բայց մի պակասություն ունեք,— դեռ պոլիցիականներից հուշտ եք լինում:

— Վաղը նույնպես աշխատելու ենք, բայց ուրիշ տեղ,— ասաց Նազարյանը.— քեզ խմաց կանեմ...

— Կգամ, որ մեկ էլ վախեցնեմ ձեզ:

Վճռվեց թռուցիկները բաժանել երեք ընկերների մեջ, իսկ

հեկտոգրաֆը ավելի հարմար տեսան, որ տանի Ալմազովը — նրա յավնջին շատ լավ կարող եր թաղցնել սմեն ինչ: Նա պիտի հանձներ ուսանող Շապոշնիկովին, որի տանը մյուս օրը պիտի շարունակվեր թռուցիկների տպագրությունը:

Ընկերները մեկ-մեկ դուրս դնացին, որպեսզի կասկածի տեղի չտան:

XXXIV

Երբ Ալմազովը դուրս դնաց Նաղարյանի մոտից, նա համարձակ, լոթավարի քայլվածքով դիմեց դեպի ուսանող Շապոշնիկովի բնակարանը: Նա դնում էր բանուկ, լայն փողոցով՝ իր տեսքով ոչ մի կասկած չտալով, թե յավնջու տակ ինչ որ դաղտնիք ունի:

Վերջապես նա հասավ իր վնտռած տանը, բարձրացավ վերև և դանդահարեց: Դուռը բացեց մի կին՝ ալյայլված դեմքով:

— Միշան տանն է՞:

— Ո՛չ,— ասաց նա, հարցական հայացք ձգելով Ալմազովի վրա, բայց նկատելով վերջինիս տարակուսանքը, նա կարծես ինչ որ հիշելով ասաց.

— Համեցե՛ք ներս:

Ալմազովը ներս մտավ կորիդորը:

— Սերյոժան ձերբակալված է— ասաց կինը շշուկով,— եթե նրա հետ դործ ունեք, դդուշացեք... ես ձեդ հիշում եմ... ես նրա մայրն եմ...

— Ե՞րբ են ձերբակալել,— հարցրեց Ալմազովը:

— Մի քանի ժամ առաջ...

— Ես նրա հետ դործ ունեի,— ասաց նա. բայց ի՞նչ արած... ցտեսություն...

Անսպասելի դեպքը մտատանջության մեջ ձդեց Ալմազովին: Նախ՝ պիտի վճռեր, թե ո՞ւր տանի հեկտոդրաֆը... հետ տանելը ցանկալի չէր.— դրանով նա անպայման վտանդի կենթարկեր դործը: Նա չէր կասկածում, որ Շապոշնիկովի ձերբակալման առիթով նրա տան շուրջը դաղտնի ոստիկանությունը հսկողություն էր նշանակել...

Նա դեռ միջանցքում խորը դլուխը քաշեց իր մորթե դլխարկը ու աշխատեց որքան կարելի է՝ հանդիստ քայլերով իջնել սանդուխտներով՝ կասկածի առիթ չտալու համար:

Դուրս դալով փողոց, նա նկատեց դիմացի մայթի վրա ոսկրոտ դեմքով մի մարդու, որը հետախուզող աչքերը ձդեց իր վրա: «Ուրեմն հսկողություն կա»— մտածեց Ալմազովն ու նոր հոդսի մեջ ընկավ:

Այժմ հարց էր ծագում, թե ի՞նչ միջոցով պիտի ազատվի հետապնդումից: Դա բավական մեծ վտանդ էր իր առաջ, քանի որ նրա մոտ եր հեկտոդրաֆը:

Նախ նա վճռեց դնալ իր սիրուհու՝ Նադյայի մոտ, որտեղ ավելի ապահով կլիներ, քան իր սենյակում.— «Այնտեղ հնարքներ շատ կդտնենք»— մտածում էր նա: Բայց ետեվից «պոչ» տանելը շատ վտանդավոր էր՝ պետք էր անպայման ազատվել...

Նա քայլեց փողոցով, շարունակ մտահոդվելով այն հարցից՝ հետևո՞ւմ է իրեն դաղտնի վոստիկանը, թե չէ: Հետ նայել չէր կարող, որովհետև դրանով նա իրան կմատներ, ուստի դիմեց ուրիշ միջոցի— հանելով հանդիպակ փողոցին, նա ծռվեց դեպի աջ ու այդ ժամանակ մի չեղ հայացք ձդեց... այո՛, «պոչը» դալիս էր իր ետևից... Պետք էր ազատվել, բայց ինչպես, դա այնքան էլ հեշտ խնդիր չէր...

Ձեր օդնիլ քայլերն արագացնելը, որովհետև դա ավելի կդրդռեր ոստիկանի ախորժակը,— նա կենթադրեր, որ իր որսն արժեքավոր է և կկրկնապատկեր իր եռանդը: Ձեր օդնիլ կառք նստելը, որովհետև ինքն էլ կնստեր:

Նա հասավ մի դեղատան և վճռեց ներս մտնել՝ ստուդելու համար՝ դալի՞ս է վոստիկանը թե չէ: Նա պահանջեց տաս կոպեկի սոդա:

Դեղատանը միայն մի օրիորդ էր՝ երաղուն աչքերով: Նա ժպտալով տվեց պահանջած դեղը:

— Դուք կովկասցի՞ եք — հարցրեց նա,— հետաքրքիր հայացք ձդելով Ալմազովի վրա:

— Այո՛, բայց ինչո՞ւ եք ժպտում,— հարցրեց Ալմազովը, ցանկանալով խոսքի բռնվել նրա հետ մինչև դաղտնի ոստիկանի հայտնվելը:

— Շատ հետաքրքիր է այդպիսի հագուստով ձի նստել և քշելը...

— Լա՜վ, մյուս անգամ ես ձիով կգամ և ձեզ էլ կհափշտակեմ:

Օրիորդը ծիծաղեց, ուզեց պատասխանել, բայց այդ րոպեին ներս եկավ չիկահեր «ոսկրոտ դեմքը» ու նորից իր սուր աչքերով աննկատելի անտղեց Ալմազովին:

— Վալերյանի կաթիլներ՝ քսան կոպեկի — ասաց դաղանի ոստիկանը, այս անգամ չնայելով «կովկասցուն»:

«Պինդ է կպել շունը» — մտածում էր — Ալմազովը փողոցում.— անհրաժեշտ են «վիրաբուժական» միջոցներ...

Նա մեծ հաճույքով կջախջախեր այդ ոսկրոտ դեմքը, որն այժմ դարձել էր նրա ոխերիմ թշնամին: Մի հանդուգն ծրագիր հանկարծ բացվեց նրա առաջ՝ որպես միակ ելք իր դրությունից:

Դժուրս դալով դեղատնից, նա նախ ձգեց հեկտոդրաֆը իր ծոցի մեջ, որպեսզի ազատի իր ձեռքը, ապա հետզհետե ընկավ նեղ ու մութ փողոցները: Դաղանի ոստիկանը համառորեն հետևում էր նրան:

Վերջապես մի մութ փողոցի անկյունում Ալմազովը կանգ առավ, նորից ստուգելու համար: «Ոսկրոտ դեմքը» մոտեցավ՝ դանդաղեցնելով քայլերն ու անցավ նրա մոտով:

Ալմազովը սպասում էր հենց այդ մոմենտին. նա մի ակընթարթում վրա ընկավ ոստիկանի ետևից ու բռունցքի մի ուժեղ հարված տվեց նրա քունքին, միաժամանակ ոտի ճարպիկ շարժումով խփելով նրա ոտին: Ոստիկանն ընկավ դետին, գլուխը դիպցնելով մայթի քարին ու մի խուլ ձայն արձակեց: Մի հարված էլ հասցրեց նույն տեղը, նա թռավ դեպի կողքի փողոց, թողնելով ոստիկանին ուշաթափ դրության մեջ: Մի առժամանակ նա գնում էր շատ արագ, իսկ հետո՝ դուրս դալով լայն ու լույս փողոցները, սկսեց քայլել հանդիստ, վտանդն արդեն անցած համարելով:

Նա նստեց ձիաքարշ տրամվայը ու մի քառորդ ժամից հետո իր Նադյայի մոտ էր:

Նադյան այդ ուշ ժամին սովորաբար քնած էր լինում, բայց այսոր կարծես մտադիր չէր քնելու: Պատճառն այն էր, որ առավոտն իր խոհարարուհին՝ Մատրյոնան ասել էր, թե տեսել է փողոցում «կովկասյան դևին», այսինքն՝ Ալմազովին: Այժմ նա նստած սպասում էր նրան:

Երբ դուռը ծեծեցին, նա ջղային թիկոցից դդաց, որ Ալմազովն է ու վեր թռավ տեղից:

— Դու ե՞ս,— ասաց նա և փաթաթվեց Ալմազովին:

— Հ՜ը, ոնց ես Նադյա,— հարցրեց Ալմազովը, ձդելով վրայից յալինջին:

— Այդ ինչպե՞ս է, որ հետաքրքրվում ես իմ դոյությամբ:

— Վա՜հ, ես միշտ հետաքրքրվում եմ քեզանով:

— Հենց դրա համար էլ տարին մի նամակ էլ չես դրում:

— Վա՜հ, կարծում ես հե՞շտ է նամակ դրելը. իսկի նոր սիրահարվածները չեն կարողանում դրել:

— Հա՜, լավ է, դոնե իմ հասցեն չես մոռացել...

— Ես քեզ միշտ հիշում եմ, Նադյա, դու զուր ես խոսում,— ասաց նա, ապա զրկելով նրան, պտտացրեց սենյակում:

— Թո՜ղ, ի՞նչ ես անում — կես բարկացած, կես ծիծաղելով բողոքում էր Նադյան:

Ալմազովը ցած դրեց Նադյային ու ասաց.

— Նո՛ւ, հիմա խոսենք գործից... դու պետք է իմանաս մի դաղտնիք... ու պատմեց իր գլխին եկած դեպքը:

Նադյան ապշած նայում էր Ալմազովին, դժվարությամբ հավատալով այդ տարօրինակ դեպքին:

— Էլի սկսեցի՞ր — ասաց նա,— չէ՞ որ անցյալ տարվա դեպքերից հետո հազիվ պիտի «վերականգնես» համալսարանում... հիմա ի՞նչ պիտի անես:

— Ա՜յ, ասեմ ինչ՝ նախ պետք է արտաքինս բոլորովին փոխեմ.— յալինջին կպահես քո մեծ անդուկում, իսկ ես կհագնեմ մի հասարակ վերարկու, կընեմ ուսանողական հին գլխարկ, կածիլեմ բեխերս ու մորուքս...

— Դա քեզ բոլորովին կդեղացնի:—

— Ո՛չինչ, դու ինձ կսիրես անցյալի հիշողությամբ:

Ալմազովը հանեց ծոցից հեկտոդրաֆն ու դրեց սեղանի վրա:

— Էս ի՞նչ բաներ են,— զարմացած հարցրեց Նադյան.— դու ինձ ուղղակի Սիբիր ես քշելու քո դաղտնի գործերով:

— Սա տպագրելու գործիք է:

— Տպագրելու՞,— վախեցած հարցրեց Նադյան — ինչ՞է, կատակ ե՞ս անում, ուզում ես ոտով-գլխով կորցնե՞ս...

— Մի՛ վնթվնթալ, Նադյա, այս բոլորը տեղավորվիր մինչև առավոտ... Կարծեմ քո մարդուց մնացած մի ածելի կա մոտդ, բեր, սկսեմ իմ արտաքինիս զարդարանքը:

— Ну, что мне делать с тобой?.— խոր հառաչելով ասաց Նադյան իր սովորական խոսքն ու սկսեց տեղավորել, թաղցնել իրերը: Այնուհետև դատմ ածելին ու թասը, և դրեց իր սիրածի առաջ: Ամպարովը մի կես ժամում վերջացնելով ածիլվելը, ասաց.

— Այժմ ինձ դժվար թե ճանաչեն:

— Օ՜, ինչ անճանաչելի ես — ասաց Նադյան խորշելով — դու՝ էլ հետաքրքիր չես, այլևս «կովկասյան գև» չես:

— Ո՛չինչ, էլի մի բան մնացած կլինի մեջս «կովկասյան գևից»...

Ու նորից գրկելով Նադյային, սկսեց պատացնել սենյակում, հնացած նրա բողոքին:

XXXV

Մայրաքաղաքի ամպամած օրը բացվում էր դանդաղորեն: Ամպարովը զարթելով, ձգվեց անկողնում իր ճկուն, հաղթանդամ մարմնով, ապա հորանջեց աղմկով, զարթեցնելով Նադյային, որը վախենալով նրա կոշտ ու կոպիտ կատակներից, ձևացավ, թե քնած է:

Ամպարովը սկսեց մտաբերել իր տարօրինակ երազը,— ինչ որ մութը, նեղ փողոց եր... ինչ՞որ «մութը», խորհրդավոր մարդիկ էին վխտում իր շուրջը... և ոչ մի ելք չէր գտնում դուրս գալու համար...

Ու հանկարծ ասես էլեքտրական հաղորդումով, նա հիշեց իր երեկվա «արկածը», և հիշելով՝ համակվեց արտասովոր լրջությամբ.—դաղտնի ոստիկանին խփելը...դուցե և սպանելը.. կարո՞ղ է միթե անպատիժ անցնել... պարզ է, որ «նրանք» պիտի փնտռեն իրեն չորս աչքով և եթե ձեռք ձգեն, արժան չեն նստացնել այդ արկածը»...

Հակառակի պես այն հեկտոգրաֆը, որով տպագրել են ցույցին հրավիրող թռուցիկները, դեռ իրան մոտ է... Զի՛, հարկավոր է շտապել և շտապել...

Եվ նա վեր թռավ անկողնից ու սկսեց արագ հագնվել: Նա լվացվեց աղմկով՝ բազմաթիվ փնչոցներով, ապա սրբիչն առնելով, մոտեցավ հայելուն և մնաց ապշած, նկատելով իր «կանացի» դեմքը... Նա նոր հիշեց, որ երեկոյան ածիլել էր բեխերը՝ դեմքը փոխելու համար:

Մինչ նա լվացվում էր, Նադյան՝ օգտվելով հանդամանքից, որ Ամպարովը զբաղված է, շտապ հագնվեց ու սկսեց կարգի բերել սենյակը:

Ամպարովը կանգ առավ նրա դիմաց, ըստ սովորության՝ մատները քսելով այժմ դատարկ բեխատեղերին:

— Նադյա, գիտե՞ս ինչ՞ կա,— ասաց նա հառելով իր հայացքը սիրուհու դեմքին:

Նադյան՝ սովոր լինելով Ամպարովի անարխիական կյանքին ու վարմունքին, ակամա մտածեց, որ այժմ նա կասի՝ «ես այլևս քեզ չեմ սիրում և պիտի բաժանվեմ ընդմիշտ»... Բայց դրա տեղ նա լսեց ուրիշ խոսքեր:

— Նադյա, պետք է խմանաս, որ ինձ վտանգ է սպառնում — ասաց նա բոպեաչափ լռությունից հետո,— երեկոյան դաղտնի ոստիկանին այնպես խփեցի, որ ուշաթափվեց, դուցե և մեռավ... Բայց ո՞վ գիտե այդ չները շատ խորամանկ են, կարող են նույնիսկ սուտ մեռնել և հետո հարություն առնել: Իմ դեմ երևի նրանք մեծ հետախուզություն են սկսել... դու տեսնում ես՝ ինչպես եմ փոխել դեմքս,— ածիլել եմ նույնիսկ քո սիրած բեխերը... անհրաժեշտ է նույնպես մի շաբաթով հեռանալ քաղաքից... Այժմ ասեմ՝ ինչ է հարկավոր անել.— դու պիտի տանես այդ հեկտոգրաֆը և հանձնես Հաբեչատանցուն...

— Ո՞վ է այդ Հաբեչատանցին:

— Միթե՞ չես հիշում — մի անգամ ծանոթացրել եմ քեզ նրա հետ.— դա այն թխադեմ կովկասցի ուսանողն է... հասցեն կասեմ քեզ, կհանձնես և կտեղեկացնես իմ դրության մասին, այսինքն կպատմես գլխիս եկածը...

— Ինչ՞է, ինձ էլ՞ ես ուզում խառնել այդ վտանգավոր գործերին:

— Նաղյա, դա անպայման անհրաժեշտ է, հակառակ դեպքում կարող են լինել խոշոր թյուրիմացություններ... օրինակ՝ ինձ կարող են ձերբակալել և իմ պատճառով էլ քեզ կցել հեղափոխականների ցուցակին...

Նաղյան զիտեր, որ հակառակվելը չէր օգնել և տեսնելով, որ ուրիշ ելք չկա, հանեց իր պարենեղենի զամբյուղը, մեջը տեղավորեց լրագրում փաթաթած հեկտոգրաֆը, ու վրան էլ ձգեց՝ քողարկելու համար կաղամբի գլխի մնացորդը, մի կտոր հաց, գաղար և այլն, ապա հագնվելով՝ դուրս գնաց:

«Հաբեչատանցին»՝ այսինքն Նաղարյանը, շատ զարմացավ, ստանալով հեկտոգրաֆը և լսելով Ալմազովի հերթական արկածի մասին: Դա խախտում էր տրված հրահանգը՝ տպագրությունը տեղափոխել Շապոշնիկովի մոտ: Գործը բարդանում էր նրանով, որ Ալմազովը իր «արկածի» շնորհիվ կարող էր դաղտնի ոստիկանության հսկողության տակ լինել և այդ պատճառով էլ դուցե հետևել էին Նաղյային, թե ո՞ւր է գնում... Դա նշանակում էր, որ պետք էր, որքան կարելի է շուտ հեռացնել հեկտոգրաֆը:

Մտածելով, թե ո՞ւմ մոտ կարող է տանել այն, նա հիշեց իր նախկին տանտիրուհուն՝ Աննա Պետրովնային, որը մի բարի, կիսադրագետ կին էր, և չէր կարող կասկած հարուցել միանգամայն հեռու լինելով «քաղաքականությունից»: Այնտեղից կարելի էր տեղափոխել տպագրելու բնակարանը, որը դեռևս որոշ չէր:

Վճռելով երեկոյան մթնով տանել հեկտոգրաֆը, նա պահեց այն սպիտակեղենի պահարանում և գնաց համալսարան: Վերադառնալով ճաշից հետո, նա բացեց պահարանի արկղը, ստուգելու համար՝ այնտեղ՝ է թե չէ, ապա պառկեց անկողնի վրա ու սկսեց կարդալ լրագիրը:

Հանկարծ դուռը թխկացրին:

— Ձեզ ուզում է տեսնել Թաղային ոստիկանը:— ասաց տանտիրուհին:

Նաղարյանը չչմեց այդ լուրից, իսկույն ենթադրելով, որ եկել են խուզարկելու: Նա ուզում էր ինքը գնա ոստիկանի մոտ, բայց վերջինս անսպասելի եկավ տնկվեց նրա առաջ իր՝ ողջույց կարմրած դեմքով:

— Կարելի՞ է տեսնել ձեր սենյակը;— հարցրեց նա:

Նաղարյանի կասկածը հասավ իր գագաթնակետին.— «այլևս փրկություն չկա»,— մտածեց նա, հաղիվ կարողանալով թաքցնել իր շփոթությունը:

— Խնդրեմ,— ասաց նա, դուռը լայն բանալով — ցույց տալու համար, թե թաքցնելու բան չունի:

— Ձեզ մո՞տ է կատարվել դողդոջությունը — հարցրեց ոստիկանը, թղթապանակից հանելով ինչ որ գրություն:

— Այո՛,— պատասխանեց Նաղարյանը, զգալով այնպիսի թեթևություն. ասես ձգելով վրայից մի ծանր՝ չունչ սպառող բեռ: Նա հիշեց, որ մի շաբաթ առաջ իր սենյակից սպիտակեղեն էին գողացել և տանտիրուհին հայտնել էր ոստիկանությանը:

— Ո՞րտեղ էր պահվում սպիտակեղենը, նորից հարցրեց ոստիկանը:

Նաղարյանը նորից ընկավ տենդի մեջ, մտածելով, որ ոստիկանը մտադիր է խուզարկելու:

— Այս պահարանում — ցույց տվավ նա ձեռքով:

— Կարելի՞ է բանալ պահարանը...

«Վերջացավ ամեն ինչ»... անցավ Նաղարյանի մտքով, սրտի ուժգին բաբախումով նա բացեց պահարանի վերևի արկղը, որտեղ միայն սպիտակեղենն էր:

— Լավ, ուրեմն ես արձանագրություն կկազմեմ, իսկ դուք՝ պարոն Նաղարով, կդաք թաղային ոստիկանատուն՝ ստորագրելու համար:

Ու դրանով սպառելով իր այցելության նպատակը, ոստիկանը գնաց, նույն պաշտոնական քաղաքավարությամբ հրաժեշտ տալով, ու մեծ ուրախություն պատճառելով Նաղարյանին:

Այս բոլորն այնքան անսպասելի էր, որ Նաղարյանը դժվարանում էր հավատալ, թե ազատված է պատուհասից: Նա լսեց մուտքի դռան չրխկոցը, որ նշան էր, թե ոստիկանը գնաց, բայց թվում էր, թե նա էլի կվերադառնա ու կբացի հենց այն արկղը, որի մեջ պահված է հեկտոգրաֆը:

... Երեկոյան՝ մութն ընկնելուն պես Նաղարյանը տարավ այդ արկածալից գործիքը իր նախկին տանտիրուհու՝ Աննա

Պետրովնայի մոտ: Այնտեղից պիտի տանէին Լևոնյանի մոտ, որտեղ պիտի շարունակվեր «տպագրելը»:

XXXVI

Արդեն մի քանի օր էր, մեծ զգուշությամբ տարածում էին ցույցին հրավիրող թռուցիկները: Տարօրինակ զգացումներ էին շարժվում «տպագրիչների»՝ Նաղարյանի, Մարությանի, Նիկոլինի, Լևոնյանի և մյուսների մէջ, երբ նրանք էլ ստանում էին թռուցիկներ զանազան ընկերների միջոցով: Նրանք ժպտում էին, վերհիշելով այն լարված, տենդային ժամերը, այն ջղային, կասկածոտ զիշերները, երբ նրանք տպագրում էին այդ թռուցիկները: Այժմ նայում էին այդ թերթիկներին մի ուրախ զգացումով, որ իրանք են պատրաստել, ու իրանք էլ ցույցը կազմակերպողների շարքումն են...

Ցույցը պիտի կայանար մի շաբաթից հետո, բայց ժամկետից երկու օր առաջ լուր տարածվեց, թե հետաձգվում է տան օրով: Պահնորդական բաժնի համար դա հուսատու լուր էր, քանի որ այնտեղ հետաձգումը համարում էր նահանջի նշան: Սակայն երկրորդ ժամկետի նախորյակին նորից երևացին թռուցիկները և կասկածները վերացան:

Նշանակված օրը մայրաքաղաքի կենտրոնական հրապարակում՝ կեսորին մոտ արդեն խիտ բազմություն էր նկատվում: Ցուցարարները զալիս էին մեկ-մեկ, խուսափելով խմբվելուց, շրջում էին հրապարակում միայնակ կամ երկուսով, զրուցելով ոչ-քաղաքական, անմեղ հարցերի շուրջը:

Լևոնյանը եկավ Մարությանի և Նաղարյանի հետ: Տեղին մոտենալով, նրանք բաժանվեցին իրարից ու ամեն մեկն առանձին մտավ հրապարակ: Լևոնյանն անցնելով խիտ բազմության մէջ, նկատեց Պետրովին, բարևեց դլխի թեթև շարժումով, ու գնաց իբր թե դիտելու տաճարի շենքը, սակայն նրա մտածումները պտտվում էին մոտալուտ ցույցի շուրջը:

Հրապարակը միաժամանակ տաճարի ընդարձակ դավիթն էր: Կլասիկ ոճով կառուցած այդ շենքը հիշեցնում էր թեևերը լայն պարզած մի թռչունի. դմբեթն ասես թռչունի դլուխն էր իր մութ աչքերով դիտում հրապարակը, իսկ աջ ու ձախ կողմից հունական այունաշարքը եզերում էր կիսաշրջանով հրապարակը: Այունաշարքի եկեղեցու մուտքը դեռնից բարձր էր և քարե սանդուղքներով իջնում էր դեպի հրապարակ:

Լևոնյանը ցրիվ հայացքով անցավ այունաշարքի միջով, տպա հասնելով տաճարի դռներին, իջավ սանդուղքներով: Նորից անցնելով հրապարակով, նա հանդիպեց վրացի ընկերներին ու բարևեց, ուրախանալով, որ ծանոթների թիվն ավելանում է:

Հրապարակը հետզհետե լցվում էր մարդկանցով և դրա հետ էլ աճում էր սպասողական դրության անհամբերությունը: Զորս կողմը ոչ մի նշան չկար, որով կարելի լիներ ենթադրել, թե կառավարությունը որևե միջոց է ձեռք առել ցույցի դեմ.— շուրջը չէին նկատվում ո՛չ ոստիկաններ, ո՛չ զինվորներ: Սկսան փորձված ուսանողները նկատում էին բազմության մեջ որոշ մարդկանց, որոնց արտաքին մի քանի դծերից ենթադրում էին, թե դրանք դաղտնի ոստիկանության ագենտներ են և եկել են «դիտելու»:

Վերջապես ինչ որ շարժում նկատվեց տաճարի առաջ՝ քարե սանդուղքների վրա կուտակված բազմության մեջ: Բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի այդ կողմը: Մուլ աղմուկը փոխեց իր ընթացքը և հանկարծ մի հուժկու ձայն հնչեց վերևից: Մի ուսանող՝ խոժոռած դեմքով՝ դլխարկով նշան արավ ամբոխին ու սկսեց խոսել, չեշտելով ամեն մի բառը: Նրա խոսքերից շատերը չէին լսվում, բայց ձայնը հուդիչ ալիքներով համակում էր բոլորին:

Նա դիտեր, որ այն բոլորը, ինչ պիտի կատարվեր, չեր կարող երկար տևել, այդ պատճառով էլ իր խոսքը կարճ բռնեց ու վերջացնելով, բացականչեց,— ... Թող կորչի ինքնակալությունը... թող կորչեն ցարական օրենքները... կեցցե՛ պրոլետարական հեղափոխությունը:

Շրջապատի ամբոխը անմիջապես արձագանքեց, խառը կրկնելով լոզունդը, բացականչերը ծավալվեցին չորս կողմը, և այդ մոմենտին սանդուղքների վերևի շարքերից բարձրացան երկու կարմիր դրոշակ, բարձրացան նաև մի քանի խոշոր, կարմիր բշտիկներ, որոնցից կախված էին կարդոնե թերթեր, իսկ որոնց վրա խոշոր տառերով դրած էին լոզունդները՝ «Թող կորչի՛ ինքնակալությունը, կեցցե՛ ազատություն» և այլն: Դրոշակներն

ու կարմիր դնդերն ավելի բռնկեցին խիտ բաղմության բացականչերը, վերածելով մի հզոր աղմուկի:

Բայց հանկարծ այդ երիտասարդ կրծքերի բռնկումը փոխվեց մի ուրիշ աղմուկի.— ձիերի տրոփյունը խլացրեց ամեն ինչ.— կարծես դեռնի տակից փողոցն ու հրապարակը լցվեցին հեծելազոր զինվորներով: Նրանք դուրս եկան մոտակա խոշոր տներից, որտեղ նախորդք թաղնված էին՝ այնպիսի արագությամբ ու զրոհով, ասես պատերազմի դաշտում թշնամուն էին հետապնդում, և ոչ թե անզեն ցուցարարներին:

Մի րոպեում նրանք պաշարեցին մոտակա փողոցներն ու դբոհեցին դեպի հրապարակը: Հարբած, լպիրշ դեմքերով նրանք առաջ էին շարժվում, մտրակներով հարվածելով աջ ու ձախ: Հասնելով հրապարակին, առաջնորդող սպան հրաման արձակելով հանեց թուրը, նրան հետևեցին զինվորներն ու սկսվեց մի անմոռանալի տեսարան.— նրանք խփում էին թրերով աջ ու ձախ՝ ում պատահում էր, չխնայելով նույնիսկ կանանց:

Ցուցարարները խառնվեցին իրար, շարժվելով դեպի տաճարի շենքն ու հրապարակը շրջափակող կոլոննադան: Լսվում էին կանանց ճիչեր, ցասկոտ բացականչեր՝ «դահիճներ՛», «սրիկանե՛ր», «մարդասպաննե՛ր»...

Մի քանի հոգի՝ ուժեղ և հաղթանդամ ուսանողներից՝ փորձում են դիմադրել, ճգնում էին բռնել թրերը, արյունոտելով ձեռքերը: Բայց դժվար էր դիմադրել ձիաների ոտքերին:

Զինվորների եռևից փողոցները եկան ձիավոր ու հետևակ ոստիկաններ, օղակելով հրապարակը բոլոր կողմերից: Շարժվելու տեղ չունենալով՝ ցուցարարները խտացան սանդուղքների մոտ՝ սյունաշարքի մեջ: Բայց հարձակումը շարունակվում էր,մինչև որ ամբոխը կարողացավ քաշվել սանդուղքների վերևի աստիճանները, ուր չէին կարող բարձրանալ ձիերը:

Արյունը հոսում էր՝ որի թևից, որի երեսից ու դլխից, մի նոր տենդ բերելով ցուցարարների վրա: Կարծես արյան մեջ թշնամու խորհրդանշանը տեսնելով,նրանք անմոռանալի մի վճիռ էին ձգում սրտի մեջ՝ անհաշտ կռվելու՝ մինչև կյանքի վերջը կռվելու թշնամու դեմ...

Իր արյունալի դործից հաղեցած՝ ցարական դորքը փոխեց իր դիրքերը: Հետևակ և ձիավոր ոստիկանները ներսից շրջա-

յեցին ցուցարարներին, իսկ զինվորները շարվեցին հրապարակի շուրջը և փողոցներում: Այժմ հերթը հասավ ոստիկաններին. նրանք մտրակներով ներս խուժեցին ցուցարարների մեջ, հարձակվելով դլխավորապես «կենտրոնի» վրա, դուրս քաշելով դրոշակակիրներին, բացականչողներին: Դլխավոր նշանը դարձավ «արյունը».— նրանք մեկ-մեկու եռևից ձերբակալում էին վիրավորներին, որոնք նրանց հաշվով պետք է որ դեկավարներ լինեին:

Ցուցարարները հանդիպում էին ոստիկաններին ոչ միայն նշավակող ածականներով, այլև բռունցքներով: Վերջիններից ոմանք ընկնում էին ուժեղ հարվածներից, բայց ուժերն անհավասար էին. շարունակ ոստիկաններին օդնության էին հասնում նոր խմբեր:

Թիկնեղ դրոշակակիրը չէր դիջում ոստիկաններին, որոնք երեք հոդով տանում էին նրան.— թափահարում էր իր պահակներին, ու շարունակ կրկնում՝ «սրիկանե՛ր», «դաղաննե՛ր», «մարդասպաննե՛ր»: Նրա դեմքից, դլխից արյուն էր հոսում: Վերջապես նրան դուրս են քաշում բաղմությունից, իսկ նրա եռևից՝ ուրիշներին: Վիրավորների շարքը երևում է փողոցում, նրանց մեջ է և Ամազովը: Նրա աջ թևից ու դլխից արյուն էր կաթկթում. ձեռքերը նույնպես կարմիր էին, որովհետև կռվի ժամանակ նա շարունակ աշխատում էր բռնել թուրը և խլել սպայի ձեռքից: Նրան տանում էին երեք հոդով, բայց էլի նա մտքից չի հանում, որ պետք է փախչի, թե չէ կարող էին հարցաքննել և «հին ու նորը» իրար խառնել...

Ցուցարարների մի մասը մտավ եկեղեցի, որտեղ այդ ժամանակ պատարագ էր: Փոքրաթիվ աղոթողները, չիմանալով, թե ի՞նչ է կատարվում դրսում, զարմանքով նայում էին ներս խուժող ուսանողներին: Նրանց եռևից մտան և ոստիկանները: Թաղային ոստիկանը մոտեցավ քահանային և չշնչաց նրա ականջին, բացատրելով դործի էությունը: Քահանան իր մազոտ դեմքի խորքից նայեց ուսանողներին թույնոտ հայացքով ու դադարեցնելով պատարագը, փսփսաց մի քանի բարձրաստիճան մարդկանց հետ: Ապա թխսկանի նման իր շուրջը հավաքելով ժամասերներին, դուրս եկավ նրանց հետ եկեղեցուց: Խումբը՝ մոտ հիսուն հոդի, որը բաղկացած էր չինովնիկներից, պաշտոնաթող

գինվորականներից, վաճառականներից ու պառավ կանանցից, դուրս եկավ խոժոռած դեմքերով, ատելությամբ լի հայացքներ ձգելով ուսանողների վրա: Գնում էին պահակներով շրջապատված, թեպետ նրանց ոչ մի կողմից վտանգ չէր սպառնում:

Այժմ արդեն բոլոր ցուցարարները շրջապատված էին ոստիկաններով: Մեծ խմբերի բաժաններով, նրանց տանում էին թաղային ոստիկանատները: Գնում էին լայն շարքերով, շրջապատված ոստիկաններով: Եռևից պահակում էին ձիավոր գինվորները: Ցուցարարներն անցնում էին փողոցներով՝ խռնված ամբոխի հետաքրքիր հայացքների ուղեկցությամբ: Երբեմն երիտասարդ խմբերը ողջունում էին ձեռքի շարժումով կամ թաշկինակներով: Բազմությունը հետզհետե աճում էր ու շարժվում ցուցարարների հետ դեպի ոստիկանատուն:

XXXVII

Լևոնյանը քայլում էր շարքերի մեջ, զրուցելով իր կողքի անծանոթ ուսանողի հետ: Հանկարծ նա լսեց իր անունը, հետ նայելով, տեսավ Մելքայելյանին: Նա առաջ անցավ ու ընկավ Լևոնյանի կողքը: Կարոտով բարևեցին իրար, ասես շատ ժամանակ էր, չէին տեսնվել:

— Այդ ինչպես՞ եղավ, որ դու էլ ընկար մեջը,— հարցրեց Լևոնյանը զարմացած:

— Ես մաքով սկեպտիկ եմ, իսկ սրտով հեղափոխական մի իմ ընկերների հետ... Այս բոլորը տեսնելուց հետո կարելի է՞ր համբերել...

— Քեզ է՞լ դիպան հարվածները:

— Հա, բավականաչափ:

— Ո՞րտեղ էիր կանգնած ցույցի ժամանակ:

— Նախ և առաջ պետք է ասեմ, որ եկել էի օրիորդներիս հետ ու կանգնել դիմացի փողոցի բերանում: ... Հանկարծ մեր ետևը լցվեց զորքով, սկսեցին վեր հատել աջ ու ձախ... վազեցինք այս կողմը, բայց ընկանք օղակի մեջ... լավ է, օրիորդներին կարողացա ազատել...

Բայց Մելքայելյանը չպատմեց բոլորը—երբ գինվորները հարձակվեցին, փողոցի ամբոխը վազեց ձիանների առաջից: Մելքայելյանը կանգնած էր երկու օրիորդի հետ: Նկատելով ընդհանուր խուճապը, նա էլ հետևեց բոլորի օրինակին և նույնպես վազեց, մոռանալով ամեն ինչ: Բավականին տեղ վազելով, նա հանկարծ մոտեցավ օրիորդներին և հետ նայելով, տեսավ նրանց ու սոսկալի ամաչեց, որ ինքը նրանցից առաջ է վազել: Նա դանդաղացրեց քայլերը, ու հավասարվելով օրիորդներին, այժմ գնում էր նրանց հետ մի ընթացքով, չկարողանալով մոռանալ իր հակա-ապետական վարմունքը: Թվում էր, թե իր ներսում ինչ որ փլվեց, բացվեց մի հիմանդություն, որ մինչև այժմ թաղնված էր մնում...

— Էհ, հիմա ինչ կասես, սիրելի սկեպտիկ, ամեն ինչ շարժվում է, թե չէ ... հիշո՞ւմ ես քո վեճը Մարությանի հետ ...

— Այո՛, ամեն ինչ շարժվում է... կարող եմ ասել, որ այսօր մեջս ինչ որ բեկվեց, մխանդամից ինչ որ հասկանալի դարձավ...

— Լավ է, լավ է ... ասում էր Լևոնյանը, մաքով անդրադառնալով իր տրամադրության վրա.— լինում են մոմենտներ մարդուս կյանքում, երբ աշխարհայացքը բացվում է վարդի նման...Այլևս մոռանում ես քեզ սպառնող վտանգի՝ բանտի ու աքսորի մասին, ուզում ես տրվել «դորձին» ամբողջությամբ...

... Երթը առաջ էր գնում յուրահատուկ, ինքնաբուղխ հանդիսավորությամբ, հետզհետե ավելի դրավելով հասարակության ուշադրությունը: Վերջապես կանգ առան մի հին, հասարակ շենքի առաջ, որի պղտոր-դեղին, մաշված դռներն ու սանդուղքները և մի առանձնահատուկ «կաղյոնի» հոտը վկայում էին, որ դա վոստիկանատունն է: Դարպասի երկաթե դուռը ճռռալով բացվեց և ցուցարարները մտան ոստիկանության բակը: Կեղտոտ, անխնամ թողած այդ բակում տեղ-տեղ թափված էին դանդաղ հին իրեր, կոտրված աթոռներ, սեղաններ ու ծռված պահարաններ: Այժմ մոտ օրերին եկած ձյունը ծածկել էր այդ բոլորը սպիտակ սավաններով և մաքուր տեսք էր տվել:

Դրսում մնացին պահակող գինվորներն ու ոստիկանները,

իսկ բակում մի կողմ կանգնած էր հաղթանդամ մարմնով մի զինվոր, իսկ մյուս կողմը՝ մի ոստիկան։

Ոստիկանատանը պիտի ցուցակագրեին ձերբակալվածներին ու հետո ուղարկեին բանտերը, բայց այսօրվա ցուցարարների հաղարավոր բազմության համար դժվար էր տեղ գտնել, ուստի ոստիկանատանը բավականին երկար պահեցին նրանց։

Գալուն պես ուսանողները իրարանցում մտցրին բակի մեջ։ Զյունը արոտվեց ոտների տակ, բացելով կեղտոտ սալարկը։ Շարժվեցին տեղից աթոռները, սեղանները, այս ու այն խմբից լսվեցին երգի ձայներ։ Մի ռուս ուսանող, որին բոլորը սկսեցին Կոլյա անվանել, ձեռնարկեց իր սրամիտ կատակները — նա մի խումբ ուսանողների հետ քաշվեց բակի անկյունը ու սկսեց իր զավեշտական «պատարագը»։— ինքը՝ ձգելով վրան շուռ տված վերարկուն, քահանայի դերն էր կատարում, և երգում էր եկեղեցական եղանակով, իսկ խումբը կրկնում էր նրա արտասանած վերջին տողերը։ Թե երգիչները, թե լսողները ծիծաղում էին, որովհետև աղոթքի բովանդակությունը երգիծաբանական էր և շատ հեռու էր կրոնից ու եկեղեցուց։

Պահակ կանգնած ոստիկանը, լսելով եկեղեցական եղանակը, կարծեց, թե ուսանողներն աղոթում են, ու մոտեցավ նրանց, որպեսզի կարողանա լավ լսել, բայց քիչ անց դարմացած բացականչեց.

— Ա՛յ քեզ բան... էս էլ քեզ ուսում առած մարդիկ։

Հանկարծ բոլոր ձայները խլացրեց մի հզոր բարիտոն։ Երգողը ռուս մուժիկի դեմքով մի ուսանող էր, լայն մորուքով, թիկնեղ ու պնդակազմ։ Նա բարձրացել էր սեղանի վրա ու երգում էր իր հուժկու ձայնով Նեկրասովի տողերը.

Назови мне такую обитель,
Я такого угла не встречал,
Где бы сеятель твой и хранитель,
Где бы русский мужик не страдал.
Стонет он по полям, по дорогам,
Стонет он по тюрьмам, по острогам,
В рудниках, на железной цепи...

Երգչին միանում են հետզհետե բոլորը, ասես վտակներից

գոյանում է մի վիթխարի գետ, որն իր անդիմադրելի հոսանքով ծփում է անծայր դաշտերի մեջ... Երգը ցնցում է սրտերը, միացնում բազմալեզու այս հասարակությունը մի խոր զգացումով, մի ընդհանուր տառապանքից բղխած երգով...

Ոստիկանատան ստորին ծառայողները, բոպեապես դադարում են դրելուց, ականջ դնելով այս արտակարգ երաժշտության. նրանցից երկուսը նույնիսկ դուրս են գալիս, նայում ուսանողին ու զարմանում, թե ինչո՞ւ նա, ունենալով այդպիսի հզոր ձայն, չի երգում բեմի վրա, և դրա փոխարեն այս վերտանգավոր ցույցի մեջ է խառնվում...

Բակում պահակող զինվորը ոստիկանատուն գալու բոպեից ուշադրությամբ դիտում էր ուսանողներին և կարծես չէր հավատում իր աչքերին։ Նրան՝ ինչպես և բոլոր զինվորներին դուրս բերելուց առաջ հարբեցրել էին ու ամենավատ բաներ պատմել ուսանողների մասին... Թշնամիներից, դավաճաններից ու մարդասպաններից էլ վատ պետք է լինեին այս մարդիկ, բայց ինչու՞ նա այդ չի նկատում... Գինովությունն անցնում է, ապշամուղջը վերանում է աչքերից ու նա պարզ տեսնում է իրերը... միթե՞ սրանք վատ մարդիկ են... չէ՛, էդպես բան չի երևում... Հանկարծ նրա ականջին հնչում է ուսանողի հուժկու ձայնը... ասես շա՞տ վաղուց ծանոթ ու իր սրտից բղխող մի երգ է լսում... նրա ներսը կարծես ինչ որ հալվում է... չէ՛, սրանք լավ մարդիկ են— մտածում է նա,— «հոգեկան» մարդիկ են... չէ, ետեղ մի ուրիշ բան կա, որ ես չեմ հասկանում...

Ու նա լսում է երգը մի ծարավի զգացումով, որպես ամռան դետինը ծծում է անձրևի ջուրը... ինչ որ լավ բան է մտնում իր էության մեջ. «ինչ որ լա՛վ է... լա՛վ է...»

Նրան սթափեցնում է ուսանող Պետրովը, որը մոտենում է Լևոնյանի հետ։

— Հ՛ը, բրատեց, (եղբայր) ո՞նց է, հավանո՞ւմ ես երգը... հա՛, իմացի՛ր, դա մեր ժողովրդի մասին է...

— Հա, շատ լավն է, սրտաշարժ երգ է...

Նկատելով, որ զինվորը խոսելու տրամադիր է, Պետրովը շարունակում է.

— Տեսնու՞մ ես, լավ բաները շատ կան աշխարհում... բայց ինչո՞ւ էլք ծեծում ուսանողներին:

— Է՜հ, բրատցի (եղբայրներ), ի՞նչ ասեմ,— հառաչեց գին-վորը, կարծես չկարողանալով խոսել: Ու հանկարծ նա արտասվեց առատ արցունքներով:

— Բրա՛տցի, (եղբայրներ), ասում էր նա,— միթե՞ ես չեմ հասկանում... մենք ծեծեցինք անդեն մարդկանց, մենք ծեծեցինք կանանց... ներե՛ցեք եղբայրներ... մենք գազաններ չենք... միթե՞ մենք չենք հասկանում... բայց մեզ հրամայում են, մենք էլ կատարում ենք...

Ու այսպես խոսելով նա լացում էր, թրջելով դեմքը արցունքներով: Պետրովն ու Լևոնյանը, հուզվելով, այլևս խոսք չէին գտնում նրան ասելու:

Փոքր ինչ հեռանալով գինվորից, Պետրովն ասաց Լևոնյանին.

— Ռուս գինվորը՝ այդ գարավոր սարուվը գղջում է իր արածը, լացում է իր սիրուց՝ դեպի մարդիկ, դեպի ժողովուրդը... սա մեր այսօրվա ամենամեծ հաղթությունն է... Կգան օրեր, և նա ուրիշ կերպ կխոսի իր գահիճների հետ...

... Երգը հոսում էր լայն ալիքներով, ցնցում էր սրտերը, միացնում այս բազմալեզու հասարակությունը, իսկ պահակ գինվորը՝ այդ հսկա երեխան՝ լացում էր առատ արցունքներով...

XXXVIII

Բանտը դանվում էր մայրաքաղաքի ծայրին և հատկացրած էր այն բանտարկյալների համար, որոնց ուղարկում էին Սիբիր: Բայց այս անգամ արտակարգ կարիքը ստիպել էր ամբողջ երկրորդ հարկը դատարկել ցուցարարներին տեղավորելու համար: Զերբակալվածներին բերին երեկոյան դեմ. նրանք հոգնած էին թե ֆիզիքապես՝ երկար քայլելուց, և թե հոգեպես՝ օրվա ցնցող տպավորություններից ու երկար սպասողական դրությունից:

Առաջին երեկոն անցավ հանգիստ. բոլորի տրամադրությունները դեռևս փակ էին, և վերահսկիչները ենթադրեցին,

թե ուսանողները՝ չնայած իրանց հանդուգն ցույցին, խաղաղ մարդիկ են և հեշտությամբ կենթարկվեն բանտի ռեժիմին: Մեծ մասը նստած կամ պառկած բանտային մահճակալների վրա, խորհում էր օրվա դեպքերի շուրջը: Ոմանք էլ փոքրիկ խմբերով այս ու այնտեղ խոսում-զրուցում էին, իրար հաղորդելով այդ օրվա ցույցի մանրամասնությունները: Այս նոր, արտակարգ պայմաններում անծանոթ մարդիկ զարմանալի արագությամբ մտերմանում էին իրար: Երբեմն որևէ անկյունում հանկարծ բռնկվում էր վիճաբանություն,— այստեղ իրար էին բախվում հակառակ հայացքները: Յուրաքանչյուր կամերայում կային մի երկու ուսանող, որոնք մասնակցել էին ցույցին իրանց համոզմունքի միայն մի մասով, և դալով բանտ, անխուսափելի պիտի բախվեին դերիչխող հայացքների հետ: Սակայն օրերի ընթացքում այդ սուր ծայրերը վերանում էին, տեղի տալով ընդհանուրին համակող հեղափոխական հոսանքին:

Բանտարկվածների ճնշող մեծամասնությունը կազմում էին ուսանողները, բայց կային և փոքրաթիվ ինտելիգենտներ: Բոլորը բաժանված էին ըստ կամերաների, որոնց երկաթե ցանցավոր դռները բացվում էին դեպի ընդհանուր միջանցքը:

Լևոնյանը՝ ասես մի նոր աշխարհ ընկած հետաքրքրությամբ դիտում էր իր շուրջը, մոտենում զրուցող խմբերին, երբեմն մասնակցում խոսակցության: Կամերայի մի անկյունում նա անսպասելի հանդիպեց մի տարօրինակ վեճի: Այնտեղ իրար էին բախվել մարքսիստական հայացքները մի «տոլստոյականի» խաղաղ ու «անչար» մտքերի հետ:

Ակնոցավոր, դյուրաշարժ մարքսիստ ուսանողը լսում էր իր ախոյանին պառկած, մեկ-մեկ հեգնական ռեպլիկներ տալով, իսկ երբ տոլստոյականը վերջացնում էր իր առարկումը, նա արագ շարժումով նստում էր մահճակալի վրա և կտրուկ դարձվածքներով հարվածելով իր ախոյանին, նորից պառկում: Տոլստոյականի լայն դեմքը՝ իր դուրս ցցված այտոսկրներով, աչքերի խորը փոսերով ու հաղիվ նկատելի, ասես ճխլած քթով չէր համապատասխանում իր խաղաղ ու անչար մտքերին.— Նա կարծես բարկացած էր ամբողջ աշխարհի վրա:

— Միթե՞ հասկանալի չէ, — ասում էր մարքսիստը —դուք հենց այսօրվա ցույցին մասնակցելով ինքներդ ձեզ հակասում

ենք,— եթե ուզում էիք չարին չհակառակվել, պիտի նստեիք տանը և աղոթեիք...

Շրջապատողները ժպտում են, իսկ տոլստոյականը վիրավորվում է.

— Նախ դուք զուր եք հեղնում, ես չեմ աղոթում, իսկ երկրորդը՝ սա խաղաղ բողոքի ցույց էր:

— Ո՛վ սուրբ միամտություն,— ասաց ակնոցավոր ուսանողը,— տեղից վեր թռչելով — ցարական Ռուսաստանում խաղա՞ղ բողոք... Թափվող արյունը միանգամայն վկայում էր ձեր ասածը...

Իրար արագ հաջորդող հարվածներն ու հեղնանքը խոպան ջղայնացրին «տոլստոյականին», նա մեկ վեր էր կենում տեղից, մեկ նստում, ինչ որ բացատրություն տալիս, որոնք ժպիտ էին բերում շրջապատող ունկնդիրների դեմքին: Նա մի քանի անգամ փորձեց դադարեցնել վեճը, բայց այդ նրան չէր հաջողվում.— հակառակորդը նորից սկսում էր ռմբակոծել, ջղայնացնում էր և հարկադրում առարկելու:

— Մենք միմյանց չենք հասկանում.— ասաց վերջապես հուզված «տոլստոյականը» ու փնթփնթալով հեռացավ վիճաբանից:

— Մարդ չի իմանում, թե ո՞րտեղից են գոյանում այս զավեշտական հայացքները,— ասաց նրա ետևից ակնոցավորը:

Օրերի ընթացքում երկու հարևանների այդ վեճը շարունակվում էր, բայց հետզհետե մաշվելով ու մեղմանալով, հնչելով կամերայի անկյունից, որպես մի սովոր ու հաճախ կրկնվող երաժշտություն: Տոլստոյականը թեպետ և դանդաղ, բայց ստիպանաբար զիջում էր իր դիրքերը:

Լևոնյանը մոտեցավ Միքայելյանին:

— Ի՞նչ ես պառկել ու աշխարհիս դարդը մեջդ առել.— հարցրեց նա:

— Մտածում եմ մոտիկ անցյալի մասին...

— Այ՞սինքն:

— Այսօրվա դեպքերի մասին... ինչ՞ ես կարծում Սուրեն, ինձանից հեղափոխական դուրս կգա՞...

— Ինչո՞ւ չէ:

— Ուրեմն դու կարծում ես, որ իմ «սկեպտիկ» անունը կվերանա՞ ինձանից.

— Դու մոռանում ես, որ արդեն հեղափոխության մեջ ես... եթե այժմ քեզ լոկ համակրող ես համարում, այսուհետև կլինես իսկական դիրքերում...

Միքայելյանը նստեց մահճակալի վրա:

— Գիտե՞ս, Սուրեն, ինչ դժբախտ ուղեղի տեր եմ ես...— ասաց նա — սա ուղղակի մի դժբախտություն է ինձ համար... հաղիվ մի դաղափար մտնում է մեջս, շատ անգամ ուրախությամբ ներս եմ առնում, մի քանի շաբաթ պատրանքի մեջ ընկնում, թվում է թե հենց այս է, որ կա, բայց անցնում է ժամանակը, ասես ինչ որ անհայտ ուժ քանդում է այդ դաղափարի տակը ու մեկ էլ տեսնում եմ՝ չուռ եկավ ամեն ինչ... նորից «սկեպտիկը» շողշողում է աչքիս զարդարուն օձի նման և նորից ընկնում եմ տատանման մեջ:

— Տատանման շրջանն արդեն անցած պետք է համարել... մենք այժմ կանգնած ենք հեղափոխության մեջ... մենք նրան կտանենք, նա մեզ կտանի...

Ընկերները պառկեցին մահճակալների վրա և ցածր ձայնով զրուցում էին: Շուտով պառկեցին բոլորը: Կամերան խաղաղվեց. խուլ լսվում էին միայն խոմփոցի ձայներ:

XXXIX

Առավոտը բացվեց արտակարգ լույսով.— արևը հյուսիսի ճմեռվա այդ հաղվադյուտ հյուրը, մի ուրախ զգացում բերավ հետը, թեպետ նայում էր ոչ թե պատուհաններից, այլ մոտակա շենքերի տանիքներից: Բոլոր բանտարկյալները փութկոտ վեր կացան, կարծես զարմանալով, որ բանտումն են գտնվում, սպասելով շուտափույթ արձակման:

Թեյից հետո, ասես խոսքը մեկ արած՝ բոլոր կամերաներում սկսվեց հետզհետե աճող մի դրոհ՝ բանտի իշխանների դեմ: Առաջին հարցերը փոքր էին.— վերահսկիչը մոտենում էր կամերաների երկաթե դռներին ու նկատողություն անում, հիշեցնելով, որ արգելված է խմբվել դռների մոտ: Այդ նկատողությունները կրկնվեցին մի քանի անգամ, սակայն ոչ մի հետևանք

վանքի հիասան. խմբվելը շարունակվում էր նույն թափով: Այնուհետև վերահսկիչները նկատողություն էին անում, որ չի կարելի բարձր խոսել, աղմկել, երգել, բայց նրանց ասածները դուր էին անցնում: Արդելքները ավելի էին գրգռում ուսանողներին. նրանք նորանոր պահանջներ էին դնում — պահանջում էին՝ թույլ տալ կաղ պահպանելու մյուս կամերաների հետ նամակագրությամբ, բայց վերահսկիչները խոժոռած դեմքով պատասխանում էին թե արգելված է: Սակայն շատ չանցած՝ այդ արգելքների դիմաց բարձրացավ այնպիսի աղմուկ, որ վերահսկիչները չդիմեցին.

— Պահանջո՞ւմ ենք... պահանջո՞ւմ ենք,—լսվում էր բոլոր կամերաներից, թնդացնելով բանտը արտասովոր աղմկով:

Վերահսկիչները՝ գլուխները կորցրած վազվզում էին այս ու այն կողմը, զնդացնելով բանալիները, մոտենում էին կամերաների դռներին, սպառնում պատիժներով, բայց չէր օգնում: Շուտով աղմուկը փոխվեց կոլեկտիվ երգի — դա հայտնի «բանվորական մարսելյոզն» էր, որի հնչյունները բանտի պատերի մեջ պատմական երեվույթ էին: Ահաբեկված վերահսկիչներն իջան ներքև՝ դրասենյակը, «զեկուցելու» բանտապետին, բայց նա էլ արդեն չշմած էր այդ մասսայական ձայնից և ինքն էլ չգիտեր, թե ինչ պետք էր անել: Նա վախենում էր, թե ուսանողների բողոքը կարող է վարակել և քրեական հանցավորներին և դրանով կարող է ծագել բանտում մի ընդհանուր «բունտ»: Այդ պատճառով նա դիմեց զիջելու տակտիկային և հրահանգեց վերահսկիչներին «մի կերպ յոլա գնալ» ուսանողների հետ, աշխատել չգրգռել նրանց:

Առաջին օրը թույլ տվին նամակագրություն պահպանել կամերաների մեջ: Հետևյալ օրը նույն ընթացքով պահանջ դրվեց, որպեսզի թույլ տան հյուր գնալու մի կամերայից մյուսը: Թեթև դիմադրությունից հետո այդ էլ զիջեցին, չենթադրելով, որ դրան հետևելու են ուրիշ «ազատություններ»: Երթևեկությունը այնքան հաճախ էր լինում, որ վերահսկիչները՝ հոգնելով դռների անընդհատ բացելուց ու կողպելուց, վերջապես բաց թողին կամերաների դռները: Այժմ արդեն ամեն մեկը կարող էր ազատ դուրս գալ միջանցք, այցելել բոլոր կամերաները: Մնում էր փակ միայն ընդհանուր միջանցքի այն դուռը,

որը տանում էր դեպի մուտքի սանդուղքները: Դրանով առժամանակ վերականգնեց խաղաղությունը. բանտապետը վերջնականապես համոզվեց, որ ուսանողների այս բազմությունը չի կարող սանձել և հետագայում աշխատում էր ամեն ինչ անել համաձայնությամբ:

Երրորդ օրվանից կյանքը մտավ իր յուրահատուկ, բանտային հունի մեջ, թեպետև բանտային կանոնների մեծ մասը խախտված էր: Ուսանողների մեծ մասը՝ պառկած մահճակալների վրա, կարդում էր: Այս կյանքում մեծ տեղ էր բռնում ընթերցանությունը. ամեն մի գիրք, որ ստացվում էր դրսից, անցնում էր ձեռքից-ձեռք և կարդացվում ագահությամբ: Տեղ-տեղ նկատվում էին չափազանց շուրջը խմբված ուսանողներ, որոնք կամ մասնակցում էին խաղին կամ խորհուրդներ տալիս խաղացողներին: Մի քանի ուսանողներ էլ՝ իրանց թափառական բնավորության համեմատ, անցնում էին կամերայից կամերա, ծանոթանում սրա նրա հետ, երբեմն երկար ժամերով նստում այս ու այնտեղ:

Կամերաների դռների բացումն անմիջապես ստեղծեց մի նոր կոլեկտիվ կյանք: Շուտով սկսվեց հրատարակվել մի ձեռագիր թերթ՝ «Ազատության ձայնը» անունով: Խմբագրությունը ընտրվեց բոլոր կամերաներից և անմիջապես գործի անցավ: Ինչ խոսք, որ թերթը հրատարակվում էր ազատ, առանց որևե ցենզուրայի: Բանտի վարչությունը գիտեր թե չգիտեր թերթի մասին, սակայն ոչ մի արգելք չէր դնում ուսանողների առաջ: Երբ թերթի համարը պատրաստ էր լինում, խմբագրության անդամները հերթով անցնում էին կամերայից-կամերա և բարձրանալով տաբուրետի վրա, կարդում էին սկզբից մինչև վերջը: Ունկնդիրները շատ ջերմ վերաբերմունք էին ցուցադրում, ծափահարությամբ ողջունելով թերթի հաջող գրվածքները:

Առաջին համարում մեծ խանդավառությամբ ընդունվեց մի ուսանողուհու բանաստեղծությունը, որը գրված էր ցույցի անմիջական տպավորության տակ և այլաբանորեն՝ տալիս էր հեղափոխության պատկերը:

Лес рубят,—молодой, свеже-зеленый лес,
А сосны старые понурились угрюмо

Безмолвные глядят в немую даль небес
Лес рубят... Потому ль, что рано он шумел
Что на заре будил уснувшую природу?
Что молодой листвой он слишком смело пел
Про солнце, счастье и свободу?
Лес рубят... Но земля укроет семена
Пройдут года и мощной жизни силой
Поднимется борцов земная стена, —
И снова зашумит над братской могилой...

Այդպես ստեղծվում էր մի նոր կոլեկտիվ կենցաղ, որն իր հերթին ավելի ու ավելի էր խորացնում իր ազդեցությունն առանձին անհատների վրա: Թերթը հետզհետե ուժեղացնում էր քաղաքական սատիրան, երբեմն տալիս էր կարիկատուրներ, որոնք հերթով փակցվում էին բոլոր կամերաներում:

Երեկոները ուսանողներից մի քանիսը հերթով զրույց էին կազմակերպում գիտական հարցերի շուրջը, գլխավորապես տնտեսագիտությունից կամ գրականությունից:

Երբեմն ճաշից հետո ուսանողները խմբվում էին ընդհանուր մուտքի տակ ցանցավոր դռան առաջ, իսկ մի տաս քայլի վրա, դռան մյուս կողմը հավաքվում էին ուսանողուհիները և այդպես՝ թեկուզ հեռվից, նրանք կարողանում էին խոսել, նորություններ հաղորդել, սրամտություններով համեմելով ամեն ինչ ու ժպիտներով հեռանում հանդիպման վայրից:

Արտաքուստ այս կյանքը հարուստ չէր դեպքերով:—առավոտը վաղ Միշկան բերում էր եռացրած ջուրը Թեյի համար: Միշկան քրեական հանցավորներից էր և ծառայում էր «քաղաքականներին»: Նա էր մատակարարում ամեն ինչ, երբեմն հետևում էր իր օգնականին, որը նույնպես «քրեական» էր.— բերում էր ճաշը, ընթրիքը, ծխախոտը և մի քանի ուրիշ ապրանքներ՝ խանութից: Միշկան ուսանողների ընդհանուր սիրելին էր և ինքն էլ սիրով կատարում էր նրանց բոլոր պատվերները,— կապ էր պահպանում քրեականների հետ, տանում էր ուսանողների նվիրած ծխախոտը, երբեմն էլ ծպտյալ լուրեր էր բերում՝ «դրսից»: Նա իր բարի դեմքով և բանտային երկար դորշ-դեղտի մեջ ավելի աբեղայի էր նման, քան քրեական հանցավորի. շատերը դարմանում էին, թե ի՞նչ բերմունքով է նա ընկել բանտը, բայց երբ հարցնում էին, նա խոսքը կտուրն էր ձգում.

— Է՛հ, պատահեց էլի, իմ բաղդն էր... նա սիրում էր խոսել, միայն ոչ իր կյանքից. բայց վախենում էր խոսքի բռնվել, որովհետև վերահսկիչները խստիվ արգելում էին այդ:

Առանձնապես ուշադրավ էր Միշկայի դեմքը, երբ նա ժամի 6-ին բերում էր այսպես կոչված «ընթրիքը»... դա լինում էր միշտ նույն կերակուրը—«մաննայա կաշան»՝ մանրահատիկ ճավարի ապուրը, որն անասելի անհամ էր, այդ պատճառով էլ ուսանողներից ոչ ոք չէր վերցնում: Միշկան իր օգնականի հետ բերում էին լիքը կաթսան ու դնում կամերայի դռների մոտ: Նա ներս էր նայում ու փոքր ինչ սպասելով, հարցնում էր.

— Հը՛, ցանկացողներ չկա՞ն...

Միշկայի դեմքին խառը զգացումներ էին շարժվում,— մի կողմից նա ուրախ էր, որ ուսանողները հրաժարվում էին վերցնելուց,— ուրեմն կերակուրը կմնար «քրեականներին», որոնք ուրախությամբ վայելում էին ապուրը. դե Միշկան էլ նրանց հետ կօգտվեր: Բայց մյուս կողմից էլ նա տխրում էր, որ ուսանողները չեն արձագանքում իր ծառայությանը... «լավ չէ, գոնե մի քանի հոգի վերցնեին» — մտածում էր նա:— այնպես էր թվում, թե ուսանողները նեղացած են իրանից:

Կեսօրին մոտ յուրաքանչյուր կամերայի բանտարկյալներին խմբովին դուրս էին բերում բակը՝ զբոսնելու: Կարճատև էր լինում այդ զբոսանքը, բայց միշտ նոր լիցք էր տալիս, ասես նոր կապ էր հաստատում դրսի «հրաշալի» աշխարհի հետ: Այս քառորդ ժամերը Լևոնյանի և Միքայելյանի համար ռոմանտիկ զեղումների բոպեներն էին. նրանք խոսում էին իրանց ապագա գործունեության մասին, նոր կարդացած գրքերի՝ վեպերի մասին: Դուրսը գեղեցիկ ցուրտ էր. նրանք քայլում էին ձյունի վրայով, բայց նրանց սրտում մի նոր գարուն էր վերթում, որը խոստանում էր ապագայում մի նոր, արտակարգ կյանք: Այդ կյանքը պատկերանում էր լի խանդավառ գործունեությամբ, անձնազոհ սիրով դեպի ժողովուրդը՝ շրջապատված զաղափարակից ընկերներով...

Ընկնելով այս կյանքի մեջ, Լևոնյանը ասես բեռնաթափ էր եղել ինչ որ կաշկանդող ծանրությունից: Նրան այժմ համա-

կում էր մի հեղափոխական ձգտում, որը դալիս էր հենց կյանքից, նրա շարժումից։ Վերհիշելով իր նոր անցած դաղափարական փնտռումները, նա զարմանում էր, որ իր աշխարհայացքի դուռը թվում էր փակված, բայց դեռ այդ դուռը չբացված, բացվեց պատուհանը... կյանքը, շարժումը բերեց իր խսկական աշխարհայացքը...

Ուրիշ կերպ էր անդրադառնում բանտը Միքայելյանի վրա.— սկզբի օրերին նա դժվարությամբ էր կարողանում ծածկել իր մտատանջությունը՝ որ բանտը, աքսորը կարող են զրկել նրան ուսումից, «կործանել» իր կարերան... ի՞նչ էր սպասում նրան կյանքում,— մի՞թե նա կդիմանա այդ զրկանքներին, այդ տառապանքին... Մյուս կողմից էլ, վերլուծելով ինքն իրան, նա զանում էր, որ իր մեջ չկա ուժեղ ձգտում դեպի հեղափոխությունը.— ի՞նչ կարող է նա անել այդպիսի լոկ համակրական վերաբերմունքով... Սակայն անցնող օրերը հետզհետե տանում էին իրանց հետ այդ մտքերը և ամրապնդում հեղափոխական տրամադրությունը։ Նախ նա իր միջից դուրս վանեց կասկածներն իր ապագայի վերաբերմամբ— այսքան մարդիկ գնում են մի գծով... եթե սրանք հաշվի չեն առնում անձնականը և տալիս են իրանց կյանքը ժողովրդին, ինչո՞ւ նույնը չի կարող անել և ինքը...օրեցօր՝ թե իր տրամադրությամբ, թե իր մտքերով նա անընդհատ մոտենում է հեղափոխությանը. նա այժմ իրան չէր զատում այս ընդհանուրից, ձգտում էր նույն ուղիներով...

Երբեմն նա և Լևոնյանը կարդում էին նույն գիրքը ու երկար խոսում դրա շուրջը. այդ զրույցների ժամանակ, թվում էր, թե իրանց կյանքը և դաղափարները այնպես ներդաշնակ դրախառնվում են իրար, խոստանալով ապագայում մի վեհ գործունեություն...

XL

Օրերն անցնում էին միօրինակ. բանտի կյանքը դարձել էր սովորական, ասես երկար ամիսներով էին ապրել այնտեղ։ Աչքը սովորել էր կամերաների պատերի դորշ գույնին, հատ քթանով ծածկած մահճակալների շարքին, աստաղից կախված հասարակ կերոսինի լամպին, որը երեկոները լուսավորում էր կամերան պղտոր-դեղին լույսով... Սեղանի վրա նկատվում էր մի քանի թերթի թղթեր, մի քանի գրքեր, ու թափված ծխախոտ ու մոխիրը։ Մի անկյունում երևում էր հասարակ, փոքրիկ թանաքամանը, իսկ դրան կից ափսեի վրա երշիկի և հացի մնացորդները։ Օդը ծծված էր ծխախոտի ծխով, ծծված էին այդ հոտով նաև բոլորի շորերը։ Ով առաջ չէր ծխում, այժմ դարձել էր պրոֆեսիոնալ ծխող։

Օրեցօր ավելանում էր շախմատ խաղացողների թիվը, կազմակերպվում էին տուրնիրներ—ավելանում էին դրսից ստացված գրքերը, երևան էին դալիս հաստավոր անտեսապլիտական, փիլիսոփայական գրվածքներ։ Մի քանիսը անբաժանելի կպչում են ընթերցանության։

Արդեն կարելի էր ասել, որ ուսանողները ոչ միայն ծանոթացել էին իրար, այլև ուսումնասիրել.— դիտեն ով ինչ սովորություններ ունի, դրա համեմատ էլ իրար համակրողները լրբար էին ձգտում և ավելի երկար զրուցում միմյանց հետ։

Բանտի կյանքում պայքարով շատ բան էր ձեռք բերած. բայց կար մի բան, որի բացակայությունը ոչ մի կերպ չէր կարելի լրացնել.— դա աղատությունն էր։ Աղատությունը... նա ամեն օր հիշեցնում էր իր մասին, կանչում էր դեպի դուրս, դեպի «կյանքը»... իսկ դրսի կյանքն այժմ թվում էր ոչ առաջվանի նման, այլ ավելի դրավիչ. թվում էր, թե այնտեղ ամեն ժամ մեծ փոփոխություններ են կատարվում՝ մեկը մյուսից հետաքրքիր։

Օրերն անցնում էին և աղատությունն ավելի հնչեցնում էր իր ձայնն ամեն կողմից. ու դրա հետ աճում էր մի խուլ բողոք։

— Սա ինչ կամայականություն է,— ասում էր մեկը.— ե՞ր պիտի մեզ արձակեն...

— Պետք է պահանջել վերջապես, որ պարզեն, թե ե՞ր են մեզ արձակելու...

Շուտով այսպիսի առանձին խոսակցությունները վերածվեցին մի ընդհանուր բողոքի։ Սկսվեցին ժողովները կամերաներում, և բոլորը եկան մի եզրակացության՝ որ պետք է բանտապետի միջոցով կանչել ներքին գործոց մինիստրի օգնականին՝

պարզելու համար, թե ո՞րքան ժամանակ է տևելու բանտարկությունը:

Բանտապետը հևոցով բարձրացավ վերև և ներկայացավ ուսանողներին: Նրա կլոր, դիրուկ դեմքը արտաքուստ թվում էր հանդիստ, բայց ներքուստ մեծ հուզմունքի մեջ էր. նա հաճախ ասում էր ինքն իրան՝ «մինչև այս ուսանողներից կազատվեմ, իմն ինձ կհասնի»... Այժմ էլ նա մտածում էր, թե ո՞վ դիտե ի՞նչ պատուհաս է սպասում իրան...

Նա ազատ չունչ քաշեց, երբ իմացավ իրան կանչելու նպատակը.— նա կարող էր հանդիստ լինել, քանի որ հարցը ոչ թե իրան էր վերաբերում, այլ ներքին գործերի մինիստրության: Նա քաղաքավարի և զգուշ էր իր խոսակցության ժամանակ, և խոստացավ ուսանողների պահանջը տեղ հասցնել:

Երեք օրից հետո հայտնվեց ներքին գործերի մինիստրի օգնականը իր պաշտոնական զգեստը հագին, որի գեղին վայլուն կոճակներն ավելի քան շատ տեղ էին բռնում: Եկավ հանդիստ, նույնիսկ քաղաքավարի ժպտով, մեծ հույս ունենալով իր լեզվի վրա: Նա կանգ առավ ընդհանուր միջանցքում, բանտապետի և նրա օգնականի հետ, թողնելով իր և ուսանողների մեջ «պատվավոր տարածություն» ապա դիմեց ընդհանուրին.

— Ինչ է ձեր խնդիրը:

Ուսանողներից մեկը, որին առաջուց ընտրել էին դրա համար, որի խոժոռած դեմքը, խռնված երկար մազերը բարկություն էին արտահայտում, փոքր ինչ առաջ եկավ և ասաց բարձր ձայնով.

— Մենք պահանջում ենք հայտնել, թե երբ ենք մեզ արձակելու բանտից...

Մինիստրի օգնականն ուղղեց պենսնեն ու պատասխանեց, ցույց չտալով թե վիրավորվեց «պահանջում ենք» բառերից:

— Ըստ օրենքի դուք կմնաք նախ մի ամիս, ապա եթե այդ ժամանակամիջոցում գործը չպարզվի, նորից մի ամիս, իսկ եթե գործը դարձյալ չպարզվի, դարձյալ մի ամիս, և այսպես՝ մինչև կվերջանա գործի նախնական քննությունը...

— Ձեր բացատրությունը մեզ չի բավարարում,— ասաց նույն ուսանողը, ավելի հուժկու ձայնով,— ձեր ասելով մեզ կարելի է պահել մինչև մեր կյանքի վերջը և դարձյալ բացատրել, թե քննությունը չի վերջացել...

— Պարոններ, ես ձեզ բացատրեցի Ռուսաստանի օրենքը... ես կարող եմ նորից կրկնել...

— Մենք պահանջում ենք, որպեսզի դուք հայտնեք, թե ե՞րբ եք մեզ ազատ արձակելու, իսկ դուք ավելի եք մթնացնում հարցը,— մեջ ընկավ մի ուրիշ ուսանող:

— Պահա՜նջում ենք,— պահա՜նջում ենք,— աղմկում էին ամեն կողմից, հետզհետե բարձրացնելով ձայները:

Աղմուկը շփոթեցրեց մինիստրի օգնականին. նրա համար անսպասելի էր այս ելքը, նա կարծում էր, թե իր քաղաքավարի վարմունքով և լեզվով կարող է ոչ միայն համոզել բոլորին, այլև հմայել, իսկ այժմ զգում էր, որ «օրենքը» չի օգնում իրան և փոշմանեց, որ եկել է:

—Ես ձեզ հետ խոսում եմ ըստ օրենքի...ասաց նա, աշխատելով ավելի հաճելի լինել իր ձայնով, բայց նրան չթողին վերջացնի իր խոսքը.

— Դա վոչ թե օրենք է, այլ կամայականություն,— բարձրաձայն առարկեց առաջին ուսանողը,— մենք պահանջում ենք...

Ամեն կողմից նորից թնդացին ձայները՝ պահանջո՛ւմ ենք... բռնկվեց ավելի ուժգին աղմուկ: Մինիստրի օգնականը այժմ զգում էր իրան ոչ միայն անհարմար, այլև վտանգավոր դրության մեջ.— «հանկարծ վիրավորեն ինձ... կամ հարձակվեն... պետք է գնալ»... բայց դա էլ պետք է այնպես անել, որ «հարմար» լինի... չէ՞ որ նրան հրահանգված է «փափուկ» տանել գործը... Բայց այս հասարակությունը շատ անսովոր էր իր համար. դա մի վտանգավոր բազմություն էր, որի բանալին նա չուներ,— այստեղ կարծես իր իշխանությունը ոչնչանում էր: Աղմուկի մեջ նա նորից փորձեց խոսել, բայց չվերջացրեց իր խոսքը նա շտապով իջավ ներքև իր ուղեկիցների հետ: Երբ նա հասավ սանդուղքներին, նրա հետևից հնչեց խրմբական երգի ձայնը.— բոլորը սկսեցին երգել «Բանվորական մարսելյոզը»:

Отречемся от старого мира
Отряхнем его прах с наших ног:

Հնչում էր ահեղ խմբական ձայնը, ներս խուժելով բանտի բոլոր անկյունները, ստիպելով մինիստրի օգնականին շտապեցնելու իր քայլերը: Բանտապետի դրասենյակում նա ինքն իրան հավաքեց, և ընդունեց իր սովորական իշխանական դիրքը և տոնը.

— Պետք է ամեն կերպ աշխատեք, որպեսզի վեճեր չծագեն և սուր կերպարանք չստանան,— ասաց նա այնպիսի տոնով, կարծես ոչ մի արտակարգ բան չէր եղել.

— Ձերդ գերազանցություն, ես այդպես էլ վարվում եմ, բայց պետք է ասեմ, որ ուսանողների այսքան մեծ բազմությունը չի կարելի երկար պահել այստեղ, քանի որ նրանք իրանց ըմբոստությամբ ու հեղափոխական երգերով վարակում են քրեական հանցավորներին: Այդ աղդեցության տակ այժմ քրեականներն էլ անկարգության նշաններ են արտահայտում.— օրինակ անցյալ կիրակի բանտի եկեղեցում, երբ քահանան կարդում էր ավետարանից՝ «սիրեցեք միմյանց»՝ քրեականներն ի պատասխան դրան ղրնդացրին ոտքերի շղթաները... ահա թե ո՞ւր է հանում հանդգնությունը...

— Ձեր ասածը, իհարկե, հիմք ունի, և մենք միջոցներ ձեռք կառնենք, որպեսզի արագ վերջացնենք դործը. ձեզ մնում է միայն դիպլոմատորեն վարվել դրանց հետ («օ՛հ, վերջապես լռեցին... սա ուղղակի անհանդուրժելի է... չպետք է թույլ տալ հեղափոխական երդերը»...),— ասաց մինիստրի օգնականը, մոռանալով որ իր «դիպլոմատիան» անհաջողության մատնվեց և իր ներկայությամբ էլ երդում են նույնը: Նա հեռացավ մեծ ափսոսանքով, որ եկավ այստեղ և թույլ տվեց նսեմացնելու իր «գերապայծառությունը»...

XLI

Բանտում լուր տարածվեց, թե ժանդարմները եկել են հարցաքննության: Բանտապետը վերահսկիչների միջոցով ուղղարկեց առաջին հերթի ցուցակը, բայց դեռ ոչ ոք չէր դնում հարցաքննության: Անմիջապես ժողովներ արին կամերաներում և ամեն տեղ միատեսակ որոշում կայացրին, որպեսզի մի ընդհանուր պատասխան տան: Ամեն մեկը պետք է ասեր թե դնացել է ցույցի՝ բողոքելու «ժամանակավոր օրենքների դեմ»: Իսկ մնացած կոդմնակի հարցերին պետք է պատասխանել «չդիտեմ»-ով:

Առաջին խմբերի մեջ էր և Լևոնյանը, նա իր հերթին մտավ հարցաքննության սենյակը, որտեղ նստած էին ժանդարմերան, սպան և նրա քարտուղարը:

Ժանդարմական սպան, որը հաստ լինելու պատճառով իր դուժուրկայի երեք կոճակը բացել էր, ծանր շնչելով ասաց.

— Նստե՛ցեք:

Լևոնյանը նստեց և սկսեց դիտել ժանդարմի քարտուղարին, որը սուս ու փուս ինչ որ դրություն էր կազմում: Ժանդարմը նախ մի թեք հայացք ձդեց Լևոնյանի վրա, ապա ծխախոտի ծուխը առատությամբ բաց թողնելով, դրեց Լևոնյանի առաջ հարցաքննության թերթը:

— Կարդացե՛ք այս կետերը և լրացրե՛ք,— ասաց նա ու սկսեց քրքրել իր առջևի թղթերը:

Լևոնյանը կարդաց անկետային հարցերը. այնտեղ կային տարօրինակ մանրամասնություններ.— նա պիտի դրեր՝ ե՞րբ է ծնվել, ո՞րտեղ, նա պիտի նշեր իր ծնողներին, եղբայրներին, քույրերին, փեսաներին, հորեղբայրներին և այլն: Վերջացնելով այդ մանրակրկիտ ու հոդնեցուցիչ մասը, նա դրիչը ցած դրեց: Ժանդարմը, նկատելով այդ, վերցրեց նրա առջևից թերթը ու աչքի անցնելով, նորից դրեց Լևոնյանի առաջ, ապա առատ ծուխ թողնելով հարցրեց.

— Ասացեք, դուք եղե՞լ եք ցույցին:

— Եղել եմ:

— Ի՞նչ նպատակով:

— Գնացել եմ բողոքելու «ժամանակավոր օրենքների» դեմ:

— Ո՞րտեղից իմացաք ցույցի մասին:

— Մի հայտարարությունից, որ փակցրած էր ուսանողական ճաշարանի պատին...

— Իհա՛րկե, ձեզ հայտնի է, թե ո՞վ էր փակցրել այդ հայտարարությունը,— հարցրեց ժանդարմը խորամանկ հայացք ձդելով Լևոնյանի վրա:

— Ո՛չ, ես չգիտեմ, թե ո՞վ էր փակցրել։

— Տարօրինակ է ... բայց դուք անկասկած գիտեք, թե ովքեր են կազմակերպել ցույցը. դա, իհարկե, ձեզ նման գիտակից ուսանողը պետք է իմանար...

— Չգիտեմ...

— Տարօրինակ է... դուք անշուշտ գիտեք ոչ միայն կազմակերպողներին, այլև թռուցիկներ տպագրողներին...

Լևոնյանի մեջ մի կասկած անցավ՝ չլինի՞ թե իմացել են, որ ինքը մասնակցել է «տպագրության», բայց նա պատասխանեց։

— Ո՛չ մի տեղեկություն չունեմ։

— Այդպե՞ս ... դուք ամեն ինչ բացասում եք... բայց չպետք է մոռանաք, որ մեզ ամեն ինչ հայտնի է, իսկ ձեր խոստովանելը շատ կթեթևացներ ձեր հանցանքը...

Լևոնյանի համար պարզ էր, որ այդ բոլորն ասվում էր խոսք դուրս քաշելու համար. նա նորից կրկնեց.

— Ես ոչինչ չգիտեմ...

Ժանդարմը փոքր ինչ կանգ առավ, ինչ որ գործ թերթելով, ապա նորից հարցրեց.

— Ո՞ր ընկերների հետ գնացիք ցույցի.

— Միայնակ եմ գնացել։

— Երևի պայմանավորվել էիք միասին գնալու...

— Ո՛չ...

Ժանդարմը ջղայնորեն վառեց ծխախոտի գլանակը և ծխելով հետ ընկավ աթոռին, մտածելով, որ բոլորը միևնույն պատասխաններն են տալիս և հարցաքննությունը դառնում է ձևական բան. բայց ուրիշ ելք չկար. ուրիշ դեպքերում նա կարող էր երկար պահել, «փտացնել, բանտում», բայց այժմ դա հնարավոր չէր։— հրահանգված էր շուտով վերջ տալու։ Նա ասաց, բարձրացնելով ձայնը.

— Ուրեմն այստեղ կգրեք ձեր բացատրությունը, թե ի՞նչ նպատակով եք գնացել ցույցի, ո՞ւմ առաջարկությամբ, ի՞նչ էք արել ցույցի ժամանակ, ի՞նչ տեղ և ի՞նչ հանգամանքներում են ձեզ ձերբակալել...

Լևոնյանը գրեց միայն, որ գնացել է ցույցին բողոքելու և ձերբակալվել է հրապարակի այս ինչ տեղը, ու ստորագրելով վերադարձրեց թերթը ժանդարմին։

Ժանդարմը ուշադրությամբ կարդաց գրածը և աչքերը չռեց.

— Շատ քիչ եք գրել...

— Ես գրել եմ այն, ինչ գիտեմ։

— Դուք ազատ եք,— ասաց ժանդարմը ու սկսեց ծխել ավելի մեծ թափով։

Հարցաքննության օրերին տարածվեց մի լուր, որը տխուր ամպ բերեց մինչ այդ պարզ երկնքի վրա.— հայտնի դարձավ, որ մի քանի ուսանողներ «ֆրոնտը պատռել են», գրելով ժանդարմական արձանագրության մեջ, թե «պատահաբար» են ընկել ցույցի մեջ, չիմանալով թե ի՞նչ է լինելու։ Շատ չանցած հայտնի դարձավ նաև այն, թե ո՞վքեր են այդ ուսանողները. նրանց հետ այժմ ոչ ոք չէր խոսում, այնպես որ բնականաբար այդ նահանջողները միայն իրար հետ էին լինում։ Բարոյական դատապարտությունը դրոշմել էր նրանց դեմքին մի մռայլ կնիք։— նրանք ամեն ինչ կտային, որպեսզի կարողանային հեռու փախչել այս դատապարտող հայացքներից։

Լևոնյանը անփորձի զարմանքով ընդունեց այդ լուրը։ Մի քանի օր նա և Միքայելյանը անդրադառնում էին այդ դեպքին, որն այնպիսի տպավորություն արավ, կարծես պաչարված բերդում ներքին թշնամիներ էին երևացել։

Լևոնյանի համար այս բոլորը մի նոր, անծանոթ էջ էր բաց անում իրականության դրքից։ Տարվելով հեղափոխությամբ, նա թշնամուն տեսնում էր միայն կյանքի «բևեռներում»— կառավարության մեջ, կապիտալիստների, կալվածատերերի մեջ, աչքաթող անելով այն բազմաթիվ «դորշ դեմքերը», որոնք պտտվում են այդ բևեռների արանքներում։

Սակայն շատ չանցած եկան ազատության լուրերը և մառացնել տվին այդ դեպքերը։ Սկսվեցին սպասողական, լարված ժամերը, երբ բոլորի մտքերը կլանված էին մոտակա ազատության հեռանկարներով։ Ազատությունը պտտվում էր բոլորի շուրջը, շարժում էր բոլորի սրտերը...

Իսկ արևն ավելի ու ավելի էր աշխուժանում, մոռեցնելով գարունը. ձյունը հալվում էր արագորեն։ Կարծես հեռուներից

ինչ որ դրավիչ հրավերներ էին դալիս,— դարնան ու նոր կյանքի հրավերներ: Թվում էր թե բանտից դուրս դալուց հետո սկսվելու է մի նոր դարուն-կյանք, որը ոչ մի բանով չի նմանվելու առաջվա կյանքին...

...Ահա և ազատությունը. նա դալիս է մասնակի.— ամեն օր կանչում են մի խումբ՝ մոտ քսան հոդի ու ազատ արձակում: Նրանց հանդիսավոր ու խանդավառ հրաժեշտ են տալիս բոլոր մնացողները, խմբվելով միջանցքում՝ դեպի սանդուղքները տանող դռան մոտ. հանդիպակ դռան մոտ հավաքվում են նաև ուսանողուհիները. սկսում են երդել բանվորական մարսելյոզը, աշխատելով որքան կարելի է բարձր հնչեցնել ձայները ու ահաբեկել բանտապետին ու վերահսկիչներին:

Нам не нужно златого кумыра,
Ненавистен царский чертог!...

— Ո՛չինչ, շուտով ամեն ինչ կվերջանա,— մխիթարում էր ինքն իրան բանտապետը, ականջները ծածկելով ձեռներով, ժպիտ հարուցանելով իր մոտ կանգնած ծառայողների մեջ:

Ազատվող խումբը դուրս էր դալիս նույնպես երդելով, բացականչելով՝ «կեցցե՛ ազատությունը», ձեռքերի շարժումով. երգը հնչում-ուղեկցում էր նրանց մինչև ներքևի հարկը:

Հարյուրավոր կրծքերից հնչող այդ ուժգին երգը հասնում էր քրեականների ականջին, հիշեցնելով ինչ որ ուրիշ կյանք, որը դուցե մի օր էլ կդար՝ նրանց վերափոխելու...

Վերջին խմբերին հրաժեշտ տալիս արդեն նկատվում էր, որ ձայները խզվել են շատ երդելուց, բայց խանդավառությունը մնում էր նույն թափով: Ահա ամենավերջին խումբն էլ իջնում է ներքև երդելով, ինքն իրան հրաժեշտ տալով. բանվորական մարսելյոզի ձայները՝ չնայած արդելքներին, դնում է նրանց հետ մինչև բանտի ներքևի հարկը՝ մինչև դավիթը: Ընկերները համբուրվում են իրար հետ ու քայլում դեպի «ազատությունը» դեպի կյանքը:...

XLII

Բանտից ազատվելուց հետո ցուցարարներին միայն մի օր թույլ տվին մնալու մայրաքաղաքում. հետևյալ օրը նրանցից

ամեն մեկը՝ որպես աքսորված պլոտի մեկներ դեպի իր ծննդավայրի շրջանը: Դա արվում էր կառավարության այն կարծիքի հիման վրա, թե ուսանողների ծնողները «լի լնե» պահպանողական են և նրանց խրատները բարերար ազդեցություն կանեն իրանց զավակների հեղափոխական ձգտումները կասեցնելու համար:

Այն խանդավառ տրամադրությունը, որով ուսանողները համակված էին բանտում, նորից բռնկվեց մայրաքաղաքից մեկնելու օրը, երբ մի ամբողջ վագոն լցվեց ցուցարարներով: Այդ օրվա մեկնողների թվումն էին Լևոնյանը, Մարությանը և Մելքայելյանը:

Հրաժեշտի եկած ընկերները խիտ լցվել էին վագոնները: Տիրում էր այն յուրահատուկ ուսանողական ժխորը, որը դրսից անկապ աղմուկ է թվում. լսվում են բացականչեր, խոսակցություններ, որոնք չնայած ընդհանուր աղմուկին, տեղ են հասնում՝ որպես հաջող ձգած գնդակները՝ խաղի ժամանակ:

Գնացքը շարժվեց երրորդ զանգից հետո: Հրաժեշտի եկած ընկերները՝ կանգնած պլատֆորմում՝ շարժում էին ձեռները, թաշկինակները, մեկնողները պատասխանում էին նույն ձևով: Երբ առաջին ոստավորություններն անցան, մեկնողներն ավելի հարմար տեղավորվեցին վագոնում և որը նստած, որը պառկած սկսեցին կարդալ ու թերթել հետները բերած նոր ժուռնալներն ու գրքերը: Մի հաստ ամսագիր անցնում էր ձեռքից ձեռք, ոգևորություն տարածելով բոլոր կարդացողների մեջ.—այնտեղ դեռ տեղված եր Մաքսիմ Գորկու «Մրրկահավը»: Ամսագրի համարը նոր էր լույս տեսել, և ինչպես ասում էին՝ հենց այդ գրվածի պատճառով էլ ընդմիշտ արգելվել էր նրա հրատարակությունը: Մեկ-մեկու հաղորդում էին և մի ուրիշ լուր՝ որ Գորկին գրել է այն ցույցի ազդեցության տակ, իսկ ոմանք էլ ավելացնում էին, թե նա ինքը մասնակցել է ցույցին: Խոսակցությունը հետզհետե ծավալվում է: Տեղ-տեղ ծաղում էին աշխույժ վեճեր, աղմուկն այնքան բարձրացավ, որ այս ու այն տեղից կարդացողները բողոքում էին կանչելով.

— Կամա՛ց, ընկերներ:

Բուռն վեճերը տեղի են տալիս նույնպես աղմկալի խմբական երգերին: Կարդացողները գլուխները օրորելով վեր են կե-

նում, շպրտում գրքերը և իրանք էլ միանում երգողներին... Ըստ սովորության՝ դալիս է կոնդուկտորը հիշեցնում, որ վագոնում չի կարելի երգել, բայց նրա հորդորները դուր են անցնում, ամեն կողմից այնքան բան են ասում, որ նա չչմում է, ծիծաղում ու ձեռքը շարժելով շպատում է դուրս գնալ, ասելով՝

— С вами ничего не поделаешь!...

Գնացքը կտրում է անծայր տարածություններ, անցնում է անտառներ, անվերջ դաշտեր... աչքը հոգնում է միօրինակ պեյզաժից: Ճանապարհին՝ այս ու այն կայարաններում իջնում են ընկերները. ուսանողական խումբը հեռահեռ պակասում է և գրա հետ նվազում է այն կոլեկտիվ էնտուզիազմը, որը դալիս էր մայրաքաղաքից: Իջնող ընկերների տեղ վագոն են նստում պանդան խավերի մարդիկ, խոսում են իրանց առորյա մանրամունր հարցերից: Լևոնյանն ականջ էր դնում ճամբորդական այդ «պրոզայիկ» զրույցներին և մտածում, թե ո՞րքան այդ բոլորը հեռու է իր և իր ընկերներին զբաղեցնող գաղափարներից: Նա նայում է պատուհանից անծայր դաշտերին ու մտածում, թե իր նմանները ո՞րքան փոքրաթիվ են, իսկ շրջապատը՝ այդ լայն դաշտերի նման մեծ է ու դեռևս խոպան...

— Ինչի՞ մասին ես այդպես մտածում,— ասում է Մարությանը մոտենալով Լևոնյանին:

— Մտածում եմ, որ մենք այժմ պիտի քննություն տանք իրականության առաջ...

— Ով որ այդ ճամբով է գնում,նա պիտի մոռանա իր անձնականը՝ մնացածը կլա ինքն իրան...

— Բայց մենք պիտի պատրաստ լինենք պայքարի...

— Ճիշտ է,մենք պիտի պայքարենք հետամնաց շրջանում... մեր իրականությունը դեռ խոպան հող է, դժվար կլինի հերկել, բայց այդ է վիճակվել մեր սերունդին և մենք պիտի ընդունենք այդ... մի տես է՛, ի՞նչ բնություն է,— ասաց նա ցույց տալով դիմացի լեռները...

Հայրենի կովկասյան բնությունը դրավում է ընկերներին, նրանք շարվում են պատուհանի առաջ ու նայում:Բայց այդ ուրախության հետ միաժամանակ մի տխրություն է դալիս նրանց

մեջ, որը քանի մոտենում է հրաժեշտի ժամը, այնքան ավելի է խորանում:

Բաղվում իջավ Մարությանը. այնտեղ մի օր մնալուց հետո նա պիտի շարունակեր իր ճանապարհը դեպի իր լեռնային հայրենիքը: Ընկերները ջերմագին հրաժեշտ տվին իրար:

— Դե՛հ, անպատճառ կգրեք — ասաց Մարությանը, երկուսի ձեռքն էլ պինդ սեղմելով:

— Է՛հ, մնացինք ես և դու,— ասաց Միքայելյանը, ձեռքը դնելով Լևոնյանի ուսին.— դիտես ի՞նչ եմ զգում... ներկա պայմաններում ինձ համար հայրենի քաղաքը բանտ է լինելու... Ի՞նչ պետք է լինի իմ դրությունը— բավական է ասել, որ հայրս ամեն օր և ամեն ժամ պիտի կշտամբի ինձ, հիշեցնելով, որ անառակ որդի եմ...

— Գիտե՞ս ինչ կասեմ...արի առաջուց չդժվարացնենք մեր գործը... դուցե կարողանանք տանելի պայմաններ ստեղծել մեզ համար:

— Դու ինձ մխիթարում ես, բայց դու էլ կզգաս նույնը.

... Առավոտը Գանձակի կայարանում իջավ Միքայելյանը: Նրա հայրը հանդիպեց ամպամած դեմքով: Նա հագած եր վաճառականական դույնի՝ մուգ կապույտ վերարկու, լայնաքիթ՝ սեղական կարի կոշիկներ. նա չհամբերեց հենց առաջին խոսքից ասաց.

— Էս ի՞նչ սխալմունքի մեջ ես ընկել... էն տուն քանդողների հետ ես միացել... Դա նրա մեղմ արտահայտությունն էր.— նրա սրտում ավելի դառը խոսքեր կային: Միքայելյանը կարմրում էր ամաչելով Լևոնյանից, որը նույնպես դուրս էր եկել կայարան:

— Ծանոթացիր ընկերոջս հետ,— առաջարկեց նա հորը, ձեռքով ցույց տալով Լևոնյանին:

Հայրն ավելի կնճռեց հոնքերը ու դժգոհությամբ ձեռք մեկնեց Լևոնյանին: Նա նորից դիմեց իր որդուն:

— Բա էդ ո՞նց եղավ, էդ անիծվածները քեզ խելքից հանեցին,— ասաց նա խեթ նայելով Լևոնյանին:

— Հետո կխոսենք դրա մասին,— շտապով պատասխանեց Միքայելյանը, ավելի ամաչելով իր ընկերոջից, ապա՝ չուզե-

նալով երկարացնել այս անախորժ տեսարանը, հրաժեշտ տվավ Լևոնյանին:

Հայրն ավելի թշնամաբար նայեց Լևոնյանի եռևից ու ասաց.

— Ընկերներն են խելքից հանում...

— Հա՛յրիկ, դե բավական է, գնանք...

Լևոնյանը վերադարձավ վագոն ծանր ղդացումով. նա պարզ տեսնում էր, որ հայրն իր որդու «դժբախտության» պատճառը վերագրում էր իրան՝ Լևոնյանին և ո՞վ դիտե ինչ կասի այժմ՝ իր բացակայության ժամանակ... Նա նայում էր պատուհանից.— Որդին շտապում էր՝ ճամպրուկը ձեռքին, աշխատելով վերջ տալ հոր տաղտկալի կշտամբանքին, իսկ վերջինս դանդաղում էր, ձգտելով, որքան կարելի է շուտ հայտնել որդուն իր դժգոհությունը և խրատները:

— Էդ ընկերդ ո՞վ է,— ո՛նց էր եռևիցդ պահապան կանգնե՛լ... դու լա՛վ հասկացիր, նա քեզ ընկեր չէ, թշնամի է... էդ տեսակ մարդիկն են տուն քանդում... դրանցից պետք է հեռու մնաս... է՛հ, ասողին էլ լսող պետք է...

Միքայելյանն անհամբեր քաշում էր հոր թևից:

Լևոնյանը նայում էր վագոնի պատուհանից անցնող դաշտերին, գյուղերին և տխուր խորհրդածում,— այդ նույնը կասեն շատ հայրեր և մայրեր, բարեկամներ ու խորհրդատուներ... Այո՛, իրականությունը շարժելը հսկայական ուժեր է պահանջում...

XLIII

Հասնելով Թիֆլիս, Լևոնյանը կայարանից կառք նստեց ու պատվիրեց դնալ «Հարավ» էժանագին հյուրանոցը: Քաղաքը այժմ նրա աչքին թվում էր փոքր և գավառական: Շարժումը՝ տեղական առումով աշխույժ էր.— անցնում էին զանազան ձևի կառքեր, անցնում էին մարդիկ, բայց Լևոնյանին թվում էր, թե ոչ ոք չի շտապում և դրա կարիքն էլ չկա: Այս կյանքը թվում էր փոքր, սահմանափակ, կարծես մարդիկ հավաքվել էին այստեղ՝ հեռու կենտրոնների աղմուկից, որպեսզի ապրեն իրանց խաղաղ «ընտանեկան» կյանքով:

Մի ժամի չափ հանդիստ առնելով հյուրանոցում, նա դուրս եկավ կենտրոնական պրոսպեկտը: Ամեն ինչ իրան ծանոթ էր և ընտանի, քանի որ տարիներով ապրել էր այստեղ, բայց թվում էր, թե շատ տարիներ առաջ է եղել այդ:

Նա փորձեց մտածել իր այսօրվա անելիքի մասին.

Նա պիտի նախ ներկայանար ոստիկանապետին, հայտներ իր դալու մասին, քանի որ գտնվում էր հսկողության տակ: Պիտի հոդար անձնագրի՝ «պասպորտի» մասին, որովհետև իր ձեռքին կար միայն այսպես կոչված «անցողական վկայական»: Հյուրանոցի տերը կասկածով վերաբերվեց Լևոնյանին, երբ նա ասաց, թե «հետո» կներկայացնի պասպորտը: Բացի այս բոլորից անհրաժեշտ էր մտածել նաև մասնավոր դասեր կամ մի որևե ուրիշ աշխատանք գտնելու մասին:

Բայց այս բոլոր հարցերը անախորժ էին, իսկ նոր բացվող գարունը՝ նույնիսկ քաղաքի պայմաններում գրավում էր նրան ու մոռացնում իր աքսորական վիճակը: Նա մտավ քաղաքային այգին ու անցավ իրան այնքան ծանոթ ծառուղիներով: Հյուսիսի ձյուներից ու մռայլ օրերից հետո հարավի բնությունն առանձնապես գուրեկան էր.— պայծառ արևի տակ փայլող նոր դարթած կանաչները, ծառերի բացվող պտուկները ասես ամեն կողմից գուրեկան ժպիտով կանչում էին նրան: Նա կանգ առավ մի մեծ ծառի մոտ ու հանկարծ՝ ասես ինչ որ հիշելով, սթափվեց: Նա զգաց, որ Հեղինեն չարունակ իր մտքի մեջ է եղել, բայց թաղնվել է ինչպես ջուրը՝ թափված տերևների տակ:

Նա նստեց ծառի տակ՝ նստարանի վրա և անձնատուր եղավ անցյալի հուշերին: Հեղինեն պատկերացավ նրա առաջ այնպես, կարծես ոչ մի փոփոխություն չէր եղել նրա կյանքում.— թվում էր, թե նրանք հանդիպում են իրար, ժպտում են ու կարոտով սեղմում իրար ձեռքը... բայց այդ իլլյուզյան երկար չտևեց.— հիշողությունը բերավ նրանց վերջին հանդիպման երեկոն.— և նա իջավ երևակայության ամպերից դեպի իրականությունը... չէ՛, այս բոլորն ի՜հարկե, երազ է, իրողությունն այն է, որ Հեղինեն ամուսնացած է, որ ամեն ինչ վերջացած է... այլևս երազել այդ անցած սիրո չուրջը՝ կլիներ պատանեկություն...

Բայց և այնպես Հեղինեն՝ թեկուզ և ընդ միշտ բաժանված

իրանից, թեկուզ և վարագույրի եռևից, դրավում էր իրան։ Քա՜նի անգամ նա ինքն իրան ասել էր նույնը՝ որ ամեն ինչ վերջացած է, բայց էլի զբաղվել ե Հեղինեով, պարուրվել անցյալով... Այժմ էլ նա հարց էր տալիս, թե ի՞նչ է մտածում, կամ ավելի ճիշտ՝ ո՞ւմ մասին է մտածում Հեղինեն և միշտ ենթադրում էր, թե ի՛ր մասին... դուցե այդ «պաշտոնական» ամուսնության պատյանի մեջ նրա սիրտը թրթռում է հին սիրով... Եվ եթե այդպես է՝ ի՞նչպես կհանդիպի նա իրան...

Մինչ Լևոնյանը այսպես ինքնամոռացության մեջ է՛ր ընկել, հանկարծ լսեց իր եռևից մի թավ ձայն.

— Վա՛հ, էս ո՞ր քամին է բերել քեզ — ասաց դյուղապետես Մասուրյանը, մոտենալով Լևոնյանին և ձեռքը մեկնելով,— բարև, էս ի՞նչ դիպվածով ես եկել. էս ժամանակ հյուսիսի թռչունները չեն գալիս մեզ մոտ։

— Ոչ թե եկել եմ, այլ ուղարկել են,— ասաց Լևոնյանը, տեղից վեր կենալով և հարգանքով բարևելով գյուղատնտեսին։

— Հա՛, հասկանալի է... դե մի պատմիր, տեսնենք, մի ճշգրիտ բան իմանանք, թե չէ հո դիտես, լրագրները ինչպես են աղավաղում... Ուրեմն էլի կրակը չի՞ հանգել հա՞...

— Ոչ միայն չի հանգել, այլ օրեցօր ավելի է ծավալվում։

Լևոնյանն սկսեց պատմել ցույցի մասին բոլոր մանրամասնություններով, ենթադրելով, թե իր պատմածը ոգևորություն կառաջացնի Մասուրյանի մեջ։ Բայց քառասունհինգամյա գյուղատնտեսը, որի շագանակագույն մորուքի մեջ արդեն նկատվում էին սպիտակ մազեր, լսում էր Լևոնյանին մի տարօրինակ ափոսանքով, կարծես վաղուց անցած մի սիրո պատմություն էր լսում։ Նրա արևամատ կնճռոտ դեմքին մերթ ժպիտ էր դալիս, մերթ տխրություն...«Նորից դալիս է շարժումը,—մտածում էր նա, դալիս է դարձյալ նման, ինչպես մեր ժամանակ, բայց ի՞նչ կարող է բերել... կանցնի, ինչպես այն ժամանակ... ջահելություն է...

— Է՛հ,— հառաչեց Մասուրյանը — էլի հիշեցի մեր ժամանակվա ջահելությունը... ի՞նչ խոսք, և ոգևորություն կար, և անձնվիրություն..., բայց սիրելիս, արի դատենք ավելի սառը,— ի՞նչ է մեր իրականությունը։ Միթե՞ որևե կերպ կարձանքի այդ շարժումներին... ո՛չ,— նա հաստ պատնեշի նման կանգնած է բոլոր շարժումների դեմ...

— Ո՛չ, սխալվում եք — ասաց Լևոնյանը.— շարժումը արձագանքում է բանվորության, ուսանողության մեջ, իսկ հետո կանցնի և գյուղացիության մեջ...

— Դժբախտաբար՝ ոչ... դե՛, դու երիտասարդ ես, քեզ դժվար է համոզել, բայց ես էլ բաներ եմ տեսել...մտածել եմ և եկել այն եզրակացության, որ զոհերը տրվում են, իսկ կյանքը մնում է նույն խավարի ու ապիտության մեջ...

— Ընդհակառակը՝ կյանքը փոխվում է և շարժվում,—ասաց Լևոնյանը համոզված տոնով.—և այդ տեսնելու համար հարկավոր չէ խոշորացույցի դիմել.— ահա՛ հենց իմ պատմած դեպքերը...

— Է՛հ, Ռուսաստանում այդպիսի բաներ շատ են եղել, դու հետևանքներից խոսիր,— թե չէ ի՞նչ՝ ջրի վերևից մի քիչ փրփուր է դալիս, իսկ տակը էլի մնում է նույն դրության մեջ...

— Շարժման մեջ ամեն մի առու նշանակություն ունի,— քանի որ գնում է դետը լայնացնելու...: Ճիշտն ասած՝ ես չէի սպասում, թե դուք այդպես հիասթափված կլինեք։

— Չէ, սա հիասթափում չէ, այլ կյանքի ճանաչողություն. դիտե՞ս, կյանքը կատակ բան չէ... ես էլ դեր եմ խաղացել շարժման մեջ, բայց կյանք մտնելով, տեսա, որ այն բոլորը... երազ էր... կյանքը շատ բան է սովորեցնում... Իսկ այժմ մենք պետք է ուշադրություն դարձնենք և մի ուրիշ հանգամանքի վրա... չե՞ս կարծում, որ մեր՝ հայերիս մասնակցությունը Ռուսաստանի շարժման մեջ վտանգավոր է հայության համար...

— Այդ մտքերը ինձ համար նոր չեն — ասաց Լևոնյանը.— մի ամիս առաջ եկել էր մայրաքաղաք մեր ազգային լիդերներից մեկը. նա քարոզում էր նույնը,— երևի դուք նրանց ազգեցության տակ եք ասում...

— Ե՞ս... նրանց ազդեցության տա՞կ,— նեղացած ասաց գյուղատնտեսը — դա մեծ պատիվ կլիներ նրանց համար... ես ուղղակի ինքս եմ եկել այդ եզրակացության...

— Համենայն դեպս դուք նույն միտքն եք արտահայտում...

— Ես նրանց հետ ոչ մի գաղափարական կապ չունեմ... միայն զուտ անձնական հարաբերություններ են...

— Ես հիշում եմ՝ դուք առաջ ուրիշ հայացքներ էիք արտահայտում:

— Է՛հ, երանի էն օրերին... կյանքը շատ բան է խլում մարդուց...

Նա վեր կացավ տեղից տխրամած՝ սրտանց նեղանալով Լևոնյանից, որ նա իրան հավասարեցրեց աղգայնականներին. տխուր էր և այն պատճառով, որ Լևոնյանը հիշեցրեց իր նախկին հայացքների մասին, որոնք խսկապես մոռացված էին... այժմ նա ամաչում էր, ինչպես աղքատը ամաչում է իր մաշված շորերից...

— Է՛հ, ցտեսություն,— ասաց նա ձեռք մեկնելով, շատ գժվար ապարեց ես ընտրել, շատ զրկանքներ կտեսնես, բայց դուցե մեր կյանքի ծաղիկը այդ անձնվեր գործունեությունն է ... չգիտեմ ո՞ր ուս պետն է ասել, թե այդ ճգտումները «խենթ են, բայց գեղեցիկ»... կպատահենք, էլի կխոսենք...

Լևոնյանը նայեց դյուղատնտեսի ետևից տխուր եղրակացություններով. առաջ՝ իր աշակերտության օրերին, Մասուրյանը պատմում էր իր ժամանակի հեղափոխականների մասին, ու ավելացնում — Ե՞րբ պետք է շարժվի այս ծով-Ռուսաստանը. իսկ այժմ, երբ շարժումը դալիս է նորից, նա խխունջի նման փակվում էր աղգայնական պատյանի մեջ...

XLIV

Լևոնյանը դուրս եկավ այդուց և գնաց նորից գեպի պլոսպեկտը, այժմ արդեն վճռելով վերջացնել իր «անախորժ» գործերը: Շատ ծանր էր թվում ոստիկանատուն գնալը, բայց առանց դրան անկարելի էր քաղաքում մնալը: Նա գնում էր, և զգում, որ աշխատում է ճանապարհը երկարացնել: Նույնիսկ տեղ-տեղ կանգ էր առնում մաղազինների չքեղ վիտրինների առաջ ու նայում:

Մինչ Լևոնյանն այսպես դանդաղելով գնում էր, հանկարծ գլխացից եկող մի գեռատի կին նրան սաստիկ այլայլման մեջ ձգեց: Նա կուզեր այդ բոպեին թաղնվել մի տեղ, չերևալ, ճանապարհը ծռել, բայց ոչ այս և ոչ այն հնարավոր չեղավ: Առաջին բոպեին նա կասկածեց, մտածելով, թե դուցե «նա» չէ, բայց մոտենալով, համոզվեց, որ Հեղինեն է...

Նա կուզեր այդ բոպեին հանդիստ լինել, նույնիսկ սառն ու հեգնող դեմք ունենալ, բայց դրա տեղ նա կարմրեց ու շփոթվեց.

— Բարև ձեզ,— ասաց Հեղինեն սիրալիր ժպտով, քողարկելով իր շփոթությունը ու մեկնելով իր գեղեցիկ, փոքրիկ ձեռքը:

— Բարև,—խղված ձայնով ասաց Լևոնյանը, սեղմելով Հեղինեի մատները: Ուրախությունը համակեց նրան և ուշքի բերեց առաջվա շփոթությունից ...

— Այդ ե՞ր եք եկել... շատ անսպասելի է,—ասաց Հեղինեն, ավելի գոպելով իր շփոթությունը.—

— Ինձ ուղարկել են,— ասաց Լևոնյանը և մի քանի խոսքով բացատրեց իր աքսորման պատճառները:

— Մի՞թե — ժպտուն զարմանքով հարցրեց Հեղինեն,— ես այդպես էլ կարծում էի, որ դուք կդնաք այլ ճանապարհով... որքան փոխվել եք, մեծացել ու առնացել,— ասում էր Հեղինեն համակրանքով նայելով Լևոնյանի աչքերին:

— Դուք էլ փոխվել եք,—ասաց Լևոնյանը թախծոտ հայացքով նայելով Հեղինեին:

— Երևի դեպի վատը, հա՞... փորձելով հարցրեց Հեղինեն, ցույց տալով, իբր Լևոնյանի խոսքը վերաբերում է իր արտաքինին:

— Ո՛չ, ընդհակառակը, դուք ավելի գեղեցկացել եք և ավելի կենսուրախ եք դարձել...

Հեղինեն միաժամանակ զգաց և դուրեկան շոյանք, իր «գեղեցկանալու» առիթով, բայց միաժամանակ չէր կարող չզգալ Լևոնյանի խոսքերի մեջ մի կշտամբանք նույնիսկ հեգնանք, իր ամուսնության վերաբերմամբ: Նա աշխատեց խոսքը հեռացնել բուն նյութից:

— Սուրեն, դուք էլ եք սովորել խոսել կոմպլիմենտներով, երևի Պետերբուրգում առիթ եք ունեցել ուրիշներին ասելու...

— Չե՛, ես ժամանակ չունեի դրանով զբաղվելու... ես ասում եմ այն, ինչ նկատում եմ...

— Հա՛, իհարկե, անորոշ պատասխանեց Հեղինեն, ուրախանալով, որ Լևոնյանը չի փոխել իր «սիրո առարկան», ապա շարունակեց քնքուշ հայացք ձգելով Լևոնյանի վրա.

— Ես ձեր մասին շատ լավ բաներ եմ լսել... դիտե՞ք, լուրերը մեզ էլ են հասնում... ես այդպես էլ սպասում էի, որ դուք կմիանաք լուրջ և ժողովրդի համար աշխատող ուսանողներին:

«Շոյում է», մտածեց Լևոնյանը և դիտող հայացքով նայեց Հեղինեին: Նա հագել էր նոր մոդային զարնան վերարկուն, որի տակից երևում եր նրա նոր կոստյումը: Նոր լայնիկ ձեռնոցները հասնում էին մինչև արմունկները: Այժմ նա հարուստ փաստաբանի կին էր՝ անհոգ ու անդորձ և երևի դուրս էր եկել մաղազիններն այցելելու՝ հագուստի նոր զարդարանքներ գնելու համար:

Հեղինեն հանկարծ հիշեց, որ երկար կանգ առնելը կարող էր բամբասանքի առիթ տալ և հարկ համարեց վերջացնել տեսակցությունը:

— Շատ ուրախ եմ, որ ձեզ հանդիպեցի,— ասաց նա,— հուսով եմ՝ սա վերջինը չի լինի, հրամեցեք մեզ մոտ, մենք ապրում ենք Սոլոլակի փողոցում՝ սեփական տուն, համար հինգ:

Վերջին խոսքերը Հեղինեն սկսեց վառասիրական տոնով, այնպես, ինչպես նա ասում էր իր բարեկամներին և ծանոթներին, բայց հանկարծ ասես ինչ որ դեմ ընկավ կոկորդին և նա զգաց, որ Լևոնյանի հետ ուրիշ կերպ պիտի խոսեր:

— Բայց դուք չասացիք, ինչպե՞ս եք այժմ,— հարցրեց Լևոնյանը, անպատասխան թողնելով Հեղինեի խոսքերը.— նոր կյանք, նոր հեռանկարներ...

Հեղինեն թեթև կարմրեց, զգալով Լևոնյանի խոսքերի մեջ իրան ուղղած «նեսը».

— Առանձնապես ոչինչ,— ասաց նա ձգելով — սովորական կյանք է, դավառական կյանք, անհետաքրքիր և մեծ մասամբ ձանձրալի ... ձեր բանն ուրիշ է, դուք մայրաքաղաքումն եք, վայելում եք այնտեղի կուլտուրական բարիքները... մյուս ձմեռ ամուսինս խոստանում է տանել Պետերբուրգ... երևի կը-

հանդիպենք... Մեծ ցանկություն ունեմ... ուրեմն կգաք մեզ մոտ այնպես չէ՞...

— Կգամ,— ասաց Լևոնյանը թախծոտ ձայնով. չմտածելով իր ասածի նշանակության մասին:

— Եկեք անպայման... ուրեմն՝ Աղաբեկյանի տուն, բնետաժ հանդիսավոր մուտքից... դե ցտեսություն, շատ ուրախ եմ...

Նա ձեռք տվեց Լևոնյանին մի քնքուշ, դուրդուրող ու խոստացող հայացք ձգելով նրա դեմքին:

Լևոնյանը բաժանվեց Հեղինեից, ամբողջովին համակված նոր հույզերով— մի խառը զգացում էր դա, որի մեջ միանում էին և ուրախությունը, որ տեսնում է իր սիրած կնոջ,և տխրությունը, որ կորցրել է նրան և ինքնասիրության նվաստացումը,— որ չկարողացավ պահպանել իր հպարտության սառնությունը, բայց և այնպես հաղթում էր սերը, կարոտը, և նա մի տասնյակ քայլ հաղիվ անելով, նորից հետ նայեց. նույնն արավ և Հեղինեն և նրանք ժպտալով փոխադարձաբար բռնեցին իրար դողունի հայացքները:

«Հիմա Հեղինեն կմտածի, թե ես դարձյալ առաջվա նման սիրում եմ իրեն և ներում եմ ամեն ինչ... Բայց ի՞նչ է նշանակում այս սիրալիր հանդիպումը, այս հրավերը... դուցե նա ուզում է նոր կապ ստեղծել ինձ հետ... ո՛չ, ես ընդունակ չեմ ոչ հառաչող արբանյակի, ոչ էլ մի սիրեկանի դերի համար, որը շարունակ պիտի կեղծի... որքան էլ դժվար լինի, ավելի լավ է չդնալ նրա մոտ, և վերջ տալ ընդմիշտ»...

Լևոնյանի խոհերն ընդհատեցին իր ընկերները. նրանցից մեկը Գալստյանն էր, որն այժմ ուսուցիչ էր, մյուսը՝ Ծատուրյանը:

— Վա՜հ, մեծ մարդ ես դարձել, չես նկատում մեզ:

— Բարև,— ասաց Լևոնյանը միանգամից ձեռքերը մեկնելով երկուսին:

— Իս ինչ անժամանակ ես հայտնվել:

— Իսպես պատահեց բանը... անորոշ պատասխանեց Լևոնյանը:

— Հա, ինչ որ բաներ են կատարվում հյուսիսում, իսկ այստեղ հատ ու կենտ բառերով ենք լսում...

— Հենց դրա պատճառով էլ ինձ աքսորել են...

— Դե պատմիր, տեսնենք, մարդ դժվար է հավատում որ Ռուսաստանը կարող է շարժվել...

— Մի ուրիշ անգամ կպատմեմ. այժմ մի քանի գործնական հարցեր ունեմ վճռելու. նախ՝ իջել եմ հյուրանոցում, բայց պասպորտ չունեմ և այդ պատճառով կարող եմ դուրսը մնալ, իսկ պասպորտի համար անհրաժեշտ է գնալ ոստիկանատուն, որի համար ես բոլորովին տրամադիր չեմ:

— Դե դրա մասին ի՞նչ ես մտածում,— ասաց Գալստյանը եկ ինձ մոտ, կմնաս մինչև որ կտրամադրվես ոստիկանատուն գնալու...

Գալստյանը հայտնեց իր հասցեն և Լևոնյանը պայմանավորվեց նույն երեկոյան տեղափոխվել ընկերոջ սենյակը:

— Ուրիշ՞, ո՞նց եք, ինչ՞ եք անում — հարցրեց Լևոնյանը:

— Է՛հ, ապրում ենք էլի՛,— ասաց Գալստյանը.— երբեմն փայտը չի վառվում, միայն մխում է, դա էլ մի բան է... այդպես էլ մենք... ես ուսուցիչ եմ ծխական դպրոցում, սա էլ անցյալ տարի ըմբոստություն արավ, չուզեց ղլուխ թեքել հոգարարձուներին և մնաց անգործ. կարծում է թե ուրիշ ասպարեզներում ղլուխ թեքել չկա...

XLV

Լևոնյանը նույն օրը տեղափոխվեց Գալստյանի մոտ: Նա ապրում էր քաղաքի հին թաղի նեղ ու ծուռ փողոցներից մեկում: Սենյակը առաջին հարկումն էր, փոքր ու կխամութ, դեղնավուն, խունացած պատատները եռևի պատի վրա ավելի խիտ դույն էին ստացել՝ խոնավությունից, բայց դրա վրա ուշադրություն դարձնող չկա:

Գալստյանը ցերեկով գնում էր դպրոց՝ պարապմունքի, այնպես որ ռենյակն ամբողջովին մնում էր Լևոնյանի տրամադրության տակ: Սակայն նա գիտեր, որ այստեղ էլ հաղիվ մի քանի օր կարող էր ապրել առանց «ցարական պասպորտի»,այդ պատճառով էլ մյուս օրը նա առաջին հերթին վճռեց գնալ ոստիկանատուն և վերջ տալ «անախորժ հարցին»:

Փողոցներում կանգնած քաղաքապահ ոստիկաններից հարցնելով Լևոնյանը վերջապես գտավ թաղային ոստիկանատունը: Թե դրսից, թե ներսից այդ շենքի վրա ասես մի գաղտնի ձեռք ամեն ինչ արել էր, որպեսզի տեսնողը խորշանք զգա և հեռու անցնի դրանից: Դրսի գորշ-պղտոր գույնը թվում էր ոչ թե ներկից էր, այլ վրան երկար տարիների նստած փոշուց: Մի քանի աստիճան մաշված սանդուղքներով հաճախորդը մտնում էր դրասենյակը, որի հատակը նույնպես մաշված էր և ճռճռում էր ոտների տակ: Բայց ամենից անախորժն այն հոտն էր, որ տիրում էր սենյակներում և որի մեջ դժվար էր ասել թե ո՞րն է գերակշռողը՝ տարիներով ծծված վատորակ թութունի՞, թե քաղաքապահների հասարակ, զինվորական կոշիկների հոտը, կամ գուցե դա մի անանուն հոտ էր, որ աննկատելի կուտակվում էր ոստիկանատան յուրահատուկ հաճախորդներից:

Ընդհանուր մասում աղմուկ էր.— երկու հաճախորդ իրար ընդհատելով կծու խոսքերով կռվում էին, իսկ ոստիկանատան ծառայողն անտարբեր նստած ծխում էր, երբեմն միայն ասելով՝ «կա՛մաց» կամ «մի՛ք խանդարի»: Թվում էր, թե նրանք նույնքան անտարբեր են դեպի մարդիկ, որքան և դեպի իրանց հնացած, ճանձրալի սեղանները:

Թաղային ոստիկանապետը ընդունեց Լևոնյանին անսպասելի քաղաքավարությամբ: Հաստափոր՝ կաշառքներից դերբացած ոստիկանապետը սիրալիր ժպտով աթոռ առաջարկեց և սկսեց խոսել այնպիսի տոնով, կարծես հյուր էր ընդունում իր տանը: Այդ քաղաքավարի վերաբերմունքը չէր խաբում Լևոնյանին. նա ենթադրում էր, որ դա արվում է գաղտնի հսկողությունը քողարկելու համար. — չէ՞ որ անհրաժեշտ էր քնացնել հեղափոխականին, որպեսզի նա կարծի, թե այս բոլորը միայն ձևականություն է և փաստորեն ոչ մի հսկողություն չի լինելու:

Լևոնյանը հանեց իր «անցողական վկայականը» և դրեց ոստիկանապետի առաջ:

— Ես աքսորված եմ Պետերբուրգից և ներկայանում եմ ձեզ...

— Լավ,— ասաց ոստիկանապետը, աչքի անցնելով վկայականը,— ուրեմն մենք այսպես կանենք... դուք կգաք այստեղ ամեն օր, բայց այնպե՛ս, ոչ թե պաշտոնական ձևականություն-

ներով, այլ ուղղակի ինձ մոտ... դա ձեզ անհանգստություն չի պատճառիլ...

— Ամեն օ՞ր — զարմացավ Լևոնյանը. միթե՞ դա անհրաժեշտ է:

— Ես ձեզ ասում եմ, ինչպես օրենքն է թելադրում, բայց ինչպես տեսնում եք՝ գործը թեթևացնում եմ ձեզ համար... ձեր գալը կլինի այնպես... ոչ ոք չի էլ իմանալ, թե ինչո՞ւ համար եք գալիս... միայն ես կիմանամ...

— Բավականացեք շաբաթը մեկ անգամով,— ասաց Լևոնյանը,— չե՞ որ դուք կարող եք հսկողություն ունենալ և առանց իմ գալու...

Ոստիկանապետը ժպտաց.

— Դուք զուր եք անհանգստանում և չափազանցնում... օրենքը, ինչպես, իրան կարդով... բայց դուք ոչ մի նեղություն չեք քաշիլ...

Նա զգում էր, ամեն օր գալը անհեհեթություն է և այդ պատճառով էլ անիրագործելի, բայց ուզում էր, որ Լևոնյանը գործնականում վճռի այդ հարցը, և ոչ թե ինքը թույլ տա: Լևոնյանը հասկացավ, որ դա մի ձևականություն է, քանի որ գաղտնի հսկողությունն անպայման պիտի լիներ: Այդ պատճառով նա անորոշ թողեց հարցը, մտքում վճռելով իսկի էլ չհաճախել ոստիկանատունը, և անցավ «պասպորտին»:

— Մենք ձեզ կտանք ժամանակավոր անձնագիր,— ասաց նա և խփեց իր առջևը դրած դանդին. ներս եկավ քարտուղարը:

— Պարոն Լևոնյանի համար կպատրաստեք անձնագիր՝ երեք ամիս ժամանակով — ասաց նա ու աչքերի արտահայտությամբ հասկացրեց, թե «կտակածելիների» ո՞ր կատեգորիայից է լիներ այդ անցագիրը:

Լևոնյանը դնաց քարտուղարի հետևից, մի կես ժամ էլ կորցրեց անցագրի ձևականությունների համար և դուրս եկավ փողոց:

Գնալիս բակում և դրսի մուտքի մոտ նա երկու մարդ նկատեց, որոնք խուզարկու հայացքներով դիտեցին իրան: Թե այդ հայացքներից և թե նրանց «տիպից» ու արտաքինից Լևոնյանը եզրակացրեց, որ դրանք կանգնել են իրան «ճանաչելու» համար, որպեսզի կարողանան գաղտնի հսկողություն սահմանել: Նրանց

հաղուստը՝ էժանագին էր, բանվորական, բայց վրան աչխատանքի՝ պրոֆեսիայի նշան չկար. երևում էր, որ գործով չեն եկել, բայց ձևացնում էին, թե սպասում են պատասխանի: Դուրս գալով ոստիկանատնից, Լևոնյանն զգաց այնպիսի թեթևություն, կարծես նոր միայն հնարավորություն ստացավ ազատ շունչ քաշելու: Նա գնում էր ու մտածում իր նոր տպավորությունների շուրջը— «եթե ցարական կարգերն անտանելի են, ապա ոստիկանությունը դրանց մեջ ամենազզվելին է,— դա ցարական ռեժիմի կոյուղին է»...

«Ապագա հեղափոխության ժամանակ ոստիկանատները և բանտերը պետք է վառել և հիմնահատակ անել, որպեսզի ոչ մի հետք չմնա նրանցից»...

Մինչև կենտրոնական փողոցները հասնելը նա հանդիպեց ծանոթների, խոսեց հետները, ու ցրեց իր «ոստիկանական» մտքերը, նորից անցավ իր գործնական հարցերին:

Այժմ անհրաժեշտ էր մի աչխատանք գտնել, քանի որ հորեղբորից վորևե օգնություն սպասելն անմտություն կլիներ: Հարկավոր էր մտածել և սենյակի մասին, որովհետև նա մի քանի օրով էր տեղափոխվել Գալստյանի մոտ: Բայց այս բոլորից առաջ անհրաժեշտ էր կարգի բերել հաղուստը,— նրա շալվարը շատ անմխիթար վիճակի մեջ էր:

Նա մտավ կենտրոնական մաղազիններից մեկը, որի տերը իրան ծանոթ էր: Մոտենալով գործակատարներին, կանգ առավ, նկատելով, որ երկուսն էլ զբաղված են: Նրանք իրար հետևից հանում էին նորանոր կոստյումներ, գովում, ապա հագցնում գնորդին, ու նորից գովում:

Տերը՝ մոտ քառասուն տարեկան, դուրս ընկած կլոր փորով, ստեպ-ստեպ մոտենում էր գնորդներին, նայում հավանության ժպտով, ձախ ձեռքով խաղացնելով իր ժամացույցի ոսկի շղթան, ապա ասում էր սիրալիր տոնով.

— Ա՜յ, սա ձեզ շատ է սազում... խիստ կփոչմանեք, եթե չվերցնեք...

— Ա՜յ հասկանում եմ— ասում էր նա, մոտենալով մյուս գնորդին— մի տեսեք հայելում, ի՜նչ հրաշալի է նստած... իսկ ապրանքին խոսք չի հասնիլ... սա ուրիշ բան է... արտասահմանից է...

Նկատելով Լևոնյանին, նա բարեվեց դլխի թեքումով, ապա մոտեցավ, հարցրեց, թե ի՞նչ է ցանկանում:

— Այս բոպեիս ձեզ կտանք ամենալավը՝ ձեր ճաշակի ապրանք,— ասաց նա ուրախ ժպտով, նկատելով որ դնորդներից մեկն արդեն համաձայնվեց վերցնել կոստյումը.— ինչպե՞ս է, որ այսպես անժամանակ եկել եք Թիֆլիս...

— Այնպես պատահեց, որ պիտի դայլ—պատասխանեց Լևոնյանը, չուզենալով մանրամասնություններին մեջ մտնել:

— Տիդրան, մի արի, այն լավ ապրանքը հանիր,— դիմեց նա գործակատարին, որն արդեն վաթաթում էր թղթի մեջ վաճառած կոստյումը. մինչև նրա դալը տերը դրաղեցնում էր Լևոնյանին:

— Հա, այդ ի՞նչ բան է, որ այսպես շտապել եք. չլինի թե ձեր ծնողները հիվանդ են:

— Չե՛, ինձ աքսորել են...

— Աքսորե՞լ,— խոժոռեց դեմքը վաճառականը.— ո՞նց թե աքսորել...

— Մենք ցույց կազմակերպեցինք, դրա պատճառով էր...

Գործակատարը մոտեցավ Լևոնյանին՝ ձեռքին ձդած մի քանի շալվար ու սկսեց ցույց տալ ամենահատարանները: Լևոնյանը՝ մեկ-մեկ նայելով, ձդում էր սեղանի վրա:

— Ձեք հավանո՞ւմ— հարցրեց վաճառական,— Տիդրան, դե ես քեզ ասի՝ լավերը բեր.— ապա դառնալով Լևոնյանին, շարունակեց— այսինքն ցույցը ի՞նչ բան է:

— Ցույցը կառավարության դեմ էր, այդ պատճառով էլ աքսորել են...

— Կառավարության դե՞մ,—ավելի խոժոռեց դեմքը վաճառականը,— ինչպե՞ս թե... ա՛յ դրանով դուք մեր հայերի տունը քանդում եք և մեր առուտուրը փչացնում:

— Դո՛ւք եք շահագործում և հայերին և օտարներին, դուք եք քանդում տները...

Գործակատարը ներքին ժպտով շնորհակալ հայացք ձդեց Լևոնյանի վրա:

— Այդպես եք անում է, որ կործանում եք... Ձեզ ուղարկում են ուսում առնելու, իսկ դուք «բունտ» եք անում:

— Այո՛, եթե կուզեք հենց ձեզ պետներին պիտի կործանել.—ասաց Լևոնյանը և շպրտելով սեղանի վրա իր ձեռքի շալվարը, դուրս դնաց:

— Բա շալվարը չեք ուզո՞ւմ— կանչեց ետևից վաճառականը, բայց պատասխան չստանալով հարձակվեց գործակատարի վրա.

— Թո՛ւհ, անիծվի էսպես առուտուրը,— ասաց նա,— դու էլ ի՞նչ ես բերանդ բաց մտիկ անում.— տեսնում ես՝ մուշտարի է եկել, լեղու թափիր, դրավիր, դուր տեղն եմ քեզ ռոճիկ տալիս:

— Դե դուք հետը խոսում էիք, ես ի՞նչ անեմ...

— Դեռ հարցնում էլ է, թե ի՞նչ անեմ—քաշիր քո կողմը, կպցրու ապրանքը... բա ինչի՞ համար եմ քեզ էստեղ պահում:

— Դու հետը կռվեցիր, մեղավորը ի՞նձ ես տեսնում:

— Պատասխանելը սովորել ես, վերջը վատ կլինի հա՛... լավ իմանաս...

— Սրանից վատ հո չի լինի— ասաց գործակատարը ու տեղավորեց դուրս հանած ապրանքը:

Վաճառականի դայրույթը չեր իջնում...

— Եկա՛վ... խե՛ր տվեց... ձեր հերն անիծած... քամի որսողներ... մի սրանց մտիկ.. կառավարության դեմ են գնում... հը՛մ... կո՛ւտեք... ձեր տեղը Սիբիրն է... էստեղ չի...

Ու մի թունդ հայհոյանք ուղարկեց Լևոնյանի ետևից:

Լևոնյանը դնաց մի ուրիշ մադազին, դնեց իր ուզածը և վերադարձավ տուն, երկար ժամանակ չկարողանալով ազատվել իր վրդովմունքից:

— Տղրո՛ւկ... դու էիր պակաս,— ասում էր նա վաճառականի հասցեին.— ամեն տեսակ սրիկայություններով ուռճացել ես... քեզ պետների պատիժը դեկլյոտինն է...

Նա գնում էր տուն և մտածում, որ իր դալու օրից չարունակ հանդիպում է հակառակ հայացքների, որ «իրականությունը» օդակի նման շրջապատում է իր նմաններին... նա մտածում էր, որ բանտերը միայն հատուկ շենքերում չեն,— կյանքում ամեն տեղ կան բանտեր, պարիսպներ...

Երբ Լևոնյանն այսպես խորհելով դնում է տուն, հանկարծ փողոցի մի տան պատշգամում նկատեց մի օրիորդի, որը կանգնած նայում էր իրան ժպտալով: Լևոնյանը ցնցվեց ուրախությունից, ասես երկար միլիոնատ օրերից հետո արևն էր ծագում. նա ժպտաց կրկնակի ու բարևեց, մինչև ծայր բարձրացնելով գլխարկը:

Դա օրիորդ Առաքելյանն էր, որը նույնպես մասնակցել էր ցույցին և աքսորվել Բաղու, բայց ինչո՞ւ էր այստեղ... Լևոնյանը շտապ անցավ փողոցը և կանգնեց պատշգամբին մոտ: Հարց ու փորձը շատ անկապ էր, բայց հանդիպելն ու խոսելը այնքան մեծ հաճույք էր պատճառում, որ նրանք այդ չէին նկատում, նրանք այժմ նման էին այն հեռու չվող թռչուններին, որոնք վոլթորկից հետո հանդիպել են իրար:

— Ե՞րբ եք եկել:

— Այսօր եմ եկել, մորաքրոջս մոտ և այսօր էլ վերադառնում եմ:

— Ավսո՛ս, մի քանի օր դոնե մնայիք.—

— Չեն թողնիլ... հո դիտեք, «անցողական վկայականը»...

— Գիտե՞ք, այսօր ո՞րտեղ եմ եղել— ոստիկանատանը:

— Շնորհավորում եմ...

Օրիորդը մեծ ցանկություն ուներ լինելու ներքև կամ հրավիրելու վերև Լևոնյանին, բայց ամոթխածությունը թույլ չեր տալիս:

— Ի՞նչպես անցան ձեր առաջին օրերը— հարցրեց օրիորդը:

Լևոնյանը բացասաբար շարժեց գլուխը.

— Զզում եմ ինձ օղակի մեջ... որտեղ դնում եմ, առաջս պատ է բանում...

— Պետք է գտնել խակական միջավայրը,— ակնարկեց օրիորդը գլխի նշանով ցույց տալով հեռուները...

— Ուրեմն հյո՞ւր եք եկել:

— Այո՛, ուխտ եմ արել, տեսնենք ինչո՞վ կվերջանա...

— Շատ ուրախ եմ: բարևներ մեր ընկերներին, ում կպատահեք...

Պատշգամում երևաց մի ուրիշ օրիորդ. Լևոնյանը հրաժեշտ տվեց ու դնաց ժպիտը դեմքին, մոռացած իր անախորժությունը, իր «օղակը». նա մտածում էր, որ ինչպես էլ դաժան լինի «իրականությունը», բայց մի ձեռք մեկնող ընկեր կարող է ամեն ինչ մոռացնել...

XLVI

Երեկոյան մութը նոր էր սկսվում, երբ հնչեց կաշվի գործարանի չչակը: Այդ չչակը ոռնոցի նման մի դաժան ձայն էր արձակում չորս կողմը, կարծես մոտալուտ դժբախտության գույժ էր հաղորդում: Շատ անգամ բանվոր Արսենը՝ լսելով վաղ առավոտյան այդ ահարկու ոռնոցը, ասում էր.— չո՛ռ... քո տերջ հերն անիծած...

Վերջին օրերը Արսենը լարված դրության մեջ էր.— արդեն երկու շաբաթ էր, ինչ ագիտացիա էր մղվում գործադուլի համար, բայց գործարանատերը՝ հոտն առնելով, մոբիլիզացիայի էր կանչել իր բոլոր վարձկաններին՝ հրահանգելով նրանց՝ հետևել բանվորներին, իմանալ ի՞նչ են մտադիր անելու, ո՞վքեր են քարոզողները և ղեկավարները, և առհասարակ պարզել թե ո՞վ ինչ վերաբերմունք ունի, որպեսզի հարկավոր ժամանակ կարելի լինի «մաքրել»:

Մյուս կողմից գաղտնի ոստիկանությունն իր լրտեսների ցանցով պատել էր բանվորների շուրջը և սերտ կապ էր պահպանում գործարանի կառավարչի հետ: Այդ պայմաններում դժվար էր ագիտացիա մղելը, մանավանդ գործի դադարի պահելը: Հեղափոխական բանվորները զգուշությունից քիչ էին խոսում գործարանում, իսկ կարևոր դեպքերում նույնիսկ դիմում էին հայացքի զանազան նշանների.— աչքերի մի նշանն ասում էր— «որ դուրս գաս աշխատանքից հետո, կտեսնվես ինձ հետ», մի ուրիշը՝ «երեկոյան կգաս ինձ մոտ», երրորդը հրավիրում էր ժողովի, և այլն: Ագիտացիայի գլխավոր աշխատանքը կատարվում էր դուրսը՝ գաղտնի ժողովներում:

Շչակի ազդից հետո դուրս գալով բակը, Արսենը նկատեց այնտեղ կառավարչին՝ ինչ որ կասկածելի մարդու հետ, բայց աշխատեց ցույց տալ, թե ուշադրություն չի դարձնում, իսկ կառավարիչը ձեվացրեց, թե զբաղված է առևտրական գործերով:

— Ապրանք կարող ենք տալ, բայց ձեր դները մեզ չեն բավարարում— ասաց իր մոտի մարդուն:

Այս անգամ էլ նա դիմում էր իր սովորական նենգ միջոցներին,— ուզում էր ցույց տալ իր «հյուրին» դեկավար բանվորներից մեկին՝ Արսենին, որպեսզի ճանաչի... պետքը կլա...

Արսենը գնաց դեպի տուն, բայց կես ճանապարհից ծուվեց դեպի ձախ ու մի քանի բոպեից հետո հասավ «Արտեմի դարբնոցատունը»: Այնտեղ նա ժամադրվել էր գործարանի հաշվետար Խանդամիրյանի հետ: Նա պիտի իմանար վերջինից դրանցյակի օրվա «նորությունները», այսինքն ի՞նչ միջոցներ է ձեռնարկում կառավարիչը բանվորության դեմ, ի՞նչ տրամադրություն է տիրում «թշնամու» բանակում, ո՞վքեր են կառավարչի կողմնակիցները, և այլն:

Լուրերի ազդեցության տակ Արսենը գնում էր մտադրաղերը վերադարձավ տուն, մայրը նայեց նրա դեմքին և մտածեց, թե ինչ որ բան է պատահել, բայց այդ մասին հարց չտվեց, որովհետև Արսենը չէր սիրում նման հարցերին պատասխանել:

— Քիչ առաջ մի տղա եկավ քեզ էր հարցնում:

Արսենի լարված դրությունը դարձրել էր նրան կասկածոտ.— նա ենթադրեց, թե դաղտնի ոստիկանությունը մարդ է ուղարկել «հետախուզական» նպատակով:

— Ի՞նչ մարդ էր:

— Ստուդենտ (ուսանող) էր, քեզ հարցրեց, ես էլ ասի տանը չի, նա էլ ասաց մի ժամից հետո կգամ:

— Բա աղջանունը չիմացա՞ր:

— Մտիցս ընկավ, որ հարցնեմ:

Արսենի կասկածն անցավ, բայց նա դլխի չէր ընկնում, թե ո՞վ կարող է լինել ու դրանից նրա հետաքրքրությունն ավելի էր վառվում: Վերջացնելով իր համեստ ընթրիքը, նա մի բաժակ թեյ առաջը դրած ծխում էր ու մտածում: Մայրը, լավ իմանալով, որ այդ բոպեներին Արսենի տրամադրությունը բացվում է, մոտ նստեց ու հրճվանքով նայում էր որդու դեմքին: Նա չհամբերեց, էլի իր հարցը տվեց.

— Ինչո՞ւ էսօր տխուր եկար:

— Տխուրը ո՞րն է... Ջահել տղեն ինչո՞ւ պետք է տխուր լինի:

— Դե ես ի՞նչ դիդամ, քիչ առաջ երեսդ փակված էր:

— Բանվորը որ կա՝ իր ուսերի վրա է պահում ամբողջ աշխարհը... էլ ո՞ւմնից պիտի նա վախենա— ասաց Արսենը ժպտով, ձեռքը դնելով մոր ձեռքի վրա:

— Ա՛յ, էդպես որ խոսում ես, իմ սիրտն էլ է բացվում...

Մոր մեջ նորից շարժվեց նրա մշտական իղձը՝ իր Արսենի ամուսնանալու հարցը.

— Լիզան բարև է ուղարկել...

— Հա, նրա փորացավն էլ դիտեմ— ուզում է ոտս թել կապել...

— Ի՞նչ, պակաս աղջիկ է Մանիկը...

— Բան չեմ ասում, մայրիկ, բայց ոտին թել կապել էլ հեշտ չի...

— Բա մեր տանն էլ ուրախություն պետք է լինի՞, թե՞ չէ:

— Է՛հ, մայրիկ, դու հին հանդի ես մտածում. էլ չես իմանում, մեզ մոտ ի՞նչ է կատարվում. մարդ մարդու դարդ չի իմանում, կես դիշերին պատարաղ է անում...

— Մինչև ե՞րբ պետք է էդուցվան թողնես դործը:

— Լավ, կմտածենք... երևի մի օր կվճռենք, քո սրտով կանենք...

Մայրը ուրախացավ, ենթադրելով, թե իր Արսենն արդեն համաձայնություն է տալիս: Նա վեր կացավ, որպեսզի ցույց տա Մանիկի նկարը, որ ուղարկել էր իր քույրը՝ Լիզան, բայց այդ բոպեին մեկը դուռը ծեծեց:

— Վահ, դուք ե՞ք—ասաց Արսենը, բացելով դուռը,— ես էլ մտածում էի, թե էս ով պիտի հարցներ ինձ. դե բարով եք եկել, նստեք տեսնենք:

Ու Լևոնյանի թևից բռնած բերեց նրան սեղանի մոտ:

Լևոնյանը ծանոթացել էր Արսենի հետ երկու տարի առաջ, էր տանտիրուհու մոտ. նա վերջինիս ազդականն էր և հազվագեպ էր հյուր դալիս նրա մոտ:

— Էդ ինչպե՞ս է որ վաղ եք եկել, չլինի՞ թե բան է պատահել։

— Հա, ճիշտ է, մեծ բաներ կային,— ասաց Լևոնյանն ու պատմեց իր գլխին եկածը։ Արսենը լսում էր մեծ ուշադրությամբ, բաց չթողնելով ոչ մի բառ։ Նրա ծաղկատար դեմքի բնական լրջությունն ու եռանդի արտահայտությունը դուր էին գալիս Լևոնյանին։ Այդ հատուկ ուշադրության ազդեցությամբ Լևոնյանն ինքն էլ աշխատում էր ավելի ուշադիր և մանրամասն պատմել ամեն ինչ։

— Մեր ղեկավար ընկերները մեծ նշանակություն են տալիս այդ ցույցին. մենք մեծ ուրախությամբ կարդացինք այդ լուրը լրագրներում, բայց կառավարության հաղորդագրությունն ամեն ինչ աղավաղել էր... իհարկե լավ կլիներ, եթե դուք մի փոքրիկ ղեկուցում անեիք դրա մասին, բայց դա վտանգավոր է...

— Իսկ ես եկել եմ ձեզ մոտ առաջարկելու իմ աշխատանքը բանվորության մեջ...

— Լավ եք ասում, բայց թե մեր դրությունը, թե ձերը աչքի առաջ ունենալով՝ նպատակահարմար չեմ տեսնում ձեր առաջարկը։ Մենք այժմ մեծ իրարանցման մեջ ենք...

Արսենը պատմեց այն պայքարի մասին, որը առաջ էր տարվում գործարանում.

— Մեր ամեն մի քայլին հետևում են, դիմում ամեն տոր միջոցների, որպեսզի վիժեցնեն մեր գործը... իսկ ձեր կապվելը՝ մեր բանվորության հետ շատ շուտ կնկատվի դաղտնի ոստիկանության կողմից։

— Ինչո՞ւ...

— Պարզ է, թե ինչո՞ւ... դուք դեռ նոր եք աքսորվել, ուրեմն ձեր գալու օրից ձեզ կանոնավոր հսկողության տակ կառնեն, ձեզ կհետևեն և ձեր հետքերով էլ կգան մեզ մոտ... իսկ մեզ մոտ էլ ինչպես ասացի՝ դրությունը «գինվորական» է... իմ կարծիքով դուք դոնե մի ամիս պետք է սուս ու փուս մնաք, չկապվեք հեղափոխական ընկերների հետ, մինչև որ ձեր շուրջը եղած հսկողությունը կթուլանա։

Նկատելով Լևոնյանի հիասթափի դեմքը Արսենը ժպտաց.

— Ի՞նչ եք շտապում... այնքան գործ կա որ... դու մարդ ասա, թե չէ աշխատանք կա ու կա... իսկ դուք պիտի աչքի առաջ ունենաք, որ մեր գործարանը բացառիկ դրության մեջ է։

Ու նա ավելի մանրամասն պատմեց իրանց գործարանի իրադարձությունների մասին։

— Մի ուրիշ հարց էլ կա,— ասաց Լևոնյանը. այստեղ կարելի՞ է ստանալ անվեղաչ դրականություն...

— Մշտական չէ, բայց մեկ-մեկ կարող ենք ձեզ մատակարարել. դա կարող է լինել մի ընկերի միջոցով. ես նրան կասեմ ձեր մասին...

Այնուհետև Լևոնյանը մի քանի հարցեր տվեց տեղում գործող ընկերների մասին։

— Դժբախտաբար մեր ամենաուժեղ ընկերները բացկայում են. վրացի ընկեր Ռազմաձեն բանտարկված է, իսկ ընկեր Փաղարյանը տեղափոխվել է Բաքու։

Նա պատմեց մի շարք դեպքեր այդ ընկերների կյանքից։

— Իսկ որտեղ է ձեր ընկեր Մկարդարյանը, հարցրեց Արսենը —ես նրանից շատ բան եմ սպասում։

— Նա պետք է դար Ռուսաստան, բայց հետո մտադրությունը փոխեց և մեկնեց արտասահման։ Մի երկու նամակ ստացել եմ նրանից. գրում է, որ լավ է և գրում է թե այստեղ «ա» է, «բ» չի, այսինքն թե՝ ազատություն է, բռնություն չի...

— Հա, դե մեր երկրի հետ համեմատած այնտեղ լավ է, գոնե սոցիալիստական դրականություն կարելի է կարդալ, ժողովներ անել...

Բավականաչափ զրուցելուց հետո Լևոնյանը հրաժեշտ տվեց Արսենին, հետը տանելով մի նոր ոգևորություն. այդ ոգևորությունը այժմ գալիս էր ոչ թե գրքերից, «փիլիսոփայությունից», այլ ինչպես ինքն էր ասում՝ գալիս եր ներքևից՝ «հողից»... դա տալիս էր մի նոր ուժ, ասես նոր էր ոտքերը դնում հողի վրա...

... Երբ մի տաս օրից հետո Լևոնյանը՝ շորերը փոխած և Արսենի ցուցմունքներով որոշ զգուշություններ ձեռք առնելով եկավ վերջինիս մոտ, մայրը նրան հանդիպեց արցունքոտ աչքերով.

— Տա՛ր ան են անորենները... տարան որդուս... իմ աչքիս լուսը... Ո՞վ գիտա ինչ պիտի անեն Արսենիս... գոնյա մի խաբար իմանամ նրանից... մոտ չեն թողնում...

— Ոչինչ, մայրիկ, շատ մի դարդ անիլ, մի քիչ կպահեն, հետո բաց կթողնեն,— հանգստացրեց Լևոնյանը ու մի քանի մանրամասնություններ իմանալուց հետո հեռացավ, թողնելով մորը իր կսկիծի մեջ... Ամեն ինչ, որ հիշեցնում էր Արսենին, արցունք էր բերում նրա աչքերին, իսկ ի՞նչը կարող էր չհիշեցնել նրան այս տան մեջ... Արսենին «երջանկացնելու»՝ ամուսնացնելու հարցը... Մանիկի պատկերը... այդ բոլորը չքացավ որպես երազ... Այժմ Արսենն այն անիծված բանտումն էր...

Լևոնյանը չհամբերեց, թողեց իր զրուցությունը և անցավ դործարանի մոտով, դռների մոտ կանգնած էին ոստիկանական պահակները: Նա ներս մտավ մոտակա մանրավաճառի խանութը, պահանջեց ծխախոտ ու հենց խանութում ծխելով, հարց ու փորձ արավ խանութպանին:

— Հա, դարաստովկա (դործադուլ) են ուզում... քանի մարդ են բռնել... դե էս թաղավորի՝ Նիկոլայի զոռի դեմ մարդ կարա՞ մի բան անի...

Լևոնյանը դնում էր տուն՝ տարված հետաքրքրությամբ: Նա արդեն լսել էր, որ դործադուլը հետաձգված է անորոշ ժամանակով, բայց ձերբակալության մասին նոր իմացավ, որովհետև մի օր առաջ էր կատարվել... «Սկսվում է»... կրկնում էր նա ճամբին, ցավ զգալով, որ ինքը այդ դործի մեջ չէ...

XLVII

Լևոնյանի կյանքն այժմ որոշ ընթացքի մեջ էր ընկել,— անցել էին սկզբի այն օրերը, երբ նա, կարծես օդում կախված վիճակի մեջ էր՝ աքսորված, անդործ ու անխոզ.— Այժմ նա արդեն երկու մասնավոր դաս ուներ, և կարողանում էր իր ապրուստը հայթայթել, թեպետ մասնավոր դասերը փոփոխական և անհաստատ աղբյուր էին: Իր նոր ծանոթությունների շրջանը հետզհետե լայնանում էր, բայց այն հոլերը, որ նա բերել էր իր հետ՝ իր հեղափոխական մտքերը մեծ մասամբ հանդիպում էին դիմադրության կամ անտարբերության: Միայն հազվադեպ պատահող հեղափոխական ընկերների կողմից նա լսում էր խրախուսանքի և քաջալերության խոսքեր:

Այդ կողմից Լևոնյանի համար բնորոշ էին հայանի փաստաբան Մինասյանի կարծիքները: Նա դաս էր տալիս Մինասյանի տղային և օրումեջ լինելով նրա տանը, երբեմն խոսքի էր բռնվում նրա հետ՝ «հասարակական հարցերի» շուրջը: Մինասյանն այժմ հարուստ էր, անվանի, և հասել էր այն վիճակին, երբ կլիենտներն իրենք էին վազում իր ետևից: Սկզբում նա հետաքրքրությամբ և զիջող ժպտով լսում էր Լևոնյանի պատմածը՝ հեղափոխական շարժման մասին, կարծես լսում էր ուսանողական չարաճճիությունների մասին:

— Հա՛, մի ժամանակ ես էլ ջերմ մասնակցություն ունեյի ուսանողական շարժման մեջ... Է՛հ, ի՞նչ ժողովներ, ի՞նչ ոգևորություն, ի՞նչ ճառեր...

Պատմելով այդ շարժման մասին, նա այնքան ոգևորվեց, որ արտասանեց ինչ վոր երկրորդական բանաստեղծի տողերը.

О, где ты молодость с бурями шумными,
С вдохновенными речами безумными?....

Այստ ուղղելով իր ոսկեղոծ ակնոցները, նա մի քանի վայրկյան մտածմունքի մեջ ընկավ.

— Բայց այդ բոլորը ջահելություն էր, կամ ինչպես ռուս հայանի դրողն է ասում՝ ծուխ էր, որ ցրվեց դնաց... կյանք մտնելով ես տեսա, որ այդ բոլորը կյանքի հետ ոչ մի կապ չունի...

— Իսկ ձեր կարծիքով ո՞րն է կյանքի իսկական արտահայտությունը:

— Եթե անկեղծ խոսենք, կյանքի իսկական արտահայտությունը դոյության կռիվն է... եկեք մի օր դատարանի քաղաքացիական մասը և դուք մի հայացքով կնկատեք այդ:

— Իսկ իմ կարծիքով ձեր մեջ կատարվել է այն, ինչ նկատվել է և ուրիշների վերաբերմամբ.— ձեր մեջ այն տարրերին եղել է մի թաղնված հակասություն՝ ձեր տնտեսական դիրքի և հայացքների մեջ, և այդ հակասությունը բացվել է հետագայում... ինչպես ասում է Մաքսիմ Գորկին— «այսոր դու ուսանող ես, իսկ վաղը՝ դատախազի օգնական...»:

— Երևում է դուք էլ հետևում եք մոդային,— ներկա սերունդը սիրում է ամեն ինչ բացատրել «տնտեսական հարաբերություններով»...

— Ինձ թվում է՝ ձեր գործունեությունը՝ որպես փաստաբանի՝ ավելի ապացույցներ պիտի տար այդ տեսակետի օգտին. օրինակ ձեր ասած գոյության կռիվը մինթե՞ ձեզ չընկալտաղ հասարակության մրցման պատկերը չէ՞...

Նկատելով, որ Լևոնյանը մոտենում է «փափուկ»՝ այսինքն սոցիալական խնդիրներին, Մինասյանը միշտ խուսափում էր և աշխատում վրայից թռչել:

— Գիտե՞ք ինչ կա, այս կարգի հարցերը վճռում են՝ կյանքը, փորձը... ես փորձել եմ, դուք էլ կփորձեք... ու երբ կյանք կմտնեք, ահա այն ժամանակ հետաքրքիր կլինի խոսել ձեզ հետ... այլ բան է թեորիան, և այլ՝ պրակտիկան, կյանքը...

— Եվ թեորիան և պրակտիկան կարող են լինել վիճաբանության առարկա...

— Մի խոսքով՝ ես ուզում եմ ասել՝ դուք դեռ չահել եք, կապրեք կտեսնեք...

Լևոնյանին զարմացնում էր, որ Մինասյանը լինելով ուժեղ փաստաբան, մի տարօրինակ անզորություն եր զգում, երբ մոտենում էր սոցիալական հարցերին, կարծես նրա Աքիլլեսյան կրունկից էին բռնում կամ բացում էին մի վարագույր, որ ընդմիշտ պիտի ծածկված մնար: Եվ միշտ այսպիսի գրույցներից, վեճերից հետո նա դուրս էր գալիս ամպամած՝ ասես մի տխուր երաժշտություն լսելուց հետո: Նրան թվում էր, թե այս չքեղ կահավորված բնակարանը՝ իր փափուկ թավիշյա աթոռներով ու բազմոցներով, ոսկեզոծ լյուստրերով՝ այս ամենը մի թաղման զարդարանք է... ու չքեղ սանդուղքներից իջնելիս նա հաճախ հիշում էր «Մեռած հոգիները»...

Սակայն Լևոնյանի ծանոթների մեջ պատահում էին և կես համակրող ինտելիգենտներ՝ այն տիպի մարդիկ, որոնց մասին ասում էին, թե նրանք «ոգիով սոցիալիստ են, մարմնով բուրժուա»: Նա որոշ չափով մխիթարանք էր զգում դոնե այդ չափի համակրանք նկատելով դեպի հեղափոխական շարժումը:

Արսենի հետ տեսնվելուց հետո Լևոնյանը շատ չանցած՝ համոզվեց, որ դաղտնի ոստիկաններն իրան հետևում են: Երբեմն նա տեսնում էր իր տան մոտ՝ փողոցի բերանում՝ մի սպասող մարդու, որի տեսքը նրան թելադրում էր, թե դա «նրանից» է, երբեմն էլ նկատում էր, որ հետևում են և ուրիշ փողոցներում. թեպետ նա անուշադիր էր, բայց կրկնվող դեպքերն ասում էին, որ իր ետևից հսկողություն կա: Դա մի նոր երևույթ էր իր կյանքում և ավելի շուտ գրգռում էր նրա հետաքրքրությունը, քան թե լարում նրա զգուշությունը:

Օրերն անցնում էին բավական անկարգ. դասերից ազատ ժամերը դժվար էր ասել, թե ի՞նչով էին լցվում,— ընթերցանությա՞մբ, երկարատև վեճերո՞վ, թե թափառումներով: Երեկոները նա երբեմն գնում էր Գալոյանի մոտ. այնտեղ հավաքվում էին մի խումբ ինտելիգենտներ՝ մեծ մասամբ գործաղուրկ և զրուցում էին, իսկ վերջը անխուսափելիորեն անցնում էին բուռն վիճաբանության: Նրանք ցրվում էին ուշ գիշերով, զգալով, որ ոչ մի հարց չլուծեցին, և ամբողջ երեկոն, ինչպես և նման երեկոները վերածեցին տխուր ժամանցի, որի միջոցով փախուստ էին տալիս իրանց կյանքի ծանր, «անլուծելի» տնտեսական հարցերից: Նա զարմանում էր, նկատելով, որ խոսակցության հիմնական մոտիվը դժգոհությունն էր,— նրանք սառապում էին, դժգոհ էին կյանքից, բայց այդ բոլորի պատճառը համարում էին պատահական, որպես մի ձախորդություն, և ոչ տիրող կարգերը: Այդ բոլորը նրանք աշխատում էին քողարկել «երաշներով» ու «հույսերով», ամեն մեկը մտածում էր,— «գուցե դրությունը լավանա՝ այս ինչ հարուստը օժանդակի՝ համաձայնվի թոշակ տալ... կգնա արտասահման, կուսումնասիրի հասարակական դիտությունները»...

Երբ Լևոնյանը փորձեց իր նոր տեսակետները արծարծել, նա զարմացավ, որ բոլորն էլ դեմ էին արտահայտվում:

— Սոցիալիզմն ի՞նչ է որ... ստամոքսի հարց է, արժե՞ դրանով զբաղվել... մարդ պետք է տարվի տիեզերական խորունկ առեղծվածներով,— ասում էր սև ակնոցավոր վիրտուոզը ու կարծես ապացուցելու համար քաշվում էր պատուհանի կողմը:

— Սոցիալիզմը ոչինչ չի կարող տալ, քանի որ գոյություն ունի «մարդկային եսը»... ինչպե՞ս կարելի է հաշտեցնել սոցիալիզմը գոյության կռվի հետ... դա երազ է, ինչպես երազ է ամեն ինչ այս աշխարհում,— ասում էր Գալոյանը, ծուլորեն

վեր կենալով պառկած տեղից, և դիտելով թե ինչ տպավորություն արին իր մտքերը ունկնդիրների վրա։

— Մեր դյուղացին ինչ գործ ունի սոցիալիզմի հետ— նա հավանում էր իր գործած շալե շուխան, իր տրեխը, ապրում է իր էիր ու չորթանով— ինչո՞ւ պետք է մենք նրան զոռով մտցնենք պրոլետարիատի երկաթե օղակի մեջ— լսվում էր սենյակի անկյունից Ղուկասյանի ձայնը, որը փորձում էր սովորական ասեղով կարկատել իր կոշիկը։

Ստեղ-ստեղ այս տեսակետներին միանում էր և այն թեղը, որ Լևոնյանը լսել էր շատ անգամ՝ «Մենք գործ չունենք Ռուսաստանի հեղափոխական շարժման հետ,— մեր գործը Տաճկահայաստանումն է»...

Մի քանի այդպիսի վեճերից հետո Լևոնյանը համոզվեց, որ այդ «տառապող» մարդիկ նման են սնանկացած ազնվականներին, որոնք չեն ուզում թողնել իրանց ազնվական իլլյուզիաները։ Այդ խմբի ընական «արտահայտությունը» կամ անտարբերությունն էր հանդեպ նոր դաղափարներին, կամ՝ եթե մի քիչ ավելի խորը քչփորեին՝ երևան կդար «ազդայնականը»։ Այդ ընական դրությունից շեղելը թվում էր դուր աշխատանք, որն ավելի լավ էր գործադրել «հարազատ» շրջանում՝ բանվորության մեջ,— այնտեղ էր կուտակված հսկայական ուժը՝ ապադա հեղաշրջման համար։

Քանի շատ էր ծանոթանում Լևոնյանը զանազան խավերի հետ, այնքան ավելի էր խորանում նրա աչքում քաղաքի «ճեղքված»։ Քաղաքն այժմ պատկերանում էր նրա առաջ որպես մի ամբություն, որը դրավել էին թշնամիները։ այդ ամբությունը նա անվանում էր «բուրժուական միջնաբերդ»։ «Միջնաբերդը» նա կենտրոնացում էր քաղաքային «ինքնավարության» շենքի մեջ՝ այնտեղ, ուր նստում էին քաղաքի «տերերը»։ Ամեն օր ցերեկվա որոշ ժամերին դալիս էր շքեղ կառքով ամենքին հայտնի Տիդրան Ամբակումովիչը՝ բուրժուական շրջանների «ընտրելին» և կառավարության «ընդունելին», դալիս էին քաղաքային ինքնավարության ղեկավարները՝ վաստակավորներ, ինժեներներ, բժիշկներ, որոնց արտաքինի մեջ մի ընդհանուր դերասանական դիծ կար.— ասես բոլորն էլ սովորել էին միևնույն դրամատիքական դպրոցում.— կար մի շինծու պատվարժանություն, խստացրած արհամարհանք դեպի ցածի խավերի մարդկանց։ Նրանց բարեների մեջ էլ կային աստիճաններ՝ նայած թե ո՞ւմ էին բարևում՝ ի՞նչ բարձրության վրա էր գտնվում բարևին արժանացողը։

Քաղաքային ինքնավարությունն ուներ իր սահմանափակ թվով «ճանաչողները»,— ընտրված միայն սեփականատերերից,— որոնք շաբաթը մի անգամ, այն էլ ոչ-թատրոնական՝ երկու շաբթի օրերը ունենում էին իրանց ժողովները։ Փոքր էր նրանց թիվը, փոքր էր դահլիճը և փոքր էին նրանց քննելիք հարցերը։ Միօրինակ ու ձանձրալի էին այդ ժողովները, բայց վայելուչ ձևերով։ այդ ժողովներում մարդիկ հանդես էին դալիս ձայների խուլ հնչումով, և դեմքերի լուրջ արտահայտությամբ։ Երբեմն միայն (դժվար է ասել, թե ո՞ր քամու ազդեցությամբ), մեկը սկսում էր «հռետորել», նույնիսկ ձեռքով խփում էր առջևի սեղանին, և հանկարծ... վիրավորական խոսք էր ուղղում մի ուրիշ ճանաչողի հասցեին... Դա արդեն դառնում էր «փոթորիկ», այսինքն «վայելուչ» հասարակության բերանի նյութ։ տեղական թերթերը արձագանքում էին, երբեմն բաժանվելով երկու «ճակատի»։

Տեղական թերթերը... բայց դրանց մասին պետք է դրել մի ուրիշ ձևով, իսկ թե ի՞նչ ձևով՝ դժվար է ասել... քաղաքի ամենատարածված ռուսական թերթի ամենահետաքրքրական մասը՝ հայտարարություններն էին՝ մաղազինի, բժիշկների, գործ փնտռողների և... մեռելների մասին... մնացածը կարծես հավելած էր այդ հայտարարությունների վերաբերմամբ։

Թերթերի բովանդակությունը ցամաք աղբյուրի նման հուսախաբություն էր բերում։ Շատ անգամ, երբ անդրադառնում մարդը հարցնում էր ինտելիդենտներին.

— Ի՞նչ կա դաղեթում։

— Ո՛չինչ։

— Բա էդքան մեծ դաղեթում մի բան չկա՞... զարմանում էր անդրադարձը։

Թերթերը բերում էին ձանձրույթ և հորանջ, ցենդուրական մատիտը շատ էր հոդ տանում դրա համար։ Փոքր ինչ աշխուժություն էր նկատվում պոլեմիկայի օրերին, որ հաճախ վերածվում էր յուրահատուկ «թամաշայի»։

Հայկական երկու թերթերը՝ ըստ ընդունված տրադիցիայի՝ երկու կուսակցության ներկայացուցիչներն էին. բայց նրանց «սկզբունքները» վաղուց արդեն մաշվել էին, այնպես որ նրանց տարբերությունը դժվար էր նկատել: Երբեմն միայն, հեռավոր հիշողությամբ նրանք մտաբերում էին այն դարձվածքները, որոնցով հնուց մկրտել էին իրար. օրինակ՝ մի լրագիր մյուսին անվանում էր «թերթուկ», իսկ հակառակորդը՝ «անանուն թերթ»:

... Քաղաքն ապրում էր իր սովորական կյանքով... Այդ կյանքն ուներ իր հնուց սրբազործված ընթացքը, իր «սահմանափակ» շրջանները, որտեղ ամեն մեկին հատկացրած էր «իր տեղը»... Ուր էլ գնում էր Լևոնյանը, նա իր քննադատական աչքով ուրիշ պատկեր էր տեսնում,— ամեն տեղ նրա առաջ պարիսպների նման ծառանում էին «սահմանափակումները»— քաղաքում նա դդում էր մի ծանր, ճնշող մթնոլորտ, տեսնում էր մի խուլ պայքար երկու բանակների միջև...

... Երբեմն քաղաքային տրամվայի վագոնը հասնելով պուստյին, մի ճիչ էր արձակում, կարծես բողոքելով որ սահմանում են գնալ «սահմանած» ճանապարհով. այդ ճչի մեջ թվում էր՝ քաղաքի ճնշված կյանքի բողոքն էր լսվում...

Քաղաքի «խակական դեմքը» նրա խուլ պայքարի մեջ էր...

XLVIII

Լևոնյանի աքսորը վերջացավ ավելի շուտ, քան նա ենթադրում էր: Սկզբում թե նա, թե իր ընկերները կարծում էին, թե ամենաքիչը երկու տարի կտևի այն, բայց արդեն ամառվա սկզբին լուրեր եկան, թե ցուցարարներից ոմանք վերադարձել են մայրաքաղաք: Ովքեր էին դրանք և ի՞նչ հիման վրա էին վերադարձել, Լևոնյանը չկարողացավ իմանալ, բայց դրանից քիչ անց եկավ Միքայելյանի նամակը և դրությունը պարզվեց. վերջինս հայտնում էր, որ թեպետ պաշտոնապես չի հայտարարված, բայց փաստորեն ամնիստիա է կիրառվում, ուստի իրանք էլ կարող են վերադառնալ:

Այս անակնկալ փոփոխության պատճառն այն էր, որ կառավարությունը՝ ծավալվող հեղափոխության ճնշման տակ, փոխել էր իր դործելակերպը հանդեպ ուսանողության.— նա այժմ փորձում էր աղդել «փափուկ» միջոցներով, ցուցադրում էր իր բարյացակամ վերաբերմունքը, դանազան զիջումներով, հուսալով որ այդ միջոցներով կարող է հետ պահել ուսանողներին հեղափոխությունից:

Լևոնյանը մի օրով մեկնեց իր հայրենիքը՝ տեսնվելու և հրաժեշտ տալու իր ծնողներին: Նրանք մեծ «դարդի» մեջ էին իր բանտարկության և աքսորի առթիվ: Պապը հիվանդ էր և «ունայնության» մտքերով էր զբաղվում: Կյանքը թվում էր կանգնած, չճացած...

Սեպտեմբերի սկզբին Լևոնյանը ճանապարհ ընկավ դեպի Պետերբուրդ այնպիսի զդացումով, ասես բանտից էր ազատվում: Այժմ մի ճդողական ուժ քաշում էր նրան դեպի շարժման կենտրոնը՝ դեպի այն օջախը, որտեղից նա վերցրել էր իր «կրակը»: Նորից հյուսիսային մայրաքաղաքը ընդունեց նրան իր սառպատած, մռայլ երկնքով, իր խոնավ շնչով, ու նորից աննկատելի կերպով համակեց այն թախծոտ զդացումով, որ ծագում է ճամբորդի մեջ, երբ նա աշնան պահին տեղափոխվում է հարավից հյուսիս: Բայց քաղաքի փողոցներում այդ էլ չքացավ. այս անդամ նա քայլում էր ավելի վստահ, կարծես իր հին ծանոթների մեջ էր, հանդիպում էր կարոտով իր աչքին սովոր փողոցները, շենքերը...

Իրերը թողնելով կայարանում նա դնաց սենյակ փնտռելու: փորձված ուսանողին դա դժվարություն չէր կարող պատճառել, ուստի մի քանի ժամից հետո նա արդեն իր նոր սենյակումը էր: Տեղավորվելուց հետո Լևոնյանը չտատսեց դեպի համալսարան՝ իմանալու թե ո՞վքեր են եկել իր ընկերներից և ի՞նչ որոշում կա «խուսվարարներին» հետ ընդունելու մասին: Բայց դեռ տեղ չհասած՝ ճամբին նա հանդիպեց Միքայելյանին:

— Ա՛յ անսպասելի բան,— դոչեց Միքայելյանը, համբուրվելով ընկերոջ հետ. երկուսի բացականչերն այնքան ուժեղ էին, որ անցորդները զարմացած նայում էին, կարծելով, թե ինչ որ արտակարդ բան է պատահել:

— Ո՞ւր ես դնում, համալսարա՞ն,— հարցրեց Միքայելյանը, դուր ես քայլում, մեղ համար դեռևս փակ է...

— Ինչպե՞ս թե...

Մ ի ք ա յ ե լ յ ա ն ը հայտնեց, որ բոլոր բարձրագույն դպրոցներում ցուցարարները համարվում են «արտաքսված», իսկ հետ ընդունելու մասին դեռ ընդհանուր կարգադրություն չկա. առ այժմ ամեն մեկը պետք է դիմի իր մասին:

— Ուրեմն մտադիր են ընտրություն կատարելու...

— Ճիշտն ասած՝ դժվար է մի բան եզրակացնել,— ավելի հավանական է ենթադրել, որ լուսավորության մինիստրության մեջ անորոշություն պլյուս քաոս է տիրում:

Լ ե ո ն յ ա ն ը հետ դարձավ Մ ի ք ա յ ե լ յ ա ն ի հետ: Երկար քայլելուց և առատորեն խոսելուց հետո նրանք մտան մի էժանագին ռեստորան և մի անկյուն քաշվելով, թափ տվին իրանց վերջի ամիսների ապրումները:

— Ինչո՞ւ նամակ չէիր գրում—կշտամբեց Լ ե ո ն յ ա ն ը:

— Դե պոստով ուղարկելը ցանկալի չէր՝ կարող էին բացել. հաղիվ հաջողեցրի մի մարդ գտնել և նրա ձեռքով ուղարկելու էլ հո ընդամենը մի նամակ ես գրել...

— Նամակիդ մեջ տխուր նոտաներ կային...

— Դե դա զարմանալի չէ, զգացումներս կանչում են ինձ դեպի հեղափոխություն, բայց սկեպտիցիզմը մեկ-մեկ էլի գալիս էր ինձ այցելության... Հետո ի նկատի առ և այն միջավայրը, որտեղ ես ընկել էի...

— Ինչպես երևում է, դու էլ տխուր ես անցկացրել օրերդ:

— Ավելի քան տխուր... բավական է ասել, որ հայրս մի բոպե հանդիստ չէր տալիս.— նա օգտվում էր ամեն առիթից՝ ինձ խրատելու համար, մանավանդ սկզբի օրերին նա կատարյալ պատուհաս եր դառել դլխիս:

— Հա, ես այդ նկատեցի մեր հրաժեշտի ժամանակ՝ երկաթուղու կայարանում:

— Կարո՞ղ ես երևակայել,— այնքան էի վրդովվում ու ձանձրանում, որ ավելի լավ էի համարում աքսորվել Սիբիրի հեռավոր գյուղերից մեկը, քան «սեփական» հայրիկի մոտ... Ծիծաղելին այն է, որ երբ ես վերջապես ուլտիմատում դրի թե կհեռանամ տանից, և դրանով լռեցրի հորս, նա սկսեց ուրիշներին դիմել, որպեսզի ինձ «խրատեն»... դե երևակայիր իմ դրությունը,— գալիս էին իրար հետևից էլ բարեկամ, էլ ծանոթ, էլ քեռի, էլ փեսա ու գլուխս տանում զավառական խորհուրդներով... որոշ չափով անկախություն ձեռք բերի մասնավոր դասեր ճարելուց հետո...

Մ ի ք ա յ ե լ յ ա ն ը փոքր ինչ լռեց, ապա ավելացրեց խորամանկ ժպտով.

— Միակ մխիթարությունս մի ռուս օրիորդ էր՝ տեղական չինովնիկի աղջիկը.

— Օհո՛... դարձյալ կի՞ն... այդ ո՞ր երրորդն է...

— Հա՛... զբոսնում էինք, խոսում, «սեր չորացնում», բայց երևում էր՝ լավ խրատած, տանու աղջիկ էր, այն աղջիկներից, որոնք մտածում էին՝ «նախ ամուսնություն, հետո սիրահարություն»... մի խոսքով՝ հարցեր էր տալիս իմ ապագա կարերայի մասին, ուզում էր ավելի հիմնավոր բռնի դործը՝ «վասն ամուսնության»... ինձ էլ՝ իմ այս խճճված դրության մեջ հենց այդ կապանքն էր պակաս... Այդպես՝ վեպը վերջացավ, ինչպես ասում են՝ «մխյանց չհասկանալու պատճառով»... Սակայն նրա մեջ մի համակրելի դիծ կար, այն է՝ որ նա ինձ հետ ծանոթություն էր պահպանում իր հոր կամքի հակառակ և բացի դրանից զարմանալի է, որ հավատում էր իմ կարերային:

— Իսկ ի՞նչ լուրեր ունես Մ ա ր ո ւ թ յ ա ն ից:

— Տխուր պատմություն է... ինչպես լսեցի, նա գաղտնի դնացել է Բ ա գ դ ո ւ, իսկ տանը պատվիրել է ասել, թե հիվանդ պառկած է... Բ ա գ դ ո ւ մ էլ տեսնվել է մի շարք հեղափոխական ընկերների հետ, ոստիկանությունը հետևվել է, իմացել դաղտնիքը... մի խոսքով նոր դործ է սկսվել... հիմա նրան բաց չեն թողնում իր «դավառից»...

— Ափսո՛ս... երևի երկար կտևի այդ պատմությունը...

— Խոսք կար նույնպես, իբր թե բռնել են նրա մի նամակը... դա էլ կարող է բարդացնել հարցը...

— Բանն այն է, որ նա այնտեղ դժվար թե կարողանա մի «դործ» սկսել, իսկ այստեղ կամ մի ուրիշ մեծ քաղաքում նա շատ բան կաներ...

— Հա, Գ ա ր ո ւ ն յ ա ն ը երկու անդամ հարցրել է ինձ նրա մասին... մոռացա ասեմ, որ նա քեզ էլ էր ուզում տեսնել,— երևի դործ կա...

... Արդեն մութն ընկել էր, երբ ընկերները դուրս եկան

ռեստորանից՝ դարեջրից ու վատ հոտից ծանրացած դլուխներով և բաժանվեցին իրարից։

XLIX

Հանդիպելով Լևոնյանին համալսարանի ճաշարանում Գարունյանը խնդրեց նրան տեսնվել իրան հետ հետևյալ օրը՝ մի ընկերոջ սենյակում, քանի որ իր տան շուրջը հսկողություն կար։

Երբ նշանակված օրը՝ երեկոյան Լևոնյանը եկավ հանձնարարված ընկերոջ սենյակը, նա այնտեղ տեսավ նստած Գարունյանին, բայց կերպարանափոխված,— ուսանողական տուժուկայի տեղ նա հագել էր պիջակ և աչքերին դրել ակնոց։

— Բարև, բարև,— ասաց Գարունյանը ու պինդ սեղմեց Լևոնյանի ձեռքը... Դե՛, մի նստեք, պատմեք, տեսնենք, ի՞նչ լուրեր, ի՞նչ տպավորություններ եք բերել մեր հայրենիքից... ինչպե՞ս անցավ աքսորը։

— Իհարկե, վատ...

— Եթե դուք իսկական աքսորը տեսնեիք, կասեիք՝ ձերը վատ է...

Լևոնյանը պատմեց մանրամասն իր հանդիպումներից, տպավորություններից, Գարունյանը լսում էր ուշադրությամբ։ Երկու մատով շոյելով իր կարճ մորուքը։ Այնուհետև նա մի չարք հարցեր տվեց՝ ավելի պարզելու համար տիրող դրությունը «հայրենիքում»։

— Իհարկե, եթե դուք ավելի խոր մասնակցություն ունենայիք հեղափոխության մեջ, ավելի շատ կապեր կունենայիք... այնտեղ՝ Բաքվում և Թիֆլիսում մենք ունենք փայլուն ընկերներ... բայց ոչինչ, այդ էլ կդա ժամանակին... Այժմ դառնանք բուն խնդրին... Հիմա անհրաժեշտ է անցնել ավելի կարևոր գործի... մեր ուսանողության ընդհանուր ուժերը պիտի աշխատեն բանվորության մեջ, դա շատ կարևոր է... Դուք պետք է պարապեք մի խումբ բանվորների հետ...

— Բայց կկարողանա՞մ արդյոք արդարացնել ձեր վստահությունը... ես ինձ դեռ ևս պատրաստ չեմ տեսնում այդ գործի համար...

— Ես կարծում եմ՝ կարող եք,— դե իհարկե, սկզբում մի փոքր դժվարություն կլինի,— առաջին անգամ լողալը դժվար է թվում։ Հետո չպետք է մոռանալ, որ լավ ուսուցիչը նա է, ով միշտ սովորում է և լրացնում իր դիտեցածը.— մենք միանգամից կազապարված մարդիկ չենք...

Լևոնյանը զզում էր իրան մի անսովոր հուզման մեջ. ասես մի քանի ժամից հետո պիտի մեկներ դեպի պատերազմի դաշտը։

— Ուրեմն՝ սկսում ենք հա՞,— ասաց Գարունյանը և նկատելով Լևոնյանի համաձայնության ժպիտը, շարունակեց.

— Այս հարցով պիտի կապվեք ընկեր Պետրովի հետ. նա ձեզ կտա հասցեները և կանի որոշ կարգադրություններ... դե՛ տվեք ձեր ձեռքը... որտեղ էլ ընկնեք, հիշեք մեր մեծ առաջնորդներին և ամուր կացեք...

Գարունյանը վեր կացավ տեղից և ըստ սովորության քայլեց սենյակում բոպեաչափ, ապա նստեց նորից.

— Պետք է ասեմ, որ մինչև այժմ ձեր արածը հառաջաբան էր.— իսկական գործը սկսվում է այժմ... և այս գործը պահանջում է մի առանձին զգուշություն, քանի որ այժմ խաղն ավելի բարդանում է... դուք արդեն որոշ փորձառություն ունեք, ձեզ սովորեցնել պետք չէ... դուք էլ դիտեք, որ գաղտնապահությունը մի առանձին արվեստ է, որին պետք է տիրանալ։ Բայց դրա մեջ չափազանցություն էլ երբեմն ավելի վնասում է, քան օգնում,— Մի խոսքով՝ պետք է աշխատել «հատակի տակ», բայց ցույց տալ միշտ հատակի վերևը... Դե՛, որպեսզի վերջացնենք մեր տեսակցությունը, շատ ուրախ եմ, որ դուք ոտ դրիք այս լուրջ աշխատանքի մեջ... այժմ դուք կգնաք, իսկ ես կհեռանամ ավելի ուշ՝ ընկերոջ դալուց հետո...

Լևոնյանը ձեռք մեկնեց Գարունյանին և դուրս եկավ փողոց, երկար խորհրդածելով այս նոր, դժվարին գործունեության մասին։

L

Գարունյանի հետ տեսնվելուց հետո Լևոնյանը սպասում էր Պետրովի առաջարկին, որպեսզի սկսի իր պարապմունքները բանվորական խմբի հետ, իսկ մինչ այդ պատրաստվում էր, կար-

դալով անհրաժեշտ նյութերը: Վերջապես՝ մի շաբաթ անց՝ Պետրովը հանդիպեց լաբորատորիայում Լևոնյանին և հայտնեց այն բանվորի հասցեն, որը պիտի առաջնորդեր նրան:

— Հասցեն ավելի լավ է անգիր անել,— ասաց Պետրովը,— որպեսզի ձերբակալման դեպքում դոկումենտ չտաք ժանդարմների ձեռքը, իսկ եթե մոռացկոտ եք, գրեք միայն թվերը՝ առանց փողոցի անվան: Քաղաքի պլանով ճիշտ որոշեք ձեր գնալու տեղը, մարշրուտը, որպեսզի գնալիս չհարցնեք ուրիշներին փողոցի տեղը: Պարոլը (նշանաբանը) կլինի՝ «Արշալույս»,— դուք կասեք այդ և այն ընկերը ձեզ կընդունի... Ուրեմն վաղը՝ երեկոյան ժամը 8-ին կլինեք այդ ընկերոջ մոտ. նրա ազգանունը Սակալով է՝ Միխայիլ Իվանովիչ...

— Իսկ պարապմունքների մասին ի՞նչ խորհուրդ կտաք:

— Հա, որպես նյութ կվերցնեք «Կոմունիստական մանիֆեստը», իսկ օրինակներով կբացատրեք շոշափվող հարցերի էությունը. ամեն ինչ պիտի մատուցեք պարզ և մատչելի ձևով: Ապա պետք է ի նկատի ունենաք, որ այսուհետև դուք անխուսափելի կլինեք «կասկածի տակ», այդ պատճառով սրանից հետո պիտի շատ քիչ հանդիպեք այն ընկերներին, որոնք նույնպես կասկածի տակ են...

Նա հանեց դրպանից ճխլված ու շատ բանեցրած մի դիրք, որի առաջի երեսներն արդեն մաշվել էին.— դա, «Կոմունիստական մանիֆեստն» էր: Ու սեղմելով Լևոնյանի ձեռքը, ասաց.

— Դե՛հ, հաջողություն...

Լևոնյանը վերցրեց դիրքը և գնաց դեպի տուն: Նա ծանոթ էր այդ դրված-քին, բայց այժմ սկսեց կարդալ մի առանձին ուշադրությամբ, հաճախ կանգ առնելով այնպիսի տեղերում, որոնք առաջին ընթերցման ժամանակ սահելանցել էին նրա ուշադրությունից:

Հետևյալ երեկոյան նա դուրս եկավ տանից ու նստելով ձիաքարշ տրամվայը, ճանապարհ ընկավ դեպի այն թաղը, որտեղ գտնվում էր հասցեում նշված տունը:

Այն խոշոր գործարանը, որի բանվորների հետ Լևոնյանը պիտի պարապեր, գտնվում էր քաղաքի ծայրին և տարօրինակ դուգադիպությամբ առանձնապես տպավորվել էր նրա հիշողության մեջ: Երբ նա մի տարի առաջ պատահմամբ անցնում էր

այդ թաղով՝ երեկոյան դեմ, հանկարծ լսվեց շչակի ձայնը և գործարանից դուրս թափվեց փողոց բանվորների խիտ բազմությունը: Նայելով մրից սևացած այդ դեմքերի հոսանքին, Լևոնյանին թվում էր, թե գտնվում է ինչ որ հեքիաթային երևույթի առաջ. թվում էր, թե դրանք սովորական մարդիկ չէ-ին,— այդ մրից սևացած դեմքերը «երկրի ոգիներն» էին, որոնք կախարդված, պահված էին ստորերկրյա մութ խորշերում և այժմ դուրս էին գալիս լույս աշխարհ՝ երկրի տերերին ստանալու համար...

Նա գնում էր առաջուց որոշած մարշրուտով, կարդալով տնային լապտերների վրա փողոցների անունները: Վերջապես նկատելով իր փնտռած փողոցը և համարը, նա կանգ առավ և մտավ մի կիսամութ դավիթ: «Զախ կողմի մուտք, ներքնահարկ»,— հիշեց նա հասցեն ու թիզավ գաղով լուսավորված, խոնավ սանդուղքներով մի քանի աստիճան դեպի ներքև: Ահա՛ և իր փնտռած բնակարանը.— նա հուզմունքով քաշեց հաստաբակ դանդի փայտե բռնակը: Դուռը բացեց մորուքավոր մի մարդ, միայն ժիլետ հագած, փորձող հայացք ձգելով Լևոնյանի վրա:

— Այստե՞ղ է ապրում Սակալովը,— հարցրեց Լևոնյանը:

— Համեցե՛ք, արագ արտասանեց ժիլետով մարդը, հետ քաշվելով և ներս թողնելով Լևոնյանին:

Աղոտ լուսավորված միջանցքով մի քանի քայլ անցնելով, նրանք մտան մի փոքր սենյակ: Այնտեղ նստած կինը և դպրոցական հասակի աղջիկը միջանցուկ դռնով մտան մյուս սենյակը:

— Դո՞ւք եք ընկեր Սակալովը՝ Միխայիլ Իվանովիչը:

— Այո՛, ես եմ:

— «Արշալույս»— հայտնեց Լևոնյանը պայմանավորված նշանաբանը:

— Շատ ուրախ եմ,— պատասխանեց Սակալովը պինդ սեղմելով Լևոնյանի ձեռքը,— նստեցեք մի քիչ ես իսկույն կտանեմ ձեզ:

Մի քանի րոպեից հետո նա վերադարձավ՝ հաստաբակ վերարկուն հագած, հնացած մորթե փափախը մինչև ականջները քաշած:

— Դուք վոխե՞լ եք շորերը,— հարցրեց նա Լևոնյանին:

— Այո՛:

Լևոնյանը հագել էր քաղաքացիական զգեստ՝ պիջակ և վերարկու, գլխին էլ դրել էր նույնպես մորթե գլխարկ:

Նրանք բարձրացան բակը, ու դեպի աջ թեքվելով, անցան մի մութ արանքով դեպի մյուս՝ կից բակը: Երկհարկանի շենքի առաջ դաղ լույս էր նշմարվում, որը միակ ուղեցույց էր դեպի այդ տունը:

Նրանք ներս մտան դռնից ու անկանոն սանդուղքներով թռչան ներքնահարկը. միջանցքի ծայրին մի վոքր կերոսինի լամպ էր ամրացրած պատին: Դուռը երեք անգամ թխկացնելուց հետո բացվեց, և նրանք լուռ մտան բնակարանը: Մի հասարակ, սենյակ էր՝ պատերին՝ եժանագին, կապտավուն պատատառներ, կենտրոնում մի սեղան էր, դյուղացիական կոյտ սփռոցով, շուրջը՝ մի քանի էժանագին աթոռներ: Ծոնավության հոտը տարածված էր սենյակում: Տանտերը՝ ռուսական բլուղի վրա պիջակ հագած և երկար, կոշտ սապոգներով, լուրջ դեմքով դիտում էր Լևոնյանին: Մյուս սենյակի վոքր ինչ բաց արանքից նայում էր բանվորի տղան, որը մոռացել էր սեղանի վրա իր թվաբանության դիրքը:

Հագիվ տասը բոպե անց հետզհետե հավաքվեցին մոտ տասը բանվոր: Սվել հավաքել դժվար էր, քանի որ ժողովը կարող էր աչքի ընկնել: Բոլորը մոռենում էին, ամաչկոտ ժպտով ձեռք տալիս Լևոնյանին, ու նստում, շարունակելով դիտել իրենց նոր դասախոսին: Թեպետ նրանք լվացվել էին գործարանից դուրս գալուց հետո, բայց տարիներով ծծված մրի հետքերը նկատվում էր դեմքերին. նկատվում էին նաև գործարանի ծանր աշխատանքի հյուծող ազդեցությունը՝ դեմքերի լարված կնճիռների վրա: Ֆիզիկական հոգնածությունը նկատվում էր բոլորի մեջ, բայց մտավոր հետաքրքրությունը մոռացնել էր տալիս այդ:

Լևոնյանը դիմեց իր կողքի բանվորին, որը մի լայնաթիկունք, հաղթանդամ մարդ էր՝ խոշոր դիմագծերով.

— Ինչպե՞ս են ձեր գործերը,— հարցրեց նա.

— Ե՛հ, ինչ ասենք,— մեկանից մեկի տեղ երկու կաշի են քերթում, ամեն կերպ ձգտում են համ աշխատանքի ժամերը երկարացնել, համ աշխատավարձը կրճատել. վարպետները հոգամտների նման մեզ հսկում են և պատրաստ են ամեն բոպե տուգանելու, մի խոսքով՝ ուզում են մեր հոգին հանել... բայց մենք էլ տակովը չենք մնալ... մենք նրանց ցույց կտանք...

— Ինչպես են մեզ դաղում, որ ուզում ես մի ինչպես խրես՝ էլ տեղից վեր չկենան— ասաց մի ուրիշ բանվոր, միջամտելով խոսակցությանը:

— Պետրովիչ, դու միշտ շտապում ես, ասաց Սակալովը:

— Բա ի՞նչ, մենք նրանց հախիցը չենք գալո՞ւ:

— Կդանք, էդ ուղիղ է, բայց ե՞րբ և ինչպե՞ս. քաջությունն այն չի, որ սրա կամ նրա հախիցը դաս, այլ կազմակերպված դուրս դաս տերերի ու կառավարիչների դեմ:

— Նու, Սոկոլ, դու դուր ես ինձանից բաժանվում, մենք նույն բանն ենք ասում...

Բանվորները սկսեցին խոսել գործարանի շուրջը. հասարակ ծխախոտի հաստ դլանակներ ծխելով, նրանք դատափետում էին գործարանի ղեկավարներին:

— Դրանց բոլորին պիտի կախել:

— Չէ՛, կախելը ինչ կօգնի, հարկավոր է կաթսաների մեջ «բանտարկել», հետո շոգի թողնել...

— Սրիկաները շատ են երես առել.

— Բա ի՞նչ կլինի,— կառավարությունն էլ, վոստիկանությունն էլ նրանց կողմն են:

— Ընկերներ, կարծում եմ կարելի է սկսել,—ասաց Սակալովը, նայելով Լևոնյանի դեմքին:

Լևոնյանի հուզումը կրկնապատկվեց.— նրան դժվար էր թվում խոսել այս անծանոթ ունկնդիրների առաջ, որոնք այժմ ավելի մեծ ուշադրությամբ հառել էին հայացքները իր վրա: Նա հանեց ծոցից մի թղթի կտոր, որի վրա զգուշության համար՝ (որպեսզի ժանդարմների ձեռք չընկնի) նշանակված էին դեկուցման կետերը՝ փոխաբերական իմաստներով: Կազմելիս նա այդ բոլորը հավանում էր, բայց այժմ թռուցիկ աչքի անցնելով, հակառակ տպավորություն ստացավ.— նրան թվաց, թե շատ քիչ կետեր են նշած և նյութ չի ունենալ ամբողջ ժամանակն օգտագործելու համար:

Ներածական մասը վերջացնելով, Լևոնյանն ավելի հանգիստ շնչով անցավ բուն նյութին՝ «Կոմունիստական մանիֆեստի» բովանդակությանը, հաճախ շեղվելով և տալով պատմական տեղեկություններ:

զեկուցումներ։ Մի տաս րոպե անց նա արդեն ընկավ իր հունի մեջ. բառերը դալիս էին սահուն, փաստերն ու կոմենտարները հիշվում էին իր ժամանակին։ Նա մտադիր էր զեկուցելու առաջին դլուխը, բայց նյութի շատությունը ստիպեց նրան կիսելու իր թեման։

Ունկնդիրներին սկզբում թվաց, թե Լևոնյանն «ինտելիդենտավարի» է խոսում, իրթին բառեր է դործածում, բայց շատ չանցած ուրախացան, որ ամեն ինչ հասկանալի է։ Մեկ-մեկ նրանք արտահայտում էին իրանց զդացումները խրախուսական կամ հարձակողական ռեպլիկներով։

— Այդպե՛ս... այդպե՛ս...

— Ա՛յ թե ինչով են խաբում մեզ...

Զեկուցման կեսում տանտիրոջ տղան ներս նայեց, դուռը փոքր ինչ բանալով, հայրը վեր կացավ տեղից.

— Ընկերնե՛ր, մնացեք տեղներդ, ես իսկույն կիմանամ,— ասաց նա ու դուրս դնաց...

Բոլորը մնացին կասկածի մեջ, ու նստած էին, լարելով իրանց լսողությունը։ Լևոնյանը լռել էր և մտածում էր, թե ինքը հենց առաջին զեկուցումից կարող է ընկնել բանտ... ա՛յ քեզ իրերի դժբախտ դասավորություն...

Միջանցքում լսվեցին ոտների ձայներ, ապա տիրեց լռություն։ Մի երկու րոպեից հետո տանտերը ներս եկավ ժպտալով, որ նշան էր, թե վտանդ չկա։

— Նո՛ւ, ոչինչ,— ասաց նա,— քրոջիդս հեռադիր է եկել, թե հաջող ծնել է... երեք օր մեծ վտանդի մեջ է եղել...

Բոլորը ծիծաղեցին ու սկսեցին սրախոսել...

— Ա՛յ, ամեն բան էսպես հաջող ծնվի...

— Լավ ժամին է ծնվում— հեղափոխական կլինի...

... Լևոնյանը շարունակեց իր զեկուցումը առանց ընդհատման։

— Այս է բանվոր դասակարդի պատմական դերը,— ասաց նա վերջում.— նա պիտի ազատվի իր դարավոր սարկությունից և իրավամբ տեր դառնա իր ստեղծած աշխարհին ու հաստատի իր հարազատ, սոցիալիստական կարդերը ամբողջ մարդկության համար...

Վերջացնելով, նա հետ ընկավ աթոռին ուրախ զդացումով, որ կարողացավ հաջող կատարել իր դործը։

Բանվորների մեջ անցավ մի շարժում. նրանք արձակեցին իրանց լարված ուշադրությունը և դարկ տվին ծխախոտին։ Նկատվում էր, որ բոլորը գոհ մնացին։

— Ա՛յ թե որտեղ է թաղնված մեր կյանքի դաղտնիքը,— ասաց Շելովը, իր խոշոր ու խիտ մորուքը շփելով,— մեր հաշվով ապրում են ու մեզ էլ արհամարհում։

— Ո՛չինչ, դրանց դատաստանը շուտով կդա,— ասաց երիտասարդ բանվորը, ձեռքը թեթև խփելով սեղանին։

Սկսեցին հարցեր տալ— սկզբում քաշվելով, բայց հետո դարձան ավելի համարձակ։ Լևոնյանն այժմ ավելի դժվարություն էր զդում, որովհետև ամեն մի հարց պահանջում էր բազմակողմանի լուսաբանություն։ Սակայն այս անդամ հարցերը շատ չէին և մոտ քառորդ ժամից հետո ժողովը վերջացավ։

— Այժմ համեցեք թեյի,— առաջարկեց տանտերը, բայց Լևոնյանին բերող բանվորը՝ Սակալովը խորհուրդ չտվեց երկար մնալու։

— Գալիս մեկը աչքովս ընկավ,— ասաց նա,— շատ նստելը ցանկալի չէ... բացի դրանից ավելի ապահով կլինի, եթե Շելովը դնա ընկերոջ հետ...

Շելովը հագավ իր թաղիքե վերարկուն, դլխին դրեց կեպին ու դուրս եկավ Լևոնյանի հետ։

Փողոցում Լևոնյանի տրամադրությունը բարձր էր. նա մտածում էր, որ վերջապես ընկավ այն մեծ «իսկական դործի» մեջ, որի մասին երազում էր...

Հասնելով մինչև երկաթուղու կայարանը, նրանք մտան երրորդ կարգի դահլիճը, իբր թե տոմս դնելու և անիծոս բաժանվեցին։

Լևոնյանը դնաց դեպի տուն, բայց ճանապարհից թեքվեց դեպի Միքայելյանի սենյակը։

LI

Ուշ գիշերին Լևոնյանը հանկարծ զարթեց անկողնում։ Պատճառը տանտիրուհու մոտ ապրող ուսանողն էր, որը վերադառնում էր ինչ որ երեկույթից, բայց Լևոնյանը չնկատեց այդ և

ենթադրում էր, թե դարձեց այն տաղնապող մտքերի ճնշման տակ, որոնք այժմ ծագում էին նրա մեջ: Օրվա դեպքերը դալիս էին նրա առաջ այնպիսի համոզիչ լուսաբանությամբ, որ նա զարմանում էր, թե ինչո՞ւ մինչև այժմ ուշադրություն չի դարձրել: Չէ՞ որ այսօր իրեն հետևում էին, սկսած այն փողոցի անկյունից... և հետո՝ երբ «չալիկը» (գաղտնի ոստիկանը) բավականին տեղ ուղեկցեց, նրա տեղ մի ուրիշը լույս ընկավ... դա էլ հասկանալի է... գաղտնի ոստիկաններն իրանց «գործը» քողարկելու համար հաճախ դիմում են այդ միջոցին.— երբ նրանք դլխի են ընկնում, որ նկատվում են, նշան են տալիս մի ուրիշին, և նա շարունակում է հետևելը... բայց ինչո՞ւ նա միայն՝ այժմ է մտածում դրա մասին... այո՛, նրան հետևում են սիստեմատիկաբար... Անհրաժեշտ է լուրջ մտածել դրա մասին, իսկ ինքը դեռևս անփույթ է...

Նրա մտածմունքներն անցան վերջին բանվորական ժողովին... ինչո՞ւ Լևոնյանի ուշադրությունն այս անդամ կենտրոնացել էր բանվոր Ժուկովի վրա... մի հասարակ դեպք առիթ տվեց դրան.— այդ երեկո նա խոսելիս ցույց տվեց իր ձեռքերի ափերը, ասելով,— տեսե՛ք, ի՞նչպես են մեզ շահագործում, ձեռքերիս մուրը չի անցնում...

Ինչո՞ւ ուրիշ բանվորներն այդ չեն անում և կարծես կարիք էլ չունեն... այո՛, Ժուկովը միշտ զատվում է մյուսներից... նա ամենից շատ է խոսում, ամենից շատ է պատմում գործարանի կյանքից և հարցեր է տալիս Լևոնյանին... Այնուհետև Լևոնյանն ընկավ անորոշ մտածումների մեջ և անկատելի կերպով քնեց:

Առավոտը այդ կիսաերազային մտածումները երևան եկան ավելի մեղմացած, բայց նրա համար պարզ էր, որ իրեն հետևում են արդեն ոչ առաջվա նման... այստեղ ինչ որ նոր սիստեմ կար, որն իհարկե, շարունակվելու էր զուցե ավելի ուժեղանալով... Բայց ի՞նչպես, ի՞նչ կապերի միջոցով գաղտնի ոստիկանությունը կարողացավ այդպես արագ իրանց ժողովների հոտն առնել...

Իսկ Ժուկովի մասին մտածելը նա համարեց իր տարորինակությունների մեկը— չէ՞ որ ինքը անհասկանալի պատճառներով երբեմն կենտրոնացնում է իր ուշադրությունը այս կամ այն

անձնավորության վրա, ինչ որ արտակարգ բաներ է տեսնում նրանց մեջ... Սա էլ այդ նույն երևույթներից մեկն է...

Այդ օրվանից Լևոնյանի մեջ արմատներ ձգեց ընդհատակյա աշխատողին հատուկ մի զգացում, որ նա մինչ այդ չէր ունեցել. և դա ծագում էր ո՛չ այն զգուշությունից, որ նա կիրառում էր մինչ այժմ, ո՛չ այն ցուցմունքներից որ նրան տվել էին իր ավագ փորձված հեղափոխական ընկերները, ոչ էլ իր անձնական փորձից— նորը իր դրության մեջ այն էր, որ նա զգում էր իրան օղակի մեջ և պիտեր որ այդ օղակն ավելի ու ավելի նեղանալու էր: Նրան թվում էր, թե այժմ գաղտնի ոստիկաններն ուրիշ աչքով են նայում իրան... նա ման էր գալիս կարծես էլեկտրականությամբ խտացած մթնոլորտի մեջ. նա գիտեր, որ այսուհետև պիտի սպասեր ամեն տեսակի անակնկալների՝ պիտի պատրաստ լիներ խուզարկության, բանտարկության, հեռավոր աքսորի... նա գիտեր, որ այդ բոլորն անխուսափելի էր, որ իր «ասպագան» կանխորոշված էր...

... Այդպես սկսվեց Լևոնյանի ընդհատակյա կյանքը և դրա հետ միասին սկսվեցին այն հոգսերը, որոնք կապված էին այդ գործի հետ:

Նրա կյանքն այժմ բաժանվել էր երկուսի,— արտաքուստ նա ապրում էր, որպես սովորական մի ուսանող, գնում էր դասախոսություններին, հաճախում էր թատրոնները, մի խոսքով՝ ձգտում էր ցույց տալ, որ դրանից դուրս ուրիշ գործով չի զբաղվում, իսկ մյուս՝ գաղտնի մասը մնում էր թաղնված բոլորից, բացառությամբ մի երկու ընկերների, որոնց հետ նա հաղվադեպ հանդիպումներ էր ունենում:

Այդ հանդիպումների ժամանակ Գարունյանը և Պետրովը կարևոր զրույցներ էին ունենում Լևոնյանի հետ, տեղեկացնելով նրան հեղափոխական շարժման դեպքերի հետ և լուսաբանելով գոյություն ունեցող հոսանքների դաղափարական տարբերությունները: Լևոնյանը մեծ կարիք էր զգում ընկերների այդ ցուցմունքներին, քանի որ այժմ տեսնում էր, որ այն մեծ դուռը, որ բացվեց իր առաջ իր նոր աշխարհայացքը, բավական չէր այս նոր գործունեության համար: Ճիշտ է, շարժումը դեռևս առաջ էր գնում վտակներով, տիրում էր այն գրությունը, որի մասին գրում էր «Իսկրա» ընդհատակյա թերթը (Լենինը)—

«Մեր շարժման գլխավոր դիծը, որն առանձնապես աչքի է ընկնում վերջին ժամանակները, դա նրա ցրվածությունն է,— եթե կարելի է այսպես արտահայտել՝ նրա տնայնագործական բնույթն է»... Սակայն արդեն կային այն պայծառ ուղենիշները, որոնք մեծ ապագա էին խոստանում. այդ ուղենիշներից մեկը Լենինի հեղինակությունն էր, մյուսը՝ նրա նոր կազմակերպած «Իսկրա» թերթը, որը դաղտնի ուղիներով ձեռքից-ձեռք էր անցնում մինչև մաշվելը և կարդացվում էր հափշտակությամբ: Այդ երկու անունները, որոնք խկապես մի անուն էին կազմում, ոչ միայն լուսաբանում էին հարցերը, այլև խոշոր դեր էին կատարում հեղափոխական ուժերի կենտրոնացման մեջ: Դարունյանը և Պետրովը հետևում էին այդ դծին և նույն ուղղությամբ էլ առաջնորդում էին Լևոնյանին: Վերջինս արդեն ծանոթ էր Լենինին՝ նրա «Կապիտալիզմի զարդացումը Ռուսաստանում» դրվածքից, որի մեջ նկատում էր ոչ միայն նրա մտքի խորությունը, այլև տողերի մեջ թաղնված հեղափոխական թափը: Այժմ այն ամենը, ինչ նա կարողանում էր դտնել Պետրովի միջոցով Լենինի դրվածքներից և կարդալ, համոզում էր նրան, որ հեղափոխության գլխավոր դեկը նրան է արժանի և արդեն խոկ փաստորեն այդ դեկը դտնվում է նրա ձեռքին:

Շաբաթը մի անդամ նա դնում էր պարապելու բանվորական խմբի հետ: Այժմ նա աշխատում էր որքան կարելի է լավ պատրաստվել և պարապում էր ավելի վստահորեն: Իր ունկնդիրների հետ նա ավելի մոտ էր ծանոթացել, ամեն անդամ դրուցելով հետները և ընտելացել էր նրանց բնավորություններին ու մտադրությունները պահպանել առօրյա կյանքում, քանի որ դա վըտանգավոր էր «դործի» համար:

Ժողովները «կազմակերպում էին» մեծ զդուշությամբ, ամեն անդամ փոխելով տեղը և Լևոնյանին առաջնորդող բանվորին: Ժողովի գնալիս նա աշխատում էր հաղուստի մեջ որևե փոփոխություններ մտցնել: Չնայած այս բոլոր զդուշություններին նա երկու շաբաթից հետո զդաց, որ իր եռևից հսկողությունն ուժեղանում է: Այդ պատճառով էլ ժողովից վերադառնալիս նա ուղղակի տուն չէր դնում, այլ «ցանում էր» դաղտնի ոստիկանին որևե ուրիշ տեղ դնալով:

Մեծ մասամբ այդ օրերին նա դնում էր Միքայելյանի մոտ: Այստեղ՝ թեյի շուրջը նրանք կարդում էին Սալտիկով-Շչեդրինի դրվածքները կամ զբաղվում շախմատով:

Իր կյանքի ներկա շրջանը բերում էր նրա մեջ զդացումների երկու հոսանք,— մի կողմից նա ուրախ էր, որ դտել է իր դաղափարական ուղին, մյուս կողմից սպասվող վտանգը մութ ամպերով բերում էր նրա առաջ բանտի, աքսորի, զրկանքների պատկերներ... Պետք էր պատրաստ լինել այդ նոր կյանքի համար...

LII

Այդ օրն ամուր նստել էր Լևոնյանի հիշողության մեջ.— հետաղայում նրան թվում էր, թե հենց այդ օրը նա նախազդում էր իր ձերբակալումը:

Առավոտը, երբ նա դուրս եկավ սենյակից՝ միջանցքում նրա առաջ երևաց Նաստյան՝ աղախինը:

— Ո՞ւր եք դնում, սամովարն արդեն պատրաստ է:

— Շտապ դործ ունեմ, պիտի դնամ:

— Վերջին օրերս դուք քաղցած եք մնում. այդպես ապրել կլինի՞:

— Ոչինչ, Նաստյա,— ասաց Միքայելյանը ցրված ժըպտով.— վաղվանից լավ կլինի:

Ինչո՞ւ անպատճառ «վաղվանից»— նա ասաց անգիտակցաբար, բայց խոսքը մնաց հիշողության մեջ:

Ճիշտ է, վերջերս նա ցրված և անվստահ կյանք էր վարում, բայց մի առանձին կանոնավորությամբ, կարելի է ասել՝ կարոտով հաճախում էր դասախոսությունները: Սակայն մի դդացում շարունակ ուղեկցում էր նրան.— միշտ թվում էր, թե հրաժեշտ է տալիս համալսարանին, ուսանողներին, պրոֆեսորներին... թվում էր, թե ինքը ժամանակավոր հյուր է, և շատ չանցած՝ պիտի հեռանա, այսինքն՝ ձերբակալվի: Նա իր օրերն արդեն հաշված էր համարում...

Այդ դդացումը ծաղում էր նրա մեջ այն հանդամանքից, որ դաղտնի ոստիկանությունը հետզհետե ուժեղացնում էր իր

հսկողությունը.— ուր էլ գնում էր Լևոնյանը, նա իր փոքձված աչքով նկատում էր իրեն հետևող ու դիտող դեմքեր: Նա արդեն զգում էր, որ գտնվում է օղակի մեջ ու երբեմն ինքն իրեն բռնում էր մի թաղնված տրամադրության մեջ,— կարծես նա ինքնահոսի էր թողնում իր զգուշությունը, մտածելով, թե միևնույն է՝ արդեն «շրջապատված է»: Նա պայքարում էր այդ տրամադրության դեմ, որպես ոտով ճամբորդը պայքարում է հոգնածության դեմ:

Համալսարանի ճանապարհին՝ հենց որ նա դուրս եկավ գետափը, նրա առաջ երևացին «դիտող աչքերը», բայց Լևոնյանը անտարբեր, նույնիսկ հեգնական ժպիտով անցավ նրա մոտով:

Համալսարանում նա լսեց երկու դասախոսություն՝— փիլիսոփայությունից և գրականությունից: Երկուսն էլ վերացական էին.— մի տեղ երիտասարդ դոցենտը (որին փայլուն կարերա էր սպասում շնորհիվ այն հանգամանքի, որ հարում էր իշխանությանը), կեղծ պաթոսով ջատագովում էր Պլատոնի փիլիսոփայությունը, իսկ մյուսը՝ արդեն ալեհեր պրոֆեսորը մանրամասն կոմենտարներով համեմելով իր դասախոսությունը, պատեցնում էր ունկընդիրներին Դանտեի դժոխքի շրջաններում:

Նա դուրս եկավ դասախոսություններից, որպես թանգարանից: Թվում էր, թե ինչ որ այնտեղ խոսվում էր, կապ չուներ կյանքի հետ, այլ ընդհակառակը՝ բոլորը հնարած էր նրա համար, որպեսզի մարդիկ դան և առժամանակ մոռացվեն կյանքից:

Լևոնյանն անցավ ընթերցարանի դահլիճը: Մեծ սեղանի մոտ նստած ուսանողները կարդում էին մեծածավալ օրաթերթերը. դիմացի պատից նայում էր Նիկոլայ կայսեր մեծադիր պատկերը՝ շեշտված հրամայողական արտահայտությամբ:

Ժամի մեկին նա ժամադրվել էր հանդիպելու Պետրովին. դեռ տասը րոպե կար. նա նստեց սեղանի մոտ ու աչքի անցրեց օրաթերթերը: Ճիշտ ժամին եկավ Պետրովը:

— Բարև, ինչպե՞ս ես,— հարցրեց նա ժպտալով ու կկոցելով մի աչքը:

— Դեռ կենդանի եմ,— ասաց Լևոնյանը, որ նշանակում էր, թե դեռ չէր ձերբակալված:

— Այդքան շատ են հետևո՞ւմ,— հարցրեց Պետրովը,—պետք է մի բան անել...

— Եթե միայն ուշ չէ,— պատասխանեց Լևոնյանը: Այդ էլ մնաց նրա հիշողության մեջ:

Պետրովը հայտնեց այն հասցեն, որով նա վաղը պիտի գնար բանվորական խմբակի հետ պարապելու:

— Կգնաք Բորիսովսկայա փողոց, տուն 56, բնակարան 17, ընկեր Սավելևի մոտ, նա ձեզ կտանի ուր հարկն է:

Լևոնյանը հանեց ծոցից բլոկնոտն ու զգուշության համար գրեց հասցեն այսպես՝— «ես պարտ եմ Բ–ին 56 ռուբլի 17 կոպեկ»:

Ճաշից հետո Լևոնյանն ըստ սովորության՝ վերադառնում էր տուն, բայց այսօր նա խուսափում էր դրանից, կարծես այնտեղ մի վտանգ էր սպառնում նրան: Նա ոտով դուրս եկավ քաղաքի կենտրոնը, ուրախանալով երկար ճամբից, ներս մտավ հանրային դրադարանն ու պահանջեց ազրարային հարցի մասին մի գիրք, որը նա սկսել էր, ու վերջին մոտ թողել: Այժմ նրա մեջ մի ճայն ասում էր, թե պիտի վերջացնի գիրքը, կարծես պիտի մեկներ քաղաքից:

Գրադարանից դուրս գալով՝ գիրքը վերջացնելուց հետո, Լևոնյանը գնաց Միքայելյանի մոտ. այնտեղ նա հանդիպեց ուրիշ երեք ուսանողի: Նրանք սկսել էին շախմատ՝ երկուսը երկուսի դեմ: Նա մի ցավ թույլ կողմին ու մինչև ուշ գիշեր մասնակցեց խաղին:

Կես գիշերից անց նա վերադարձավ տուն: Հետագայում նա հիշում էր, որ այս անգամ տան մուտքի դիմաց կանգնած էին երկու մարդ, ու խոսում էին, նույնիսկ կարծես վիճում էին, բայց Լևոնյանը չհավատաց, որ նրանք զբաղված են այդ խոսակցությամբ.— դրանք «դիտող աչքեր» էին...

«Ինչ էլ անեմ,— օղակի մեջ եմ», մտածեց նա, մութ սանդուղքներով բարձրանալով հինգերորդ հարկը:

Ներս մտնելով իր սենյակը, Լևոնյանը նկատեց սեղանի վրա մի նամակ իր ծնողներից:

Հայրը սովորական բարևներից, ընտանեկան լուրերից հետո, գրում էր, թե քեռին (որից Լևոնյանը թոշակ էր ստանում) ասում է՝ ժամանակը վատ է, թող Սուրենը հեռու մնա վատ

ընկերներից. նրանք կարող են չեղել իսկական ճանապարհից և իր «ամաղը» ջուր կտրացնեն...

Լևոնյանը դայրույթից դեն շպրտեց նամակը: Քանի անգամ նա խոսք էր տվել ինքն իրեն՝ հրաժարվել այդ թռչակից, բայց դեռ ևս չէր վճռել, պատճառն այն էր, որ ծնողները տնտեսական կախում ունեին քեռուց, և իր հրաժարականը կարող էր վատ անդրադառնալ նրանց վիճակի վրա:

«Պետք է ազատվել այդ ճարպակալած բուրժուայից, որի կոպեկները թույն են ինձ համար... մտածում էր Լևոնյանը— նա համարձակվում է նույնիսկ խրատներ տալ ինձ»...

«Ես խճճել եմ կյանքս, ընկել եմ հակասությունների մեջ, սա հեղափոխականի դիծ չէ»...

Նա մտածում էր, որ ծնողները սպասում են իր ավարտելուն հուսալով, որ նա նեցուկ կլինի իրենց համար, մինչդեռ այդ հույսերը կարող են ցրվել վաղը—մյուս օրը. նրան կարող են ձերբակալել, քշել Սիբիր և ընդմիշտ անիրագործելի դարձնել իր ավարտելը, իր կարերան:

Այդպես հենց իր գիտակցական առաջին քայլերից, երբ նրան ամենից շատ անհրաժեշտ էր ազատությունը, նա իրեն կաշկանդված է տեսնում անցյալի կապերով, որոնցից բաժանվելը նույնպես պահանջում էր պայքար...

Երկար ժամանակ նստած սեղանի մոտ՝ նա պտտվում էր այս հարցի շուրջը:

Վերջապես նա պառկեց անկողնում ու կերոսինի լամպը դնելով աթոռի վրա, սկսեց կարդալ կիսատ թողած վեպը, բայց մի երկու երեսից հետո աննկատելի քնեց, առանց հանգցնելու լամպը:

LIII

Գիշերվա ժամը երկուսին մոտ Լևոնյանը հանկարծ զարթնեց աղմուկից: Առաջին միտքը, որ եկավ նրա մեջ, այն էր՝ թե եկել են խուզարկելու: Նա ականջը լարած լսում էր.— դրսից նախ զանգահարեցին, ապա սկսեցին դուռը ծեծել: Նա ավելի ամրացավ իր ենթադրության մեջ ու հանկարծ հիշեց, որ իր թղթերի մի մասը դեռ հիմնովին «մաքրված» չեն: Նրանց մեջ կար իր ընկերոջ նամակը, որը թեպետ քողարկված էր գրած,

բայց ժանդարմները կարող էին նրանից բաներ որսալ. բացի դրանից՝ ցանկալի չէր, որ այդ ընկերոջ անունը նրանց ձեռքն ընկներ: Նա հիշեց նույնպես որ մոռացության է տվել մի արդեցված բրոշյուր, որը գտնվում է սեղանի փոքրիկ արկղում... Նա զայրանում էր, թե ի՞նչպես է մոռացել այդ, քանի որ այժմ հիշում է այդպես բացառիկ պարզությամբ: Մի րոպեում, քանի դեռ դուռը ծեծում էին, Լևոնյանի մտքով իրար հետևից անցան երեք վճիռ.— այրել վառարանի մեջ բրոշյուրը... դուրս ձգել պատուհանից դեպի բակը... թաղցնել անկողնում ներքնակի մեջ... բայց այդ վճիռներից ոչ մեկը նպատակահարմար չէր, դուցե և ավելի վտանգավոր էր:

Մինչ այդ աղախինն արդեն բացեց դրսի դուռը, որից հետո Լևոնյանն իսկույն լսեց իր դռան թխկոցը: Նա սկզբում դիտմամբ ձևացավ քնած, չպատասխանեց, իսկ երբ երկրորդ անգամ ավելի պինդ թխկացրին, վեր կացավ ու մոտեցավ դռան:

— Ո՞վ է,— հարցրեց:

— Բացեք, ոստիկանությունն է:

Դուռը բացվելուն պես կարծես դրսի ճնշմամբ ներս թափվեցին երկու ոստիկան ու ժանդարմական սպան: Ոստիկանները վրա ընկան նախ Լևոնյանի շորերին, քրքրեցին գրպաններն ու խուզարկելուց հետո թույլ տվին նրան հագնվելու, իսկ իրենք սկսեցին քրքրել անկողինը, տնտղելով մանավանդ ներքնակը:

Լևոնյանի ուշադրությունը կենտրոնացել էր ժանդարմական օֆիցերի վրա. նրա հղփացած դեմքն իր լկտի ժպիտով առաջացնում էր նրա մեջ կատաղություն: Ժանդարմը քայլեց սենյակում, փքված, դուրս ձգելով իր ընդհուպ նստած նշանաղլխոտի կուրծքը, արհամարհական հայացքներ ձգելով իր շուրջը: Դարձեալ նա մի բերդ էր դրավել և հրճվում էր իր հաղթությամբ: Երևում էր՝ նա կիսով չափ հարբած էր: Նա հանեց ուսից թուրը, սկսեց թխկացնել սենյակի պատերը, ուղենալով տուդել, թե չկա՞ն արդյոք թաղատոցներ: Ապա մոտենալով ոստիկաններին, որոնք արդեն սկսել էին խուզարկել Լևոնյանի դրադարակը, հարցրեց.

— Վերջացրի՞ք անկողինը:

— Так точно!— պատասխանեցին նրանք միասին:

— Նորից խուզարկե՛ք,— հրամայեց նա:

Նկատելով Ժանդարմի ձգտումը՝ ցուցադրել իր իշխանությունը, Լևոնյանն ի պատասխան դրան հեգնական հայացքով նայում էր, ցույց տալով, իբր թե խակի չի էլ հետաքրքրվում նրանով:

Ոստիկանները նորից սկսեցին մի առանձին եռանդով քրքրել անկողինը, բայց ոչինչ չգտան ու մեղավորների նման մոտեցան դրադարակին: Այստեղ էլ տակն ու վրա արին բոլոր դրքերը, բայց ոչ մի կասկածելի դիրք չգտան: Հանկարծ նրանցից մեկը դուրս քաշեց սեղանի արկղը ու հանեց երկու դիրք. նրա ուշադրությունը դրավեց բրոշյուրը. կարդաց դրքի շապիկը, ու ինչ որ հեղափոխական բառերի հանդիպելով, աչքերը չռեց ուրախությունից: Իսկույն մոտեցավ Ժանդարմին ու հանձնելով նրան, ինչ որ փսփսաց:

— Հը՛մ,— մրմնջաց Ժանդարմը, հրճվանքով նայելով բրոշյուրին:

Այդ դյուտից հետո ոստիկաններն ավելի լարեցին իրենց եռանդը.— ամեն մի թղթի կտոր ենթարկվեց մանրակրկիտ դիտողության:

— Գնա՛ցեք խոհանոց,— ասաց Ժանդարմը ոստիկաններից մեկին, ու ինքն էլ հետևեց նրան:

Խոհանոցից լսվում էր խոսակցություն, շարժում էին իրերը, սպառնում էին աղախնուն. նա վախեցած ձայնով ինչ որ ասում էր, ըստ երևույթին՝ չբավարարելով նրանց:

Մի տասը րոպեից հետո նրանք վերադարձան Լևոնյանի սենյակը: Ժանդարմի դեմքից անհետացել էր նրա, ինքնաբավական ժպիտը. նա մտահոգ պատում էր սև բեխերը:

Լևոնյանը կանգնած պատի մոտ, դիտում էր Ժանդարմին. նրա համար պարզ էր, որ խուզարկողները հիասթափված են.— սպասում էին ավելի մեծ «արդյունքի», բայց նրանց ձեռքն ընկավ միայն մի արգելված բրոշյուր:

Խուզարկությունն արդեն վերջացել էր. մնում էին վերջին ձևականությունները:

— Անցեք տանտիրուհու մոտ,— առաջարկեց ոստիկանը Լևոնյանին:

Այնտեղ արդեն մյուս ոստիկանը՝ նստած սեղանի մոտ, սկսել է կազմել արձանագրությունը: Ժանդարմը ինչ որ

փսփսաց նրա ականջին ու թողնելով բրոշյուրը, դուրս գնաց տանից:

Տանտիրուհին վախի աղդեցության տակ կարծես օտարացել էր Լևոնյանին և նայում էր նրան, որպես հեռավոր մի ծանոթի: Բայց բոպեներով նա ասում էր մտքում՝ «ափսոս տղա, բանտերում կկորցնի իր դեղեցկությունը, իր երիտասարդությունը»...

Թաղային ոստիկանը վերջապես ցած դրեց դրիչը, ու պաշտոնական միօրինակ ձայնով կարդաց արձանագրությունը, որի մեջ հիշված էր, թե ի՞նչ են գտել խուզարկության ժամանակ:

— Ստորագրեցե՛ք,— դիմեց նա Լևոնյանին:

Լևոնյանը ստորագրեց, հետո նույնն արավ և տանտիրուհին:

— Դե, այժմ կարող ենք գնալ — ասաց ոստիկանը, եթե կարգադրություններ ունեք, կարող եք անել— դիմեց նա Լևոնյանին:

— Իրերս առժամանակ կմնան ձեզ մոտ,— ասաց Լևոնյանը տանտիրուհուն:

— Լա՛վ,— ցածր ձայնով մրմնջաց տանտիրուհին, ու նոր միայն զգաց, որ բաժանվում է նրանից: Նա կուզեր գոնե ձեռքը սեղմել, ասել մի քանի մխիթարիչ խոսքեր, բայց դա անկարելի էր:

Երկու ոստիկանները Լևոնյանի հետ դուրս եկան փողոց, որտեղ նրանց սպասում էր մի կառք: Թաղային ոստիկանն առաջարկեց նստել Լևոնյանին, հետո ինքը նստեց ու հրամայեց կառապանին քշել: Կառապանն արդեն դիտեր, որ պիտի տաներ պահնորդական բաժինը: Մյուս ոստիկանը՝ ձեռքը զինվորական ձևով դնելով դլխարկին, հրաժեշտ տվեց իր մեծավորին:

Քիչ անց՝ թաղային ոստիկանը հանեց ծխախոտի դլանակների տուփը, ծխեց ու մի քանի անդամ ծուխը ներս տանելով, ասաց.

— Ձեզ երևի շուտով կարձակեն...

Լևոնյանը լուռ էր. նա ոչինչ չպատասխանեց, դլխի ընկնելով, որ ոստիկանն այդ ասում էր հանդստացնելու համար: Դա կարևոր հանգամանք էր, քանի որ ո՞վ դիտե թե ի՞նչ մտադրություններ կարող էին ծագել քաղաքական հանցավորի դլխում...

LIV

Կես ժամից հետո կառքը կանգ առավ մի մեծ տան առաջ: Մռայլ, արձանացած պահակը անտարբեր բացեց դուռը: Աղոտ լույսերի ներքո, խոնավ սանդուղքներով նրանք բարձրացան երկրորդ հարկն ու ներս մտան մի սենյակ, որտեղ նստած էր հերթապահ զինվորը:

Թաղային ոստիկանը հանձնեց իր ձեռքի մեծ ծրարը, որի մեջ էին՝ խուզարկման արձանագրությունը և գտնված արդեն-վաճառված բրոշյուրը, ու ստորագրություն առնելով նրանցից, գնաց: Զինվորը հանեց սեղանի արկղից բանալիների կապոցն ու տարավ Լևոնյանին երկար կորիդորով դեպի նշանակված սենյակը:

— Եթե մի բան հարկավոր լինի, սղմեք այս զանգի կոճակը — ասաց զինվորը, աշխատելով որքան կարելի է խստորեն ասել, ու դուրս գնալով, դուռը փակեց: Միջանցքում լսվեց նրա ծանր կոշիկների ձայնը, ու ապա տիրեց խորին լռություն:

Սենյակում մի սեղան էր, մի մահճակալ ու թիթեղապատ, կլոր վառարան: Առաստաղից կախած էլեկտրական լամպն աղոտ լույս էր սփռում պղտոր—դեղնագույն պաստառների վրա, կարծես լրացնելով նրանց տված անարխորժ տպավորությունը:

Լևոնյանը գիտեր, որ պահնորդական բաժնում հաղիվ մի գիշեր էր մնալու, իսկ այնտեղից տանելու էին բանտը:

Արդեն գիշերվա մեծ մասն անցել էր: Նա հոգնածություն էր զգում, բայց գիտեր, որ չի կարող քնել: Սկսեց հետ ու առաջ քայլել սենյակում, մտածելով թե ի՞նչ ընթացք կստանա այս գործը, ենթադրություններ էր անում, թե ովքեր կլինեն ձերբակալված, ցավում էր, որ իր ձերբակալման մասին հնարավոր չեղավ իմաց անելու ընկերներին:

Չնայած այն հանգամանքին, որ նա վերջին օրերը չրջապատված էր զգում դաղտնի ոստիկանության ագենտներով, որ նա իրեն համարում էր զգուշ և դաղտնապահ, այնուամենայնիվ նա այժմ պարզ տեսնում էր, որ հարկ եղած զգուշությունը չէ կիրառել և նախատում էր ինքն իրեն:

Թայլում էր ու մտածում. դա իսկապես մտածել չէր, այլ անկապ մտքերի շարան, որ գալիս էին հուզմունքի ալիքներով, մեկ մեկու ծածկում ու փոխարինում:

Գիշերն արդեն թեքվում էր դեպի առավոտը, երբ նա հոգնած թիկնեց մահճակալի վրա ու քնեց ծանր, կոշմարային քնով: Առավոտը նա զարթնեց աղմուկից. նրա անմիջական ուրախությունն այն էր, որ նկատեց պատուհանում ցերեկվա լույսը:

Դրսից աղմուկ էր գալիս. դավթում դղրդոցով շարժվում էր ապրանքատար կառքը: Նա դուրս նայեց պատուհանից.— ինչ որ մարդիկ վիճում էին բարձր ձայնով՝ կառքի մոտ: Նա ուրախ էր այդ աղմկող ձայներից, որոնք դրսի «աղատ» կյանքից էին գալիս:

Կառքը դուրս եկավ դավթից, ձայները չքացան: Խոհարարուհին՝ դույլը ձեռքն առած իջավ դիմացի դռնից ու ծուլորեն շարժվեց դեպի ձախ: Երևում էր՝ նա հոգնել ու ձանձրացել էր իր կյանքից, բայց և այնպես Լևոնյանին այդ կյանքը թվում էր երջանիկ... այնտեղ նա ազատություն էր տեսնում... Դրսի կյանքն այժմ թվում էր մի ուրիշ բանաստեղծական աշխարհ, որի մասին ինքը կարծես դաղափար չէր ունեցել մինչև այժմ...

Ժամի ինն էր զինվորը բացեց դուռն ու բարձր ձայնով հայտնեց.

— Պատրաստվեցե՛ք, պիտի դնանք:

Լևոնյանը լվացվեց, հագավ վերարկուն ու նստեց աթոռին՝ պատուհանի մոտ: Մի քառորդ ժամից հետո եկավ մի ժանդարմ, հետն առած զինվորին ու առաջարկեց գնալ: Նրանք մի խաչմերուկ դավթի, որտեղ սպասում էր մի կարետ: Ժանդարմը սպասեց, մինչև Լևոնյանն ու զինվորը կառքը նստեցին, ապա ինչ որ դրություն հանձնելով զինվորին, փակեց կարետի դռնակը:

Կառքը աղմուկով շարժվեց դավթով. ձիանների սմբակները խուլ դղրդացին մուտքի մոտ, ապա դուրս եկան փողոց: Բայց Լևոնյանին չվիճակված չէր տեսնել փողոցը.— կարետի պատուհաններն ամբողջովին ծածկված էին կապույտ վարագույրներով: Կառքն անցնում էր փողոցից փողոց—դա նկատվում էր քրքրությամբ ականջ էր դնում դրսի աղմուկին, բայց ոչինչ չէր տեսնում:

— «Ահա թե ինչ բան է «սև կարետը» — անցավ նրա մըտքով:

քով։ Ու հիշեց մանկության օրերին լսած «սև կարեսը», որի մասին խորհրդավոր չչուկով պատմում էին մեծերը։

Նրա ուշադրությունը գրավեց ղինվորը, որը նստած էր իր դիմաց։

— Ո՞ւր եք տանում ինձ — հարցրեց։

Ղինվորի մսեղ, մռայլ դեմքի վրա ինչ որ շարժվեց, բայց նա չպատասխանեց հարցին։ Ապա փոքր ինչ միջոց տալով, նա ասաց.

— Ձեզ երևի չուտով կարձակեն։

— Դուք ինձ հանգստացնելու համա՞ր եք ասում, հա՞։

Ղինվորի դեմքի վրա շփոթություն եկավ, որը ցրելու համար նա արտասանեց ռուսական ամենավերջին բառը.

— Ничего! (ոչինչ)։

Լևոնյանը փորձեց մի երկու հարց ևս տալ, բայց ղինվորը չէր պատասխանում, որովհետև նրան արգելված էր կալանավորների հետ խոսելը։

Տարօրինակ դրություն էր.— երկու մարդ էին միայն նստած, փակված կարեսի մեջ՝ կտրված շրջապատից, բայց նրանք հեռու էին իրարից և թշնամի։

Կառքի արագ ընթացքը դանդաղեց ու շատ չանցած՝ նա կանգ առավ։ Բացվեց դռնակը, բացվեց լույս աշխարհը, և Լևոնյանը ղինվորի հետ իջան կարեսից մի տան դավթում, ապա բարձրացան կեղտոտ սանդուղքներով երրորդ հարկն ու դադարեցին։

Դուռը բացեց մի նիհար մարդ, ցանցառ, սև մորուքով ու շինծու ժպտալով ղինվորին, ներս հրավիրեց։ Նրա խունացած հագուստը, կորացած մեջքը, ծուռ ոտներն ու հանդած, խավար աչքերն այնպիսի տպավորություն էին անում, կարծես նա ուրվական էր և զբաղվում էր ինչ որ խորհրդավոր գործերով։

Նա չչնջաց — Сию минуту—, сь! (այս րոպեին) ու մտավ մյուս սենյակը։

Շուտով նա վերադարձավ իր լուսանկարչական գործիքով ու նկարեց Լևոնյանին երկու անգամ — մեկ դիմացից, մեկ կողքից, ապա վերջացնելով գործը, նստեց, չչնջաց.

— Готово-сь!

Լևոնյանն ու ղինվորը իջան բակը և շարունակեցին ճանապարհը։ Դարձյալ փողոցներումն էին, ու կույրի նման անցնում էին առանց տեսնելու որևէ բան։

Վերջապես կարեսը կանգ առավ։ Դուրս գալով, Լևոնյանը նկատեց մի խոշոր շենք, որի առաջ պահակ էր կանգնած։ Ղինվորը մոտեցավ պահակին, ինչ որ գրություն ցույց տվեց. պահակը զանգահարեց։ Երկաթե դռան պատուհանը բացվեց ու այնտեղից դուրս նայեց մի ուրիշ պահակ, կասկածոտ դեմքով զննեց եկողներին ու աղմուկով բացեց երկաթե դուռը։

Ղինվորն ու Լևոնյանն անցան ասֆալտե բակով, ապա մտան շենքի մեջ ու երկաթե սանդուղքները զընդացնելով բարձրացան երկրորդ հարկը։ Նրանք ներս մտան դրասենյակը, որտեղ սեղանի մոտ մի մարդ էր նստած, նշանագրեստը հագին ու սպասում էր, բայց ձևացնում էր, թե գրում է։ Նրա դեմքը դունատ էր, դիմագծերը բարակ, ասես սրված լինեին։ Նրա սուր թափանցող աչքերը մի քանի վայրկյան կանգ առան Լևոնյանի վրա, կարծես ուսումնասիրելով նրա արտաքինը։ Լևոնյանին թվաց, թե հանդիպել է այդ մարդուն փողոցում, բայց ե՞րբ, ի՞նչ տեղ՝ նա չէր կարողանում հիշել։

Ղինվորը հանձնեց հետը բերած ծրարը, որից հետո պաշտոնյան, (կամ դուցե նրա դերը կատարողը) բացեց, կարդաց գրությունն ու ձեռքով նշան արավ, որ գնա։ Ղինվորը Լևոնյանին տարավ չորրորդ հարկը։ Սանդուղքների բերանում նրանց հանդիպեց եկավ հսկիչը՝ մի հաղթանդամ մարդ, շիկահեր մազերով, կարմրած աչքերով։ Նա մռայլ ձայնով մի երկու խոսք փոխանակելով ղինվորի հետ, առաջնորդեց երկաթե պատուհանի մոտ։ Ֆիչ անց՝ նա կանգ առավ մի կամերայի առաջ, ու ոլորվեցավ։ Հանելով գրպանից բանալիները, զընդալեն բացեց ծանր, երկաթե դուռը։ Նա ներս տարավ Լևոնյանին ու դուռը ետևից փակեց։

Առաջին րոպեներին Լևոնյանը կանգ առավ կամերայի մեջ մռայլ տրամադրության մեջ, կարծես զերեզմանոց էր մտել։ Նրա օտարոտի հայացքը չէր ուզում կանգ առնել իր շրջապատի ոչ մի բանի վրա։ Մեռելային լռությունը համակեց նրան, ու ժամանակը կարծես կանգ առավ՝ թառեց նրա գլխին իր ծանր, կապարյա թևերով և բուի աչքերով հետևում էր նորեկ բանտարկյալին։

Լռությունը թվում էր խոր ու դաժան: Նա երեսը դարձրել էր պատուհանի կողմը — դա միակ կետն էր այս չորս պատերի մեջ, որ կարող էր գրավել իր ուշադրությունը. բայց նա էլ բարձր էր մարդու հասակից. նրա լույսն էլ թվում էր հեռավոր ու սառը:

Այդ րոպեին Լեոնյանը կարծես մոռացել էր այն բոլորը, ինչ գիտեր բանտային կյանքի մասին. նրան թվում էր, թե այս մենության, լռության մեջ, պիտի անցնեն իր կյանքի բոլոր տարիները...

Խորը լռության մեջ հանկարծ նրա ուշադրությունը գրավեց մի չնչին ձայն. մի կաթիլ ջուր ընկավ ջրմուղի ծորակից: Լեոնյանը երեսը դարձրեց, զարմանալով, որ այս մեռելության մեջ ինչ որ շարժում կա: Նա մոտեցավ ծորակին ու բաց թողեց ջուրը: Նա զարմանում էր, որ ջրի այդ միօրինակ հոսանքի ձայնը դուրս էր գալիս, որպես կանաչներով վազող առվի խոխոջյունը:

Ու կարծես ուշքի գալով նա սկսեց դիտել իր շրջապատը: Նախ նկատեց, որ կարող է բարձրանալ, հասնել պատուհանին, ոտքը դնելով ինչ որ խողովակի վրա: Պատուհանից դուրս նայելը մեծ բավականություն կպատճառեր, բայց նա չգիտեր, թե ո՞րքան հնարավոր էր այդ անել դաղտնի կերպով:

Կամերայում մի փոքրիկ երկաթե սեղան էր ու երկաթե աթոռ՝ երկուսն էլ ամրացրած պատին ու անշարժ: Առանձնապես նա խորշում էր երկաթե մահճակալից, որը նույնպես ամրացրած էր պատին. նրա վրա մի ճիլոված անկողին էր՝ կեղտի դույն վերմակը վրան:

Նա սկսեց քայլել կամերայում, մոտենալով այն ամենը, ինչ պատմել էին բանտի մասին իր ընկերները: Առաջինը և այժմ ամենացանկալին նրա հիշողության մեջ եկավ բանտի դրադարանը: Նա մոտեցավ դռանը ու մի քանի անգամ թիկացրեց: Դրսից ծանր կոշիկների քայլվածքը լսվեց, ապա բացվեց դռան մեջ մի փոքրիկ պատուհան ու այնտեղից ներս նայեց հսկիչի չիկահեր, թշնամական դեմքը:

— Ի՞նչ եք ուզում — կոպիտ հարցրեց նա:

— Գրադարանից մի գիրք խնդրեք:

— Գիրք ստանալու ժամանակը չէ. դուք պիտի պահանջեք առավոտից:

Ասաց ու կողպեց պատուհանը, հեռացավ: Բայց մոտ քառորդ ժամ անց, նորից բացվեց պատուհանն ու անցքում երևաց մի մեծադիր գիրք:

— Ստացե՛ք — ասաց հսկիչը,— ուրիշ անգամ իմացեք կարգը:

Լեոնյանը վերցրեց գիրքը. դա Բայրընի բանաստեղծությունների մի հատորն էր: Նա նստեց երկաթե աթոռին ու փորձեց կարդալ: Հենց առաջին պոեմը Շիլյոնի կալանավորն էր. նա կարդաց —

Գորշ են մաղերս, բայց ոչ տարիքից...

Ու խսկույն ծածկեց գիրքն ու վեր կացավ տեղից: Նա աչքերի մոայլվեց. թվում էր, թե գիրքը թշնամու բանակիցն է ուղարկված և նրա նպատակն էր՝ համակել նրան մոայլ պատկերներով: Այդ րոպեին նա ատեց իր սիրած Բայրընին ու ոչինչ չուզեց կարդալ:

Ու նորից սկսեց քայլել սենյակում: Այնուհետև քայլելը դարձավ նրա բանտային կյանքի դուրեկան և անբաժան մասը: Դա ստեղծում էր մի փոքրիկ իլյուզիա, այս անշարժության մեջ. երբեմն նա քայլում էր ու կրկնում փիլիսոփայական սֆորիզմի ձևով — «շարժվում եմ, ուրեմն ապրում եմ»...

LV

Սկսվեց բանտի միապաղաղ, դորշ կյանքը: Այնուամենայնիվ ինչ դատավորված էր ժամերով, բայց այդ կարգը դուրս էր բանտարկյալի կամքից:

Առավոտը՝ դեռ մթնով բերում էին թեյի համար եռացրած ջուրը: Գիշերվա մեծ մասն անքուն մնալով, Լեոնյանը հազիվ ջուրը: Գիշերվա մեծ մասն անքուն մնալով, Լեոնյանը հազիվ մի երկու ժամ կարողանում էր աչքը կպցնել մղձավանջային քնով, բայց այդ էլ խանգարում էր եռացրած ջուր բերողների կոպիտ բղավոցը: Երբեմն նրան թվում էր, թե այդ եռացրած ջուրը հնարած էր բանտարկյալներին ահաբեկելու համար:

Ամեն օր, նախ քան պարապմունքն սկսելը, Լեոնյանը մտածում էր «գործի» մասին—թե ի՞նչ հարցեր կարող են տալ հարցաքննության ժամանակ՝ բանվորական խմբակի մասին, էր

մոտ դանված բրոշյուրի և դրանց հետ կապված փաստերի շուրջը: Մտածում էր ու տանջվում անդիտությունից, չիմանալով, թե ի՞նչ դրության մեջ են խմբակի անդամները — ո՞վքեր են իր ընկերներից բանտ ընկել այս «գործի» կապակցությամբ և ո՞վքեր են ազատ:

Այս տեղեկությունները բանտի պայմաններում նա չէր կարող իմանալ: Միակ հույսը տեսակցությունն էր, որին նա սպասում էր անհամբեր: Նա գիտեր, որ քաղաքական բանտարկյալների հետ տեսակցությունները կազմակերպում էին «հարսնացուների» միջոցով: Օրիորդները հանձն էին առնում «հարսնացուի» անունով տեսակցության թույլտվություն խնդրելու դատախազից, և շատ դեպքերում այդ հաջողվում էր: Ահա մի հարց ևս՝ թույլ կտա՞ն արդյոք, և ո՞վ կգա իրեն տեսնելու...

Ամեն առավոտ այս բոլոր հարցերի մեջ պտտելուց հետո, նա սկսում էր իր միակ հնարավոր պարապմունքը՝ ընթերցանությունը:

Կեսորին բերում էին ճաշը, կեղտոտ՝ պղտոր «շչին», որը զզվանք էր առաջացնում: Առաջին օրերը Լևոնյանը բավականանում էր միայն սև հացով: Երեկոյան դեմ բերում էին դատարկ ջրով եփած սպիտակ ճավարի շիլա, որը անհամ կերակուրների մեջ առաջին տեղը կարող էր գրավել և հիշեցնում եր իր առաջին բանտարկությունը:

Լևոնյանը հրաժարվում էր նրանից, բայց ամեն օր նույն ժամին դարձյալ գալիս էին, բացում փոքրիկ պատուհանը ու բարձր ձայնով կանչում.

— Ընթրիք:

Օրական մի անգամ՝ քառորդ ժամով նրան տանում էին «զբոսնելու» գավթում: Տանում էին պահակի հսկողությամբ, ու փակում մի փայտե վանդակում, որն իր կամերայից զանազանվում էր նրանով, որ այստեղ վերևից երկինքը բաց էր: Զբոսանքի կամերաները շառավիղներով դասավորված էին շրջանաձև, ելնելով մի կենտրոնից: Զբոսնող բանտարկյալներն իրարից բաժանված էին տախտակամածով, և չէին կարող տեսնել իրար, իսկ կենտրոնում՝ վերևը մի փոքրիկ շրջանում պտտվում էր հսկիչը՝ շարունակ աչքերը հառած բանտարկյալների կողմը:

Զբոսանքը նույն բանտարկությունն էր. բայց և այնպես նա մեծ բավականություն էր պատճառում: Բաց երկինքը, հաղվադյուտ արևը, աղավնիների անընդհատ թռվռոցն ու զունդունալը, հաճելի աշխուժություն էին բերում բանտի անապատային կյանքում: Ամեն անգամ զբոսանքի դնալիս Լևոնյանի ծարավի երևակայությունը թելադրում էր թե ինչ որ կարևոր նորություն է հանդիպելու դուրսը, բայց իրողությունն այն էր, որ բանտի միօրինակ կյանքում մի դուրեկան փոփոխություն էր կատարվում:

Այդպես պտտվում էր բանտի օրակարգը և Լևոնյանը, ինչպես Ռոբինզոնն իր ամայի կղզում՝ հետզհետե ընտելանում էր այդ կյանքին, օր-օրի վրա նոր հնարքներ դտնելով այդ մեռելության մեջ կենդանություն մտցնելու համար:

Նախ նա մի քանի փորձից հետո սկսեց օգտվել պատուհանից. բարձրանում էր ու դիտում բակը, մանավանդ այն ժամերին, երբ դուրս էին բերում զբոսնողներին:

Մի քանի անգամ դիտելուց հետո, Լևոնյանն սկսեց տարբերել հին բանտարկյալներին նորերից: Նորերն ավելի արագ ու նյարդային էին իրենց շարժումների մեջ, իսկ հները դանդաղ ու հանգիստ, նույնիսկ թվում էր՝ անտարբեր էին դեպի իրենց վիճակը: Նրանց դեմքերն էլ դալուկ էին ու կրում էին իրենց վրա երկարատև բանտային կյանքի կնիքը:

Առանձնապես հետաքրքիր էին այն օրերը, երբ նոր բանտարկյալներ էին նկատվում:

Իր բարձր դիրքից Լևոնյանը դիտում էր նաև բանտարկյալների մշտական բարեկամներին՝ աղավնիներին, որոնց թեվերի ճողփյունն ու վզզյունը նա շարունակ լսում էր պատուհանից: Նրանք երամներով իջնում էին գավթում, պտտվում այնտեղ խմբերով ու զույգերով, նորից խոնվում, թռչում ու ճախրում վերևում ձյունափայլ փետուրներով: Իրենց շարժուն կյանքով, իրենց խուլ համերգով նրանք աշխուժություն էին բերում բանտի մռայլության մեջ:

Սակայն երկար չէր կարող տևել արտաքին կյանքի այդ դիտողությունը, պետք էր զգուշանալ, որ հսկիչը չնկատի, որովհետև այդ նկատելը ծանր հետևանքներ կարող էր ունենալ, ուստի Լևոնյանը հաճախ ընդհատում էր, իջնում պատուհանից,

ստուգում, չեն՞ լսում արդյոք հսկիչի քայլերը, ապա նորից բարձրանում պատուհանը:

Լևոնյանի միակ հնարավոր զբաղմունքը մնում էր ընթերցանությունը.— առավոտից մինչև երեկո նրա աչքերը հառած էին գրքին. դա սովորական ընթերցանություն չէր, այլ մի անքակտելի կապ՝ ընթերցողի և գրքի մեջ: Նա ագահությամբ սկսում էր գիրքը, որպես ծարավի համբարգը՝ խմում է աղբյուրից, ապրում էր գրքի հույզերով ու լարված երևակայությամբ պատկերում էր նկարագրությունները մի արտակարգ պայծառությամբ:

Գրքերը ստացվում էին մասամբ բանտի գրադարանից, մասամբ էլ ուղարկում էին ընկերները՝ «հարսնացվի»՝ օրիորդ Լալայանի միջոցով:

Ընթերցանությունն այս բանտային պայմաններում դարձել էր նրա միակ զբաղմունքը: Սկզբում նա փորձեց զբաղվել նաև գրելով,— մոտ մի չարաթ գրի էր առնում հիշողություններ, մտքեր, բայց շուտով պարզվեց, որ բանտի վերատեսչի օդնականը պարբերաբար այցելում է կամերաները և «քաղաքավարի կերպով» խուզարկում էր բանտարկյալների գրածները... ու հետո էլ բծրեկամաբար զրուցում, աշխատելով դուրս քաշել նրանցից անհրաժեշտ «փաստեր»: Այդ նկատելով, Լևոնյանը դադարեց գրելուց և այդ ժամանակը նվիրեց ընթերցանության:

Օրերի ընթացքում, հետզհետե դեպի գրքերն ունեցած համակրանքը բաժանվում էր յուրահատուկ ձևով.— կային «լուսաչող «աստղեր»,— գրականության կլասիկներ, որոնց գրվածքների մեջ էլ բանտարկյալը որոշ ընտրություն էր անում, ավելի հյուրընկալներով կենսուրախ ստեղծագործությունները: Այդպես՝ Շեքսպիրի կոմեդիաները գերադասվում էին նրա տրագեդիաներից, Գյոթեն՝ իր օլիմպիական հանդստությամբ ընդունելի էր, Սերվանտեսի «Դոն-Քիխոտը» հրավիրվում էր գրկաբաց: Մի ամիս անց հաշտություն կայացավ Բայրընի հետ՝ նրա մյուս «կենսուրախ» գրվածքների միջոցով: Դանտեն, Դաստուևսկին կոշմարներ բերող հեղինակներ էին, ուստի և ոչ ցանկալի: Մշտական հյուր եր Սալտիկով-Շչեդրինը, որի ծիծաղի հսկայական ուժը բանտի պայմաններում առանձնապես դղալի էր: Կային «բուժիչ» գրքեր, որոնք առանձնապես օգնում էին

ջղային, հիվանդ որերին.— դրանց դերն էր՝ մոռացնել բանտը: Այդ շարքի մեջ էին՝ մի սովոր «աստղագիտություն», հին պատմությունը և մի քանի գիտական գրքեր: Այդպես էր պաշտպանվում բանտարկյալը՝ իրեն հոգեկան սնունդ մատակարարող հեղինակների մեջ:

Շատ երեկոներ ու գիշերներ նա հաղորդակից էր լինում «լուսաչող աստղերին»— գրականության կլասիկներին. էլեկտրական լամպը որոշ ժամին հանգցնում էին. նա վառում էր մոմը ու մինչև նրա այրվելը կարդում էր: Ու երբ մոմը հասնում էր իր վերջին, նոր միայն նա վեր էր կենում իր երկաթե նեղ աթոռից ու քայլում իր կամերայում, մտքով ապրելով կարդացած գրքի մեջ: Նա կուզեր բոլորովին չքնել, որովհետև քնի ժամերը նրա ամենածանր ժամերն էին: Անկողին մտնելը շատ մռայլ ու դժան տպավորություն էր բերում.— հենց որ նա փակում էր աչքերը, թվում էր, թե դարան մտած «մռայլ ոգիները» հարձակվում էին ու հոշոտում նրա ուղեղը. կոշմարային երազները տանջում էին ամբողջ գիշերը: Միայն առավոտյան լույսը՝ թեկուզ և աղոտ, ուրախություն էր բերում.— Նա նոր միայն աղատվում էր իր «կոշմարների գերությունից» ու դրա համար էլ երկրպագելու չափ սիրում ցերեկվա լույսը: Նայելով պատուհանի կողմը, նա ուրախանում էր, կարծես զգալով լույսի բացվելու մեջ մի մեծ հաղթություն և նկուղում փակված բույսի նման ձգտում էր դեպի պատուհանը: Լույսը կյանք էր բերում, միացնում էր աշխարհի հետ...

Բայց դրա հետ զուգընթաց կար և մի ուրիշ կենսական խնդիր, որը սկզբի օրերից զբաղեցնում էր Լևոնյանին: Նա լսել էր իր ընկերներից, որ բանտարկյալները մի առանձին հեռագիր ունեն, որով կարողանում են հաղորդակցության մեջ մտնել իրար հետ: Գիտեր նույնպես, թե ինչպես են կազմում այդ հեռագրի այբուբենը, բայց չգիտեր թե ի՞նչ միջոցներով են հաղորդում իրար: Հենց սկզբի օրերից նա նկատեց, որ կենտրոնական ջեռուցման խողովակից, որն իջնում էր վերից վար պատի ուղղությամբ որոշ ժամերին չխկոցի ձայներ են լսվում: Շուտով նա համոզվեց, որ դա հենց բանտային «հեռագիրն» է, և ինքն էլ սկսեց սովորել:

Նա դասավորեց ռուսերեն այբուբենը վեց չարքով. հինգ

շաբթում հնդկական տառեր էին, իսկ վերջին շաբթում մնում էին երեքը: Այնուհետև նա մատիտով խփելով դրքի կազմին, վարժվում էր այդ նոր արվեստին: Մի տառ հեռադրելու համար պետք էր իմանալ, թե նա ո՞ր շաբթումն է, և այդ շաբթի ո՞րերորդ տեղն է զբաղում. եթե օրինակ՝ նա չորրորդ շաբթումն էր, և այդ շաբթի երկրորդ տառն էր, նա խփում էր նախ չորս, ապա կարճատև պաուզայից հետո՝ երկու: Լսելով ուրիշների արագ հեռադրերը, Լևոնյանին թվում էր, թե ինքը երբեք չի կարող հասնել այդ վարպետության, բայց նկատում էր, որ ինքը հետզհետե ավելի է վարժվում:

Այդ վարժությունը տևեց մոտ մի շաբաթ: Այդ օրերին նա ականջ էր դնում ուրիշների հեռադրելուն և աշխատում էր ըմբռնել, թե ի՞նչ են հեռադրում, բայց սկզբում շատ էր դժվարանում.— երբեմն ամբողջ խոսակցությունից նա կարողանում էր որսալ մի երկու բառ: Վերջապես մի օր նա մեծ բավականությամբ կարողացավ կիսով չափ հասկանալ այդ տաբօրինակ բանտային լեզուն՝ ուրիշների չիկոցից: Նա այժմ հնարավորություն ուներ խոսելու բանտարկյալների հետ: Մնում էր գտնել, թե ո՞ւմ հետ խոսի և ի՞նչպես կապվի առաջին անգամից: Այդ էլ եկավ անսպասելի կերպով:

Մի օր զբոսանքից հետո Լևոնյանը գլուխը ձեռքին կարդալով քայլում էր կամերայում: Հանկարծ նա լսեց չիկոց ջեռուցման խողովակից, բայց ավելի զանդաղ, քան սովորաբար լինում էր: Այս հանդամանքը նրա ուշադրությունը գրավեց: Նա կանգ առավ ու սկսեց ուշադրությամբ հետևել չիկոցին. ուրախ ալիքներով նրա գիտակցությանն էր հասնում հեռադրի ամեն մի տառը: Հեռադրողը հարցնում էր.— «ո՞վ է չորրորդ հարկում, պատասխանեցե՛ք»,— ապա նորից կրկնեց նույն հարցը.

Լևոնյանը անմիջապես վերցրեց մատիտն ու անվարժ ձեռքով չիկացրեց:— «Ո՞վ եք դուք»... Ու սկսեց հեռադրական կապը: Նա իմացավ, որ հեռադրողը երկրորդ հարկումն է, որ նրա ազգանունը Բաուման է, ու երկու տարի է, ինչ բանտումն է: Սրանից հետո Լևոնյանը հայտնեց իր ով լինելը:

Հենց նույն օրը Բաումանն առաջարկեց լրար տեսնելու հետևյալ միջոցը,— նա մոտ տասը բոպեից հետո պիտի դուրս գար զբոսնելու գավթում. այդ ժամանակ պիտի հաներ թաշկինակը և քիթը սրբեր. դա նշան էր, որ ինքն է, իսկ Լևոնյանը կտեսներ նրան իր պատուհանից:

Մի տասը բոպեից հետո Լևոնյանը բարձրացավ պատուհանը ու սրտատրոփ սպասում էր Բաումանի նշանին: Շարունակ լսվում էին ներքևից սուլոցներ.— մեկ-մեկու ետևից դուրս էին գալիս բանտարկյալներին պահակի ուղեկցությամբ: Լևոնյանը ուշով հետևում էր նրանցից ամեն մեկին: Վերջապես դուրս եկավ դորշ վերարկու հագած, խոր ակնոցներով ու դալուկ դեմքով մի բանտարկյալ. նա ներս մտավ տախտակե վանդակը ու հանեց թաշկինակը... ահա թե ո՞վ է եղել Բաումանը...

Լևոնյանը կենտրոնացրեց նրա վրա իր ուշադրությունը. ո՜րքան նիհար էր ու դեղնած. երևի հիվանդ էր թոքախտով... դուցե դա հետևանք էր նրա երկու տարվա բանտարկության: Նա նայում էր ու խորհրդածում.— դուցե իրեն էլ վիճակված է այդ... բայց խկուշն դուրս էր վանում այդ մտքերը. ո՛չ. նա իրեն չի թույլ տալ թուլանալու ոչ ֆիզիկապես, ոչ հոգեպես. շատ հեղափոխականներ եղել են բանտում և տարել են արիաբար բոլոր տանջանքները, նրա՛նք են իր տոկունության ուսուցիչները...

Մինչդեռ նա այդպես խորհրդածում էր, քառորդ ժամն անցավ. լսվեցին նորից սուլոցները և Բաումանը դանդաղ քայլելով, կարծես խորհրդածելով վերադարձավ իր կամերան:

LVI

Առտվանից ձյուն էր գալիս ու առատ նստում գետնին: Լևոնյանի առաջ պատկերանում էր քաղաքը — Պետերբուրգը իր բազմամարդ փողոցներով, արագ շարժումով. հիշում էր այն հրճվանքը, որ համակում էր պատանիներին հյուսիսային առաջին ձյունը, հիշում էր այդ մոայլ հոգսի կնճիռները, որ նկատվում էին աղքատների դեմքերին:

Ամբողջ օրը Լևոնյանի հիշողությունից չէր հեռանում մի գործաղուրկ բանվորի խիստ մաղակալած դեմքը իր քարացած աչքերով: Նա նստած էր ձեղնահարկում, Թիֆեղյա վառարանի առաջ, (հալվադյուտ վառարան հյուսիսում) մի կերպ հագնված, կիսաքաղց փորով: Նա կարծես պապանձվել էր, ու չէր

կարողանում պատասխանել Լևոնյանի հարցերին: Նրա մոտ՝ հատակին ինչ որ փալասի կտորի վրա նստած էին երկու տղաները, հինգ-վեց տարեկան ու տաքություն էին աղերսում ժլատ վառարանից: Կինը՝ հոգսերով համակված, լվացք էր անում անկյունում մի կերպ պահպանելով ընտանիքի ապրուստի թելը:

Լևոնյանը ծանոթացել էր Մատվեի հետ (այսպես էր դոբծաղուրկի անունը) պատահաբար.— Նա գնացել էր իր սպիտակեղենը հանձնելու լվացարարուհուն՝ նրա կնոջը: Ծանոթացավ և հետո խոստացավ նրա համար գործ գտնել, բայց ձերբակալումը խանգարեց իր խոստման իրագործումը: Այժմ այդ արճանացած դեմքը իր խիտ մորուքով, խոր ընկած աչքերով կարծես հարցնում էր իրան — ի՞նչ եղավ քո խոստումը...

Զյունը դալիս էր խիտ հոսանքով ու մթացնում կամերան. կարդալը դժվարանում էր: Նա հիշում էր իր ընկերներին. նորից տանջվում անհայտությունից — ի՞նչպես են, ո՞վքեր են ձերբակալված...

Կեսորին մոտ հանկարծ դուռը ընդալեն բացվեց, ներս մտավ հսկիչն ու հրամայական տոնով ասաց.

— Պատրաստվեք տեսակցության:

Ու դուրս գնաց, բայց մի հինգ րոպեից հետո նորից եկավ պահակի հետ և ուղեկցեց Լևոնյանին մինչև սանդուղքների մուտքը:

Տեսակցության լուրը այնպես ցնցեց Լևոնյանին, որ նա իջնում էր ինքնամոռացության մեջ, անհամբեր ու սրտատրոփ հետևելով պահակին, որի քայլերը թվում էին շատ դանդաղ: Պահակը տարավ նրան առաջին հարկը ու փակեց մի փոքր սենյակում: Մի քանի րոպե անց՝ դուռը բացվեց ու ներս մտան Ժանդարմը և օրիորդ Լալայանը, որին Լևոնյանը ճանաչում էր: Նա հեղափոխական չէր, բայց համակրողներից էր:

Նրանք բարևեցին իրար, բայց ոչ ձեռք տալով. (դա արգելված էր), ժպտացին, որպես իրար երկար ժամանակ կորցրած ու նորից գտած ընկերներ, հառելով իրար վրա հայացքները, մանավանդ Լևոնյանը, որ փակված լինելով, մարդ տեսնելու մեծ կարոտ էր զգում:

Օրիորդը հետաքրքրությամբ դիտում էր Լևոնյանին, կարծես նրա առաջ մի ուրիշ մարդ էր, որը մեծ սխրագործություն էր կատարել:

— Նստեցեք, ասաց Ժանդարմը, ցույց տալով սեղանի մոտ դրած երկու աթոռները, իսկ ինքը նստեց մի փոքրիկ կլոր սեղանի մոտ, որը հաղիվ մի քայլ հեռու էր մյուս սեղանից:

Լևոնյանն ու օրիորդը ժպտալով նայում էին իրար չփոթվելով ու չկարողանալով սկսել խոսակցությունը. Լևոնյանը շատ էր չատ բան ասելու, բայց չասելուց կորցնում էր թանկագին րոպեները.

— Ինչպե՞ս եք,— հարցրեց օրիորդը.

— Լավ եմ.— ի՞նչպես են մեր ուսանողները,— հարցրեց Լևոնյանը, ուզենալով իմանալ, թե ո՞վքեր են ազատ:

— Լավ են, պարապում են — ընդհանուր ձևով ասաց օրիորդը, զգուշանալով անուններ տալուց:

Ժանդարմը՝ մի փոքր թուղթ իր առաջ՝ մատիտով իբր թե անորոշ շարժումներ էր անում, բայց իրապես նա ազատվում էր նրանց ամեն մի խոսքը: Նա շարունակ ժպտում էր, ցույցադրելով քաղաքավարություն. թվում էր, թե նրա ճաղատ, փայլուն գլուխն ամբողջովին վերածվել է լսողության, իսկ իր ժպիտներով նա քողարկում էր այդ ուշադրությունը, ցույց տալու համար, թե իսկի էլ չի հետևում երկուսի խոսակցության:

Անհարմար դրությունն ավելի լարվեց, երբ Լևոնյանը համոզվեց, որ ժանդարմը ազատվում է: Նա շարունակ մտմտում էր, թե ինչպե՞ս կարողանա իմանալ, ո՞վքեր են ձերբակալված. բայց հնար չէր գտնում և րոպեները կորցնում էր աննշան հարցերով:

— Ուրա՞խ են մերոնք:

— Ուրախ են և ձեզ են սպասում:

— Այո՛, ես էլ սպասում եմ... շուտով կարձակեն...

— Ես էլ նույն կարծիքին եմ, ավելացրեց օրիորդը:

Այս բոլորն ասվում էր՝ այն տպավորությունն ստեղծելու համար, թե Լևոնյանն իր «հանցանքը» թեթև է համարում:

Օրիորդը՝ օգտվելով այն մոմենտից, երբ ժանդարմը ազատվում էր, աչքերը հառեց Լևոնյանի վրա ու խիստ իջեցրեց հայացքն իր ձեռքի վրա, ցույց տալով իր մատների արանքում ինչ որ գնդակիկ: Ապա նա ասաց.

— Անցյալ օրը փոքրիկ խնճույք կազմակերպեցինք, շատ ուրախ էր, Ֆեդյան ու Վարդանը ծիծաղից մեզ թուլացրին:

Այդ անունները օրիորդն ասաց ազավաղելով, Վարդանյան և Ֆյոդորով ազգանունների տեղ նա ասաց «Վարդան» և «Ֆեդյա»:

Ուրեմն այդ երկուսը ձերբակալված չեն,— եզրակացրեց Լևոնյանը:

Օրիորդը եկել էր որոշ ծրագրով. նա մի կետն արդեն անցկացրեց. նա շարունակեց.

— Ինչպես է ձեր առողջությունը.

— Ոչինչ, լավ է. բայց ջղայնություն կա...

— Ստացա՞ք գրքերը և փողը:

— Այո՛, ստացա:

— Ես էլի կհանձնեմ 35 ռուբլի:

Լևոնյանն զգաց, որ այդ «հինգը» առանձին նշանակություն ունի և ենթադրեց, որ հինգ հոգի են ձերբակալված:

Այժմ գալիս էր վճռական մոմենտը,— պետք էր հանձնել գնդակիկին այնպես, որ ժանդարմը չնկատի: Արդեն տեսակցությունը վերջանալու վրա էր. պետք էր շտապել:

— Ինձ համար գրքեր ուղարկեք — ասաց Լևոնյանը.— մի հատը իմ մասնագիտությունից, մնացածը գուք դիտեք:

— Շուտով կուղարկենք:

Ծնողներիս առ այժմ չհայտնեք, ես կգրեմ...

— Լա՛վ:

Այս խոսակցության ժամանակ ժանդարմը սղագրեց, ապա նայեց իր առաջին ժամացույցին: Այդ մոմենտին օրիորդը ձեռքի ճարպիկ շարժումով մոտեցրեց գնդակիկը դեպի Լևոնյանի ձեռքը, որը վերցրեց ու պահեց մատների մեջ: Երկուսն էլ կարծես մեծ վտանգից ազատված ժպտացին ուրախությունից: Այժմ արդեն նշանակություն չուներ, թե ի՞նչ կխոսեին:

— Զբոսնելու ատա՞մ են — հարցրեց օրիորդը:

— Տանում են, բայց շատ կարճ է տևում — ընդամենը քառորդ ժամ:

— Ի՞նչ քիչ է...

Ժանդարմը վեր կացավ տեղից:

— Ժամանակը լրացավ.— ասաց նա:

— Բարևեցեք բոլորին — ասաց Լևոնյանը:

— Յտեսություն:

— Յտեսություն:

Օրիորդը գնաց, ուրախ հուզումից կարմրած. վերջին փաղաքշական հայացքը ձգելով Լևոնյանի վրա, որը չէր ուզում հաշտվել, թե տեսակցությունը վերջացել է. նրան թվում էր, թե խոսակցությունը չափազանց կարճատև էր, և խիստպես ոչինչ չկարողացավ ասել:

Նա անհամբեր քայլերով պահակի հետ բարձրանում էր դեպի իր կամերը, տանելով թանկագին գնդակիկը, որը հացից էր շինած, և մեջը անշուշտ մի շատ կարևոր լուր էր պարունակում: Գնում էր թև առած և օրիորդին տեսնելուց — կարծես տեսնվել էր միանգամից իր բոլոր ընկերների հետ... «Ոչինչ, քանան էլ հաղթահարելի է,— մտածում էր նա — այս հատուտ պատերից էլ անցնում է կյանքի հոսանքը»...

Իր կամերան ներս մտնելուն պես Լևոնյանը փոքր ինչ սպասեց, ապա ձայն չլսելով, բացեց հացի գնդակիկը ու միջից հանեց պապիրոսի բարակ թղթի կտորը, որի վրա գրած էր:

«Ողջույն, հինգ հոգով նստած քո կենացն ենք խմում... այնուհետև հիշված էին անունները՝ թեթև աղավաղված:

«Ուրեմն այս հինգը ձերբակալված են»,— մտածեց Լևոնյանը, ապա նորից կարդաց այդ մանրատառ հոդվի նկատելի դրությունը, ենթադրելով, որ էլի թաղնված բաներ կան այնտեղ: Բայց այդ բոպեին դրսից լսվեցին հսկիչի քայլերը. նա՝ ըստ երևույթին ուշացած, եկավ և բացեց այսպես կոչված «դլազոկը» («աչիկը») ու ներս նայեց: Դա մի խիստպես աչքի չափ ապակի էր — ամրացրած դռան մեջ, որից օրական մի քանի անգամ նա ներս էր նայում՝ ստուգելու համար, թե ինչ՞ է անում բանտարկյալը, բայց վերջինս չէր կարող նույնն անել, որովհետև դրսից կափարիչ կար: Ոչինչ չնկատելով արժանի ուշադրության, նա ծածկեց «դլազոկը դրսից՝ ու հեռացավ:

Լևոնյանը ձգեց բերանը վառնդավոր թղթիկը ու կուլ տվավ: Ապա հուզված քայլում էր կամերայում, քննարկելով ու կշռադատելով դրսից ստացած լուրը — հինգ հոգու ձերբակալումը: Այդ թվից երկուսն ուսանողներ էին, իսկ երեքը, բանվորներ՝ այն խմբից, որի հետ ինքը պարապում էր:

Նա քայլում էր ու խորհում, թե ի՞նչ հետևանքներ կունենար այս բոլորը գործի ընթացքի վրա. հարցերը դալիս էին մեկ-մեկու հետևից ու հետզհետե կապվում «գործի» հետ:

Լուրը հուզիչ էր, բայց նրա տակ հնչում էր մի ընկերական խմբական թարմացնող ձայն... այն ճնշումը, որ նա զգում էր իր ֆիզիկական մեկուսացումից, տեղի էր տալիս մի նոր, ընկերական տրամադրության...

LVII

... Էլեքտրական լամպը ցնցեց կամերան իր լույսով, վերջ տալով ձմռան կարճառև օրվա կիսախավարին: Նա փորձեց կարդալ, բայց օրվա տպավորությունների ազդեցության տակ նա չէր կարողանում կենտրոնանալ: Նա քայլում էր դանդաղ, նորից վերհիշում տեսակցության ժամանակ տեղի ունեցած խոսակցությունը, նորից մեկնաբանում էր, համոզվում, որ ճիշտ է հասկացել: Վերհիշում էր օրլորդի ժպիտը, նրա ձայնը, առաջին բոպեների շփոթությունն ու կարմրելը.— «ի՞նչ լավ աղջիկ է,— մտածում էր նա.— դուցե այսպիսի գործերով հետզհետե ընկնի հեղափոխական շարքերը...»

Մտքերը թռչում էին դեպի գործարանը, բանվորները, դեպի այդ մխացող հրաբուխը, որը թվում է՝ ամեն օր պատրաստ էր ժայթքելու:

Նրա առաջն էին գալիս իր ուսանող ընկերները՝ համալսարանը, որը թվում էր այժմ մի հեռավոր աշխարհ:

... Նա բարձրացավ պատուհանը ու դուրս նայեց. ձյունն այժմ հանդարտվել էր ու բարակ, մեղմ նստում էր գավթում՝ դրոսանքի վանդակների ու տանիքների վրա. ջինջ ու մաքուր նա ծածկում էր ամեն ինչ, վայելելով տեղ-տեղ էլեքտրական լապտերների տակ:

Նա մտածում էր, որ իր կյանքն այժմ մտել է իր անվերադարձ ուղին. այն, ինչ անորոշ էր, մշուշոտ, այժմ պայծառ երևում է իր աչքերին. նրա կյանքն արդեն կապվել է հեղափոխության հետ և այլևս չի շեղվիլ նրանից: Իր անձնական հարցերը աշնան թռչնած տերևների նման նշմարվում էին հեռվում. բայց դրանք անզոր էին հանելու նրան իր դծից... իր անձնական կարերան՝ իր ծնողների խղեալը՝ այրվում է հեղափոխության ճանապարհին...

Նա նայում էր դիմացի պատին շարված պատուհաններին — լույսերին, որոնց միջից ստվերների նման երևում էին բանտարկյալները. նայում էր ու ողջունում նրանց... նա ինքն էլ նրանց հետ է, մասնակցում է նրանց մեծ երթին՝ դեպի լուսեղեն ապագան...

Ու թեթևացած, ազատված իր անձնական կապերի ծանրությունից, նա ողջունում էր այդ ապագան: Մի մեծ ուրախություն էր համակում նրան, երբ մտածում էր, որ իր կյանքն այլևս իրեն չի պատկանում, այլ մեծ ու հզոր աշխատավոր մարդկության...

... Ձյունը մեղմիկ դալիս էր ու ծածկում... կարծես իր անցյալն էր ծածկում,— իր անձնական կյանքը... նա հրաժեշտ էր տալիս այն ամենին, ինչ նրան հեռացնում էր իր մեծ գործից՝ հեղափոխությունից...

LVIII

Արդեն մի ժամ էր, ինչ Լևոնյանը հետ ու առաջ էր քայլում իր կամերայում, չկարողանալով կպչել գործի՝ այսինքն ընթերցանության: Առավոտից նա վեր կացավ անկողնից ծանր դլխով. դիշերային կոշմար երազներից հետո նա զգում էր հոգնածություն, կարծես ամբողջ դիշեր անընդհատ լարված աշխատել էր:

Նա քայլում էր ու անկապ մտածում, չկարողանալով կենտրոնանալ որևէ մտքի վրա: Մի բան միայն պարզ էր նրա համար, որ բանտը օրեցօր աննկատելի քայքայում է իր առողջությունը... ի՞նչ կլինի իր դրությունը, եթե այսպես շարունակվի և նա չկարողանա նույնիսկ կարդալ... ի՞նչով պիտի նա լցնի այս երկար, տաժանելի ժամերը... չէ՞ որ բանտում միակ զբաղմունքը ընթերցանությունն է...

Նա մոտեցավ ջեռուցման խողովակին և սկսեց չխկացնել՝ «հեռագրել» Բաումանին: Նա պատասխանեց, թե չուտով գնալու է զրոսնելու: Դեռ խոսակցությունը չվերջացրած՝ Լևոնյանի կամերայի երկաթե դուռը հանկարծ դրնդալեն բացվեց, ու լսվեց հսկիչի անախորժ, ճոթան ձայնը.

— Այս ինչ բան է... հեռադրում ե՞ք... եթե մի անգամ էլ նկատվեք, կտանենք կարցեր...

Լևոնյանի մեջ ցանկություն եկավ կոպիտ պատասխանելու, մի արտակարգ բան անելու՝ այս մեռած կյանքում մի փոփոխություն մտցնելու համար, բայց հսկիչն այնպես արագ դուրս գնաց, որ ժամանակ չտվեց մի բան ասելու:

Ներքևից լսվեցին սուլոցի ձայներ. դա նշան էր, որ սկսվում են դրոսանքի ժամերը: Լևոնյանը բարձրացավ պատուհանը ու սկսեց դիտել բանտի դավիթը: Բանտարկյալների վանդակներում նոր մարդիկ չէին երևում: Բուժմանը՝ ըստ իր սովորության՝ քայլում էր դանդաղ, հաճախ կանգ առնելով ու երկնքին նայելով ակնոցների տակից, ասես ճիգ անելով՝ մի բան տեսնելու վերևում: Այսօր նրա դեմքը սատիկ դալուկ է, մեռելի գույն ունի: Դա շատ տխրեցնում էր Լևոնյանին.— «երևի թոքախտն իր գործը տեսնում է»— մտածում էր նա և տխրությունը փոխում դայրույթի... քա՜նի քա՜նի զոհեր կան՝ դաժան կարգերի զոհեր, որոնք տառապում են բանտերում ու աքսորում...

Նա լիքավ ներքև ու շարունակեց քայլել հետ ու առաջ. քայլեց երկար ու դլխապտույտից թուլացած՝ ընկավ երկաթե աթոռին, դլուխը հենելով պատին:

Մի քառորդ ժամից հետո, ուշքի դալով, նա վեր կացավ տեղից ու դուրը թխկացրեց, մի քանի անդամ, մինչև որ թբխկոցը տեղ հասավ. պատուհանը բացվեց ու ներս նայեց վերահսկիչը.

— Ինդրեմ կանչեք բժշկին, հիվանդ եմ — ասաց նա:

— Բժիշկը կարող է դալ միայն ժամի հինդից հետո — ասաց հսկիչը ու խաչուն փակեց պատուհանը:

Նորից անցավ մի երկար ժամ՝ ձմեռային իրիկնադեմին աղջամուղջի մեջ. այդ միջանկյալ ժամերը՝ մինչև էլեքտրական լամպի վառելը՝ ամենատաղտկալի ժամերն էին:

Բժիշկը եկավ, անտարբեր կիսաժպիտը դեմքին, մի երկու հարց տվեց Լևոնյանին, ապա թեթև քննելով կուրծքը, պատվիրեց վերահսկիչին՝ տանել «հիվանդին» բուժակի մոտ: Բժիշկը՝ ընտելացած լինելով այս միջավայրին, դիտեր, որ այս տեսակի հիվանդությունը միայնակ բանտարկության հետևանք էր, իսկ դրա դեղը մարդ տեսնելն էր փոփոխությունն էր. այդ էր պատճառը, որ նա ամեն անդամ ուղարկում էր հիվանդին բուժակի մոտ.— արդեն այդ դնալ-դալը կարող էր թեթևություն տալ հիվանդին:

Շատ չանցած՝ Լևոնյանը վերահսկիչի ուղեկցությամբ դնաց բժշկի ընդունարանը, որտեղ աշխատում էր բուժակը:

— Հը՛ ի՞նչ կա, հիվա՞նդ է՞ք,— ասաց բուժակը տխուր ժպտով հանդիպելով Լևոնյանին:

Բուժակը կյանքից արոբված մի մարդ էր, դարդատ ու խմող: Այսօր էլ նա թեթև խմած էր ու հետ ու առաջ էր քայլում ընդունարանում վենթվենթալով: Նա պահարանից վերցրեց ջերմաչափը ու տվեց Լևոնյանին:

— Սա կդնեք ձախ թևի տակ և կնստեք այստեղ:

Լևոնյանը՝ մարդ տեսնելով անսովոր հաճույք էր ղդում և պատրաստ էր մոռանալու իր հիվանդությունը: Նա կատարեց բուժակի պատվերը և մեծ հետաքրքրությամբ հետևում էր նրան ամեն մի քայլին:

Վերահսկիչը դնաց, իսկ քիչ անց ներս մտավ բանտի դրասենյակային ծառայողներից մեկը ու մոտենալով բուժակին, սկսեց փըսփըսալ նրա ականջին:

— Հա՛, իհա՛րկե, կավելացնեն նրա ռոճիկը,— ասաց բուժակը լսելի ձայնով,— չկարողանալով դսպել իր վրդովմունքը— խնամիներ ունի... մի ասող լինի՝ ի՞նչ հարկավոր է նրան,— առանց այն էլ եղի մեջ լողում է... բա իհա՛րկե, ինձ պես հիմար չէ, որ երեսուն ռուբլիով քաշ դա...

Ծառայողը աչքերի նշանով հասկացրեց, որ բանտարկյալի մոտ անհարմար է խոսել, բայց բուժակն այդ նկատողությանը պատասխանեց, դեմքի արհամարհական շարժումով:

Ծառայողը, տեսնելով որ բուժակը բաց է խոսում, վախեցավ և դուրս դնաց, իսկ բուժակը սկսեց արագ քայլել, իր նոր «դարդից» ավելի բարձր վենթվենթալով: Հետո նա անցավ մյուս սենյակը, ածեց սպիրտը բաժակի մեջ ու վրան ջուր ավելացնելով, խմեց, ծամածռելով դեմքը: Նա մոռացավ, որ ջերմաչափը պիտի ժամանակին վերցներ և շարունակում էր ինքն իրան խոսել, երբեմն հայացքը դարձնելով Լևոնյանին, ասես նրան հարցում անելով:

Լևոնյանը հետաքրքրությամբ հետևում էր բուժակի մենախոսությանը.— Նա այժմ ոչ միայն մարդ էր տեսնում, այլև լսում էր նրա խոսքը, ծանոթանում էր նրա ապրումներին: Միայնակ խցում փակված բանտարկյալի համար այս բոլորը շատ նշանակալից բան էր:

— Էդ՞պես — ասում էր բուժակը քայլելով,— ես ձեզ համար չկամ, հա՞... կտե՞սնենք...

Նա սթափվեց այն ժամանակ, երբ հսկիչը վերադարձավ.

— Հա՛, խնդուն,— ասաց բուժակը և մոտենալով Լևոնյանին, վերցրեց ջերմաչափը ու տարավ լամպի մոտ:

— Առանձին բան չկա,— ասաց նա,— նորմալ տաքություն է... կարող եք դնալ...

Այս ամբողջ դործողությունը պիտի տևեր մոտ քառորդ ժամ, բայց ձդվեց երեք քառորդի չափ, ի մեծ ուրախություն «հիվանդի», որը պատրաստ էր թեկուզ մինչև առավոտ նստելու այնտեղ:

Լևոնյանը դնում էր իր կամերան, թարմացած ու առողջացած: Այսօր նա «ապրեց» թեկուզ և կարճ ժամանակով՝ մարդկային կյանքով, դուրս եկավ միայնակ բանտարկյալի ընդարմացած վիճակից:

Վերադառնալով իր կամերան, նա՝ ըստ սովորության, սկսեց հետ ու առաջ քայլել, ինչպես այդ անում էր դրսից եկած որևէ «ցնցող» տպավորության տակ՝ տեսակցությունից կամ նամակ ստանալուց հետո: Նա քայլում էր ու, շարունակում մտածել բուժակի մասին, որը տարօրինակ դիպվածով այժմ խորը տպավորվել էր նրա հիշողության մեջ: Առաջներում նա շատ էր տեսել այդ տեսակի մարդկանց, կարդացել էր նրանց մասին, բայց նրանք սովորական ընթացքով եկել-անցել էին հիշողության միջով, իսկ այժմ՝ բանտի պայմաններում մի հարբեցող մարդու դեղումները դառնում էին ուշադրավ երևույթ:

Հոգնելով քայլելուց, Լևոնյանը վերցրեց «աստղաղիտության» սովոր դիրքը ու սկսեց կարդալ: Շատ չանցած նրա երևակայությունը տարավ դեպի տիեզերական անսահման տարածությունը, մոռացնելով իր դաժան շրջապատը՝ բանտը:

LIX

Այսօր երջանիկ օր է.— նամակ է ստացվել օրիորդ Լալայանից: Ուրախությունն առանձնապես զդալի էր, քանի որ մի ամիս էր, որ ոչ նամակ էր ստացվել, ոչ էլ տեսակցություն էր ունեցել:

Բացելով ծրարը, Լևոնյանը նորից նկատեց նամակի վրա ժանդարմական խաչաձև դեղին դրոշմը: Դա նշան էր, որ նամակը կարդացվել է պահնորդական բաժնում: Ամսաթիվը ցույց էր տալիս, որ նամակն ուշացել է, բավականին երկար մնալով ժանդարմական վարչության մեջ:

Օրիորդ Լալայանը գրում էր այն, ինչ կարելի էր գրել,— առօրյա կյանքից, մի քիչ պարապմունքներից, մի քիչ թատրոններից, երեկույթներից, բայց չէր գրում որևէ ընկերոջ մասին, քանի որ անուններ տալը վտանգավոր էր,— կարող էին կասկածի տակ առնել: Օրիորդի կարծիքով իր նամակն ավելի պիտի ձանձրացներ, քան հետաքրքրեր Լևոնյանին. նա չէր կարող ենթադրել, թե ի՞նչ ադահությամբ էր նա կարդում «դրսի» կյանքի մասին, թեկուզ և աննշան բաներ:

Լևոնյանը կարդաց մի քանի անդամ, աշխատելով որսալ որևէ դաղտնի տեղեկություն՝ փոխաբերական իմաստով՝ դործին մասնակցող ընկերների մասին, բայց այս անդամ նա բան չդտավ, ուստի և ուշադրությունը կենտրոնացրեց նամակի վերջի վրա: Այստեղ օրիորդը՝ պատասխանելով Լևոնյանի նամակին, կշտամբում էր նրան Ռուսսոյի «Խոստովանության» առթիվ: Լևոնյանն իր նամակում այն միտքն էր հայտնել, որ Ռուսսոն իր դրքի երկրորդ մասում ավելի ու ավելի մոայլվում է, համակվելով ատելությամբ դեպի շրջապատը, և ավելացնում էր, որ նա իրավունք ուներ այդպես լինելու, քանի որ դա արդյունք էր ավելի խորը ճանաչողության և այն աչքի զարնող տարբերության, որ կար իր հասարակական դիրքի և շրջապատի մեջ:

Օրիորդը դրում էր՝ «ես կարծում եմ՝ ոչ թե ատելությունը պիտի իշխի մարդու մեջ, այլ ճիշտ դրա հակառակը»... Նա խուսափել էր «սեր» բառից՝ իր ամոթածության շնորհիվ, ենթադրելով թե Լևոնյանը կարող է այդ «սերը» ուրիշ մտքով

հասկանալ: Այդ դեռ բավական չէ, օրիորդն ուղարկել էր Տոլստոյի «Հարություն» վեպը՝ Լևոնյանին «այդ օրինակ մտքերից փարատելու և փրկելու» համար...

Լևոնյանը մի քանի անգամ կարդալուց հետո դրեց նամակը սեղանի վրա ու սկսեց քայլել սենյակում, ժպտալով այս անակնկալ պոլեմիկայի և այս տարօրինակ հոգատարության համար:

Քայլում էր ու մտքում պատասխանում օրիորդին,— «ձեր վերաբերմունքը քրիստոնեական է... «չրջապատ» ասելով ես հասկանում եմ մի որոշ խավ, որի դեմ ուղղված է Ռուսսոյի քննադատությունը և թեկուզ ատելությունը... Մարդիկ միապաղաղ բաղմություն չեն կազմում.— սիրել իրան հակառակորդ դասակարգի մարդկանց՝ «քրիստոնեական սեր» տածել ամենքի վերաբերմամբ— դա կլիներ այն, ինչ ցանկանում են մեր դասակարգային թշնամիները»...

Բայց նա չէր կարող այդ նույնը գրել իր նամակում, քանի որ տեղ չէր հասնիլ՝ կմնար ժանդարմների մոտ և բացի դրանից կվնասեր իրան: Այդ պատճառով էլ նա վճռեց պատասխանել դավեշտական տոնով՝ որ չնորհակալություն է հայտնում օրիորդին իր հոգու «փրկության» համար և խոսք է տալիս այլևս «ատելության մտքեր չարտահայտել»...

Նա ենթադրում էր, որ իր նամակները կարդում են ընկերական չրջանում՝ խմբովին և այժմ մտքով թռչում էր բանտից դուրս՝ դեպի «ազատ» կյանքը, որտեղ նա գտնվում էր առաջ... վերհիշում էր այդ ընկերներին, մանրամասնորեն պատկերացնում այն սենյակը, որտեղ հավաքվում են, անխուսափելի սամովարը, սրախոսությունները, հեղափոխական թերթերը... Այնուհետև նրա երևակայությունն անցնում էր համալսարան, հիշում էր դասախոսությունները, պրոֆեսորներին, ուսանողների բաղմությունը... նույնիսկ փողոցներն ու դրանց չարժումը...

Ու սպառելով դրսի կյանքի հիշողությունները, նա նստեց սեղանի մոտ ու սկսեց գրել նամակի պատասխանը:

LX

Նորից Լևոնյանին տանում էին «սև կարետով», այս անգամ բանտից դեպի դուրս: Ո՞ւր էին տանում, չհայտնեցին. դա էլ մի քմահաճույք էր, որ թույլ էր տալիս ժանդարմական վարչությունը «քաղաքականների» վերաբերմամբ: Բայց նա չէր կասկածում, որ տանում են հարցաքննության:

Ինչպես և առաջ, կարետի պատուհանները ամբողջովին ծածկված էին կապույտ վարագույրներով. դրսից ոչինչ չէր երևում, բայց և այնպես Լևոնյանին դուր էր գալիս այս ճամբորդությունը, քանի որ դա մի փոփոխություն էր մտցնում «մեռյալ տան» կյանքի մեջ: Դուր էին գալիս փողոցների շարժման խառը դղրդոցը, ձիանների տրոփյունը կամ պատահաբար՝ մարդկանց ձայները...

Հարցաքննությունը նրան չէր անհանգստացնում, քանի որ նրա համար պարզ էր իր ասելիքը— դեռևս բանտարկությունից առաջ նա կարդացել էր մի անլեգալ բրոշյուր, որի մեջ ասված էր, թե հեղափոխականը պետք է իրեն նպատակ դնի ոչինչ չպատասխանելու հարցաքննության ժամանակ, որովհետև ամեն մի պատասխանին կհետևեն նոր հարցեր ու նոր պատասխաններ, որոնց շնորհիվ կբացվեն «դործի» փաստերը և կվնասվեն մասնակցող ընկերները:

Կարետը ներս մտավ դավիթը. լսվեց ձիանների ուժգին տրոփյունը բակի մուտքի մեջ. ծանոթ ձայները համոզեցին, Լևոնյանին, որ իրան բերել են հարցաքննության:

Նա դուրս եկավ պահակի հետ և բարձրացավ երկրորդ հարկը: Մի փոքր սենյակում քառորդ ժամի չափ սպասեցնելուց հետո նրան տարան ժանդարմական քննիչի մոտ:

Ժանդարմական սպան նստած էր գրասեղանի մոտ և գրում էր: Նրա այտերը ասես սրսկված էին ինչ որ խառը գույնի հեղուկով, որը սկզբում փքել էր այտերը, ապա հեռանալով, թողել էր կախված ներքևում ու դորշ բծեր էր թողել վրան:

— Նստեցեք,— դիմեց նա Լևոնյանին, ճիդ անելով ժպիտ ներկայացնելու իր դեմքին:

Լևոնյանը նստեց աթոռին:

Քիչ անց ներս մտավ դատախազի օգնականը՝ մոտ երեսուն

հինգ տարեկան, խնամքով ածիլած մորուքով, հաղին պաշտոնապետեսը՝ դեղին մետաղե փայլուն կոճակներով: Նա արդեն խորհրդակցել էր մի ժամի չափ քննիչի հետ, բայց այժմ ձեվացրեց, թե նոր է տեսնվում նրա հետ և բարևեց ժպտալով:

Նա չնստեց, և հանելով իր պապիրոսի արծաթե տուփը, սկսեց ծխել, ապա սկսեց զզուլչ, դանդաղ հետ ու առաջ քայլել հատակին փռած փափուկ դորելենի վրա:

Դատախազի օգնականը դրավեց Լևոնյանի ուշադրությունը. նրա՝ սապնին շատ ենթակա սպիտակ դեմքը, օսլայած, ձյունափայլ օձիքը, հոտավետ, բարձր տեսակի գլանակները, քայլվածքն ու կեցվածքը,— ամեն ինչ Լևոնյանին թվում էր տարօրինակ, ասես նոր էր տեսնում իր կյանքում այդպիսի մարդ: Նա ժպտում էր... ի՞նչու էր ժպտում... երևի ինչ որ ուրախ բան էր հիշում...

Ժանդարմական սպան դրեց Լևոնյանի առաջ հարցաքննական թերթը:

— Այս հարցերի պատասխանները գրեցեք:

— Լևոնյանը մեկ-մեկու ետևից սկսեց շարել այն տեղեկությունները, որոնք նրան արդեն ծանոթ էին «ցույց»-ի գործից. նա գրում էր, թե ե՞րբ և ո՞րտեղ է ծնվել, ո՞վքեր են ծնողները, ի՞նչ դասի են պատկանում, քանի՞ տարեկան են, ինչո՞վ են զբաղվում... ովքեր են իր եղբայրները, քույրերը, փեսաները և այլն և այլն:

Մինչ նա գրում էր, դատախազի օգնականը նստեց աթոռին և դիտում էր նրա դեմքը. նույնը անում էր և ժանդարմական սպան: Երբ Լևոնյանը վերջացրեց ձանձրալի հառաջաբանը, քննիչ-ժանդարմը փոքր ինչ պառուզա թողեց, ծխելով իր հաստ գլանակները, ապա նորից ճիգ արավ ժպիտ տալու իր դեմքին:

— Ասացեք, խնդրեմ, դիմեց նա Լևոնյանին,— դուք ե՞րբ սկսեցիք ձեր պարապմունքները բանվորական խմբի հետ...

«Ուրեմն սրանց հայտնի է արդեն... անցյալ Լևոնյանի մտքով, հուզելով նրան, բայց նա աշխատեց տառը պատասխանել:

— Ես ոչ մի խմբի հետ չեմ պարապել...

Դատախազի օգնականն ավելի մոտ քաշեց աթոռը:

— Բայց դուք, իհարկե դիտեիք, թե ի՞նչ նպատակներ է դնում իր առաջ այդ խմբակը, շարունակեց ժանդարմը,— խնդրեմ բացատրեք ա՛յնպես... ընդհանուր գծերով...

— Ես չգիտեմ ինչի՞ մասին եք հարցնում...

— Ասացեք խնդրեմ, ո՞րքան ժամանակ էիք դուք դասախոսում Եմելյանովի գործարանի բանվորներին «Կոմունիստական մանիֆեստի» մասին:

Լևոնյանը նորից ցնցվեց... «ուրեմն դիտեն... երևի դիտեն և մասնակցողների անունները»,— մտածեց նա.

— Ես արդեն ասացի, որ ոչ մի խմբակի հետ չեմ պարապել...

— Իսկ ի՞նչ դաղափարներ է քարոզում «Կոմունիստական մանիֆեստը»,— այդ, իհարկե ձեզ ծանոթ է...

— Ես առաջին անգամն եմ լսում այդ գրքի անունը և ծանոթ չեմ...

Ժանդարմը հետ ընկավ աթոռին և ձևացրեց, թե հեգնում է.

— Դե՛, իհա՛րկե, դուք այժմ ամեն ինչ կհերքեք,— երևի այդպես են սովորացրել ձեզ ձեր ընկերները... բայց պետք է աչքի առաջ ունենաք, որ մեզ հայտնի է ամեն ինչ... և եթե դուք անկեղծ խոստովանեիք, դա շատ կթեթևացներ ձեր դրությունը...

— Ես արդեն ասացի ամեն ինչ:

Դատախազի օգնականը հանեց գրպանից իր ձյունասպիտակ նորածալ թաշկինակը և սրբելով ոսկե շրջանակով պենսնեն, դրեց քթին:

— Ձեր ընկերներն արդեն խոստովանել են,— ասաց դատախազի օգնականը.— և եթե դուք էլ խոստովանեիք, մենք խիստ ձեզ ազատ կարձակեինք և դրանով էլ կվերջանար ամեն ինչ...

— Ես ուրիշ ասելիք չունեմ,— պատասխանեց Լևոնյանը դրդռված:

Մի քանի վայրկյան տիրեց լռություն: Հիասթափված դատախազի օգնականը վերցրեց սեղանից ինչ որ գրություն և սկսեց կարդալ, իսկ քննիչ-ժանդարմը ոխը պահած դիմեց նոր որոգայթներին.—

— Սրան իհարկե, ճանաչում եք, ձեր ընկերներից է,— ասաց նա, ցույց տալով Լևոնյանին մի լուսանկար:

Լևոնյանը վերցրեց և մի քանի վայրկյան նայելուց հետո վերադարձրեց. դա Գարունյանի նկարն էր, բայց նա ասաց.

— Չեմ ճանաչում:

— Իսկ սրան անպատճառ ճանաչելիս կլինեք,— ասաց Ժանդարմը, տալով Պետրովի պատկերը:

Ուրեմն երկուսն էլ ձերբակալված են,— անցավ Լևոնյանի մտքով: Նա հայտնեց որ չի ճանաչում. նույնը պատասխանեց նա, երբ ցույց տվին Սակալովի և Շիլովի պատկերները:

— Ձեր բացատրումը չի օգնիլ,— ասաց Ժանդարմը,— ձեր ընկերների ցուցմունքները կան... ձեր անունն են տալիս՝ որպես դասախոսի...

— Գաղափար չունեմ,— ասաց Լևոնյանը, զգալով որ պայքարը տարվում էր մեզմ «որոգայթներով», այժմ էլ շարունակվում է այն սպառնալիքով, թե իրանց ամեն ինչ հայտնի է:

— Ձեր սենյակում՝ խուզարկության ժամանակ գտնվել է մի անլեգալ բրոշյուր... ասացեք, խնդրեմ, ո՞ւմնից եք ստացել այդ բրոշյուրը:

— Այդ բրոշյուրը ես գտել եմ համալսարանի պատուհանի վրա:

— Ինչպե՞ս, միթե դա հավատալու բան է... անլեգալ բրոշյուրը՝ պատուհանի վրա թողած...

— Ես նորից եմ կրկնում, որ գտել եմ համալսարանի պատուհանի վրա:

— Խոստովանեցեք իսկականը... դա խելքի մոտ բան չի, որ անլեգալ բրոշյուրը թողնեն այդպես... սովորաբար թաղցնում, պահում են... բայց դուք շատ կզղջաք ձեր ժխտումի համար...

Լևոնյանը լուռ էր:

— Իսկ ի՞նչ կասեք ձեր մի նամակի մասին, որը ստացել եք ձեր ընկերոջից և որի մեջ հեղափոխական հանձնարարություններ կան...

— Այդպիսի հանձնարարություններ չկան. դա մի սովորական նամակ է...

Դատախազի օգնականը միջամտեց.

— Ալեքսեյ Իվանիչ, ես կարծում եմ, որ մենք կարող ենք ուշադրության չառնել այդ երկու փաստերը... դե՛, ես էլ եմ եղել ուսանող և գիտեմ, թե ի՞նչ դեր են խաղում ընկերները...

բայց մեր նպատակն է միայն երևան հանել իսկական հանցավորներին, այսպես ասած՝ ղեկավարներին... եթե պարոն Լևոնյանը խոստովանի...

Լևոնյանը հազիվ էր զսպում իր զրդռումը այդ խոսքերից. նրա մեջ ցանկություն էր դալիս կոպիտ պատասխանելու, բայց նա գիտեր, որ այդ «կոնֆլիկտը» ավելի ձեռնտու կլինի ժանդարմներին...

— Ես՝ ոչինչ չգիտեմ,— ասաց նա, ես միայն գիտեմ, որ ինձ զուր տեղը այսքան ժամանակ պահում եք բանտում փակված...

Գրգռումն անցավ դատախազի օգնականին, նա փորձեց վախեցնել սպառնալիքով.

— Դուք, պարոն Լևոնյան, մեղադրվում եք այն բանում, որ պատկանել եք մի խմբակցության, որը նպատակ է դրել տապալելու ներկա կարգերը... ըստ օրենքի՝ սա կարող է լուրջ հետևանքներ ունենալ... բայց եթե դուք օգնեիք մեզ պարզելու, թե ՝ո՞վքեր են իսկական հանցավորները, այդ դեպքում ձեր պատիժը բոլորովին կթեթևանար...

— Ես արդեն մի քանի անգամ պատասխանել եմ այդ հարցին:

Ժանդարմական սպան բոլեաչափ լուռ էր.— «անհաջող օր է»,— ասաց նա մտքում ու սկսեց ծխել: Նրան հետևեց դատախազի օգնականը, որը նորից սկսեց քայլել փափուկ դորելենի վրա, մտածելով թե պետք է ինչ որ արտակարգ միջոցների դիմել, այսպիսի համառների դեմ:

Ժանդարմը անցավ ձևականության,— նա նորից դրեց հարցաթերթը Լևոնյանի առաջ և առաջարկեց նրան գրել իր տված հարցերի պատասխանը: Լևոնյանը շարեց իր բացասական պատասխանները:

— Դուք ազատ եք,— ասաց Ժանդարմական քննիչը և զանգահարեց: Հերթապահ ժանդարմը տարավ Լևոնյանին ու «սև Վարետով» ուղարկեց բանտ:

Լևոնյանը վերադառնում էր տխուր մտածումներով: Նրա համար պարզ էր, որ դործի մեջ եղել է պրովոկատոր և մատնել է բոլորին. բայց ո՞վ կարող էր լինել... նա հիշեց Ժուկովի

«ձեռքերը», բայց սարսափում էր այդ մտքից, թեպետ և զգում էր, որ նա «չինծու» բանվոր էր...

Նա մտածում էր, որ նստած են՝ Գարունյանը, Պետրովը, իր խմբի բանվորները... ու մտովի ողջունում եր նրանց...

... Երբ նա նորից մտավ բանտի շենքը, բարձրացավ դրնդան երկաթե սանդուղքներով, ապա քայլեց երկար ու ձիգ միջանցքով, հանկարծ նրա դիմաց՝ կարծես մի տեսիլ՝ երևաց Վերան՝ նույնպես պահակի ուղեկցությամբ...

Անսպասելի հանդիպումը այնքան չշմեցրեց երկուսին էլ, որ չէին ուզում հավատալ իրանց աչքերին: Երջանիկ հուզումով բռնված, նրանք միայն կարողացան իրար «բարև» կանչելու, բայց այդ ըստեղին պահակները կոպիտ հրելով, «կարցերի» պատժով սպառնալով հեռացրին նրանց իրարից:

Դառնալով իր կամերան, Լևոնյանը ուրախ հուզման մեջ չէր զգում ոչ բանտ, ոչ փականք. հափշտակված իր հանդիպումով, նա սկսեց քայլել իր նեղ կամերայի մեջ, շարունակ տեսնելով իր առաջ Վերայի նոր՝ դալուկ դեմքը, նրա խորը ժպիտը՝ հանդիպման վայրկյանին... Քայլում էր ու մտքում խոսում նրա հետ...

Նա վերհիշում էր անցյալը,— (ո՞րքան ժամանակ էր անցել),— իր առաջին հանդիպումները Վերայի հետ, որոնք այնպես շաղկապվել էին իր «վարդագույն» Հերակլիտյան օրերի հետ:

Նրա մտքում այժմ իշխում էին հեղափոխության հզոր փիլիսոփաները, բայց որպես մի պատենական հուշ դալիս էր հեռվից Հերակլիտը՝ իր «չարժիչ» մտքերով... «ամեն ինչ հոսում է», ամեն ինչ փոխվում...

Նա հուզմունքից արագացնում էր քայլերը ու խոսում մտքում՝ Վերայի հետ:

— Ամեն ինչ շարժվում է, ամեն ինչ փոխվում... կգան նոր օրերը, կկործանվեն այս ամրակուռ բանտի պատերը... և մենք նորից կհանդիպենք իրար...

... Ամեն ինչ շարժվում է...

LXI

... Երկաթուղու դնացքը շարժվեց, տանելով հետը մի վագոն, որը իր արտաքինով տարբերվում էր մյուսներից: Դրսի մարդկանցից դժվար թե որևե մեկը տեսած լիներ այդ վագոնի դուռը բացելիս, իսկ երկու պատուհանները ամրացրած էին երկաթե ճաղերով:

Վագոնի մեջ նստած «ակամա ճամբորդները» դիտեին, թե ո՞ւր են տանում իրանց, բայց նրանց համար դժվար էր իմանալ կայարանները, որտեղ կանգ էր առնում դնացքը, քանի որ պահակներն արդելում էին մոտենալ պատուհանին: Նրանք փակված էին բանտ-վագոնում և այդպես էլ պիտի հասնեին Սիբիր՝ իրանց աքսորավայրը:

Նրանք բոլորը դատապարտված էին աքսորի, որպես «քաղաքական հանցավորներ» կամ կարճ ասելով՝ «քաղաքականներ», բայց իրար հետ չէին կապված միևնույն գործով. էտապը կազմված էր տարբեր խմբերից և նրանց աքսորավայրը—դյուղերն էլ տարբեր հեռավորության վրա էին գտնվում: «Ակամա ճամբորդների» թվում բացի ռուսներից, կային չորս-հինգ ազգությունների պատկանող անձինք, այդ պատճառով էլ դնացքը մեկնելուց հետո՝ հաղիվ մի ժամ անց՝ էտապի անունը դրին «չվող ինտերնացիոնալ»:

Այդ աքսորվածների մեջ էին և մեր ծանոթները՝ Գարունյանը, Պետրովը, Լևոնյանը ու Եմելյանովի գործարանի տասներկու բանվորները: Չնայած այն զրկանքներին, որ սպասում էին նրանց մոտ ապագայում, ընկերները անչափ ուրախ էին, որ նրանց վիճակվեց միասին գնալու:

Ընկերների անակնկալ հանդիպումը շատ սրտառուչ էր. նրանք անհամբերությունից իրար խոսք կտրելով պատմում էին իրանց դլխի անցածը:

Այդ փոխադարձ պատմություններից պարզվեց «գործի» լրիվ պատկերը, որը շնորհիվ դաղտնապահության, իսկ հետագայում նաև բանտարկության՝ շատերի համար մութն էր մնացել: Նրանք բոլորը ծարավ էին անցած ամիսների ընթացքում տեղի ունեցած դեպքերի վերաբերմամբ: Եմելյանովի գործարանի բանվորներից աքսոր էին վճռել մոտ քառասուն հոգու. սա

առաջին խումբն էր, որ ուղարկվում էր— այն խումբը, որի հետ պարապում էր Լևոնյանը: Այդ գործարանի բանվորների հետ կապված էին մի շարք «ինտելիգենտներ», որոնցից այժմ գնում էին աքսոր Գարունյանն ու Պետրովը: Չնայած որ ղեկավարները ձերբակալված էին, գործարանը մոտ օրերին պատրաստում էր հայտարարել գործադուլ, որպես բողոք ցարական ռեպրեսիաների դեմ: Այնտեղ մնացել էին մի շարք ընկերներ, որոնք շարունակում էին գործը: Բանտից դուրս գալով, նա լմացավ նորություններ և իր ընկերների մասին,— Մարությանը բանտարկված էր Բաղվում, իսկ Նաղարյանը մայրաքաղաքում. նրանց էլ սպառնում էր Սիբիրը...

Լևոնյանը երկարատև զրույցներ էր ունենում Գարունյանի հետ, տեղեկանալով այն բոլոր իրադարձություններին, որոնք թաղնված էին մնացել լրանից:

— Նու, ընկեր Լևոնյան, քեզ էլ մկրտեցինք հեղափոխությամբ,— ասաց Գարունյանը, ո՛չինչ, քո բանը հեշտ է, քեզ ավելի մոտ են աքսորել—Իրկուտսկի նահանգը... իսկ իմը՝ երկրորդ աքսորն է...

— Դեռ քա՞նի անգամ պիտի գնանք ու գանք, որ հասնենք մեր նպատակին,— ասաց Լևոնյանը:

— Եթե մինչև անգամ կոչիկի տեղ մեր ոտները մաշվեն, էլի մենք կհասնենք մեր նպատակին,— ասաց Շիլովը:

— Քեզ հետ՝ Շիլով, դժոխքումն էլ չեմ տխրիլ,— ասաց Գարունյանը:

Կար մի հարց, որ առանձնապես հուզում էր Լևոնյանին.— Նա շատ էր հետաքրքրվում իմանալու, թե ի՞նչ ձախորդ հանգամանքների շնորհիվ էր «բացվել» գործը: Նա ուզում էր ստուգել իր ենթադրությունը Ժուկովի վերաբերմամբ, բայց քաշվում էր ասելու որևե մեկին, մտածելով, որ կարող է սխալվել: Բայց հարցը բացվեց ինքն իրան, երբ խոսք ընկավ Ժուկովի մասին:

— Դե նա պրովոկատոր էր,— ասում էր Շիլովը. այդ պարզ է. մենք նկատում էինք, որ նա «չինծու» բանվոր է, բայց ուշ գլխի ընկանք նրա իսկական դերի մասին... նրան ընդունել էին գործարանում մատնությունների համար:

Պարզվեց, որ Ժուկովին «բանտարկել» էին և ուղարկել

վարոնեժ, իբր թե մի ուրիշ գործի կապակցությամբ, բայց դա պատրվակ էր միայն նրան ազատելու համար. նրան արդեն արձակել էին՝ նոր՝ մութ «գործերի» համար...

Ժուկովի կերպարը սև բծի նման մնաց Լևոնյանի հիշողության մեջ...

Գնացքը շարժվում էր Ռուսաստանի լայն դաշտերով, ցույց չտալով այդ դաշտերը վագոնի մեջ փակված աքսորականներին: Երեկոյան մթնով գնացքը կանգ առավ մի կայարանում:

Անցավ մի ժամից ավել, բայց գնացքն էլի դեռ կանգնած էր: Հանկարծ երեք պահակ զինվորները խմբվեցին պատուհանի մոտ:

— Ա՛յ քեզ բան,— հրդեհել են կալվածատերի տունը,— ասաց նրանցից մեկը:

Քիչ դիտելուց հետո պահակներից երկուսը դուրս եկան վագոնից: Աքսորականները բոլորը խմբվեցին պատուհանների մոտ:

— Չի՛ կարելի,— ասաց երրորդ պահակը, բայց էլ չշարունակեց, զգալով, որ միևնույն է՝ չեն հպատակվիլ:

— Այրվում է կալվածատերի դղյակը,— ասաց Պետրովը:

— Այրվում է հին Ռուսաստանը,— ավելացրեց Գարունյանը:

Հանկարծ մի ապրանքատար գնացք դղրդալով եկավ կանգ առավ նրանց առաջ, ծածկելով հորիզոնը: Աղոտ լույսերի մեջ նկատվում էր, որ լինում են զինվորները՝ ձեռքերին հրացանները բռնած:

— Սա ապստամբություն է տղերք,— գոչեց Շիլովը,— զինվորները գնում են ճնշելու... ա՜հ, որիկանե՛ր...

Բոլորը ցնցվեցին այս լուրից, կրկնակի ցավ զգալով, որ կաչկանդված են, որ չեն կարող մի խոսք անգամ ասել...

Հանկարծ Շիլովը գոռաց իր ահարկու ձայնով, դիմելով զինվորներին.

— Ո՞ւր եք գնում, ո՞ւմ դեմ... ձերոնց դե՞մ...

Երկու զինվոր կանգ առան, նայեցին բանտ-վագոնի լուսամուտին ու շարունակեցին ճամբան՝ դանդաղեցնելով քայլերը:

Պահակը սարսափեց այդ ձայնից.

— Ի՞նչ եք անում,— գիմեց նա Շիլովին.— ուզում եք, որ ինձ էլ ձեզ հետ Սիբիր ուղարկե՞ն:

Սակալովը չընջաց Շիլովի ականջին.

— Շիլով, մի քիչ զսպիր քեզ, էստեղ մեզ պրովոկացիա չանեն... դիտես որ ժանդարմների ամենաջերմ ցանկությունն է մեզ շուտով վերացնել այս աշխարքից...

Զինվորական գնացքը դատարկվելուց հետո հեռացավ, նորից բացելով հորիզոնը:

— Վորքան էլ տարերային լինի այս շարժումը, բայց մեր մեծ առաջնորդը՝ Լենինը կտանի այն իսկական ուղիով... կդա վոլթորիկը, կբռնկի ամբողջ աշխարհը ու մենք էլ կվերազտանք նորից...—ասում էր Պետրովը:

... Լուսաբացին, երբ հորիզոնը բոցավառվեց ծիրանի գույներով, բլրակի վրա մխում էր կալվածատերի տունը: Գնացքը վերջապես շարժվեց:

— Սա ի՞նչ կայարան էր, Իվան Վասիլիչ, դու լավ ես իմանում. հարցրեց Պետրովը:

— Սա «Այրվող հորիզոնը» կայարանն էր,— պատասխանեց նա,— դա նրա սովորությունն էր՝ ամեն կայարանի մի նոր անուն տալ:

Գնացքը արագացրեց իր ընթացքը...

Լևոնյանը մտածում էր իր կյանքի այս «նոր եռապտ» մասին, կրկնելով մտքում «այրվող հորիզոնը»... դա էլ մնաց անջնջելի իր հիշողության մեջ...

ՀՍՍՌ Արտ.ՀՍՍՌ

Պատ. խմբագիր
Հ. Մելիքյան
Տեխ-խմբագիր՝
Ստ. Ալբուրյան
Սրբագրիչ՝
Մ. Թումանյան

ԳՖ 2480 Հրատ. 5358
Պատվեր 707 Տիրաժ 4000
Հանձնված է արտադրության 16/x 1940 թ.
Ստորագրված է տպագրության. 14/xi 1940 թ.

Հայպետհրատի տպարան. Երևան, Լենինի 65

43388

«Ազգային գրադարան»
NL0327966

21280